Սուսաննա
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԿԱՆԱՅՔ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԿՅԱՆՔՈՒՄ

ix

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍՈՒՍԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԿԱՆԱՅՔ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԿՅԱՆՔՈՒՄ

Հ 106480

ԵՐԵՎԱՆ 2019

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

ՀՏԴ 821.19.0
ԳՄԴ 83.3(5Հ)
Հ 854

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝
Մուրադյան Լաուրա
բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Հովհաննիսյան Սուսաննա
Հ 854 Կանայք Հովհաննես Թումանյանի կյանքում/ Ս. Հովհաննիսյան.- Եր.: Էդիթ Պրինտ, 2019.- 208 էջ, ներդիր - 16 էջ:

Գիրքը ներկայացնում է կնոջ դերի մասին թումանյանական ընկալումները պոետի գրական և գեղարվեստական ժառանգության մեջ: Առաջին անգամ արծարծվում է Թումանյանի և կյանքի տարբեր խաչմերուկներում նրան հանդիպած, նրանով հիացած, նրա ընկերակցությանն ու բարեկամությանը, սիրուն ու ջերմությանը, հաճախ եղբայրական ու հայրական հոգածությանն արժանացած՝ նրան շրջապատող հայ և այլազգի կանանց առնչակցությունը:

Առանձնացվում են հատկապես բանաստեղծին ոգեշնչած մուսայաստեղծ կանանց, մասնավորապես՝ Վարյա Խանդամիրյանի և իշխանուհի Մարիամ Թումանյանի հետ մտերմության քնարական պատմությունները:

Աշխատությունն օգտակար է հոգեբանների, գրականության պատմաբանների և ընթերցող լայն շրջանի համար:

ՀՏԴ 821.19.0
ԳՄԴ 83.3(5Հ)

ISBN 978-9939-75-334-8

© Սուսաննա Հովհաննիսյան
© Էդիթ Պրինտ

ՆՎԻՐՎՈՒՄ Է
ՀՈՎՀԱՆՆԵՍ
ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
ԾՆՆԴՅԱՆ **150**-ԱՄՅԱԿԻՆ

Առաջաբան

Հովհաննես Թումանյանը բազմատաղանդ անհատականություն էր և ուներ ինչպես ստեղծագործողի, հրապարակախոսի, քննադատի, ազգային գործչի, դիվանագետի, ազգերին ու մարդկանց հաշտեցնողի տաղանդ, այնպես էլ տիրապետում էր ներելու և սիրելու մեծ արվեստին: Նա ուներ կանանց հետ հաղորդակցվելու, նրանց գրավելու զարմանալի շնորհ:

Կյանքում պոետին հանդիպող բազմաթիվ կանայք հմայվում էին նրա տղամարդկային ասպետական վարքագծի բնականությամբ, պարզ ու վճռական բնավորությամբ, բարի ու լուսավոր ժպիտով: Նա և՛ պոետ էր, և՛ հրաշալի զրուցակից. կարող էր բառերով, մի հաճելի, հանպատրաստից հանգավոր խոսքով, երբեմն պարզապես ծաղիկներով, երբեմն էլ միայն իր ներկայությամբ գրավել ցանկացած կնոջ սիրտը: Բանաստեղծի աչքերում բռնկվող ժպիտը սլանում էր վեր և խաղաղություն բերում շրջապատին՝ գեղեցիկը տեսնելու, ապրելու հմայքը ճաշակելու, գունավոր երազներ երազելու ուժ տալիս նաև կանանց:

Թումանյանը երբեք չի եղել մերժված սիրահար: Գրեթե պատանեկան հասակում արթնացած զգացմունքները պսակվել են փոխադարձությամբ և ամուսնությամբ. այնուհետ ոչ մի անգամ իր զգացմունքներում կասկածելու առիթ չի ունեցել. վստահության և հոգեկան անդորրի մթնոլորտը միշտ ուղեկցել է նրան, ապահովել նրա բարոյական առողջությունը: Ողջ կյանքում կողքին ունեցել է բարյացակամ ու զգայուն, ինքնամոռաց նվիրված կին, ամեն ինչ հասկացող և հնազանդ կին, հրաշալի մայր իր երեխաների համար, միաժամանակ շրջապատված է եղել այլ կանանց անսահման սիրով, իսկ շատերի համար մշտապես եղել է անհասանելի սեր ու տենչանք: Թերևս այդ է պատճառը, որ նա երբեք չի գնացել մի հափշտակությունից մյուսը. ռեալիստ էր նաև կյանքում, հրեշտակ չէր փնտրում: Թե՛ ընտանեկան կյանքում, թե՛ իր հրապուրանքներում պոետը կանանց չափազանց ազնվորեն վերաբերվող, նվիրված, ամեն գնով փոխըմբռնողությունը պահպանելուն ձգտող իր վարքագծով կանանց միջավայրում ու ընտանիքում հասել էր հոգու խաղաղության, մի բան, որ ազգային-հասարակական կյանքում նրան երբեք չհաջողվեց:

Թումանյանը ճակատագրի հետ նախնական բանակցություններ չէր վա-

րել: Եվ ամուսնությունից հետո էլ նրա սրտում սերն էր բույն դրել: Անկախ ամեն ինչից, նա կարողանում էր խուսափել նույնիսկ ամենաբուռն կրքերին անձնատուր լինելուց: Պոետները շատ ավելի անկեղծ են, և նույնիսկ մուսայաստեղծ կանայք վերամարմնավորվում են երևակայությամբ ստեղծված կերպարի մեջ: Բանաստեղծությունը գրելու առիթ դարձած կնոջ անհատականությունը մղվում էր երկրորդ պլան, և վերամարմնավորումների շնորհիվ ծնվում էր իրական պոեզիան: Թումանյանի հավատարմությունն իր ընտանիքին ու կնոջը կասկածից վեր է, սակայն ամուսնանալով վաղ հասակում՝ նա չէր կարող շարունակ կնոջը բանաստեղծություններ նվիրել: Բայրոնը մի առիթով ասել է. «Մի՞թե Դուք կարծում եք, որ եթե Լաուրան Պետրարկայի կինը լիներ, նա ամբողջ կյանքում սոնետներ կգրեր»:

Մենք քիչ գիտենք Թումանյանի սրտում բույն դրած զգացմունքների մասին, որովհետև նա շատ գաղտնապահ էր և ոչ ոքի չէր խոստովանում իր հոգու նվիրական ելևէջումները՝ միշտ հիշելով, որ բարեկամներն ու ընկերները թեև իր բարին են կամենում, սակայն նրանց նույնպես չի կարելի վստահել, քանի որ նրանք ևս ունեն բարեկամներ:

Կյանքի բոլոր հանգամանքներում, ամեն ինչում և ամենուր պոետը պահպանում էր չափի զգացումը. բացառություն էին կազմում նրա բարությունը, հավատն ու անձնազոհությունը, մինչև վերջին շունչն ամենքի հետ ապրելու և ամենքի չափ տառապելու առաքելությունը: Այո, Թումանյանը հավասարակշռված տաղանդ էր, բայց բարություն անելիս, ազգի համար զոհաբերվելիս չափ ու սահման չէր ճանաչում: Նրա արիությունն իրեն տիրապետելու մեջ էր: Բանաստեղծն իբրև տղամարդ երջանիկ էր, քանի որ ոչ միայն գիտեր, այլև զգում էր, որ սիրված է կանանցից: Փոթորկահույզ կյանքը հաճախ է նրան հեռացրել ընկերներից, մերձավոր հարազատներից և այն կանանցից, որոնցով ինչ-որ մի պահ հրապուրված է եղել, սակայն երբեք անտարբեր չի եղել նրանց նկատմամբ, որտեղ էլ որ նրանք լինեին, որքան էլ հեռու լինեին և բացակա իր առօրյայից՝ նա միշտ եղել է հավատարիմ... Թումանյանն այն հազվագյուտ տղամարդկանցից էր, որ կարողանում էր իր սերը փոխարինել բարեկամությամբ, ապրել միասին ապրած այնքան դժվարին ժամերից, զանազան վեճերից, հաշտություններից ու հուզական պոռթկումներից մնացած հուշերով: Նրա սերը չէր հանդուրժում բացատրություններ նույնիսկ այնպիսի բարեկամուհուց, ինչպիսին իշխանուհին էր, իսկ այնպիսի բարեկամուհի, ինչպիսին իշխանուհի Մարիամ Թումանյանն էր, աշխարհում ոչ միայն հազվագյուտ պոետների, այլև առհասարակ հազվագյուտ տղամարդկանց կարող էր հանդիպել: Կանանց միջավայրում, հաճախ նաև մերժելով նրանց, Թումանյանն իր ճշմարտությունն ապացուցելու կարիք չուներ: Պարզությունն էր

նրա ճշմարտությունը և մեղմ ու քնքուշ անցումներով կանանց՝ սիրո այլ արահետներ ուղղորդելը: Նրա մարդկային հանճարն ամենուր և ամեն ինչում իր սահմաններն ընկալող միտքն ու մոտեցումն էր: Եթե այդ սահմաններն իր պատկերացումներում անարդար էին՝ նա հեշտությամբ կարող էր դառնալ և սահմանախախտ: Սակայն տղամարդու ազատությունը նրա ընկալումներում ոչ թե արտոնություն էր, այլ պարտականություն: Դեռ երիտասարդ հասակում կյանքի փորձով յուրացրեց, որ սերը որքան էլ հիասքանչ լինի, մարդկային կյանքը շատ է երկար մի սիրո համար: Յուրաքանչյուր սեր ցանկանում է հավերժ լինել: Սակայն յուրաքանչյուր սեր կարող է ինչ-որ տեղ կանգ առնել, ավարտվել, փոխակերպվել մեկ այլ զգացումի՝ բարեկամության, հարազատության կամ ատելության: Նաև դրանով է սիրո տառապանքն ու տանջանքը հավերժական դառնում: Յուրաքանչյուր խարույկ, նույնիսկ հրդեհ ի վերջո մարում է: Մինչդեռ հավատարմությունն ու սպասումը շատ ավելի երկար են տևում, մի ամբողջ կյանք («Մեկն ապրում է, մյուսն ըսպասում»):

Բանաստեղծի մեջ կյանքում և արվեստում **զուգակցվում են քնարականության և իրականության ամենանուրբ հյուլեները, որոնք ստեղծում են մի շքեղ գունագեղություն՝ գույնի, լույսի, հույզերի մի յուրօրինակ համադրություն:** Թումանյանն աշխատել է հեռու պահել իրեն սերերից, քանի որ ոչինչ այնպես չի զբաղեցնում ու կաշկանդում սիրտը, ինչպես սերը, որն այլ զգացմունքների համար պարզապես տեղ չի թողնում: Իսկ պոետը չէր կարող իրեն այդպիսի շռայլություն թույլ տալ, նա սովորական գրող չէր, այլ Ամենայն հայոց բանաստեղծ, Ամենայն հայոց որբերի հայրիկ. Ամենայն հայոց էր ազգային կյանքի բոլոր ոլորտներում՝ ազգի նահապետի ու արքայի իրավունքներով, և հենց այդ պատճառով նա իր հոգու մեջ սերը սանձահարող զենք ուներ, որպեսզի պաշտպաներ ազգային ոգու մարմնացումը հանդիսացող իր հոգին կյանքի վայելքները խորհրդանշող ինչ-ինչ կապերից, որպեսզի զերծ պահեր իր ազնվական հոգին որևէ, թեկուզ ամենաազնիվ ու հիասքանչ զգացումի գերիշխանությունից, որպեսզի կատարեր ազգի նկատմամբ ի վերուստ տրված իր առաքելությունը:

Մեր օրերում սիրային նամակները հազվագյուտ են ու համառոտ՝ լավագույն դեպքում մեկ-երկու նախադասություն: Դրանք հնարավորություն չեն տալիս խոսելու նամակագիրների զգացմունքների խորության, անկեղծության և առհասարակ նրանց բնավորության ու անհատականության մասին: Մինչդեռ Թումանյանի ժամանակը նամակների տիրապետության շրջան էր, և այսօր այդ նամակները պատմավավերագրական վիթխարի արժեք ունեն թե՛ բանաստեղծի, թե՛ դարաշրջանի կյանքն ու մարդուն ճանաչելու համար: Անշուշտ, պոետը ստացել է սիրային նամակներ: Այդ են վկայում նրա պա-

տասխան նամակները, սակայն դրանք չեն պահպանվել, ըստ ամենայնի գաղտնապահ Թումանյանը դրանք ոչնչացրել է իր ցանկությամբ կամ նամակագիրների խնդրանքով: Այս աշխատության մեջ ներկայացվող նամակները սիրային բովանդակություն չունեն, թերևս այդպիսի ենթատեքստ թաքնված է միայն Արմենուհի Տիգրանյանի նամակներում:

Սակայն դրանք արտացոլում են Թումանյանի դերն իր միջավայրի կանանց կյանքում, իսկ իշխանուհու նամակներն էլ, թեև նա ինքն իրեն չէր խոստովանում բանաստեղծի նկատմամբ իր զգացմունքները, վկայում են նրա անսահման սերն ու հոգատարությունը պոետի հանդեպ:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԿԱՆԱՆՑ ՇՐՋԱՆՈՒՄ

Կինը Հովհաննես Թումանյանի ընկալումներում

Կինը կյանքի հիմքն է, կյանքի
աղբյուրը, ամենամեծ ուժը,
նա դեռ շատ մեծ ապագա ունի:

Հովհ. Թումանյան

Կնոջ դերի մասին թումանյանական ընկալումները բազմիցս դրսևորվել են Թումանյանի գրական և գեղարվեստական ժառանգության մեջ: Բանաստեղծն այս խնդրին մոտենում է կնոջ մասին բարձրագույն պատկերացման դիրքերից: Կինը բնության ամենակատարյալ արտահայտությունն է, ամենամեծ գեղեցկությունն ու պոեզիան. «**Ճշմարիտ, միթե գեղեցիկ կնոջից ավելի սրտառուչ երգ կա, կամ առաքինի մարդուց ավելի վսեմ բանաստեղծություն**»[1]: Կինը պոետի համար կյանքի ու բնության իմացության ուղի է. «**Կյանքը ճանաչելու համար մի գեղեցիկ միջոց, մի հեշտ չափ կա - այդ կինն է**» (6, 47):

Կնոջ դերի մասին այսպիսի բարձր պատկերացումն արվեստագետին կյանքում և ստեղծագործության մեջ մղել է կնոջ իդեալի որոնումների և բազմիցս հանգեցրել հիասթափության: Շրջապատում տեսնելով մարդկային վեհ ու գեղեցիկ հատկանիշների կորուստը՝ Թումանյանը հաճախ է կանգնել կնոջ նկարագրի աղճատման փաստերի դեմ հանդիման:

Սակայն թե՛ հիացմունքը, թե՛ հիասթափությունը Թումանյանի պատկե-

1 **Հովհաննես Թումանյան**, Երկերի լիակատար ժողովածու 10 հատորով, հտ. 9, Եր. 1997, էջ 233: Այսուհետև սույն ժողովածուից մեջբերումները կարվեն տեքստում՝ փակագծերում նշելով հատորն ու էջը:

րացումներում մազաչափ չեն նսեմացրել կնոջ դերի և նշանակության ընկալումը: «Թմկաբերդի առումը» պոեմում բանաստեղծն արծարծում է կնոջ հետ կապված երկու թեմա. կինը կարող է ոգեշնչել, անհաղթելի դարձնել տղամարդուն և կարող է կործանել նրան, կարող է լինել նույնքան հավատարիմ, որքան և դավադիր: Թմկա տիրուհին էր Թաթուլի անպարտելիության ուժը: Եվ միայն Ջավախքի գեղեցկուհի դստեր անհավատարմությունն է առյուծի նման, խրոխտ սարի նման, արևի նման պայծառ ճակատով, կնոջ սիրով հարբած քաջազուն Թաթուլի կործանման պատճառը: Պոեմում Թումանյանն այնպես է մեջբերում Ֆիրդուսու խոսքերը, որ թվում է, թե Արևելքի մեծագույն բանաստեղծն այդ տողերը գրել էր հատուկ «Թմկաբերդի առումի» համար, կամ էլ այդ տողերի հեղինակն ինքը՝ Թումանյանն է, և հենց նա է ասել Ֆարսի բլբուլին, անմահ Ֆիրդուսուն.

Ինչը կըհաղթի կյանքում հերոսին,
Թե չը լինին
Կինն ու գինին:

Լերմոնտովի ծննդյան 100-ամյակի օրերին, խոսելով նրա և Պուշկինի կյանքի «ձախորդ հանգամանքներում» կնոջ ունեցած դերի մասին, Թումանյանը նկատել է. «**Մեծ ու վճռական դեր է խաղում կինը բանաստեղծի կյանքում, և... հաճախ մի կնոջ պատճառով բանաստեղծի կյանքը խորտակվում է կամ փրկվում**»[2]: Սակայն կնոջ առեղծվածային էության մեջ Թումանյանը կանացի փառասիրության ու անհավատարմության կողքին տեսնում է արժանապատվություն, զղջում, ամոթ սեփական արարքի համար: Թմկա շքեղ տիրուհին ինքն է խորտակել իր ամուսնուն, դավել ու դավաճանել, սակայն նույն կնոջ հոգում մեղքի գիտակցությունից ու կորստի ցավից ծնվում է ինքն իրեն պատժելու ցանկություն: Լավն ու վատը, գեղեցիկն ու տգեղը կործանողն ու իր դատավճիռը կարդացողը միևնույն կնոջ մեջ, միևնույն կերպարում. այդ է վկայում շահին տված՝ Ջավախքի խաբեբա ու ճշտախոս, անհավատարիմ ու հավատարիմ դստեր պատասխանը.

- Քաջ էր ու սիրուն քեզնից առավել.
Մի բարձր ու ազնիվ տղամարդ էր նա,
Կնոջ մատնությամբ ամրոց չի առել,
Չի եղել կյանքում երբեք խաբեբա...

Հասարակական կյանքում թե՛ տղամարդու, թե՛ կնոջ դերի խնդրին Թումանյանն անդրադարձել է դեռևս իր հրապարակախոսական կյանքի ար-

2 **Նվարդ Թումանյան**, «Հուշեր և զրույցներ», Եր., 1987, էջ 116: Այսուհետև սույն աշխատությունից մեջբերումները կարվեն տեքստում՝ փակագծերում նշելով ՀՋ և էջը:

շալույսին՝ 1894 թ., «Բորչալվում» ակնարկում: Այստեղ նա արձանագրում է հայտնի ճշմարտությունը. **«Կնոջ վիճակը հայտնում, ցույց է տալիս ինչպես անհատի, այնպես էլ հասարակության աշխարհայեցողության սահմանը, զարգացման աստիճանը»** (6, 47):

Կնոջն արհամարհող, նրան՝ իբրև «առաջին մեղքի պատճառ», «դժոխքի դուռը» հասցնող, բոլոր սրբերից ու սրբություններից նզովված էակ անվանելը, անարգանքի սյունին գամելը 25-ամյա բանաստեղծը ներկայացնում է որպես քրիստոնեության բարձր գաղափարն այլանդակող տգետ հոգևորականների քարոզի հետևանք: Նա ցավ է ապրում հատկապես գավառներում ծեծված ու նախատված կնոջ՝ անարգանքի մշուշով պատված ճակատագրի համար: Այդպիսի կնոջը լիարժեք կին չի համարում. «Սա դեռ մայրը, կինը, կյանքի ընկերը չի» (6, 48):

Կանանց խնդիրը պոետն արծարծում է նաև Ն.Մառի հայ-վրացական բանասիրության և գրական բնագրերի ու հետազոտությունների աշխատությունը գրախոսելիս[3]: Այս առիթով Թումանյան-ուսումնասիրողը մանրազնին քննում է բոլոր այն երկերը, որոնք աղբյուր են հանդիսացել Մառի աշխատության համար, այդ թվում՝ Նարեկացու «Նարեկ աղոթից» բան Թ.ա. (Վենետիկ, 1827), «Նահապետ Քուչակի դիվանը» (Փարիզ, 1902), Հայնեի «Երգերի գիրքը», Գ. Ախվերդյանի «Սայաթ-Նովան» (Մոսկվա, 1852), Օմար Խայամի քառյակները, Գ. Սրվանձտյանի «Գրոց ու բրոց» ժողովածուի (1874) հավելվածը՝ «Սասունցի Դավիթ կամ Միհրի դուռը», Կ.Երզնկացու, Հ.Թլկուրանցու ստեղծագործությունները, Ի.Ա.Ջավախովի «Государственный строй Грузии и древней Армении[4]», Ալ. Խոնկոյի մենագրությունը[5], Կ. Կոստանյանցի՝ Հ.Թլկուրանցու մասին աշխատությունը[6]: Աբուլաձեի, Կարիճաշվիլու և Սառաջաշվիլու կարծիքներին Թումանյանը ծանոթացել էր Մառի գրքից: Գիտահետազոտական այսպիսի մանրակրկիտ աշխատանքի արդյունքում բանաստեղծը գրում է թեև ոչ ծավալուն, սակայն արժեքավոր և մինչև օրս էլ հարցադրումների այժմեականությամբ բնորոշվող հետազոտություն-հոդվածը, որտեղ արծարծում է կնոջ նկատմամբ Արևելքի և Արևմուտքի հակադիր վերաբերմունքին, կյանքում և միջնադարյան գրականության մեջ սիրո հոգեբանության տարբեր դրսևորումներին վերաբերող հարցեր: Համեմատելով Արևելքի և Արևմուտքի գրական հուշարձանները՝ Թումանյանը մատնանշում է Շոթա Ռուսթավելու, Նարեկացու, Քուչակի, Հայնեի գեղարվեստական

[3] Տես **Н. Марр**. «Тексты и разыскания по армяно-грузинской филологии», кн. XII, СПб, 1910.

[4] Նույն տեղում, кн. VII, с. 73.

[5] «Specimens of the populat poetry of Persia», 1842, էջ 10-11:

[6] **Կ.Կոստանյանց**. «Հովհաննես Թլկուրանցին և իր տաղերը», Թիֆլիս, 1892, էջ 32:

երկերում արտահայտված մարդկային ապրումների, գեղարվեստական տեսք ստացած զգացմունքների ընդհանրությունները: Հայ, վրաց, պարսից և եվրոպական գրականությունից բերված կոնկրետ օրինակների հիման վրա Թումանյանը փորձում է ցույց տալ գեղարվեստական մտքի ընդհանրությունները, տարբեր ազգերի գրականության փոխազդեցություններն ու փոխներթափանցումները: Նա «համբակի մեծամտություն» և սնապարծություն է անվանում որևէ ազգի կողմից ամեն լավ բան միայն իրենը համարելը, աղերսներն ու ազդեցությունները չտեսնելը: «Եվ շատ անգամ,- գրում է Թումանյանը,- նուրբ առանձնահատկություններն են, որ որոշում են մի ժողովրդի ստեղծագործությունը մյուսից, ոչ թե գործի ամբողջությունը: Հաճախ կիհասթափվեն էն մարդիկը, որոնք ուզում են անպատճառ էս կամ էն ժողովրդական ստեղծագործության, էպոսի, հեքիաթի, առակի և նման գործերի սկիզբն ու ծնունդը կապել բացառապես իրենց պապերի ու հայրենիքի հետ» (6, 212):

Հատուկ ուշադրության արժանացնելով արևելյան միջնադարյան գրականության մեջ կնոջ պաշտամունքի խնդիրը՝ բանաստեղծը գրում է. «Շատ ու շատ մեծ գործեր կատարել ու կատարում են սիրած կնոջ հրամանով» (6, 213): Նա մեկ առ մեկ հիշում է կնոջ կամքին ենթարկվող քաջերի ու դյուցազունների՝ Տարիելին, Սասունցի Դավթին, որոնք հնազանդվում են Նեստան Դարեջանի և Խանդութ Խաթունի կամքին: Պոետը համամիտ էր Ն.Մառի այն տեսակետին, թե եվրոպացի գիտնականներն Արևելքի բարոյականության գնահատականը տալիս «անաչառ դատավորներ» չեն, քանի որ նրանցից շատերն են Ալ. Խոձկոյի կարծիքին, թե Արևելքում կինը միայն գնովի կամ ձեռքբերովի խաղալիք է: Չհերքելով երևույթի գոյությունը Արևելքում՝ Թումանյանն այդ կարծիքը բնորոշում է «շատ միակողմանի»: Նա նկատում է, որ Արևելքում նույնպես կնոջ հանդեպ սերը կարող է ուղեկցվել սիրուց կամովի հրաժարումով և զոհաբերությամբ. «Կնոջ պաշտամունքն էլ առաջ է բերում իր հերոսները, և ահա դուրս են գալի և ասպետականության սուրբ մարդիկը – մեջնունները (վրաց. միջնուրի, հայ. մեջլում), սիրո մարգարեներն ու բանաստեղծները, որոնք նույնպես սիրում են մենակությունն ու քաշվում են կյանքից՝ առանձնության մեջ իրենց մտածմունքները ամփոփելու, կենտրոնացնելու իրենց պաշտած կնոջ «աստվածային գեղեցկությունը» փառաբանելու ու անձնվիրություններով ու սխրալի գործերով միայն նրան ծառայելու» (6, 216):

Ըստ Թումանյանի՝ սիրուց պարտավոր է հրաժարվել յուրաքանչյուր սիրահար, եթե դա իբրև պահանջ հնչում է սիրած կնոջ շուրթերից: Բանաստեղծը գրում է. «Ադաթը, կամ ավելի ճիշտ բնության կարգը, էսպես է եղել: Սիրահարը իր սիրածի ճորտը, գերին, հպատակն է, միշտ պատրաստ նրա քմահաճույքները կատարելու, թեկուզ կրակի մեջ ուղարկի, և պետք է ունե-

նա ամեն բարձր հատկությունները ազնվականի, ասպետի, քաջի» (6, 214):

Սիրուց հեռանալը, սիրուն հպատակվելը, առանց իրական սիրո գոյատևելը Թումանյանի համար ազնվականի և ասպետի վարքագիծ էր:

Բանաստեղծն առանձին հոդվածներ կամ ստեղծագործություններ չի նվիրել կանանց իրավահավասարության խնդրին, սակայն մի խոր հավատ է ունեցել, որ այն վերջիվերջո պետք է լուծվի կնոջը տնտեսապես ապահովելու ճանապարհով. «**Կնոջ հարցի լուծումը կապ ունի տնտեսական հարցի հետ: Կնոջը տնտեսապես պետք է ապահովել, որ նա ոչ ոքից կախում չունենա և ազատ լինի: Ազատագրումը կարևոր է: Կինը չպիտի էն ձևով ապրի, ինչպես հիմա է. նա ազատ պիտի լինի**» (ՀՋ, 178):

Նույնը բանաստեղծը կրկնում է մեկ այլ առիթով. «Տնտեսականը մեծ դեր է խաղում կնոջ կյանքում. նա ապահով պիտի լինի» (ՀՋ, 218):

Հասարակական կյանքում Թումանյանն արձագանքում էր կնոջ և մայրության պահպանությանն ուղղված յուրաքանչյուր նախաձեռնության: 1919 թ., երբ լույս է տեսնում «**Մայրության և մանկության պաշտպանություն**» խորագրով ռուսերեն, հայերեն և վրացերեն լրագիրը, Թումանյանն անմիջապես արձագանքում է և հրապարակայնորեն բարձրացված մոր ու մանկան հասարակական աջակցությունը բնորոշում է որպես «Մեր կյանքի հիմնական խնդիրը», որից «**ավելի սուրբ ու ավելի նուրբ խնդիր** դժվար թե կարելի լիներ դնել հասարակության առաջ» (7, 395):

Այստեղ Թումանյանը բացահայտում է մարմնավաճառությամբ երեխա պահելու ողբերգության արմատները: «Ինձ էնպես է թվում,- գրում է բանաստեղծը,- թե կենդանական աշխարհքում դժվար թե գտնվի ավելի իրավազուրկ ու անկարող մի մայր, քան կին-մայրն է... որ եթե մենակ է, այրի է կամ անամուսին, կդժվարանա սնունդ գտնել աշխարհքում իր զավակի համար, և նրա զավակին կարող է պակասել նույնիսկ էն արևն ու օդը, որ չի պակասում ոչ մի արարածի: Կենդանական աշխարհքում միայն կին-մոր հետ է պատահում էն տեսակ ստոր երևույթ, որ նա իրեն կամ իր զավակին ստիպված է լինում պահելու իր էգության գնով» (7, 394):

Թումանյանն իր պաշտպանության տակ է առնում նաև ապօրինի երեխա բերելու համարձակությունն ունեցող սիրահարված կանանց. փորձում է առաջացնել մարդկային խղճմտանքը. «Հապա ապօրինի կոչված ծնունդների դեմ եղած հալածանքը, որ մեծ մասամբ ուղղված է իսկական սիրո և նրա պտուղների դեմ՝ ի դեմս միայնակ մոր և մանուկի» (7, 395):

Եվ բանաստեղծն իր վաստակած՝ հայ ժողովրդի նահապետի իրավունքով «օրհնում է» բոլոր նրանց, ովքեր կպաշտպանեն մայրությունն ու մանկությունը: Նա երազում է հայ կնոջ, մայր կնոջ համար տեսնել այն «մեծ

օրը», երբ բազմաչարչար մայրիկները այլևս չեն գնա երկինք, որ հաց ուղարկեն սովից աղեկեզ լաց եղող, գոռացող ու ճչացող մանուկներին: Իր հոդվածում Թումանյանն օգտագործում է ժողովրդական հեքիաթի նյութերից մեկը, որի հենքով պիտի ստեղծեր «Խրճիթում» բանաստեղծության մոտիվներով, սակայն հեքիաթին բնորոշ երջանիկ ավարտով մի ստեղծագործություն: Հուսահատ մայրը սովից արտասվող երեխաներին հանգստացնելու համար ջրի մեջ քարեր է գցում և դնում կրակին: Որոշ ժամանակ անց պղնձի կափարիչը բաց անելով՝ տեսնում է, որ քարերը լոբի են դարձել: Սակայն հեքիաթն իրականություն չէ, և պոետի ռեալիզմն այլ ուղիներ է որոնում: Մի կողմից Թումանյանը հեքիաթներ էր գրում ժողովրդի մեջ բարու, լավի հաղթանակի նկատմամբ հավատն արթուն պահելու հույսով, մյուս կողմից քայլեր էր ձեռնարկում հեքիաթը գեթ մի փոքր կյանքին մոտեցնելու նպատակով: Հեքիաթագիր Թումանյանը գրում է. «Դժբախտաբար իրականության մեջ քարերը լոբի չեն դառնում, և մանուկների մեջ մահացության տոկոսն ավելի մեծ է, քան 90 տարին հասած ծերունիների մեջ» (7, 395):

Հատկապես գյուղերում կնոջ ծանր վիճակը զուգորդվում էր տգետ տղամարդկանց բռնությունների, կնոջ վիճակի նկատմամբ միջավայրի անտարբերության և նրա որևէ ազատության նկատմամբ եկեղեցու անհանդուրժող վերաբերմունքի հետ: 1895 թ. Թումանյանն ընդհարվում է Մարց եկած Թիֆլիսի թեմական առաջնորդ Գևորգ Սուրենյանցի[7] հետ, որը խոչընդոտել էր մի դժբախտ կնոջ եկեղեցական ծեսով թաղելու արարողությանը: Խոսքը վերաբերում է Շուլավերի շրջակայքի գյուղերից մի կնոջ, որը գազանաբարո ամուսնուց փախել էր Մարց և ապրում էր ամուրի տղամարդու հետ: Ամռանը նա դառնում է տիֆի համաճարակի զոհ: Սուրենյանցը Լորուտ գյուղից եկած քահանա Մարտիրոսյանին խստիվ արգելում է կատարել թաղման ծեսը, քանի որ հանգուցյալն իր երկրորդ ամուսնու հետ ապրել էր առանց եկեղեցական պսակի: Վարսենիկ Գևորգյանը գրում է. «Թումանյանն աշխատեց համոզել եպիսկոպոսին՝ բացատրելով, որ ոչ մի երկրում և ոչ մի օրենքով մեռածից վրեժխնդիր չեն լինում»[8]: Սակայն բանաստեղծին չի հաջողվել համոզել եպիսկոպոսին, և թաղումը կատարվել է գիշերով:

Թումանյանին միշտ էլ սաստիկ հուզել է գյուղացի կնոջ անմխիթար վիճակը: Մի առիթով նա հիշել է, թե որքան ծանր է նրա վրա ազդել մոր կող-

7 Խոսքն Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Սուրենյանցի (Տփղիսեցի) մասին է - 28 օգոստոսի 1847, Թիֆլիս – 8 մայիսի 1930, Էջմիածին, ամփոփվել է Մայր տաճարի բակում), Ամենայն հայոց կաթողիկոս 1911-1930 թթ.: Հաջորդել է Մատթեոս Բ Կոստանդնուպոլսեցուն: Նա 1894թ. Վրաստանի թեմի առաջնորդն էր մինչև 1907 թ., երբ նշանակվեց կաթողիկոսական տեղապահ:

8 «Թումանյանը ժամանակակիցների հուշերում», Եր., 1969, էջ 211: Այսուհետև սույն աշխատությունից մեջբերումները կարվեն տեքստում՝ փակագծերում նշելով ԹԺՀ և էջը:

մից երեխայի սպանությունը: Բանաստեղծը պատմում էր, թե ինչպես Կուրթան գյուղից մի կին, երկրորդ անգամ ամուսնանալով, գնում է Հաղպատի և Սանահինի մոտ գտնվող գյուղերից մեկը՝ իր հետ տանելով ութ տարեկան աղջկան: Խորթ հայրն այնքան է տանջում երեխային, որ մայրը, չդիմանալով «հարազատ զավակի ամենօրյա տառապանքներին, իր իսկ ձեռքերով խեղդում է նրան» (ԹԺՀ, 211):

Կնոջ դերին բանաստեղծն անդրադառնում է նաև 1912 թ. տպագրած **«Երեկվան պատմությունը և այսօրվան իրականությունը»** հոդվածում: Վերջինս գրելու համար նա օգտվել էր այն նյութերից, որոնք հիմք են ծառայել Խ.Աբովյանի մասին ուսումնասիրության և հատկապես «Խ.Աբովյանի «Վերք Հայաստանիո» և 1826 թ. ռուս-պարսկական պատերազմը» գլխի համար: Հենվելով Ե.Ե.Լաչինովի[9] վկայությունների վրա և քաղվածաբար ներկայացնելով նրա տեսակետները՝ Թումանյանը գրում է, որ «ազգային պատվասիրության բարձր ու ազնիվ զգացմունքը» ազգերից յուրաքանչյուրին պետք է ստիպի մտածել և հոգալ կնոջ մասին. «Վերջապես վտանգի միջի կինը, էն թույլ ու անպաշտպան արարածը, որ, սակայն, ամեն ժամանակ ու ամեն տեղ մեծ ազդեցություն է ունեցել սխրագործությունների վրա, ասպետական ոգու վրա» (6, 365), ստիպում է, որ մեզանից ամեն մինը պաշտպանի յուրաքանչյուր կնոջ՝ անկախ իր ազգային պատկանելությունից[10]:

1915 թ. Թումանյանը գրում է «**Կինն ու մահմեդական պետությունների անկումը**» հոդվածը, որը տպագրում է «Խարիսխ» թերթի հունիսի համարում: Այն, ինչ կատարվել էր Արևմտյան Հայաստանում հայ կանանց հետ, մեծ ցավ, վրդովմունք, զայրույթ ու ցասում էր առաջացրել ու նաև խորհելու առիթ տվել բանաստեղծին: Հոդվածում նա ամենայն խստությամբ է անդրադառնում մահմեդական կրոնի թողտվությամբ կնոջ բռնաճնշումներին ու ստորացումներին, հարեմի գոյության ամոթալի երևույթին. «Առհասարակ կարծում են, թե հարեմը ստրկություն է կնոջ համար: Դա սխալ է: **Հարեմը ստրկություն չի, այլ շատ ավելի ցած ու ամոթալի մի վիճակ:** Ստրուկը կարող է ասել, թե ես աշխատում եմ ու իմ աշխատանքով համ ուրիշին եմ պահում, համ ես եմ ապրում, և ավելի շատ ուրիշներն են ապրում իմ աշխատանքով: Իսկ հարեմի կինը... ապրում է իր էգության հաշվին, մի դրություն, որ, եթե չեմ սխալվում, չկա ամբողջ կենդանական աշխարհում» (7,173): Անշուշտ, Թումանյանն այդ պահին զայրույթով էր լի այն մահմեդականի հանդեպ, որը զենքը վայր չէր դնում և արյունահեղություն էր որոնում: Դրա

9 **Եվդոկիմ Եմելյանովիչ Լաչինով** – 1799 (Վորոնեժի նահ.) - 20.08.01875 (Փարիզ) - ռուս ազնվական. դեկաբրիստ Ռուս-պարսկական, Ռուս-թուրքական պատերազմների մասնակից:

10 Այս մասին Թումանյանը գրել է՝ հենվելով «Кавказский сборник» գրքի առաջին հատորի նյութերի, հատկապես Ե.Ե.Լաչինովի «Исповеди» հատվածի վրա: Թիֆլիս, 1876:

պատճառներից մեկը նույնպես բանաստեղծը տեսնում էր կնոջ հանդեպ մահմեդական աշխարհի վերաբերմունքի մեջ: Նա գրում է. «Մահմեդականը կին չունի, կին չունենալով՝ տուն չունի, ընտանիք չունի: Մենակ ու անապավեն մարդ է, դրա համար էլ դրսից տուն չի գալիս, ծիուց ցած չի իջնում, զենքը վեր չի դնում, մնում է մի տեսակ դուրսը, միայն իր զենքին ապավինած, միշտ պատերազմի պատրաստ ու պատերազմասեր, հետևաբար և անհանգիստ ու վտանգավոր հարևան» (7, 173):

Երևույթի երկրորդ պատճառը, ըստ Թումանյանի, այն էր, որ մի տղամարդ բազմաթիվ անգործ կանանց պահելու համար «անխուսափելի կերպով» դառնում է պատերազմասեր, սկսում է նոր արշավանքներ՝ թալանելու և կողոպտելու նպատակով: Դեպի Արևմուտք, դեպի Հյուսիս հայ ժողովրդի և քրիստոնյա ազգերի կողմնորոշումը Թումանյանը բացատրում էր նաև մահմեդական աշխարհի՝ կնոջ նկատմամբ ունեցած վերաբերմունքով: Նույն հարցին բանաստեղծն անդրադարձել է 1919 թ. հուլիսի 13-ին Թիֆլիսի Ցուրինյան որբանոցում կարդացած «Մեր անելիքը» թեմայով դասախոսության մեջ. «Ինչպես բոլոր քրիստոնյա ազգերը, այդպես էլ հայը կնոջը այնքան է բարձրացրել, որ պատկերը եկեղեցում դրած՝ նրան Աստվածամայր անունն է տվել և պաշտում է, իսկ թուրքը բանտարկել է հարեմում և նրան համարում է մի ստորադրյալ էակ՝ լոկ իր քմահաճույքին ծառայող» (7, 555):

Թումանյանն այնքան էր կարևորում կնոջ դերը, որ համոզված էր՝ նման վերաբերմունքը կնոջ նկատմամբ կարող է կործանարար լինել հենց մահմեդական աշխարհի համար. «Մահմեդական աշխարհը, նրա ամեն մի ազգն ու պետությունը, եթե ուզում է ապրի, պետք է հրաժարվի ոչ թե հարեմից արտաքուստ, այլև հարեմական հայացքից ներքուստ: Անկարելի բան է և՛ հարեմ պահել, և՛ առողջ պետություն, անկարելի բան է և՛ հարեմ ունենալ, և՛ հառաջադիմել ու մտնել հառաջադեմ ազգերի շարքը» (7, 176):

Կնոջ անազատ և կախյալ վիճակը մշտապես խոչընդոտել է նրա տաղանդի և ընդունակությունների զարգացմանը: Բանավոր զրույցներից մեկի ժամանակ Թումանյանն ասել է. «Կին հանճար չկա, մեծ տաղանդներ էլ քիչ կան, ինչպես Սաֆոն» (ՀՋ, 178): Սակայն դրանով բանաստեղծն ամենևին չի նսեմացրել կնոջ դերը կյանքում, ընդհակառակը. նա կնոջը համարում է կյանքի հիմքը, աղբյուրը: Ամենևին չանտեսելով կնոջ դերը՝ բանաստեղծը արժևորում է նրա մայրանալու հրաշքը. «Բնախոսականը անպայման դեր է խաղում: Կինն ինքն արդեն մարդ է ստեղծում. նա չի կարող և՛ մարդ ստեղծել, և՛ ստեղծագործել» (ՀՋ, 178): 1919 թ. փետրվարի 8-ին ասված այս խոսքերը գրի է առել նրա դուստրը: Դժվար է ասել, Թումանյանն ինչ բառերով ու ենթատեքստով է այդ միտքն արտահայտել: Հնարավոր է նաև այն

ներկայացված է հուշագրի ընկալմամբ: Այսպես խորհելու տեղիք են տալիս 1914 թ. փետրվարի 27-ին «Հայ կնոջ դերը գրականության մեջ» թեմայով Սոֆյա Դանիել-Բեկի դասախոսության քննարկման ընթացքում Թումանյանի արտահայտած մոտեցումները կնոջ ստեղծագործական կարողությունների մասին: Այդ օրը նա դստեր արձանագրածի հակառակ կարծիքն է հայտնել: Բանաստեղծը հակադրվել է բոլոր նրանց, ովքեր, հենվելով կնոջ մայրության և նրա սեռին բնորոշ այլ հատկությունների վրա, նրան ստեղծագործելու անընդունակ են համարել: Ի պատասխան ժամանակի ընդդիմախոսների՝ Թումանյանը կանանց տաղանդի հազվադեպ դրսևորումները մեկնել է այդ տաղանդի զորացման համար անբարենպաստ պայմաններով, կնոջ անազատ լինելու հանգամանքով. որոնք կարող էին խոչընդոտել ցանկացած մարդու ընդունակությունների, անգամ հանճարի զարգացմանը. «Այնինչ ազգերի գրականությունների պատմությունը ցույց է տալիս, որ ամեն անգամ, երբ կինը ունեցել է ազատ վիճակ և նպաստավոր պայմաններ, գրական ասպարեզում հայտնվել է լուրջ ստեղծագործություններով» (7, 540):

1914 թ. մարտի 3-ի «Հորիզոնի» հաղորդման մեջ ասվում էր, որ Թումանյանն «Օրինակներ բերեց Հին Հունաստանի կյանքից, ուր ազատ (հետերաները) ու անազատ կանայք ապրում էին իրար կողքի, և ազատ կանանց շրջանիցն էր, որ դուրս եկան Սաֆոն, Ասպազիան և իր նմանները» (7, 540): Հաղորդման մեջ հիշատակվող բանաստեղծի ելույթում նշված կին ստեղծագործողների անունները վկայում են, թե Թումանյանը որքան գիտակ է եղել արտասահմանյան գրականության պատմությանը, որքան քաջածանոթ էր համաշխարհային գրականության լավագույն ներկայացուցիչների գործերին: Նա հիշատակել է ճապոնական գրականության մեջ Հեյնանի և Եդդոյի շրջանները, «երբ մի շրջանում ազատ ճապոնուհին լսել է գրական գլուխգործոցներ, իսկ մյուս շրջանում արդեն անազատ ճապոնուհին չքացել է գրական ասպարեզից» (7, 540): Թումանյանն իր ելույթում անդրադարձել է Վերածնության դարաշրջանից սկսած Եվրոպայում ծայր առած՝ կնոջ ազատության համար ծավալված պայքարին, կանանց գրական սալոններին, ֆրանսիական հեղափոխության շրջանում կանանց պայքարի ուժեղացմանը, M-me Ստալի, Ժորժ Սանդի, այլ նշանավոր կանանց գործունեությանը: Բանաստեղծը շատ ավելի ներողամիտ էր հայ կանանց նկատմամբ և գրական կյանքում նրանց գրեթե աննշան դերը պայմանավորում էր «հայ ժողովրդի նորանցյալ ծանր» վիճակով ընդհանրապես և հայ կնոջ ճնշված դրությամբ՝ մասնավորապես: Թումանյանը երբեք առիթը բաց չի թողել հայ ստեղծագործող կանանց ոգևորելու և խրախուսելու, նրանց գործն ըստ արժանվույն

գնահատելու հարցում: Նրա քաջալերանքին են արժանացել իշխանուհի Մարիամ Թումանյանը, Մարիամ Խատիսյանը՝ որպես Կովկասի «առաջին հայ վիպասանուհի», Զապել Եսայանը և այլք:

Եթե կնոջ տաղանդի նվազ երևան գալը հասարակական կյանքում Թումանյանը բացատրում էր նրա անազատությամբ, ապա հայ կանանց գրեթե համատարած հետամնացությունն ու տգիտությունը, կյանքի ինչ-ինչ հանգամանքներով պայմանավորված կանացի բնավորության մերժելի դրսևորումները մեկնելիս այլ դրդապատճառներ էր տեսնում: «Գրողի նամակների» սևագիր պատառիկներում Թումանյանը դժգոհում է իր միջավայրի կանանց զարգացման մակարդակից, նյութապաշտությունից և ընտանիքի ու սիրո հարցերում շահախնդիր մոտեցումներից:

Բնականաբար, բանաստեղծին չէր կարող գոհացնել այն կնոջ կերպարը, որն անկեղծ սիրո փոխարեն գերադասում էր նյութական շահը. «Մի՞թե կարող է այդ կինը՝ հայ կինը ոգևորել մարդու,- հարցնում է Թումանյանը: - Ծածկամիտ, հաշվող, խելոք (իբր թե) պոլիտիկոս, դրան ավելացրու անճաշակությունը... Ոչինչ, ոչինչ նրան չի թռցնում, նույնիսկ սերը, չի կարող թափանցել ու լուսավորել, պարզել, թե ինչ կա հայ կնոջ սրտում և չի կարող նրան թռցնել հաշիվների ցանկից դենը» (6, 410):

Ինչպես միշտ, պոետի հրապարակախոսական հոդվածներում, ելույթներում և գիտական ուսումնասիրություններում իմացաբանական լայնախոհությունը զուգորդվում էր պատկերավոր խոսքի հետ: Այլ կերպ լինել չէր կարող. նա պոետ էր, արվեստագետ, և միշտ յուրաքանչյուր երևույթի, այդ թվում բարոյահոգեբանական խնդիրների կարևորությունն ընդգծելու նպատակով դիմում էր պատկերավոր խոսքին: Բանաստեղծին ամենից շատ հուզում էր այն, որ հայ կինը, լինելով իր ժամանակի բարոյականության ոգու կորստի արտահայտիչը, իր հաշվենկատությամբ չի կարողանում ոգևորել ու ապրեցնել բարձր ու ազնիվ զգացումները, որոնց կոչումն ունի ի բնե. «Սիրահարված երիտասարդը առաջարկում է լսելու իրեն:

- Բայց էգուց մյուս օրն, որ աղջիկ ունենանք, որտեղից պետք է ուսում ու օժիտ տանք,- պատասխանում է խելոք հայ աղջիկը» (6, 410):

Թումանյանը մի պահ փորձում է այդպիսի մտածելակերպը բնորոշել «չոր չարչու հարազատ աղջկա չոր խելք», սակայն անմիջապես ջնջում է այդ տողերը, քանի որ նա չի կամենում մեղադրական կարդալ այդպիսի կնոջը կամ աղջկան: Գրողն իրական պատճառները որոնում է այն հետամնաց միջավայրում, ուր մեծացել է նա: Մանկության տարիներից բանաստեղծը երես առ երես բախվել է այն սին ու դատարկ արժեքներին երկրպագող հասարակական միջավայրին, ուր իշխում էին գավառամտական մտահայեցողութ-

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

յունը, բամբասանքներն ու դավադրությունները, ընկերական հարաբերությունների մեջ՝ կեղծիքն ու խաբեությունը, շահի ձգտումը: Պոետը նկատում է, որ այն միջավայրում, որում ինքն ապրել է, տեսել է «անտարբերություն դեպի ընդհանուր-ազգայինը», որ այնտեղ «խոհեմություն է համարվել միշտ խուսափել «խալխի համար» գլուխը ցավացնելուց... անճաշակություն ամեն բանի մեջ... միշտ ոտնակոխ են արել ինքնասիրությունը» (6, 409):

Այսպես, ըստ Թումանյանի՝ մեղավորը ոչ այնքան կինն է, որը չի կարողանում ոգևորել ու ներշնչել, որքան բարոյահոգեբանական մթնոլորտը, որտեղ ձևավորվում է նրա կերպարը, որովհետև այդ միջավայրում նույնիսկ բարությունն ու կարեկցանքը ներկայանում են իբրև «չնչին փառասիրությունը հրապարակ դնելու առիթ» (6, 409): Նա գնահատում էր կնոջ այնպիսի հատկանիշները, որոնք տղամարդու, ընտանիքի ու շրջապատի համար ստեղծում էին հարմարավետություն, հանգիստ, հաճելի կենցաղ: Նվարդ Թումանյանը վկայում է, որ 1912 թ. ամռանը Ուրավելում, Ախալքալաքում և Ախալցխայում շրջելուց հետո հայրը հիացմունքով էր խոսում այդ շրջանի կանանց մասին, քանի որ նրանք «շատ մաքրասեր են, լավ տանտիկիններ են, համեղ թխվածքներ են պատրաստում» (ՀՋ, 104):

Հայ կնոջ կերպարում բանաստեղծը ձգտում էր տեսնել արտաքին և ներքին ներդաշնակություն: Գրողի դստեր հավաստիացումներով՝ հայրը «մեծ տեղ էր տալիս կնոջ խոսելու ձևին, ձայնին, տեմբրին: Կինը մեղմ պիտի խոսի, նուրբ, դուրեկան ձայնով» (ՀՋ, 73): Նրա սուր աչքից չէր վրիպում կանանց արտաքին տեսքի, հագուկապի որևէ թերություն. «Անճաշակությունը, գռեհկությունն ու ռամկությունը անտանելի բաներ են կյանքում, ևս առավել կնոջ կյանքում» (ՀՋ, 220): Կանանց անճաշակությունն ավելի բացահայտ էր դառնում նորաձևությանը կուրորեն հետևելիս: 1916 թ. հունիսի 25-ին բանաստեղծը նկատում է. «Մեր կանայք սովորաբար հագնվել չգիտեն, ճաշակ չունեն, չեն իմանում, թե ինչը կսազի իրենց, ինչը՝ ոչ. հենց էն է, մոդային են հետևում. մին էլ տեսար՝ գլխներին մի-մի թաբախ ծաղիկ դրին կամ զանազան փետուրներ ցից արին» (ՀՋ, 146):

Հագուստի հարցում Թումանյանը գերադասում էր անգլիական պարզ ոճը, հարմարավետությունը: Ինչպես արվեստում, այնպես էլ կյանքում «ազատ, թեթև, հանգիստ ու գեղեցիկ» արտաքինը տեսնում էր պարզ ոճի մեջ:

Կյանքի և արվեստի յուրաքանչյուր գեղեցկության հետ հանդիպումը արվեստագետին կարող է և՛ բերկրանք, ուրախություն, և՛ տխրություն պատճառել: Վերջինս հավանաբար ծնվում է անծանոթ գեղեցիկի անհասանելիության գիտակցությունից: Նվարդ Թումանյանը հիշում է. «Ավ. Իսահակյանը ասում էր՝ երբ սիրուն կին եմ տեսնում, տխրում եմ: Հայրիկը հակառակն էր

ասում՝ սիրուն կին որ տեսնում ես, ուրախացիր, ինչու՞ ես տխրում» (ՀՋ, 75):

Շրջապատող կանանց գնահատելիս Թումանյանը նույնքան բծախնդիր էր, որքան արվեստի գործն արժևորելիս: 1919 թ. հունիսի 28-ի երեկոյան բանաստեղծի ընտանիքում խոսք ու զրույց էր բացվել կանանց մասին: Դուստրերը փորձել են հասկանալ նաև, թե որն է իրենց հայրիկի համար կնոջ իդեալը: «Ոչ մեկին չհավանեց,- գրում է Նվարդը,- ոչ մեկի վրա կանգ չառավ. ամեն մեկի էս կամ էն բացն էր տեսնում:

- Լուրջ, լավ կին չկա: Մենք չունենք հետաքրքիր կանայք» (ՀՋ, 203):

«Լուրջ, լավ ու հետաքրքիր կին» ասելով՝ Թումանյանը հասկանում էր «հոգու խորություն, նրբություն և զգայնություն» ունեցող կանանց, որոնք ֆիզիկական զգայնությունից բացի ունեն նաև «հոգեկան» պահանջներ: Այդ երկուսի առկայությունը, դաշնությունը և անբաժանելիությունը կարող են միայն վկայել կնոջ իրական գրավչությունը: Իսկ հոգեկան պահանջներ, բնականաբար, կարող էր ունենալ նախ և առաջ կրթված, մտավորական կինը, որը «գրականություն գիտի, կարդում է, գրում, հետաքրքրվում է գիտությունով և իր շրջապատի կյանքով» (ՀՋ, 203): Բանաստեղծը համոզված էր, որ կնոջ արտաքին գեղեցկությունը նոր ուժ ու հմայք կստանա և լիարժեք կլինի միայն այն դեպքում, եթե դրան գումարվեն «հոգեկան արժանիքները» (ՀՋ, 199): Սակայն միայն մտավորական ու արվեստասեր, զարգացած կին լինելը դեռ չէր կարող կնոջ իդեալ լինել: Այդպիսի կինը, Թումանյանի խոսքերով, հետաքրքիր է «որպես զրուցակից, ունի գրական, գեղարվեստական տեղեկություն, ծանոթություն, բայց կանացի չէ, կնոջ նրբությունն ու գրավչությունը չունի, որ հետաքրքրի: Եզակի դեմք է Ժորժ Սանդը: Դա... չունենք, չկա՞ էլի, հեշտ բան հո չի՞ լավ կին լինելը» (ՀՋ, 203):

Եվ իրոք, Թումանյանի ժամանակակից կանանց մեջ հատուկենտ էին զարգացած կանայք: Բանաստեղծի նվիրական ցանկություններից մեկն էր, որ հայ կինը հնարավորություն ունենա զորանալ «գեղարվեստի ու գեղեցիկ գրականության վրա և կարողանա **համադրել գեղեցկությունն ու գիտությունը, կյանքն ու գիրքը**» (ՀՋ, 218):

Կնոջ գեղեցկության թումանյանական պատկերացումները հեռու են վերերկրային, եթերային, գունատ, դալուկ տեսքով կնոջ կերպարից. «Կնոջ համար ամենադժվարը և կարևորը առողջությունն է,- ասում էր պոետը,- որ նույնիսկ տգեղ կնոջը գեղեցկություն է տալիս: Առողջ դեմքը վառվում է, աչքերը փայլում են, էդ կրակը շատ բան է մոռացնել տալիս մարդու: Կինը պիտի լինի աստղով, շախով - կարևորը դա է» (ՀՋ, 218):

Այդպիսի «շախով» կանանցից էր դերասանուհի Օլգա Մայսուրյանը: 1921 թ. խնջույքներից մեկի ընթացքում Օլգան թամադա Թումանյանին խորհուրդ

է տալիս. «Գինին խմելիս պետք է զգանք մեր հինգ զգայարաններով, որպեսզի լիակատար լինի մեր տպավորությունը: Գինին մենք տեսնում ենք, **շոշափում ենք** (բաժակը), **հոտոտում ենք**, **ճաշակում ենք**, մնում է, որ նաև **լսենք**, ուրեմն պետք է գինու բաժակները տակից բռնել և միմյանց խփելով՝ լսելի անել նրանց զրնգոցը» (Ընդգծումը հեղինակինն է. Ս.Հ., ԹԺՀ, 453):

Սակայն այդ «շախը» պետք է սահմանավորված լիներ. ինչպես միշտ՝ ցանկացած խնդիր արծարծելիս, կնոջ հարցում էլ Թումանյանը կարևորում էր չափի զգացումը՝ «ոսկե սանձը», որը «լավ կնոջ» ձևավորման անհրաժեշտ բաղադրիչն էր. «**Կինը աշխուժության հետ միասին խելոք ու լուրջ պիտի լինի**» (ՀՋ, 220):

Եվ Թումանյանը առիթը բաց չէր թողնում առնչվելու «խելոք ու լուրջ» կանանց հետ, աջակցելու նրանց: «Պետք է խրախուսել» հոդվածով պոետը ողջունում է տիկ. Վ.Ա.Վերմիշյանի «Ձեռնարվեստի դպրոցը» և այցելում նրա սաների ձեռագործ աշխատանքների ցուցահանդեսին (1911թ. ապրիլ)՝ ջանալով նաև նյութապես ապահովել մտավորական տիկնոջ գեղեցիկ նախաձեռնության հաջողությունը (6, 307):

«Խելոք ու լուրջ» կանանցից էր նաև դերասանուհի Սիրանույշը, որը 1913-ին Թիֆլիսում ապրում էր Թումանյանի տան հարևանությամբ, ու թեև գիտեր, որ բանաստեղծն առանձնապես չի հավանում Համլետի իր դերակատարումը, այնուամենայնիվ, սիրում էր այցելել պոետին և հաճախ էր լինում նրա տանը: Երբ Սիամանթոն Թիֆլիսում էր, Թումանյանը նրա ու իր դստեր՝ Նվարդի հետ ինքն էլ այցելեց դերասանուհուն: Նվարդը հիշում է. «Այդ երեկո Սիամանթոն իր հետ բերել էր արևմտահայ երկու բանաստեղծուհիների գրքույկները՝ Մանիկ Պերպերյան և Հրանուշ Արշակյան: Բանաստեղծությունները կարդում էր Սիամանթոն՝ գեղեցիկ և ներշնչված:

Մի երեկո Սիամանթոն, հայրիկը և ես եղանք կոմպոզիտոր Արմեն Տիգրանյանի տանը. հրավիրված էր նաև տիկին Սիրանույշը՝ դստեր հետ» (ՀՋ, 107):

Միշտ լավատես Թումանյանը հայ կնոջ զարգացման, նրա ոգեշնչող ու ներշնչող դառնալու հարցում մեծ սպասումներ ուներ ապագայից: Հավատում էր, որ այդ դրական փոփոխությունները կգան, և դրանք պայմանավորում էր տղամարդու և կնոջ նկատմամբ հասարակության վերաբերմունքի փոփոխությունների հետ. «Կինը չի ապրում հիմա,- ասել է բանաստեղծը 1919 թ. ապրիլի 1-ին,- նա պիտի փոխվի, նոր կինը պիտի գա,- էն կլասիկ ազատ կինը պիտի գա իր կլասիկ գեղեցկություններով ու առողջությունով, նաև իր հոգեկան արժանիքներով ու կարողությամբ» (ՀՋ, 199):

ԱՌԱՋԻՆ ՍԵՐԸ

«Հոգուս հատոր»

Կենսագրական հիմքերի բացահայտման առումով առավել շատ վկայություններ են պահպանվել Թումանյանի՝ մեզ հասած առաջին բանաստեղծության՝ «Հոգուս հատորի» մասին: Եվ որքան էլ դրանք հակասական լինեն, բոլորն էլ հավաստում են, որ այն պատանի բանաստեղծի ճշմարիտ, իրական և գեղեցիկ ապրումների ինքնադրսևորումն է:

Վերգինե Տեր-Դավթյան (1868-1904)

1881 թ. մարտին Ջալալօղլու դպրոցի աշակերտ 12-ամյա Թումանյանը գրում է իր սիրային առաջին ոտանավորը: Ստույգ հայտնի չէ, թե արդյոք այն նվիրված է եղել դպրոցի տեսուչի՝ Տիգրան Տեր-Դավթյանի դստերը՝ **Վերգինե Տեր-Դավթյանին**[11], թե ոչ: Չնայած այդ մասին հիշատակություն կա Վարսենիկ Գևորգյանի և Սարգիս Աբովյանի հուշերում: «Օհանեսը ոտանավորի նյութ էր դարձրել և վարժուհիներից մեկին... Տեսչի մեծ աղջիկը Օհանեսին օգնում էր թվաբանությունից, ռուսաց լեզվից»,- գրում է բանաստեղծի աշակերտական տարիների ընկեր Սարգիս Աբովյանը (ԹԺՀ, 215):

Վերգինեն, որ տարիքով Թումանյանից մեծ էր, ըստ Տիգրան Տեր-Դավթյանի մյուս դստեր՝ Վարսենիկի հուշերի, բանաստեղծից լսել էր սիրո խոստովանություն, և փոքրիկ պոետը հենց նրան էր հանձնել ոտանավորը: Վերջինս էլ հրապարակել էր փաստը, և հայրը կա-

11 **Վերգինե Տեր-Դավթյան** - Ջալալօղլու դպրոցի տնօրեն Տիգրան Տեր-Դավթյանի դուստրը, 1868 - 1964:


(11 տ.) 1

Հոգուս հատոր,
Սրտիս կըտոր,
Դասիս համար
Դու մի՛ հոգար,
Թէ կամ կտուր
Քայ տան ապր.
Ի բէջ կարտաբ,
Իրատչաբեմ,
Որ գրեսաբ
Մի ղամչրեսբ
Պրա ապրդար
Դատ ևս պիդար։

1882-3.

մեցել էր պատժել սիրահարված պատանուն: Այդ պատժից «փրկվելու մասին» Թումանյանը 1881 թ. նոյեմբերին իր ծոցատետրում գրում է. «Ոտանավորը բռնեցին Հմայակն ու Միքայելը. մեր տեսուչ Տիգ <րանը> ինձ ուզում էր ռոզգի տալ, բայց լացով պրծա» (ՈւՀ 5, 177): Փաստորեն ոչ թե Վերգինեն, այլ Հմայակն ու Միքայելն են հրապարակ հանել «Հոգուս հատորը», իսկ այն, որ ոտանավորի համար տեսուչը կամեցել է պատժել Թումանյանին, վկայում է նաև Անուշավան Աբովյանը. «Մինչև անգամ տեսուչն ուզել է պատժել, բայց Հեղինեի (ուսուցչուհի - Ս.Հ.) միջամտությունը մեղմել է նրա բարկությունը և Հովհաննեսին փրկել ռոզգու հարվածներից» (ԹԺՀ, 221):

Վարսենիկ Գևորգյանը ստույգ չի վկայում Թումանյանի՝ Վերգինեի նկատմամբ տածած սիրո մասին. «Արդյոք քրոջս նուրբ գեղեցկությամբ էր տարվել նա, թե՞ վաղաժամ տաղանդի հետ նրա հոգու մեջ բուն էր դրել առաջին սիրո զգացումը» (ԹԺՀ, 208):

Ավելի հավանական է թվում Անուշավան Աբովյանի վկայությունը, որը հիմնվում է Թումանյանի ուսուցչուհիներից մեկի՝ Հեղինեի պատմածների վրա. «Պարզվեց, որ Հովհաննեսը սիրահարված է եղել մի աշակերտուհու, որի հետ սիրային նամակագրություն է ունեցել: Տեսուչն, այդ բանին իրազեկ լինելով, աշակերտներից երեքին լրտես է նշանակում Հովհաննեսի վրա: Դրանք էլ Հովհաննեսին բռնում են «հանցագործության» տեղը» (ԹԺՀ, 220): Հուշագրի խոսքը վերաբերում է դասամիջոցին պարտեզի խորքում մի ծառի տակ նստած Հովհաննեսի՝ ոտանավոր-նամակ գրելու «հանցագործությանը»: Ըստ Անուշավան Աբովյանի հավաստիացումների՝ «Հոգուս հատորը» «պատասխանն է սիրած աշակերտուհու այն գրության, որով նա նախազգուշացրել էր Հովհաննեսին, թե չլինի՝ սիրով տարված, չկարողանա դասերը սերտել» (ԹԺՀ, 221): Մեզ ամենից համոզիչը այս վկայությունն է թվում:

Ստանալով «դաս սերտելու» մասին համակրելի աղջկա խորհուրդը՝ պոետն իր ապրումներն ակամա ներկայացնում է ոտանավորի տեսքով:

Հոգուս հատոր,
Սըրտիս կըտոր,
Դասիս համար

Դու մի՛ հոգար,
Թե կան դասեր,
Կա նաև սեր,
Եվ ինչ զարմանք,
Իմ աղավնյակ,
Որ կենդանի
Մի պատանի
Սերը սրտում
Դաս է սերտում (1, 24):

Ըստ Նվարդ Թումանյանի՝ այդ աշակերտուհին, որին ձոնվել է այս բանաստեղծությունը, եղել է Քալի Սիմոնյանը, իսկ ըստ Անուշավան Աբովյանի՝ Քալի Շահվերդյանը: Վերջինս ջալալօղլեցի «Ջինոյանց Ասատուրի տնփեսա Սոլոմոնովիչի» աղջիկն է եղել[12]:

Այսպես «Հոգուս հատորի»՝ Թումանյանի սիրային քնարերգության երախայրիքի՝ ում նվիրված լինելը որևէ կերպ չի ապացուցվում, քանի որ հուշերի և վկայությունների մեջ հակասություններ կան: Սակայն փաստ է, որ «Հոգուս հատորը» ռոմանտիկ խառնվածքով պատանի Հովհաննեսի անկեղծ զգացմունքների բանաստեղծական մարմնավորումն էր, եթե ոչ սիրո, ապա մանկական համակրանքի ու հափշտակության արդյունք:

Դարյա Գոլոշյան

Արգելեցին լիաբերան
Երգել զեղմունքն իմ սրտի:

Հովհաննես Թումանյան

Թիֆլիսում Ներսիսյան դպրոցում սովորելու տարիներին Թումանյանը հրապուրվել է Դարյա Գոլոշյանի գեղեցկությամբ: Բանաստեղծը հաճախ է ընծայականներ նվիրել իր շրջապատի կանանց ու աղջիկներին՝ դրանք թողնելով նրանց ալբոմներում կամ իր ժողովածուների անվանաթերթերի վրա: Այդ կանանց թվում առաջինը **Դարյա** (Քալինկա) **Գոլոշյանն էր (հետագայում՝ Թադևոսյան): Նա** թիֆլիսեցի փաստաբան Գրիգոր Գոլոշյանի դուստրն էր, հայ ազատագրական պայքարի մարտիկ Ալեքսանդր Գոլոշյանի քույրը: Գ. Գոլոշյանի ընտանիքի հետ Թումանյանը ծանոթացել էր 1884 թ., երբ

12 Այս մասին մանրամասն տես՝ **Ա. Ինճիկյան**, «Հովհաննես Թումանյան, կյանքի և ստեղծագործության պատմությունը (1869-1999)», Եր. Հայկ.ՍՍՀ ԳԱ. հրատ.,1969, էջ 106-107:

Դարյա (Քալինկա) Գոլոշյան. Ալ. Գոլոշյանի քույրը

դեռևս Ներսիսյան դպրոցի աշակերտ էր: Այդ շրջանում պոետն ապրում էր Մըղդսի Ավագի տան նկուղում, իսկ Գոլոշյաններն ապրում էին նույն այդ տանը՝ վերին հարկում: Թումանյանը մտերմանում է Ալեքսանդրի հետ, և ընկերները որոշում են զինվել ու գնալ Արևմտյան Հայաստանն ազատագրելու: Մեկնելու էին չորս ընկերներով, սակայն Թումանյանը, որ իր վերարկուն վաճառել ու զենք էր գնել այդ նպատակով, չի կարողանում միանալ խմբին, քանի որ ծանր հիվանդ էր. մոտ երկու ամիս գամված մնաց անկողնուն: Այդ հիվանդությունը բարեբախտություն եղավ բանաստեղծի համար, քանի որ Գոլոշյանը մյուս երկու ընկերների հետ զոհվեց, իսկ Թումանյանը նախախնամության կամքով միայն հրաշքով փրկվեց:

Դարյա Գոլոշյանի վկայությամբ՝ մայրը Թումանյանի մեջ տեսնում էր իր հայրենասեր որդուն: Նա հիշում է. «1884թ օգոստոսի 15-ին Թումանյանին հանդիպեցի Ս.Կուկիայի եկեղեցու բակում, ուխտի օրը... Մայրս գտավ, որ Հովհաննեսը շատ է նման իր տղային, ու մենք բոլորս մտերմացանք»[13]:

Ըստ որոշ ժամանակակիցների հավաստիացումների՝ Թումանյանը սևաչյա Դարյայով հրապուրված է եղել Ներսիսյան դպրոցում սովորելու տարիներին: Դարյան կրթություն էր ստացել Մոսկվայում: Նա ավարտել էր Կանանց բարձրագույն դասընթացները և ժամանակի զարգացած հայ կանանցից էր:

1890 թ. դեկտեմբերի 6-ին Թումանյանը «Բանաստեղծությունների» իր առաջին ժողովածուն (1890 թ., Մոսկվա) նվիրում է Դարյա Գոլոշյանին՝ անվանաթերթի վրա գրելով. «Յուր քույր Քալինկա (Դարյա) Գոլոշյանին Հովհաննես Թումանյանից». հաջորդ էջի վրա գրում է.

Ընդունի՛ր, իմ քո՛ույր,
Գուցե քաղցրաբույր
Չըկան ծաղիկներ,
Բայց իբրև նվեր՝
Նվաստ եղբորից
Մի գնահատիր ինձ:

«Բանաստեղծությունների» երկրորդ հատորի շքեղ կազմի շրջերեսին 1893 թ. փետրվարի 4-ին «իր քույր Դարյային» պոետը թողել է հետևյալ ըն-

13 Նույն տեղում, էջ 144:

ծայականը. «Եղբայրական սիրո հետ օրիորդ Դարիա Գոլոշյանին նվիրում է հեղինակը», որին հաջորդում է Դարյային նվիրված «Ո՜հ, մեղմացնել չես կարող դուն...» բանաստեղծությունից երկու քառատող.

-Ես ուզեցի ազատ երգել
Եվ օրինություն, և՛ անեծ,
Սիրով սրտերը բորբոքել,
Որ նախանձը բաժանեց.-

Կյանքի աղմուկն և գոյության
Պատերազմը տմարդի
Արգելեցին լիաբերան
Երգել զեղմունքն իմ սրտի (1, 64):

Դարյան, հիշելով իրենց հարևանությամբ, իրենց բակում ապրող բանաստեղծին, գրում է. «...1883-84 թթ. նյութական նեղ պայմաններումն էր ապրում, սև հացի կարոտ. տխուր էր և իր մտքերի մեջ խորասուզված»[14]: Գուցե այս է եղել Թումանյանի անհամարձակության պատճառներից մեկը, գուցե և ոչ: Այնուամենայնիվ, բանաստեղծը չի արտահայտել իր սրտի զեղմունքը կրթված, հարուստ ներաշխարհով օրիորդ Դարյայի նկատմամբ, կյանքի ինչ-ինչ հանգամանքներ խոչընդոտել են նրան ավելի համարձակ գտնվել և արտահայտել այն, ինչ սրտի խորքում էր: Բանաստեղծության մեջ ակնարկ կա սիրո «զեղմունքը» սրտում պահելու պատճառների մասին, որոնցից մեկն էլ գոյության կռիվն էր:

Այսպես, Դարյան Վերգինեից և Օլգայից հետո դառնում է երրորդ աղջիկը, ում Թումանյանը ոտանավոր է ձոնում:

Այն, որ Դարյան այդ շրջանում ոգեշնչել է բանաստեղծին, վկայում է նաև Ռ.Պատկանյանի լուսանկարի շրջերեսին արված պոետի ընծայականը՝ վերստին նվիրված Դարյային:

Բանաստեղծը ծերացել է.
Թունդ մրրիկը որ անցել է,
Հետք է թողել լայն ճակատին,
Եվ աչքերում աստվածային
Կայծը դարձյալ ցոլանում է.
Բայց նա կարծես սլանում է
Դեպի երկինք, կամքով որի
Իջավ երկիր - ոգևորի (1, 111):

14 Նույն տեղում, էջ 135:

Անուշ և Աշխեն Թումանյաններ

Անուշ Թումանյան

Դարյան 1893 թ. փետրվարի 24-ի նամակում իր և իր աշակերտուհիների անունից շնորհակալություն է հայտնում «հարգելի բարեկամ և ընկեր» բանաստեղծին «ընծաների համար»: Այսինքն՝ Թումանյանն իր ժողովածուների կամ այլ «ընծաների» տեսքով նվերներ էր հանձնել նաև աշակերտուհիներին:

Ուշագրավ է, որ հետագայում Դարյան ամուսնացավ բանաստեղծի ազգականի՝ Թումանյանի մոր քեռորդու՝ հայտնի գյուղատնտես և հասարակական գործիչ Արշակ Թադևոսյանի հետ:

* * *

Պահպանվել են նաև այլ ընծայականներ՝ նվիրված կանանց ու օրիորդների: «Անցած օրին օր չի հասնիլ» ընծայականը հասցեագրված էր օրիորդ Հ.Մարկոսյանին ՝ գրված 1904 թ. հունիսի 21-ին Էջմիածնում՝ Խրիմյան Հայրիկի լուսանկարով փոստային բացիկի վրա: Երբեմն պոետը ընծայականներ թողնում էր իր լուսանկարների շրջերեսին, իր գրքերի ու ժողովածուների անվանաթերթերին:

1918 թ. հունվարի 29-ին Սերգեյ Գորոդեցկու կնոջը՝ տիկին Նիմֆա Գորոդեցկուն, բանաստեղծը նվիրում է «Փարվանա» պոեմի ռուսերեն թարգմանությունը, որի շապիկին գրում է.

Եկաք ու ընկաք
Մի նոր դրժընդակ
Փոթորկի առջև,
Ուր կիտվում են դեռ
Ահեղ, շանթաբեր
Ամպերը սև-սև:

Թումանյանն ընծայականներ և բանաստեղծություններ է ձոնել նաև իր դուստրերին՝ գրելով իր հայրական խոսքը նրանց ալբոմ-

ներում, մետաքսե թաշկինակի վրա և այլն: Պոետի դուստրերը ժամանակի կրթված, գեղեցիկ, հայրենասեր, մտավորական աչքի ընկնող կանանցից էին. Նրանց ալբոմներում նույնպես Թումանյանը թողնում էր իր խոսքը, ընծայականը, ոտանավորը: Դուստրերի հետ պոետը զրուցում էր անկեղծ՝ պատմելով նրանց կյանքում իր միայնության, խորտակված երազների, կատարյալ մարդու և իդեալների զուր որոնումների, մեծ հոգիների դրամայի, մարդկային կյանքի անցողիկության, հավերժի ձևերի, կնոջ՝ իր իդեալը չգտնելու և այլնի մասին: Դուստրերից Անուշի ալբոմում գրել է.

Երազեցի շարունակ
Իմ կյանքի մեջ ես մանկուց,
Ու մընացի միշտ մենակ
Պատրանքի մեջ՝ ես մանկուց:

Ես չըգտա ոչ մեկին
Երազներից իմ շըքեղ,
Եվ ոչ մի մարդ, ոչ մի կին՝
Հերոսներից իմ շըքեղ (1, 289):

Ասես արև էր ճառագայթում...

Շուրջ երկու տասնամյակ Թումանյանին հանդիպել, նրանով հիացել, նրա ընկերակցությանն ու բարեկամությանը, սիրուն ու ջերմությանը, հաճախ եղբայրական ու հայրական հոգածությանն են արժանացել նրան շրջապատող հայ և այլազգի կանայք: Նրանք գրի են առել բանաստեղծի մասին իրենց հիշողությունները: Այդ կանանց հուշերում հառնում է պոետի մարդկային անզուգական կերպարը: Այդ կանայք բոլորն էլ նրան նայել են սիրահարված կնոջ աչքերով և չեն կարողացել զատել մարդուն գրողից:

Թումանյանի մասին հուշեր են գրել Վարսենիկ Գևորգյանը, Վարսենիկ Աղասյանը, Նվարդ Եգիբյան-Բաղդասարյանը, Հռիփսիմե Պողոսյանը, Ֆլորա Դաստակյանը, Ազնիվ Հրաչյան, Նինո Տաբիձեն, Արուս Ոսկանյանը, Իոաննա Բրյուսովան, Զապել Եսայանը, Սողոմե Ջրբաշյանը, Անայիսը (Եվփինե Ավետիսյան), Մաշա Սուրաբյանը, Սերիկ Դավթյանը և ուրիշներ:

Բանաստեղծուհի **Վարսենիկ Աղասյանի**[15] համար Թումանյանի դեմքը «անմարելի ժպիտ ուներ». «Մենք մեր ուրախությունը և տխրությունը նրա հետ

15 **Վարսենիկ Գրիգորի Աղասյան** (1898, հուլիսի 15 - 1974, հոկտեմբերի 17) - բանաստեղծուհի, դրամատուրգ, մանկագիր, թարգմանիչ:

Վարսենիկ Աղասյանի նկարը 1898 -1974

էինք կիսում, մեր սրտերը նրա հետ էինք բացում: Մեծի հետ մեծ էր, փոքրի հետ՝ փոքր» (ԹԺՀ, 656): 22-ամյա սկսնակ բանաստեղծուհին, որ դեռ 14 տարեկանում տպագրել էր իր առաջին բանաստեղծությունը «Պատանի» հանդեսում, դեռևս հայտնի չէր որպես գրքի հեղինակ, բանաստեղծին շրջապատող բազմաթիվ սկսնակ գրողներից մեկն էր: Նրա սերն ու հիացումը պոետի նկատմամբ բազմապատկվել էր, երբ նա անձամբ էր զգացել Թումանյանի՝ ամենքին օգնության հասնելու պատրաստակամությունը և անձնազոհ բարության ուժը:

1920 թ. Վարսենիկը երկու փոքր երեխաներին և հիվանդ ամուսնուն խնամելու նպատակով ամուսնու վերարկուն տանում է շուկա՝ վաճառելու: Մուխրանյան կամուրջով անցնելիս հանդիպում է Նար-Դոսին: Վերջինս, տեսնելով բքախառն, ցուրտ եղանակին օրվա հացը հայթայթելու համար տնից դուրս եկած հուսահատված բանաստեղծուհուն, խորհուրդ է տալիս դիմել Թումանյանին: Այդ շրջանում գրեթե բոլոր գրողները դիմում էին պոետին՝ կամ անձամբ իրենց կարիքները կամ տարբեր մերձավորների և նույնիսկ հեռավոր ծանոթների նյութական հոգսերը հոգալու համար: Վարսենիկը նկատում է, որ երկու շիթ արցունք գլորվեց ու լճացավ Նար-Դոսի՝ «ժայռի պես դեմքի խոռոչների մեջ», և նա ասաց. «Գնա՛ Հովհաննեսի մոտ, նա քեզ մի ճամփա ցույց կտա: Շատերին է այդ դրությունից ազատել: Հեղինակավոր մարդ է, գնա՛ նրա մոտ» (ԹԺՀ, 660): Բանաստեղծուհին շտապում է «հեղինակավոր» Թումանյանի մոտ՝ օգնության ակնկալիքով: Բանաստեղծը դիմում է Բարեգործական ընկերությանը Վարսենիկին նպաստ հատկացնելու խնդրանքով և միջնորդությամբ: Սակայն «հեղինակավոր լինելը» չի օգնում. թշվառությունը համատարած էր և ներխուժել էր յուրաքանչյուր հայ մարդու տուն: Ինքը՝ բանաստեղծը, նյութական նեղությունների, ծով կարիքի մեջ էր. պարզապես ոչ ոքի չէր դիմում, իր հոգսերը չէր բարձրաձայնում: 1920-22 թթ. նա իր որոշ արժեքավոր գրքերից ու կերպարվեստի հավաքածուի որոշ գործերից, ժամանակին մեծ գումարներով ձեռք բերած պատմական վավերագրերից էր ցավով բաժանվում՝ ընտանիքի հոգսերը թեթևացնելու համար[16]: Վաճառում էր նաև

16 Խոսքը վերաբերում է Ներսես 5-րդի կոնդակների սևագիր դավթարին, Ջալալյան արքեպիսկոպոսի գրություններին, մինիատյուրիստ Կալֆի գործերին, Գերմանիայում հրատարակված «Գրաֆիշե կունստ» (Գրաֆիկական արվեստ), «Մոդեռն կունստ» (Ժամանակակից արվեստ) ալբոմներին և այլն: Տես ԵԼԺ 10, էջ 420-421:

իր հեղինակային իրավունքը Ռուսաստանի սովյալներին, Գորիի երկրաշարժից տուժածներին, հայ գաղթականներին ու որբերին օգնելու նպատակով: Եվ ահա, երբ Բարեգործական ընկերությունը մերժեց նպաստ տալ Վարսենիկ Աղասյանին, «հարուստ» Թումանյանն «իր գրպանից հանեց մի քանի հազար մենշևիկյան բոն»՝ և ստանձնեց Բարեգործականի գործառույթը (ԹԺՀ, 660):

Այդ օրվանից Վարսենիկն «ամեն մի դժվարին դեպքում» անմիջապես դիմում էր բանաստեղծին և միշտ արժանանում «հոգատար վերաբերմունքի»: Վարսենիկը Թումանյանին երբեմն հանդիպում էր «Հասկերի» խմբագրատանը, որտեղ բանաստեղծը հաճախ էր բարձրաձայնում մանկական գրականության զարգացման հետ կապված իր մտահոգությունները: Ազատ Մանուկյանի հավաստիացմամբ՝ «Հասկերի» «ընտանիքում» Թումանյանը Վարսենիկ Աղասյանին ասել է. «...**Մանուկների աշխարհով ապրելը շատ է լավ: Մանկական գրողներ քիչ ունենք, շատ քիչ ենք մտածում էդ ուղղությամբ. հենց էնպես, մեկ-մեկ, ասես թե խաթրի համար ենք մեր գրվածքները համեցեք անում էդ մեր կյանքի ծաղիկներին**» (ԹԺՀ, 657): Ոչ միայն այս, այլև շատ անգամներ Թումանյանը փորձել է գրական կեռմաններում ուղղորդել երիտասարդ բանաստեղծուհուն:

Թումանյանի ազգային գործունեությամբ խանդավառվել, հայ որբերի ու գաղթականների նկատմամբ նրա անձնազոհ նվիրումով հիացել ու նրա բարությունից ուժ են ստացել Էջմիածնում նրա ղեկավարությամբ աշխատած բազմաթիվ գթության քույրեր, որոնցից մեկն էր **Նվարդ Եգիբյան-Բաղդասարյանը:** Նա վկայում է Թումանյանի հայրական ջերմ վերաբերմունքն ու հոգատարությունը երիտասարդ աղջիկների ու կանանց հանդեպ: 1915 թ. ամռանը Էջմիածնի «դժոխքում» աշխատած Նվարդն այդ օրերի մասին հիշելիս նկատում է, որ ամեն անգամ Էջմիածնի ճաշարանի աշխատակիցներին հանդիպելիս Թումանյանը հարցնում էր. «Օրիորդների մասին հոգում եք... Չէ՞ որ առավոտից գիշեր այստեղ աշխատում են» (ԹԺՀ, 686): Բանաստեղծն անկեղծ անհանգստանում էր, երբ գթության քույրերից ոմանք հրաժարվում էին սննդից՝ հանուն որբերի: Նա ասում էր. ««Ո՛չ, այդպես չի՛ կարելի, այլապես կարգելեմ ձեզ աշխատել»... Ինչպիսի՜ հոգատարություն դեպի բոլորս՝ մեծերն ու փոքրերը, հիվանդներն ու առողջները,- բացականչում է հուշագիրը: - Ես երջանիկ եմ զգում ինձ, որ առիթ եմ ունեցել աշխատելու նրա ձեռքի տակ» (ԹԺՀ, 686):

Թումանյանի արվեստի հմայքի ներքո բազմաթիվ կանայք ու աղջիկներ հեռվից հեռու երկրպագում էին բանաստեղծին: Նրանցից մեկն էր դերասանուհի **Արուս Ոսկանյանը**[17]**:** Նա մինչև պոետի հետ ծանոթանալը երազում

17 **Արուս Ոսկանյան** (օրիորդական անուն-ազգանունը՝ Արուսյակ Դարպայան) - 1899, Կոստանդնուպոլիս - 1943 Երևան - դերասանուհի, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ, «Ճակա-

Արուս Ոսկանյան (1899-1943)

էր նրա հետ հանդիպելու մասին. «Ես խորին պաշտամունք էի տածում դեպի երազի պես հեռու Հովհաննես Թումանյանը» (ԹԺՀ, 724): Իսկ ծանոթանալուց հետո դերասանուհու «միակ իղձն էր... երբևէ գեթ հեռվից տեսնել նրան» (ԹԺՀ, 724): Թումանյանի հանդեպ անսահման հիացմունքն ու ակնածանքը համարձակ դերասանուհուն ստիպում էր բեմից հարյուրավոր հանդիսատեսների առջև շփոթվել, կաշկանդվել. «Քաշվում էի նրա ներկայությամբ նույնիսկ բառ արտասանել ու հափշտակված դիտում էի նրա **պարթև հասակը, լուսագես գլուխը, գեղեցիկ ու պայծառ դեմքը, խոհուն ու բարի աչքերը**» (ԹԺՀ, 724):

Բանաստեղծուհի **Հռիփսիմե Պողոսյանը**[18], ծնողներից թաքուն վերցնում էր հեռադիտակը և պատշգամբից հետաքրքրությամբ դիտում դիմացի տան պատուհաններից ներս, որտեղ ապրում էր Թումանյանը. «**Սիրտս սկսում էր արագ բաբախել, ես ուզում էի ներս թափանցել այդ խորհրդավոր սենյակը, որ մի անգամ ևս տեսնեմ պոետի թեթև կկոցած աչքերը, նրա ժպիտը...** Բայց լսվում էր ծնողներիս ոտնաձայնը, և ես արագ թաքցնում էի հեռադիտակը» (ԹԺՀ, 765): Երեսուն տարով բանաստեղծից փոքր Հռիփսիմեի համար Թումանյանը «մեծ սրտի տեր էր... և երբեք չէր սպառվում նրա հարուստ էությունը» (ԹԺՀ, 769):

Հռիփսիմե Պողոսյան (1899-1972)

Նույն տարիքի մեկ այլ բանաստեղծուհի՝ **Ֆլորա Դաստակյանը**, հավե-

---

տագրական կանանց» կերպարների լավագույն մեկնաբանող:

18 **Հռիփսիմե Պողոսյան** (Հռիփսիմե Միսակի Ասիլյան, 1899, ապրիլի 24, Թիֆլիս - 1972, նոյեմբերի 26 Երևան), հայ բանաստեղծուհի, թարգմանչուհի, ՀԽՍՀ մշակույթի վաստակավոր գործիչ (1967), ԽՍՀՄ գրողների միության անդամ 1934-ից: Նա բանաստեղծուհի էր, Ներսիսյան դպրոցի IV դասարանի հայոց լեզվի Թումանյանի ուսուցիչ և մտերիմ բարեկամ Միսակ Ասիլյանի դուստրն էր: Ամուսինը Հովհաննես Պողոսյանն էր, որը 1946-1948 թվականներին եղել է Երևանի համալսարանի ռեկտոր:

Ազնիվ Հրաչյա

լում է. «**Ամեն անգամ Թումանյանի մոտ մտնելիս ես ինձ զգում էի մի հեքիաթային, կախարդական կղզու վրա**» (ԹԺՀ, 772): Երբ նա առաջին անգամ ծանոթանում է բանաստեղծի հետ, հուզմունքից պապանձվում է. «Ասես իմ լեզուն կապվել էր» (ԹԺՀ, 772): Նա նույնպես ապրում էր Թումանյանի հարևանությամբ և փորձում էր հեռվից հաղորդակցվել նրա կյանքին. «Մեր սենյակից երևում էին նրա արծաթ մազերը՝ ողողված կանաչ լուսամփոփի լույսով: Ես, պառկած իմ անկողնում, նայում էի այդ կանաչ լույսին և այրվում հետաքրքրությունից» (ԹԺՀ, 773): Եվ քանի որ նա բանաստեղծի դստեր՝ Անուշի դասընկերուհին էր, անվերջ խնդրում էր նրանից՝ իրագործել իր «անիրականանալի երազը», «սրտի միակ իղձը»՝ ծանոթացնել Թումանյանի հետ: Անուշը, իհարկե, կատարում է ընկերուհու ցանկությունը: Ֆլորան գնում է բանաստեղծի տուն և իր հետ տանում իր ստեղծագործությունների տետրը: Ֆլորան հուզմուքից կարկամում է, սակայն շուտով ուշքի է գալիս՝ բանաստեղծին ընկալելով իբրև սկսնակների բարեկամ, իբրև «գրական մատաղ ծիլերի և կոկոնների հոգատար պարտիզպան», ով ուներ «**սիրելի, անկրկնելի հայացք, որի նմանը ես չեմ զգացել իմ ամբողջ կյանքում**» (ԹԺՀ, 773):

Իոաննա Բրյուսովա

Դերասանուհի **Ազնիվ Հրաչյան**[19] բանաստեղծի հետ ծանոթությունից և հանդիպումից տարիներ անց՝ 1909 թ. նոյեմբերի 17-ին, Բաքվից գրում է. «**Իմ ազնիվ ու ընտիր բարեկամ**... Թեև չեմ տեսել Ձեզ երկու տարիներից ի վեր, բայց **հոգով ապրել եմ այնտեղ, ուր որ Դուք եք ապրել**... գալով ընտիր բառին՝ Դուք ոչ միայն իմ ընտրելին եք, ոչ...

Ա՛հ, ինչքան ցանկալի էր տեսնել Ձեզ մի անգամ»[20]:

Թումանյանի մասին հայուհիներից ոչ պակաս, գուցե ավելի մեծ սիրով ու հիացմունքով են գրում օտարազգի կանայք: **Իոաննա Բրյուսովան**, գրելով իր և ամուսնու 1916թ. թիֆլիսյան հանդիպումներից ստացած տպավորությունների մասին, խոստովանում է, որ իր բոլոր հի-

19 **Ազնիվ Հրաչյա (Մինասյան Ազնիվ Գրիգորի)** (1853, հունիսի 25, Կ. Պոլիս - 1919, մայիսի 20, Դիլիջան), դերասանուհի:

20 Թումանյան, Ուսումնասիրություններ և հրապարակումներ, հտ. 5, Եր., ՀՀԳԱԱ «Գիտություն» հրատ., 1998, էջ 333-334: Այսուհետև սույն աշխատությունից մեջբերումներ անելիս կնշվեն ՈՒՀ, հատորն ու էջը:

շողություններից Թումանյանին վերաբերող հուշերը «**ամենապայծառն են**»: «**Բոլոր դեմքերը մթագնել են անմոռաց բանաստեղծի անջնջելի կերպարի առաջ**» (ԹԺՀ, 694): Նա Թումանյանին բնութագրում է որպես «**ամենասիրալիր և ամենասրտակից մարդ**» (ԹԺՀ, 694):

Բոլոր կանանց տպավորությունների, զանազան կարծիքների մեջ առանձնանում են վրաց բանաստեղծուհի **Նինո Տաբիձեի** բնութագրումները: Այն բարությունը և լույսը, որ առկա է Թումանյանի յուրաքանչյուր ստեղծագործության մեջ, դրսևորվել է նաև նրա արտաքինի, շարժուձևի, կեցվածքի մեջ: Հոգեբանները որոշ կապ են տեսնում մարդու դեմքի արտահայտության և նրա բնավորության միջև: Թումանյանի դեմքի արտահայտությունը ժպիտն էր, մշտական լույսն ու ջերմությունը, որ նա տարածում էր իր շրջապատում: Հենց այդ լույսի, դրական էներգիայի մասին է գրում Նինո Տաբիձեն՝ նկատելով, որ նրա երևալով՝ օրը ցերեկով լույսը և ջերմությունը շատանում էին նույնիսկ ամռանը և բաց տարածքում. «Հանկարծ տեսնեմ հեռվից գալիս է մի **բարձրահասակ ծերունի. ասես արև ճառագայթելով իր շուրջը՝ թվում էր, նա կյանք ու բերկրանք է տալիս ողջ շրջապատին**» (ԹԺՀ, 731): Նինոն բնորոշում է բանաստեղծին իբրև «**բարի ոգի**», հայ ժողովրդի ազնվության լավագույն արտահայտիչ:

1920 թ. Սերգեյ Գորոդեցկին Տիցիան Տաբիձեի բնակարանում զեկուցում էր կարդալու պոեզիայի մասին: Ժամանակները ծանր էին ու խառնակ, ամենուր հացի խնդիրը առաջնային էր դարձել: Տանտիկինը՝ Նինո Տաբիձեն, մտահոգ էր. «Ես սարսափի մեջ ընկա: Մենք դեռ նոր էինք ամուսնացել: Մեր բնակարանը դատարկ էր: Ոչինչ չունեինք և ոչ մի կոպեկ փող»: (ԹԺՀ, 732)

Զեկուցումից հետո սեղանի շուրջն են հավաքվում նկարիչներ Սուդեյկինը, Սորինը, Գուդիաշվիլին, բանաստեղծուհի և հերցոգուհի Զամթարի Լայխտեմբերգսկայան, Մելիքովները, բանաստեղծ Ռաֆալովիչը, Պաոլո Յաշվիլին, Նիկոլայ Միծիշվիլին, ֆուտուրիստ Իլյա Զդանևիչը և շատ ուրիշներ: Թումանյանը, տեսնելով, որ սեղանը շատ է «համառոտ», լռելյայն վեր է կենում և մոտ կես ժամով անհետանում: Որոշ ժամանակ անց նա վերադառնում է: Նինո Տաբիձեն պատմում է. «Բաց եմ անում դուռը, կանգնած է Թումանյանը՝ պայծառ ժպիտը դեմքին, նրա ետևից կանգնած են մշակները՝ ահագին կողովներով:

- Աղջի՛կս, այժմ կարող ես չհուզվել, ես ամեն ինչ բերել եմ:

Նայում եմ. մի կողովում ուտելիքներ են, ամաններ, իսկ մյուսում՝ գինի»: (ԹԺՀ, 732)

Մելիք-Հայկազյաններ

Հեղինե Մելիք-Հայկազյան (1874-1968)

Թումանյանի մտերիմ բարեկամուհիներից է եղել **Հեղինե Մելիք-Հայկազյանը**[21]: Նա մանկական պատմվածքների, ճամփորդական տպավորությունների գրքերի հեղինակ է: Հեղինեն եղել է պոետի համար շատ թանկ ու սիրելի կանանցից, ամենահաճելի զրուցակիցներից, բարեկամուհիներից մեկը: Նրա սիրած թեման բանաստեղծի հետ զրուցելիս, բացի գրականությունից և ազգային խնդիրներից, եղել է կանանց հարցը: Հեղինեի համար Թումանյանն Աբասթումանի հովիտներից ծաղիկներ էր քաղել, որ ուղարկեր Լոնդոն (9, 393): Ամեն անգամ ընկերների հետ ուղևորություն նախաձեռնելիս Հեղինեն աշխատում էր մասնակից դարձնել նաև Թումանյանին: 1904 թ. հուլիսին նա խնդրում է բանաստեղծին իրենց խմբի հետ ուղևորվել Էջմիածին: Պահպանվել են Հեղինեին ուղղված՝ բանաստեղծի նամակներից վեցը: Դրանք վկայում են նրանց ջերմ, անկեղծ բարեկամական հարաբերությունների մասին: Հեղինեի կյանքի ու ճակատագրի նկատմամբ բանաստեղծի որոշակի հետաքրքրության ապացույցներ պահպանվել են նաև Փիլիպոս Վարդազարյանին, իշխանուհի Մարիամ Թումանյանին, Զապել Եսայանին և այլ հասցեատերերին ուղղված նամակներում: Նա Հեղինեին արժանի հարսնացու էր համարում ընկերոջ՝ Լևոն Շանթի համար, և հրճվում էր այդ միությունը իրականացված տեսնելու մտքից: Այդ մասին վկայում է Փիլ.Վարդազարյանին ուղղված՝ բանաստեղծի 1902 թ. հոկտեմբերի 11-ի նամակը. «Ի՞նչ է անում այդ միջազգայինը[22]: Մենք լավ էինք դրա բանը շինել... Բայց, ափսո՜ս, որ երազ էր» (9, 330): Բանաստեղծը նկատի ուներ 1902 թ. Շվեյցարիայից Շանթի գրած նամակից ստացած սխալ տպավորությունը: Նամակը ստորագրել էին նաև Վարվառա և Հեղինե Մելիք-Հայկազյանները, իսկ նամակագիրն էլ խոստովանել էր իր սիրահարված լինելը: Թումանյանն էլ անմիջապես, ցանկալին իրողության տեղ դնելով, եզրակացրել էր, որ Շանթը սիրահարվել է օրիորդ Մելիք-Հայկազյանին,

21 **Հեղինե Մելիք-Հայկազյան** - 1874, Շուշի - 1968 - հայ գրող, մանկավարժ: Հայրը զինվորական և թարգմանիչ Ալեքսանդր Մելիք-Հայկազյանն էր (ով նաև Բաֆֆու «Փունջերը»-ի տպագրության մեկենասն էր): Նախնական կրթությունը ստացել է Շուշիում, այնուհետև ուսումը շարունակել է Անգլիայում և Ֆրանսիայում: Ճանապարհորդել է բազմաթիվ երկրներում, հրապարակել է ուղեգրություն Ճապոնիայի մասին (Թիֆլիս, 1905):

22 Թումանյանն այդպես կատակով անվանում էր Լևոն Շանթին.

Մելիք-Հայկազյանների ամառանոցում

և վստահ էր, որ շատ ներդաշնակ զույգ կկազմեն: Ոգևորված՝ նա իր ուրախությունն էր հայտնում Ֆիլիպին[23]:

Սակայն Հեղինեն ամուսնացավ ժամանակի հայտնի հասարակական գործիչ Տիգրան Բեկզադյանի հետ: Այդ միությունը մազաչափ անգամ չնվազեցրեց Թումանյանի և Հեղինեի մտերմությունը: 1910 թ. ամռանը՝ հունիսի 25-ին, երբ Թիֆլիսում սաստիկ շոգեր էին, և խոլերա էր տարածված, Հեղինեն առաջարկում է հոգնած ու հիվանդ բանաստեղծին գալ Աբասթուման՝ իրենց ամառանոցում հանգստանալու: Թումանյանը սկզբում մերժում է. «Երեկ տիկ. Մելիք-Հայկազյանը ու Հեղինեն գնացին Աբասթուման, եկան ինձ հրավիրեցին իրենց մոտ, տեղ են պատրաստել, այսինքն՝ սենյակ և ամեն բան» (10, 92): Մերժման պատճառներից մեկը Թիֆլիսում Ամենայն հայոց հայրապետի և Վորոնցով-Դաշկովի հանդիպման լուսաբանման անհրաժեշտությունն էր «Հորիզոնում»[24]: Թումանյանն անձամբ հանդիպել էր Իզմիրլյան կաթողիկոսին և նրան խոստացել էր Էջմիածին գնալ: Բայց քանի որ բանաստեղծը հիվանդ էր, Էջմիածին գնալու փոխարեն նա, այնուամենայնիվ, որոշում է ընդունել Մելիք-Հայկազյանների հրավերը և հուլիսի 14-ին ուղևորվում է Աբասթուման:

Նույն օրը երեկոյան Թումանյանը հասնում է Աբասթուման. «Ինչ ասել կուզի, որ Հեղինեանք շատ ուրախացան ու հրճվանքով դիմավորեցին» (10, 94): Մելիք-Հայկազյանները ոչ միայն բոլոր հարմարություններով անվճար սենյակ էին հատկացրել[25], այլև տրամադրել էին «մի մարդ ու կին էլ ծա-

23 Իրականում Շանթը սիրահարվել էր ոչ թե Հեղինե Մելիք-Հայկազյանին, այլ Ջավահիր (Ջավո) Ներսիսյանին, որի հետ էլ նա ամուսնացավ 1903 թ.: Հարսանիքին Շանթը Թումանյանին հրավիրել չէր կարող, քանի որ արարողությունը տեղի էր ունենալու Բաքվում: Սակայն բանաստեղծը մեծ ցանկություն ուներ մասնակից լինելու ընկերոջ ուրախությանը. 1903 թ. սեպտեմբերի 13-ին կնոջը գրում է. «Լևոնը Բաքվից եկավ, թե չէ: Անպիտանն ինչու չէր իմացնում, որ գոնե հեռագրով շնորհավորել կարողանայինք պսակը» (9, 417):

24 Այդ պահին Թումանյանը «Հորիզոնի» փաստացի խմբագիրն էր, թեև իբրև «Դաշնակցական գործով» մեղադրյալ՝ թերթը չէր ստորագրում:

25 Երբ Մելիք-Հայկազյանների որդին գալիս է Աբասթուման, նրանք մեկ այլ սենյակ են

ռա» (10, 94): Բանաստեղծը կնոջը գրում է. «Բայց թե իմանաս, ինչքան է դժար էստեղ մի անկյուն գտնելը և ինչքան է թանկ – կզարմանաս» (10, 96): Այդ շրջանում Աբասթումանում սենյակի վարձը մոտ 200 ռուբլի էր (այդքան վճարում էր Լիսիցյանը): Ամեն օր Հեղինեի հետ զբոսնելով սոճու անտառներում՝ պոետը զգում էր, որ առողջանում է. «Թիֆլիսի շոգերից ու հիվանդությունից հետո ընկա Աբասթումանի հով անտառները և նոր էստեղ եմ նկատում, որ համ հիվանդ եմ եղել, համ հոգնած: Այժմ համ հանգստանում եմ, համ առողջանում» (10, 98): Սովորության համաձայն, Թումանյանը նույնիսկ մի փոքր լավ ու առողջ զգալիս սկսում էր մարդկանց հրավիրել ու խնջույքներ կազմակերպել. «Մի օր տանեցիները գնում են անտառ զբոսնելու, հայրիկին թողնում են տանը մենակ, որ պառկի հանգստանա,- պատմում է բանաստեղծի դուստրը: - Վերադառնում են երեկոյան դեմ, տեսնում են սեղան նստած հյուրեր» (ՀՀ, 57): Այն, որ Թումանյանը կազդուրվում էր և կարողանում էր պարապել, ստեղծագործել, նույնիսկ խնջույքներ կազմակերպել, զգալի չափով պարտական էր Հեղինեին: Կնոջը՝ Օլգային հասցեագրած նամակում բանաստեղծը գրում է. «Հեղինեն ամեն օր զահլես տանում է - հայ էս հարմարությունը սարքեմ, էն հարմարությունը, որ պարապես, տեսնենք» (10, 98): Թումանյանը վերադառնում է Թիֆլիս և պատրաստվելով նամակ գրել Հեղինեի ամուսնուն՝ Տիգրան Բեգզադյանին, Հեղինեին ուղղված 1910 թ. օգոստոսի 22-ի նամակում կատակում է, թե նրա ամուսնուն կտեղեկացնի՝ «ինչպես Դուք զանազան բանաստեղծների հետ ման էիք գալի Աբասթումանի անտառներում: Տեսնենք՝ ինչ հետևանք կունենա» (10, 105):

Հեղինե Մելիք-Հայկազյանը մոր՝ Վարվառայի և եղբոր՝ Ժոզեֆի հետ

Հեղինեն ամեն անգամ պոետին ամառանոց հրավիրելիս շեշտում էր, որ այդ նա է իրեն լավություն անելու՝ հրավերը չմերժելու դեպքում: «Մենք հատուկ Ձեզ համար մի սենյակ ունենք, որտեղ որ լավ հնարավորություն կունենաք պարապելու. դրանից հետո էլ գեղեցիկ զբոսանքներ կկատարենք սարե-

---

վարձում Թումանյանի համար:

րի վրա... **Ձեզ հետ ժամանակ անցկացնելու առավելություն կունենանք:** ... Անմիջապես եկեք»,- գրում է Հեղինեն 1904 թ. հուլիսի 11-ին (ՈւՀ 5, 303):

Թումանյանին սիրում և նրա տաղանդը բարձր էր գնահատում նաև Հեղինեի մայրը՝ Ռաֆֆու մեկենաս, «Կայծերի» և Ավ. Արասխանյանի մի քանի գրքերի հրատարակիչ, զինվորական Ալեքսանդր Մելիք-Հայկազյանի կինը՝ **Վարվառան (1850-1906)**: Վերջինս գրողի անձի և գործի նկատմամբ իր հիացմունքով աղջկանից հետ չէր մնում: Նա մեծ հոգատարությամբ էր շրջապատում բանաստեղծին, մշտապես զբաղվում էր նրա առողջ սննդի և ապաքինման հարցերով, աշխատում էր երեկոները թույլ չտալ տնից դուրս գալ, որ, ինչպես Թումանյանն է գրում. «Ինձ ուրիշ տեղ չտանեն քեֆ անելու, չհոգնեմ» (10, 107): Ամառանոցում եղած ժամանակ էլ պոետն իր հերթին հոգ էր տանում Վարվառայի մասին, ուղեկցում էր նրան բժշկի, նրա համար բարձրաձայն ընթերցում էր բոլոր այն գործերը, որոնք տիկին Վարվառան ցանկանում էր լսել: Մահից երկու օր առաջ՝ հավանաբար 1910 թ. օգոստոսի 21-ին (օգոստոսի 22-ին Թումանյանն արդեն Թիֆլիսում էր), **Վարվառա Մելիք-Հայկազյանի** խնդրանքով բանաստեղծը կարդում է իր «Դեպի անհունը», որը տիկին Վարվառան շատ էր սիրում: Հավանաբար, գալիք մահվան սարսափը կանխազգալու և այն հաղթահարելու մղումն էր դրդել տիկնոջը այդ օրերին անվերջ խորհելու «Դեպի անհունի» բովանդակության մասին: Համենայն դեպս, այդպես էր կարծում պոեմի հեղինակը: Նա գրում է. «Եվ թաղման ժամանակ ես և Հեղինեն ու բոլոր մոտիկները շարունակ կրկնում էինք նրա սերը ու միտքը «Դեպի անհունը»: Ահա ձեզ մարդն ու իր կյանքը» (10, 107): Այս խոսքերը վկայում են նաև, որ Թիֆլիս հասնելով և Աբասթումանից իր դուրս գալու հաջորդ օրը տիկին Վարվառայի մահվան լուրը լսելով՝ բանաստեղծն անմիջապես վերադարձել է այնտեղ՝ վերջին հրաժեշտը տալու հանգուցյալին և իր ցավակցությունն անձամբ հայտնելու Հեղինեին ու նրա ընտանիքին:

Թումանյանը՝ որպես մարդ և որպես բանաստեղծ, այնքան թանկ էր Վարվառա Մելիք-Հայկազյանի համար, որ նա իր կտակում հիշատակել էր նաև գրողի անունը: Ըստ այդ կտակի՝ բանաստեղծը պետք է ստանար մի մեծ գումարի տոկոսներ՝ տարեկան 600 ռուբլի: Հանուն Թումանյանի, ու նաև մանկագրությանն աջակցելու համար, 600 ռուբլի էլ կտակով հատկացվում էր «Հասկեր» մանկական ամսագրին[26]: Հեղինեն և հանգուցյալի մյուս ժառանգները բանաստեղծին միանվագ վճարել են 3.000 ռուբլի[27]:

26 «Հորիզոն», 1910, թիվ 196, սեպտեմբերի 5:

27 Այդ գումարից ոչ մի կոպեկը Թումանյանը չի ծախսել անձնական նպատակներով. 1913 թ. հոկտեմբերին նա մի նամակով, որը չի պահպանվել, դիմել է Հեղինեի ամուսնուն՝ Տիգրան Բեգզադյանին, խնդրելով ըստ կտակի իր ստանալիք ամբողջ գումարը տրամադրել գրողների

* * *

1890-ական թվականներին «Գրողի նամակները» հոդվածի սևագիր պատառիկներում Թումանյանը մատնանշում է գրողի ազդեցության, ներշնչանքի և ոգևորության յոթ աղբյուր՝ **ընտանիք**, ուր ծնվում և մեծանում է նա, **շրջապատ ու միջավայր** («անմիջական շրջան»), **հասարակություն, մամուլ, ազգ**՝ իր ներկայով ու անցյալով, **բնություն** և **ժամանակ՝ դարաշրջան** (6, 409): Այս թվարկման մեջ բացակայում է սերը կնոջ նկատմամբ: Իր ժամանակի գրական համապատկերում Թումանյանն աչքի չի ընկնում սիրային քնարերգուի նկարագրով, թեև ինքնադրսևորման այդ ձևն ավելի կամ նվազ չափով բնորոշ է եղել բանաստեղծին ստեղծագործական ողջ կյանքի ընթացքում:

Երիտասարդ տարիներից Թումանյանը փորձել է բացատրել սիրո քնարերգության ուղիով չընթանալու պատճառները, որոնցից մեկը շրջապատող կանանց նկարագիրն էր, այն «ծածկամիտ, հաշվող, «խելոք»» կանանց, որոնց «ոչինչ, ոչինչ չի թոցնում, նույնիսկ սերը»: Իսկ այն կինը, որը տղամարդու համար անփոխարինելի արժեք չէ, չի կարող ոգևորել ու ներշնչել: Այնուամենայնիվ, թերևս ոչ մի արվեստագետ, բանաստեղծ չի կարողացել շրջանցել սիրո թեման:

Թումանյանի պոեզիայում երեք-չորս տասնյակ բանաստեղծություններ կազմում են գրողի սիրային քնարերգության շերտը: Այս թեմային բանաստեղծը դիմել է 80-90-ական թթ.: 21 տարեկանում Գևորգ Ասատուրի վկայությամբ Թումանյանը «Ես սիրել եմ վարդը տժգույն...», «Նա նստած էր» և այլ բանաստեղծություններ նվիրել է Օլգա Տեր-Աստվածատրյանին, որը, հուշագրի վստահեցմամբ, պոետի «ամենամեծ ուշադրության առարկան» էր (ԹԺՀ, 352): 1902 թ. բանաստեղծը սիրո թեմայով ոտանավորներին մեկընդմիշտ հրաժեշտ է տվել: Թումանյանը երեսուներեք տարեկան էր, երբ գրեց սիրային վերջին բանաստեղծությունը՝ «Պանդուխտ եմ, քույրիկ, մանուկ օրերից...»:

Սիրո հրաժեշտի թեման հենց սկզբից առկա էր պոետի քերթվածներում: Եթե 90-ական թթ. նրա քնարական հերոսը վերադարձի հույս էր փայփայում («Եվ տեսության ժամի համար/Զըմոռանաս աղոթել», 1, 96), ապա 1902 թ. պոետն այրում է ետդարձի բոլոր կամուրջները («Եվ կյանքի հաճույքն, և կնոջ սերը/Ընկան իմ սրտից», 1, 203):

համար ստեղծագործական տուն կառուցելու: Այդ նպատակով նա Իգատևկում հողամաս է գնում Բեգզադյանի վճարած գումարով: Սակայն անբարենպաստ ժամանակները՝ բանտարկությունը և դրան հաջորդած ծանր ու մղձավանջային տարիները, անհնար են դարձնում գրողների տան կառուցումը: Այնուամենայնիվ, բանաստեղծն իր ցանկությունից չի հրաժարվել մինչև կյանքի վերջը: Այդ նպատակի իրագործման համար 1922 թ. հունիսի 17-ին նա դիմել է Արամայիս Երզնկյանին (10, 417): Սակայն պոետի երազանքն այդպես էլ չի իրականացել:

Իհարկե, սա ամենևին չի նշանակում, թե երեսուներեք տարեկանից հետո բանաստեղծը չի ունեցել հրապուրանքներ, քնարական այնպիսի ապրումներ, որոնք կարող էին կենսական ազդակ հանդիսանալ սիրային բանաստեղծությունների համար: Դեռ 1892 թ. Թումանյանը գրում էր. «Ծանր է ապրել սիրազուրկ» (1, 107): Այնուամենայնիվ, սիրային քնարերգությունը երբեք գերիշխող տարերք չի եղել Թումանյանի պոեզիայում, թեև հոգեկան հափշտակության, հրապուրանքի ու նաև հիասթափության պահերը նրա կյանքում եղել են նույնքան, որքան շատ սիրերգու պոետների կյանքում: Թումանյանի՝ սիրերգակ բանաստեղծ չլինելու պատճառները հիմնականում երկուսն են՝ հանրական և անհատական: Այստեղ իրենց դերն են խաղացել ինչպես հասարակական պայմանները, կյանքի բազմաբնույթ հարցերի, մարդկային տարբեր զգացումների և պատկերացումների հետ առնչակցությունը, ազգային-սոցիալական խնդիրների նկատմամբ չմարող հետաքրքրությունը, այնպես էլ սիրուց մշտապես հրաժարվելու տրամադրությունները, որոնք պայմանավորված են եղել վաղ հասակից ամուսնացած լինելու հանգամանքով:

Բայց երկինք վըկա,
Չեմ եղել երբեք ես այդքան ըստոր,
Որ կարենայի այս դաժան բանտում
Լինել բախտավոր (1, 202):

Թումանյանի սիրային քնարերգության մեջ առհասարակ դժվար է առանձնացնել ազատ ներշնչանքով, միայն խոհերի ու երևակայության «փակ շրջանակում» գրված բանաստեղծություններ: Շուրջ չորս տասնյակի հասնող այս մոտիվով գրված քերթվածներում ավելի մեծ քանակ են կազմում այն երկերը, որոնց գրության շարժառիթներն ու հանգամանքները մեզ անհայտ են, ինչպես, օրինակ, «Ներիր, ով կույս, որ հուզեցի...», «Եթե իմ վերջին հայացքը մնա...», «Ո՜հ, խնայեցեք, մի՛ հիշեցնեք ինձ...» և այլն: Հայտնի չեն նաև մի շարք սիրային բանաստեղծությունների կենսական շարժառիթները և այն, թե ովքեր են եղել այդ երկերի նախատիպ մոռացված կանայք: Խոսքը վերաբերում է «Հրաժեշտ» (1891 թ. մայիսի 27), «Երբ խոսում էիր, պատմում էիր ինձ» (1891 թ. հոկտեմբերի 10), «Խոստովանություն» (1891 թ. նոյեմբերի 9), «Ուրու» (1891), «Սիրելի աչեր» (1891), «Թե հոգնել ես» (1891), «Ռոմանս» (1892 թ. հունվարի 13), «Ես սիրել եմ վարդը տըժգույն» (1892 թ. մարտի 18), «Հիշիր» (1892 թ. մարտի 20), «Ինձ մի՛ խնդրիր, ես չեմ երգի» (1892 թ. մարտ) և այլ ոտանավորների:

Սակայն այդ բանաստեղծություններից յուրաքանչյուրը կարող էր իր կենսա-

կան որոշակի դրդումներն ունենալ, քանի որ Թումանյանի պոեզիային առավել բնորոշ է սերտ, անմիջական կապն իրականության հետ:

Բնականաբար, կենսական ազդակների անմիջական տպավորությունների հիման վրա են գրվել հատկապես այն բանաստեղծությունները, որոնք ձոնված են որոշակի կանանց, ինչպես օրինակ «Նրան» (1890 թ. հոկտեմբերի 5), «N.N-ին» (1891 թ. ապրիլի 10), «Օր. Բ-ին» (1892), «Օր. Մ.Վ-ին» (1892), «Օր. Օ. Գ-ի ալբոմում» (1893), «Օր. Ն.Ս-ին» (1893), «Օր. Մ-ին» (1899), «Օր. Պ.Պ-ին» (1900-ական թթ.):

Այս շարքի առաջին երեք բանաստեղծությունների հասցեատերերն անհայտ են, իսկ մյուսները ձոնված են **Մարիամ Վարդազարյանին,** Պերճ Պռոշյանի դուստր **Պերճանուշ Պռոշյանին**, **Օսան Գիրգիդյանին**՝ Թումանյանի կնոջ ազգականուհուն, **Նունեին**, որը 1890-ական թվականներին Թիֆլիսում աչքի ընկնող հայ մտավորական կանանցից էր, Հնչակյան կուսակցությանը հարող մանկավարժ:

Դու մի հավատա ժպտուն աչքերին

Վարդազարյան քույրեր

90-ական թթ. Թումանյանը հաճախ էր լինում իր ամենամտերիմ ընկերներից մեկի՝ Փիլ. Վարդազարյանի տանը, որտեղ մշտապես հանդիպում էր նրա քույրերին: Նա այնքան հաճախ էր լինում այնտեղ, որ համարվում էր Վարդազարյանների ընտանիքի անդամը: Ֆիլիպի քույրերը՝ Շուշանիկը, Լիզան, Մարուսյան (Մարիամ, Մարիա), ավարտել էին գիմնազիան և որոշ չափով հետաքրքրվում էին գրականությամբ՝ ընդգծելու համար իրենց մտավորական կին լինելը: Նրանց ժամանցը թղթախաղն էր, առօրյա անցուդարձի մասին զրույցները: Սակայն Թումանյանի ներկայությամբ նրանց հանդիպումները վերածվում էին գրական երեկոների: 1902 թ. սեպտեմբերի 15-ին Թումանյանը Աբասթումանից Ֆիլիպին գրում է. «Ուրախ օրեր ենք անցկացնում: Բոլորը շատ լավ են... Շուշանն էլ շատ լավ է. բայց երբեմն բանաստեղծորեն թախծում է, և այն ժամանակ փիլիսո-

Շուշան Վարդազարյան

փայություն ենք անում քնքույշ բաների մասին ու խանդով հառաչում, որ շուտով պրծնենք ու ծիծաղենք: Իրիկունները գրական երեկոներ ենք կազմում, մայրիկը դառնում է մեր ժողովուրդը և նրա համար սրտառուչ բաներ ենք կարդում՝ միշտ աշխատելով ենթարկել անակնկալների» (9, 307-308):

Փիլ.Վարդազարյանի հատկապես կրտսեր քրոջ՝ Մարուսյայի հետ պոետն ավելի մտերիմ էր: 1896-1900 թթ. Շուշանիկի ալբոմում միայն մի ոտանավոր էր գրել, իսկ Մարուսյայի ալբոմում գրում է էքսպրոմտ բանաստեղծությունների մի շարք՝ «Երբ թույլ եք տալիս», «Սրտիս խոստումը», «Տպավորություններ», «Շնորհավոր Նոր տարի...» և այլն:

Ըստ ամենայնի՝ **Մարիամ Վարդազարյանն** ինչ-որ մի պահ «ոգևորիչ» է եղել և բանաստեղծին պարգևել է «զգացմունք սրտում կրելու»՝ իր զտարյուն ազնիվ սրտով: Մարիամին (Մարիային) է նվիրված 1898 թ. գրված «Մոռացված վարդերը»:

Չեն մոռանալ աղջիկ ու սեր,
Չեն մոռանալ վարդ ու բույր...
Առանց նրանց կյանքը ձմեռ
Ու գիշեր է սևաթույր (1, 168):

Այս բանաստեղծությունը գրում է այն բանից հետո, երբ Մարիամը այցելում է Թումանյանի նոր բնակարանը: Բանաստեղծը նրան մի փունջ ծաղիկ է նվիրում, իսկ երիտասարդ աղջիկը մոռանում է այն ու գնում: Հետևյալ օրը պոետն իր բարեկամուհուն է ուղարկում մոռացված փունջը հինգ տուն բանաստեղծության հետ: Օրիորդ Մարիամ Վարդազարյանին է նվիրված նաև «Օր. Մ-ին» բանաստեղծությունը, որը նրա ալբոմում ուներ «Ծաղիկներ» վերնագիրը: Հեղինակը Մարիամին համեմատում է գարնանը ժպտացող կապուտաչյա ծաղկի հետ: Մարիամ Վարդազարյանի ալբոմում է բանաստեղծը գրել նաև «Դարամիջի ժամին» ոտանավորը:

Որոշ չափով, թեև առանց որոշակի անունների, հայտնի են մի քանի կանանց նվիրված սիրային քերթվածների կենսական շարժառիթները: Այսպես, «Ա՛խ, երանի թե լիներ մի հնար...» բանաստեղծությունը Թումանյանը գրել է 1889-ին մի «վեչերում»: Անուշավան Աբովյանին ուղղված նամակում բանաստեղծը վկայում է. «Բանից դուրս է գալիս, որ մի տխուր բնավորության տեր սիրելի Նազելիի ուրախությունը ինձ շատ է դյուր եկել, և ես գրել եմ.

Այդ ժպիտը միշտ քո դեմքին մնար,
...Ա՛խ, երանի թե մնայիր այդպես...» (9, 104):

Վեցտողանի բանաստեղծությունը գրողը պատահաբար էր գտել իր ձեռագրերի մեջ և ամենևին մտադիր չէր այն տպագրելու: Ոտանավորը գրել

էր իբրև չափածո էքսպրոմտ և երեք տարի հետո միայն այդ մասին պատմել ընկերոջը՝ 1892 թ. մարտի 24-ի նամակում: Այնուհետև հավանաբար բանաստեղծը ձեռագիրը ոչնչացրել է կամ հանձնել օրիորդին, որին ձոնված է եղել էքսպրոմտը: Ոտանավորը պահպանվել է միայն ընկերոջն ուղղված նամակում:

«Մի՛ որոնիր մի ժամանակ» երկու տուն ոտանավորը 1890 թ. Թումանյանը ձոնել է իրենց տուն հյուր եկած մի օրիորդի, որին անպատասխան սիրել է «մի ժամանակ»: Բանաստեղծին ստիպել են գրիչ վերցնել իրենց տուն կատարած այցելության պահին օրիորդի՝ սիրո և համակրանքի ուշացած դրսևորումները: Տիգրան Փիրումյանի խոսքերով՝ Թումանյանն այդ օրիորդից «առաջ արհամարհանք, իսկ հիմա համակրություն էր տեսնում» (ԹԺՀ, 345): Օրիորդի զգացմունքների այդ փոփոխությանը բանաստեղծը պատասխանում է.

Էլ մի՛ կանչիր, մի՛ լար իզուր.
Քո արցունքից միայն տըխուր
Հին-հին հուշեր պիտի զարթնեն,
Եվ ի՛նչ օգուտ... ու՛շ է արդեն... (1, 49):

Արդեն «ուշ էր», քանի որ 1890 թվականն էր, ապրիլի 21-ը, պոետն ամուսնացած էր և մեկ զավակի հայր:

Թումանյանի ստեղծագործական առաջին շրջանի սիրային ոտանավորները նրա կատակ խոստովանությամբ «խոլերայի հաջողությամբ» տարածվել էին աղջիկների մեջ (9, 105): Սակայն բանաստեղծի համար դրանք լոկ ոտանավորներ էին՝ գեղարվեստական որևէ արժեք չներկայացնող: Առաջին ժողովածուում տպագրելուց հետո հեղինակն այլևս չանդրադարձավ դրանց և չներառեց իր հրատարակած և ոչ մի ժողովածուի մեջ:

ԿՅԱՆՔԻ ԸՆԿԵՐՈՒՀԻՆ – ՕԼԳԱ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Օլգա Թումանյան

Ջալալօղլու դպրոցում Թումանյանը հրապուրվել էր Վերգինե Տեր-Դավթյանի գեղեցկությամբ և սերը սրտում դաս էր սերտում, Ներսիսյան դպրոցի աշակերտ պատանի Թումանյանին գրավել էր Դարյա Գոլոշյանը՝ իր թե արտաքին, թե ներքին հմայքով, սակայն երիտասարդության շեմին ոտք դրած բանաստեղծն ընտրեց իր կյանքի ընկերուհուն՝ Օլգային (Մարիամ Սաճկալյան)[28] և նրա հետ ամուսնացավ 19 տարեկանում: Թումանյանի զգացմունքներն Օլգայի նկատմամբ ջերմ էին ու անկեղծ: Այդ սերը փոխադարձ էր: Անկախ ամեն ինչից՝ Օլգան միշտ սիրել ու վստահել է ամուսնուն և չի սխալվել:

Օլգան երկու տարով փոքր էր բանաստեղծից (ծնվ. 1871 թ. դեկտեմբերի 22-ին): Նրան որդեգրել էր Քամոյան եկեղեցու քահանա Հովհաննես Մարտիրոսյանը, որի տանը բանաստեղծը հաճախ էր լինում կոնսիստորիայի հանձնարարություններով: Օլգան սովորել էր Հովնանյան դպրոցում և երկրորդ դասարանից դուրս էր եկել՝ դպրոցի փակվելու պատճառով: Տեր Հովհաննեսը համաձայնել էր աղջկան կնության տալ՝ պայմանով, որ Թումանյանը խոստանար քահանա դառնալ: Հակառակ դեպքում «գյուղացի», քաղաքում տուն չունեցող պատանուն աղջիկ չէին տա[29]:

Թումանյանն ու Օլգան հանդիպել էին միմյանց Խարփուխի թաղամասում, որտեղ բանաստեղծը 1886 թ. հունիսից վարձով ապրում էր Բագրատ Թումանյանի տանը: Նրանց հարևանությամբ էր ապրում նաև Օլգայի Անուշկի տատիկը: Նրանք ծանոթացել էին 1888 թ. հունվարի 1-ին: Օլգայի մայրը՝ Շուշանիկը, այդ օրը խոհանոցում մի ճնճղուկ էր բռնել և բերել դրել վանդակում՝ համարելով «լավ նշան»: Նույն օրը երեկոյան Նոր տարին շնորհավորելու համար պոետը գալիս է տեր Հովհաննեսի տուն և Օլգայի համար դառնում «Նոր տարվա բերած բախտը»: Այդ օրը Թումանյանն Օլգային մի բանաստեղծություն է նվիրում՝ «Արծվիկ» վերնագրով, որը, սակայն, չի պահպանվել: Օլգան դեռ չգիտեր, որ «բարձրահասակ, նիհար կազմվածքով, գանգուր մազերով» երիտասարդ նշանածը նաև բանաստեղծություններ գրել գիտե:

---

28 Օլգա Թումանյանի մասին տես բանաստեղծի թոռնուհու՝ **Իրմա Սաֆրազբեկյան**-Թումանյանի «Օլգա Թումանյան» մենագրությունը, Եր., «Էդիթ Պրինտ» հրատ., 2018, 288 էջ:

29 Ավելի մանրամասն տես **Ա.Ինճիկյան**, էջ 195-197:

Օլգան, ինչպես ընդունված էր ժամանակին, երգարան էր պահում և այնտեղ արտագրում էր տարբեր բանաստեղծություններ: Երբ նշանված էին, Թումանյանի տուն մտնելու պահին նա արտագրում էր Ռափայել Պատկանյանի «Անվերջ գանգատներ» բանաստեղծությունը: Պոետը Օլգայի ձեռքից առնում է գրիչն ու շարունակում և իր ձեռագիրն ու առաջին ստորագրություններից մեկը թողնում ապագա կնոջ ալբոմում:

1888 թ. դեկտեմբերի 1-ին տեղի է ունենում նրանց պսակադրությունը Սուրբ Գևորգ եկեղեցում: Օլգայի մայրը՝ Շուշանիկը, Թումանյանի հետ նախնական պայմանավորվածության համաձայն, նրա կողմից սպասում էր հարսանիքին միայն երկու ընկերներին՝ Անուշավան Աբովյանին և Երվանդ Մամիկոնյանին: Մինչդեռ ներկայանում և հարսանիքին մասնակցում են երեսուն հոգի: Թումանյանի հարսանիքին նվագել է աշուղ Հազիրիի խումբը, ներկա են եղել վեց քահանա և մեկ վարդապետ: Պսակադրությունը կատարել է Թումանյանի հայրը՝ քահանա տեր Թադևոսը՝ թույլ չտալով, որ որդուն ամուսնացնի տեր Հովհաննեսի ընտանիքի մտերիմ քահանան: Բանաստեղծի հայրն ասել է. «Իմ տղին ես պետք է պսակեմ»:

Բանաստեղծի թոռնուհին՝ Իրմա Սաֆրազբեկյանը, պատմում է, որ Օլգան փայփայում էր Հովհաննեսին՝ ինչպես երեխայի, աշխատում էր չծանրաբեռնել նրան կենցաղային հոգսերով: «Այդ չափազանց քնքուշ ու նուրբ կինն իր ուսերի վրա էր կրում բազմանդամ ընտանիքի ողջ հոգսը: Կյանքի ամենածանր պահերին Թումանյանը գիտեր, որ իր կողքին է հուսալի, հոգատար, հասկացող կինը, որը միշտ նեցուկ է եղել իրեն[30], հիրավի, նրա թիկունքն ամուր էր, և Օլգան նույնպես ունի իր դերը բանաստեղծի ազգային բազում սխրանքները կյանքի կոչելու գործում:

Գնահատելով կնոջ սերն ու նվիրվածությունը՝ Թումանյանը նրա նկատմամբ միշտ ուշադիր ու հոգատար է եղել: Ինչպես նշում է պոետի թոռնուհին՝ Իրմա Սաֆրազբեկյանը, նա հաճախ էր ծաղիկներ նվիրում կնոջը[31]:

Ամուսնության առաջին տարիներին պոետի սերը կնոջ նկատմամբ մշտապես արտահայտվել էր նույն ուժգնությամբ՝ մերթընդմերթ դառնալով քնարական ներշնչանքի աղբյուր: 1890 թ. սեպտեմբերի 23-ին Թումանյանը Օլգային գրում է, թե ինչպիսի «ագահ հայացքով» ու կարոտով է ընթերցել նրա նամակը. «Սիրտս լցվեցավ մի անսահման հրճվանքով ու հպարտությամբ, երբ որ կարդացի այն տողերը, որ գրում ես, թե արտասվել ես իմ չգրե-

30 Տես՝ Ирма Сафразбекян, "Никто не может заменить тебя" (К 135-летию со дня рождения Ольги Туманян), Հայաստանը նոր հազարամյակի մարտահրավերների դեմ հանդիման, 2007 թ. գիտական նստաշրջանի նյութեր, Եր., 2008, Հյուսիսային համալսարանի հրատ., էջ 72-74:

31 Նույն տեղում, էջ 73:

լուս համար... զարմանու՞մ ես, հոգի՛ս, որ քո արտասուքով ուրախացա, զարմանալու ոչինչ չկա, շատ բնական է» (9, 31): Նույն նամակում հիշելով Օլգայի հետ իրենց «փոթորկալից» սիրո «անցյալ արկածները»՝ նրան է ուղարկում երեք տարի առաջ՝ 1887 թ. գրած իր բանաստեղծությունը:

...Ես ուզում եմ սեր երգել,
Երգել սրտանց և վառվել.
...Ես ուզում եմ մի հրատապ
Սաստիկ սիրով ինձ տանջել:
Նրա կրծքին անարատ
Բոցավառվիլ և հանգչել (1, 328):

Օլգային արված սիրո անկեղծ խոստովանություն է նաև պոետի՝ 1890 թ. սեպտեմբերի 20-ի նամակը. «Քո մեծ նշանակությունն ինձ համար մշտական է, հավիտենական. ահա մի լուրջ խոստովանություն, իբրև իմ սիրո մարմնացումն, իբրև իմ բոլոր հոգեկան ունակությունների գաղափարատիպը, կարող ես ամեն կերպ ազդել ինձ վերա, այսինքն, այնպես անել, որ և՛ մահացու լինի այն ազդեցությունը, և՛ կենսատու: Այս քո անբռնաբարելի իրավունքից, սեփական խղճից և սիրո աստիճանից է կախված. իսկ ես քեզ չեմ կարող չսիրել, որովհետև այդ իմ կամքից վեր է, որովհետև իմ զգացմունքներս տիրում են իմ կամքին» (9, 30): Նույն օրերին Օլգային գրած մեկ այլ նամակ նույնպես սկսում է ոտանավորով.

...Արի՛, հոգի՛ս, որ առանց քեզ,
Կյանքը դառն է և անձուկ,
Արի՛, արի՛, որ նորոգես,
Եվ մեր սերը վաղանցուկ... (9, 34):

Այդ շրջանում երիտասարդ Թումանյանը մեծ չափով զգում էր իր կնոջ Օլգայի կարիքը, առանց որի նրա ժամերը «տխուր էին անցնում». այդ պահերին էր նա զգում կնոջ անփոխարինելիությունը և միանգամայն անկեղծ էր, երբ գրում էր. «**Ոչ ոք չկա, որին նայելով կարողանայի քո պատկերը մոռանալ, ոչ ոք յուր խոսքով չի կարողանում սիրտս սփոփել, ոչ ոքի ժպիտ ու ծիծաղ ինձ չէ ուրախացնում... - չկա մեկ էակ, մեկ անձնավորություն, որ քեզ փոխարիներ ինձ համար...**

Եվ թող, իմ անգին, քո սիրտդ որքան սիրով է լեցուն, այնքան էլ հույսով լինի լիքը մեր ապագայի երջանկության և բարելավության հույսով»,- գրում է արդեն մեկ արու զավակի հայր բանաստեղծը (9, 35):

Աստիճանաբար գրական նորանոր շրջաններ մուտք գործելով, հանդիպելով արվեստասեր ու մտավորական կանանց հետ, հատկապես բարե-

կամանալով այնպիսի անսովոր, համարձակ, գործունյա ու գեղեցիկ կնոջ հետ, ինչպիսին իշխանուհի Մարիամ Թումանյանն էր, բանաստեղծն ակամա համեմատում է իրեն շրջապատող կանանց, և այդ համեմատությունը, ինչպես դժվար չէ կռահել, միայն իշխանուհու օգտին էր:

1908 թ., խոսելով իշխանուհու ծրագրերի և նրա անթիվ-անհամար բարեգործությունների մասին՝ Թումանյանը գրում է. «Եվ ահա էստեղ միտս ընկավ իմ կինը, որ երբեք չի հետաքրքրվել իմ գրվածքներով մինչև վերջերս: Եվ միայն նորերս սկսեց հետաքրքրվել ու մե-մեն հիշեցնել, թե գրի՞ր - ինչ որ իմացավ, թե տողավարձը շինել են - քսան կոպեկ, նոր է հավանում, թեև դրանք շտապով արած թարգմանություններ են կամ հին, տպագրության անպետք համարած բաներ» (10, 39):

Հանճարեղ, տաղանդավոր մարդիկ, անկախ սիրված լինելուց, հաճախ դատապարտված են լինում հոգևոր միայնության, քանի որ նրանց ապրումներն ու անսովոր աշխարհընկալումն անմատչելի են մնում նույնիսկ ամենամոտ հարազատներին, ընտանիքի անդամներին: Այս իմաստով Թումանյանը և՛ բախտավոր էր, և՛ ոչ այնքան: Նրա մեծությունն առաջինը զգացել էր հայրը՝ տեր Թադևոսը: Երբ լույս է տեսնում Թումանյանի առաջին ժողովածուն, նա ի լուր ամենքի հայտարարում է, որ իրեն այլևս մահ չկա, քանի որ որդին դաշն է կնքել հավերժության հետ: Բանաստեղծի մեծությունը զգացել և ասված յուրաքանչյուր խոսքն աշխատել են գրի առնել ու անմահացնել հարազատ երեխաները: Սակայն ընտանիքին և ամուսնուն անմնացորդ նվիրված Օլգայի համար Թումանյանն առաջին հերթին սիրելի ամուսին էր, ընտանիքի հայր, տան գլխավոր, որի հյուրամոլությանը, նաև ընտանիքի բարեկեցության հաշվին ամենքին օգնության ձեռք մեկնելու, եղածը շռայլելու բնավորությանն անտրտունջ հնազանդվում էր: Այս իմաստով պետք է արժանին մատուցել Օլգա Թումանյանին, որին պարտական է

Օլգա Թումանյան

նաև մեր գրականությունը՝ «Վերնատուն» ունենալու, հազարավոր հայ մշակույթի գործիչների, օտարերկրյա դիվանագետների, հարյուրավոր որբերի պատվով ընդունելու, տասնյակ որբերի իր տանը տարիներով խնամելու և ամեն օր հյուրամոլ ամուսնու պատճառած նեղություններն անտրտունջ տանելու համար: Նույնիսկ ամուսնու բացակայության ամիսներին նրա տունը հյուրատուն էր ժամանակի բոլոր անվանի գրողների ու մշակութային, ազգային գործիչների համար: Հայ ոչ մի գրողի ընտանիք այդքան գրող ու արվեստագետ, քննադատ ու մտավորական, պետական և ազգային գործիչ չի հյուրընկալել իր հարկի տակ, որքան Թումանյանինը: «Թիֆլիսում ոչ մէկ տուն այնքան թուով շատ թվով հյիւրեր չի ընդունել, որքան Յովի. Թումանեանի շէն ու լի տունը»,- վկայում է Վարդգես Ահարոնյանը [32]:

Պոետի՝ քաղաքից բացակայելու պայմաններում անգամ նրա տունն ապրելու վայր էր, ապահով և հյուրասեր տանիք, հարազատ օջախ շատերի համար: Օլգան ամիսներով հոգ էր տանում իր տանը հյուրընկալած Ղ. Աղայանի ընտանիքի, Դ.Դեմիրճյանի, Ավ. Իսահակյանի, Կ. Գալֆայանի և այլոց համար: Երբ Թումանյանն Աբասթումանում էր, Շանթը 4 - 5 ամիս ապրում էր բանաստեղծի տանը, ու թեև Օլգան անհանգստանում էր, թե «հարևաններն ինչ կմտածեն», բայց լուռ ու մունջ ենթարկվում էր ամուսնու կամքին: Եվ ընկեր բարեկամները կատակով Օլգայի անունը դրել էին նահատակ, իսկ Թումանյանինը «ընտանեկան աղետ»: Այս բնորոշման մեջ թեև կատակով, սակայն ոչ թե թաքնված, այլ բացահայտ ճշմարտություն կար: Խրիմյան Հայրիկն էլ Օլգային խոստացել էր, դարձյալ կատակով, ցանկության դեպքում ապահարզան տալ: Այնուհանդերձ բանաստեղծի տաղանդի մեծությունը, ինչպես նաև մարդկային բնավորության որոշ առանձնահատկություններն այս կամ այն չափով ընկալելի էին ինչպես Օլգային, այնպես էլ այլ կանանց՝ ինչպես, օրինակ, Մարիամ Թումանյանին, Արմենուհի Տիգրանյանին, Զապել Եսայանին, Սիպիլին, Անայիսին և ժամանակի այլ քիչ թե շատ հայտնի կանանց, որոնք երբեք իրենց հիացմունքը չեն թաքցրել Թումանյան մարդու և բանաստեղծի նկատմամբ:

32 **Վարդգես Ահարոնյան**. «Մարդը՝ բանաստեղծը», Եր., 2019, էջ 70:

Երանյակ Վարդանյան

Եվ ահա Օլգայից հետո մուսայաստեղծ կանայք, որոնց Թումանյանը բանաստեղծություններ է նվիրում, փոխվում են: 1895 թ. նոյեմբերի 9-ին Ախալքալաքում Թումանյանը, հյուրընկալվելով Ստեփան Վարդանյանի տանը, նրա դստերը՝ Երանյակին, նվիրում է «Ժպտուն աչքեր» բանաստեղծությունը՝ մակագրելով. «Հարգելի օրիորդ Երանյակ Վարդանյանին, 1895, նոյեմբերի 9, Ախալքալաք» (ԹԺՀ, 946): Ընթրիքի մասնակիցներից Ջալալ Տեր-Գրիգորյանը պատմում է, որ բանաստեղծի կողմից այդ ոտանավորի ընթերցումը որոշակի բամբասանքների տեղիք է տվել. «Մեր գավառական հասարակության մեջ ոմանց թվաց, թե ժպտուն աչքերը, հանպատրաստից ասված, վերաբերում են որոշակի մի անձնավորության՝ մի օրիորդի... Այդ սխալ ենթադրությունից սնունդ ստացան գավառական ասեկոսեները» (ԹԺՀ, 402): Ջալալ Տեր-Գրիգորյանը հավաստիացնում է, որ այդ բանաստեղծությունը Թումանյանը Երանյակի համար արտասանել էր դեռևս խնջույքի նախորդ օրը:

Դու մի՛ հավատա ժըպտուն աչքերին,
Շատ անգամ նըրանք ծաղիկներ են վառ...
...Ահա պոետն էլ, պատրանքով հարբած,
Գերվեց մի անգամ ժըպտուն աչքերի,
Ու որքան տանջվեց, տառապեց խաբված,
Ու որքան սըրտում գանգատներ ունի...
Բայց հաճախ էնպես ժըպտում է զըվարթ,
Ասես թե քեզնից բախտավոր լինի (1, 148):

Բանաստեղծությունը գրվել էր ոչ թե խնջույքի օրը կամ նախօրեին, այլ մի տարի առաջ՝ 1894 թ., երբ պոետը ոգեշնչված է եղել միանգամայն այլ անձնավորությամբ, սակայն փաստ է, որ մի տարի հետո պոետն այն նվիրել է Երանյակ Վարդանյանին, որը ժամանակի հայտնի հասարակական գործիչ Խաչատուր Վարդանյանի քույրն էր: Տասնվեցամյա օրիորդը, որը գրավել էր բանաստեղծի ուշադրությունը, հիացմունքով ու սիրահարված հայացքով էր նայել քսանվեցամյա բանաստեղծին: Բարի ու գեղեցիկ աղջիկը շրջապատի բոլոր երիտասարդների ուշադրության կենտրոնում էր: Թումանյանին հանդիպելուց մեկ տարի անց՝ 1896 թ., ամուսնանում է գյուղատնտես Տիգրան Գյուզալյանի հետ: Տասը տարի հետո նրանք ընտանիքով տեղափոխվում են Թիֆլիս, որտեղ բարեկամական կապեր են հաստատվում Թումանյանի և Գյուզալյանի ընտանիքների միջև: Տիկին Երանյակը անգիր գիտեր Թու-

մանյանի ամբողջ ստեղծագործությունը, հաճախ էր լինում արվեստասեր կանանց շրջանում, սիրում էր նվագել, երգել, մասնակցել հասարակական գործերի: Թումանյանի կերպարը, ազգային գործչի նրա նկարագիրը մշտապես ներշնչել են Երանյակին, ոգևորել նրան կյանքի բոլոր դժվարին պահերին, մղել ազգանպաստ գործերի: Համաշխարհային պատերազմի ժամանակ, երբ նա արդեն չորս երեխաների մայր էր, ամբողջ էությամբ նվիրվեց արևմտահայ որբերի խնամքին: 1917 թ. վարակիչ հիվանդությունների համաճարակի օրերին, երբ խնամում էր «սև ծաղիկ» հիվանդությամբ տառապողներին, ինքն էլ վարակվեց և կնքեց իր մահկանացուն: Նրա դուստրը՝ Նազիկ Գյուզալյանը, հիշում է, որ անգամ մահվան անկողնում Երանյակը արթմնի թե զառանցելիս տալիս էր միայն Թումանյանի անունը և արտասանում հատվածներ «Անուշ» պոեմից:

Թե ինչպես հանկարծ աշխարհքը փոխվեց,
Ինչպես դատարկվեց կյանքում ամեն բան...

Անշուշտ, Երանյակի համար Թումանյանը եղել էր չմարող հիացմունքի առարկա, անհասանելի սիրո իդեալ: 1895 թ. նոյեմբերի 11-ին բանաստեղծը Երանյակին էր նվիրել «Ո՞վ տարավ» ոտանավորը, որը վկայում է պոետի հրապուրանքի և անկեղծ զգացմունքների մասին:

Դուք ինձնից տարաք հիշատակարան,
Իսկ ես ձեզանից տարա հիշատակ -
Մեկը կորչելու, մաշվելու մի բան,
Մյուսը կըմնա երկար ժամանակ:

Դուք այս նյութական թուղթը գրելու,
Իսկ ես զգացմունք սըրտում կրելու,
Ես չեմ մոռանալ, երբ հողմեր ու ձյուն
Մարմնիս և ճամփույս շուրջն էին տիրում.
Ես ոգևորիչ այնքան ջերմություն
Գտա զգայուն ազնիվ սրտերում (1, 152):

Այսպիսով, երեք օրվա ընթացքում պոետը Երանյակին երկու բանաստեղծություն է նվիրում:

* * *

Թումանյանը բազմաթիվ բանաստեղծություններ է գրել ու նվիրել տարբեր կանանց՝ խնջույքների սեղանների շուրջ, հասարակական տարբեր վայրերում ու միջոցառումներին, որոնք մեծ մասամբ չեն պահպանվել:

Դրանցից մեկը՝ **«Տիկին Նիմֆա Գորոդեցկուն»** վերնագրով ձոնը, գրել է բանաստեղծը 1918 թ. հունվարի 29-ին «Փարվանա» պոեմի ռուսերեն թարգմանության շապիկի վրա և նվիրել Սերգեյ Գորոդեցկու կնոջը:

Եկաք ու ընկաք
Մի նոր դըժնդակ
Փոթորկի առջև,
Ուր կիտվում են դեռ
Ահեղ, շանթաբեր
Ամպերը սև-սև (1, 299):

Այդ մասին ավելի ուշ Ս.Գորոդեցկին հպարտությամբ էր հիշում և ոտանավորից վեց տող մեջբերում է իր հուշերում (ԹԺՀ, 889):

«Անմաքուր» զգացմունքի մերժում

Թումանյանի ամուսնացած լինելու հանգամանքը չէր խանգարում, որ շատ կանայք հրապուրվեին նրանով ու ձգտեին նրա հետ նորանոր հանդիպումների, բարեկամության և սիրո: Այստեղ, ինչ խոսք, իր դերն է ունեցել նրա տաղանդի մեծության գիտակցումը, սակայն նույնքան կարևոր են եղել Թումանյան-մարդու անհատականությունը, տղամարդկային խառնվածքն ու բնավորությունը: Եղել են նաև կանայք, որոնք պոետին սիրել են անպատասխան ու անհույս: Ավելին, շատերը բացահայտ սեր են խոստովանել, և բանաստեղծը ստիպված է եղել մերժել:

1894 թ. Թումանյանը վեց տարի է, ինչ ամուսնացած էր, և արդեն չորս զավակների հայր էր: Նա ուներ երկու որդի և երկու դուստր՝ Մուշեղը, Աշխենը, Նվարդը և Արտավազդը: Սակայն ընտանիք ունենալու փաստն ամենևին չի խանգարում, որ նա ընկնի մի անախորժ պատմության մեջ: Համառորեն բանաստեղծի սիրուն էր փորձում արժանանալ նրա տունը ելումուտ անող ընտանիքներից մի կին, որի անունը մեզ հայտնի չէ: Այս պատմությունը նույնպես հայտնի չէր լինի, եթե ասեկոսեներն ու բամբասանքները չստիպեին պոետին որոշ պարզաբանումներ տալ ընկերոջը՝ Արսեն Ղլտճյանին: Վերջինիս ուղղված 1895 թ. հունվարի 17-ի նամակում Թումանյանը գրում է. «Այս անցյալ դեկտեմբերի վերջերին մի անախորժ դեպք պատահեց հետս: Մի տիկին բավական ժամանակ ինձ հետամուտ էր լինում: Նրա բոլոր արտահայտություններից ես շուտով **նկատեցի զգացմունքի անմաքրությունը և ամեն ջանք արեցի, որ անհայտության խավարում այդ կապը կտրեր»** (9, 144):

Թումանյանը փորձել է բարի խոսքով, հորդորներով այդ կնոջը «ճամփի բերել», սակայն նրա ջանքերն ապարդյուն են անցել: Այն, որ բանաստեղծը կտրուկ մերժել է, վկայում է նաև այդ տիկնոջ նամակի պահպանված մի պատառիկ, որտեղ նա դժգոհում է իր զգացմունքների և նամակների անպատասխան լինելուց: Այդ կինը գրում է. «**Ես գիտեի, որ դու անգութ ես, բայց այդքան չէի կարծում...** միթե երկու խոսք չունեիր պատասխանելու իմ վեց նամակին, որ ծրարում դրած, առանց պատասխանի գլխովս խփեցիր և ամբողջ գիշերը հանգստությունից զրկեցիր: Միթե դու կարծում ես՝ քո ասածները ես կտանեմ առանց վիրավորվելու: Վերջապես, ես գլուխս քարովն եմ տալիս, որ քեզ անհանգիստ եմ անում, այսուհետև հանգիստ եղիր: Ես նախանձում եմ քո սառնասրտությանը» (9, 145):

Մոռացած ժամացույցը

Թումանյանը ժամացույց չէր սիրում և չէր կրում: Բանաստեղծը չէր կամենում զգալ անցողիկ կյանքի արագաթռիչ ռիթմը: Սակայն երիտասարդ տարիներին երբեմն վերցնում էր իր հետ գրպանի ժամացույց: Մեզ անծանոթ մի կնոջ տանը հավաքույթի ընթացքում ինչ-որ մեկի խնդրանքով Թումանյանը հանում է ժամացույցը և չի նկատում, որ իրենով հրապուրված, իր հետ հանդիպումների ձգտող տանտիրուհին թաքցնում է ժամացույցը՝ բանաստեղծին վերստին իր տանը տեսնելու ակնկալիքով: Հյուրերի, այդ թվում Թումանյանի հեռանալուց հետո տանտիրուհին սրտատրոփ սպասում է բանաստեղծին՝ նրան գայթակղելու նպատակով: Թումանյանը, իհարկե, վերադառնում է ժամացույցի ետևից և, տեսնելով իրեն դիմավորող ինքնամատույց արտաքինով կնոջը, վերցնում է ժամացույցը և լռելյայն հեռանում[33]:

33 Թումանյանի կյանքի այս դրվագը մեզ է պատմել բանաստեղծի թոռնուհին՝ Սեդա Թումանյանի դուստր Իրմա Սաֆրազբեկյան-Թումանյանը՝ վստահ նաև, որ գրավոր աղբյուր պետք է, որ պահպանված լինի:

ԱՐՄԵՆՈՒՀԻ ՏԻԳՐԱՆՅԱՆ

Արմենուհի Տիգրանյան

Թումանյանը, բնականաբար, իր անձով հրապուրված, իրեն սիրահարված ոչ բոլոր օրիորդներին ու կանանց էր ոտանավորներ նվիրում: Նա բանաստեղծություն չնվիրեց նույնիսկ իր անձով հրապուրված Արմենուհի Տիգրանյանին, որն ինքը բանաստեղծություն ձոնեց պոետին:

Որոշ հիմքեր կան ենթադրելու, որ 1910 թ. ամռանը Թումանյանի նկատմամբ իր հիացմունքն ու սերն է խոստովանել կոմպոզիտոր Արմեն Տիգրանյանի քույրը՝ **Արմենուհի Տիգրանյանը**[34]:

Արմենուհին վաղ պատանեկության տարիներից արդեն արել էր իր ստեղծագործական առաջին փորձերը, որոնց վրա նկատելի էր տերյանական դպրոցի ազդեցությունը: Նրա բանաստեղծությունները տպագրվում էին «Յուպիտեր», «Հորիզոն», «Նոր հոսանք», «Շողեր», «Ապագայի գարնանամուտ», «Գեղարվեստ» և այլ պարբերականներում: Ի տարբերություն շատ սկսնակների՝ նա դեմ չէր քննադատությանը, որքան էլ այն խիստ լիներ, այդ պատճառով էլ դիմելով «Գեղարվեստի» խմբագիր Գարեգին Լևոնյանին՝ ասում է. «... Դուք իմ նկատմամբ խնդրում եմ խիստ եղեք, ես սիրում եմ անպաճույճ ճշմարտությունը»[35]:

Արմենուհին ծնվել ու մեծացել էր երաժշտական-բանաստեղծական միջավայրում: Նա ժամանակի հետաքրքիր անհատականություններից, արվեստասեր, մտավորական կանանցից էր: Բնավորությամբ ակտիվ էր, իր ժամանակի համար չափազանց համարձակ, բացառիկ ուղղամիտ՝ օժտված անձնական մեծ հմայքով ու գեղեցկությամբ: Ամենուրեք անմիջապես հայտնվում էր ուշադրության կենտրոնում: «Երիտասարդական տարիներին նա գեղեցիկ էր, կանոնավոր դիմագծերով, արտահայտիչ խոշոր, առկայծուն աչքերով, շիտակ և անմիջական բնավորության տեր, ուներ ալեկոծվելու և ուրիշի սրտերն էլ ալեկոծելու ընդունակություն»[36],- գրում է նրա եղբոր որդին՝ ճարտարապե-

34 **Արմենուհի Տիգրանի Տիգրանյան (Մենուհի)** - բանաստեղծուհի, Արմեն Տիգրանյանի քույրը -1888 Ալեքսանդրապոլ - 09.12.1962, Նյու-Յորք:

35 ԳԱԹ, Գ. Լևոնյանի ֆոնդ, թիվ 1831, Արմենուհի Տիգրանյանի նամակները, էջ 7:

36 **Էդ. Տիգրանյան**, Մի թյուրիմացության մասին կամ բողոք ինը տարի անց, Երևան, 1990, էջ 131:

տության դոկտոր, պրոֆեսոր Էդ. Տիգրանյանը: Արմենուհու այդպիսի բնավորությունը նրան դարձրեց ճակատագրական կին և բախտորոշ նշանակություն ունեցավ առաջին հերթին իր անձնական և ստեղծագործական կյանքում:

Առաջին բանաստեղծը, որին իր անկեղծ սերն ու բարեկամությունն առաջարկեց Արմենուհին, Թումանյանն էր: Ծանոթության առաջին իսկ օրերից Արմենուհին Թումանյանին ծանոթացնում էր իր գրական-գեղագիտական նախասիրություններին: 1910 թ. հունիսի 16-ին բանաստեղծուհին Թումանյանին ուղղված նամակում գրում է. «Կարդում եմ գրքեր պատմությունից և փիլիսոփայությունից և դրանց միջև, իբրև դեսերտ “Пшибишевск-ու և Кнут Гамсун-ի փոքրիկ հրատարակություններից: Հետաքրքիր մի քննադատական հոդված կա Պշիբիշևսկու “De profundis” գրքույկի սկիզբը, որտեղ խոսում է գեղարվեստի նշանակության մասին, թե անհատական է արդյոք» [37]:

Արմենուհին բանաստեղծուհի էր և քնարական զգացմունքներ էր տածում Թումանյանի հանդեպ՝ առանձնացնելով նրան իր շրջապատի բոլոր գրողներից, արվեստագետներից ու ընդհանրապես տղամարդկանցից: Ինչպես հուշում են 1910 թ. գրված Արմենուհու նամակները, նույն թվի ամռանը՝ մասնավորապես հունիսին, Թիֆլիսում եղած ժամանակ, օրիորդն իր նվիրական զգացմունքները բարձրաձայն խոստովանել է պոետին՝ հավաստիացնելով, որ ինքը «նախապաշարված չէ»: Նա բանաստեղծին պատմում է իր միայնության մասին, հարազատներից և իրեն սիրահարված պոետներից խուսափելու մասին, քանի որ իր զգացումներն ու հակումներն «անհամապատասխան են հանգամանքներին»: Իր սերն ու ընկերությունը որոնող մի բանաստեղծի մերժելով (որի անունը չի տալիս)՝ նա Թումանյանին գրում է. «...Գեղեցիկը ավելի ևս գրավիչ և վսեմ է լինում, երբ նա կատարյալ ոգևորություն է... Ես Ձեզ եմ ընտրել, որին հավատս եմ ընծայում»[38]:

Արմենուհին մերժում կամ սիրում էր, ինչպես ինքն է խոստովանում՝ «աչքի առաջ ունենալով մարդը»[39]: Ալեքսանդրապոլում իր կյանքի այդ պահին Թումանյանի հմայքի ազդեցության ներքո բանաստեղծուհին ընդառաջ էր գնում միայն իր զգացմունքին և որոշել էր անտեսել դատողությունը: «Իսկ որտեղ դատողություն, այնտեղ չի կարող լինել «էքստազ», «լոկ էքստազ»: Ես Ձեզ հարգում եմ «ամենավսեմ և հանդարտ կերպով»: Եվ ես Ձեզ հարգում եմ՝ աչքի առաջ ունենալով Ձեր անձնավորությունը ոչ թե միայն իբրև բանաստեղծ, իբրև «մարդ», իբրև համակրելի կարծիքների տեր և վերջապես՝ խաթաբալայի մեջ չգցող մեկը... մի հոգի, բանաստեղծի հոգի»[40]:

37 ՈւՀ 5, 344:
38 ՈւՀ 5, 340:
39 Նույն տեղում:
40 Նույն տեղում, 341:

Թումանյանը՝ որպես իսկապես մեծ հոգու տեր և նրբանկատ մարդ, իրոք, «խաթաբալայի մեջ» չէր կարող գցել հրապուրված օրիորդին, նրա առաքինությունն ու ներքին ազնվությունը թույլ չէին տա օգտվել իրավիճակից և, առավել ևս, ասեկոսեների ու բամբասանքների առարկա դարձնել սիրահարված կնոջ այդ չափազանց անձնական խոստովանությունը: Թեև բանավոր այդ զրույցի մանրամասները չեն պահպանվել, սակայն Արմենուհու գրած պատասխան նամակներից կարելի է ենթադրել, որ Թումանյանն ամեն ինչ արել է՝ մեղմելու սիրահարված օրիորդի զգացմունքները, ուղղորդել է դեպի այլ սերեր որոնելու ուղին, փորձել է իրեն իջեցնել այն պատվանդանից, որի վրա նրան բարձրացրել էր Արմենուհու երևակայությունը. «Դուք, սիրելի՛ բանաստեղծ, շատ պարզ խոսեցիք, և, ինչպես շատ դեպքերում, այնպես էլ հիմա, չէր կարելի Ձեր խոսքերից վիրավորվել: Դուք ասացիք, որ մենք դեռ իրար չենք ճանաչում... Ես դեռ ջահել եմ, և Դուք շատ աննախանձելի կարծիք կարող եք ունենալ իմ վերաբերմամբ, մանավանդ իբրև կնոջ»[41]:

Թումանյանի մերժման, ով գիտե, որչափ նրբանկատ վերաբերմունքից Արմենուհին «չի շտապել վիրավորվել»: Նա միայն անհանգստացել է, որ իր և իր ապրումների մասին բանաստեղծը սխալ տպավորություն կստանա և գուցե թե հիասթափվի. «Դուք կարող էիք մտածել, թե ես որպեի ազդեցության տակ, դրդված զգացմունքից... ձգտում եմ այդպիսի մի քայլ անել... Միգուցե ես իմ ազնիվ ձգտումներով շատ եմ շտապել: Հավատացեք ինձ, որ այդ ցանկությունս որպեի արդյունք չէր... Մտածված էր մեր խոսակցությունից դեռ տարիներ առաջ, երբ ես դեռ փոքր էի և մտածում էի Ձեզ հետ տեսնվել»[42]:

Արմենուհին իր զգացմունքների արտահայտության մեջ համարձակ էր և ոչ մի դատապարտելի բան չէր տեսնում, քանի որ իրեն համարում էր արվեստագետ, բանաստեղծուհի, որի նկատմամբ հասարակությունը պարտավոր է ավելի ներողամիտ լինել. «Մտածում էի,- գրում է նա,- ով ինձ կմեղադրի, գեղարվեստի սիրահարիս»[43]: Արմենուհին Թումանյանից չի թաքցնում, որ ինքը պլատոնական սիրո քարոզիչը չէ, թեև այդ գաղափարները խորթ չեն իրեն. «**Ես չեմ քարոզում, իհարկե, իդեալական, անարատ և ջինջ հարաբերություն երկու սեռերի մեջ**, չեմ ընկնում ծայրահեղությունների հետևից, թեև ինձ համար շատ էլ տարօրինակ գաղափար չէ այդ, բայց շատ մեղադրելի կլիներ չընդունել այդպիսի մի պարզություն մեկի և «վստահելի» մեկի միջև» [44]:

41 Նույն տեղում, 339:

42 Նույն տեղում, 359:

43 Նույն տեղում:

44 Նույն տեղում, 341:

Մեկ այլ նամակում նա փորձում է արդարացնել սիրո խոստովանության հարցում իր շտապողականությունն ու անհամբերությունը. «...Շտապեցի, բայց չէ՞ որ պարզություն արի, ինչի՞ կեղծեի»[45]: Պարզություն ասելով՝ Արմենուհին նկատի ուներ խոստովանությունը, իսկ «վստահելի մեկը» Թումանյանն էր: Արմենուհին խոստանում է իր վարքագծով այնպես անել, որ բանաստեղծին հուսախաբ չանի: «Չեմ թույլ տա, որ Դուք ինձանից էլ հիասթափվեք»[46]: Բանաստեղծը չէր կարող այս բովանդակությամբ նամակին անմիջապես չպատասխանել: Նա աշխատում է շեղել զրույցի նյութը և շեշտադրում անել միայն բարեկամական զգացմունքի վրա. «Թանկ են ինձ համար Ձեր բարեկամական զգացմունքներն ու սրտալի վերաբերմունքը» (10, 89): Սակայն նամակն ավարտելուց հետո Թումանյանն զգում է, որ միայն գրականությունից ու կողմնակի խնդիրներից խոսելը և Արմենուհուն հետաքրքրող հարցերին որևէ կերպ չանդրադառնալը ճիշտ չի լինի, և հետգրությամբ փորձում է հուշել, որ Արմենուհու «պարզությունը» չէր կարող իրեն հուսախաբ անել. «Առաջին նամակիդ բովանդակության մասին մի այլ անգամ, բայց կարծում եմ՝ մենք իրար լավ հասկացանք, և մինչև անգամ ավելորդ են իմ կողմից բացատրությունները... չափազանց շատ եք գովում: Վախենում եմ հիմի էլ ես Ձեզ գովեմ...» (10, 90):

Պատասխան նամակում Արմենուհին դարձյալ անդրադառնում է բանաստեղծի առջև իր սիրտը բացելուն, անկեղծորեն «պարզ լինելուն», իր սիրո այն խոստովանությանը, որ դրական պատասխանի չարժանացավ: Նրան անչափ հետաքրքրում էր, թե իր այդ խոստովանությունից հետո բանաստեղծի կարծիքը իր մասին չի՞ փոխվել արդյոք. «Գրեցեք ինձ, խնդրում եմ, ինչ տպավորություն թողեց Ձեր վերա իմ «վարմունքը» և «անհամբերությունը»»[47]: Իր այդ «վարմունքն» Արմենուհին բացատրում է Թումանյանի՝ իր ներաշխարհի վրա ունեցած ազդեցությամբ: Բանաստեղծի ներկայությունը ստիպել է նրան ավելի հավատարիմ լինել իր էությանը, ավելի անկեղծ. «Չեմ կարող Ձեզ հետ պարզ չլինել, այդ Դուք եք ներշնչել Ձեր վարմունքով, իսկ մեծ մասամբ պարտական եմ բնազդին: Ձեր անձնավորությունը բարեհաջող տպավորություն է թողել ինձ վրա, և... ես զգում եմ, որ **Ձեզ հետ խոսելիս գոնե ես լինում եմ սեփական գույնիս տակ, չեմ կեղծում**»[48]:

Արմենուհի Տիգրանյանը, մնալով անորոշության մեջ՝ «ենթադրություններիր աշխարհում», որպեսզի ինքն իրեն ամբողջովի մերժված չզգա, առաջարկում է «**հոգիների բարեկամություն**»: Նա գրում է. «Ես կգրեմ Ձեզ, որովհետև

45 Նույն տեղում, 342:
46 Նույն տեղում, 341:
47 Նույն տեղում, 342:
48 Նույն տեղում, 342:

ուզում եմ խոսել Ձեզ հետ, բայց Դուք ինձ միք գրե, եթե ձանձրանում եք»[49]:

Զգալով բանաստեղծի նրբանկատ շրջանցումները՝ Արմենուհին հասկանում է, որ փոխադարձություն ակնկալել չի կարող, և ինքն էլ է փորձում հաղթահարել իր ազնիվ ու գեղեցիկ զգացմունքը, որի խոստովանությունը համարում է իր երիտասարդության և անփորձության հետևանք: «Դուք իրավացի եք,- գրում է նա Թումանյանին: - Բայց չէ՞ որ ես ջահել եմ և, ինչպես ասում են, «անփորձ», ախր այդ փորձը մարդուն հանում է իրա սեփական, բնական կաշուց և հարմարեցնում կյանքին: Ես «դյուզ» եմ դեռ բառի նշանակությամբ և հաշիվ չեմ տալիս ասածիս և խոսածիս»[50]:

Արմենուհին Թումանյանին ուղղված իր գրեթե բոլոր նամակներում բարձրացնում էր գրական հարցեր, ձգտում էր ստանալ իր գրական երկերի մասին բանաստեղծի գնահատականները: Արմենուհու՝ Թումանյանին ուղղված նամակներում հանդիպում ենք «Իմ երգը», «Գարուն» և այլ բանաստեղծությունների: Դրանք ասես գրված էին Թումանյանի ներշնչանքով, ծնվել էին նրա հանդեպ սիրուց և ուղղված էին հենց նրան:

Գարունն է եկել և հոգիս գրկել,
Գարունն է եկել, հանգիստս խլել,
Կենսուրախ ժպիտով, սիրալիր երգով
Գարունն է սրտիս սառույցը հալել:

Փայլուն հեքիաթներ՝ փայլուն օրերի,
Նոր կյանք են առել և սիրտս լցրել
Երազ անուրջներ՝ երազ օրերի,
Նոր հոգի առել, հանգիստս խլել:

Այդ պահին 41-ամյա, 10 երեխաների հայր, անվանի բանաստեղծը 22-ամյա բանաստեղծուհու հոգու գարունն էր, ով իր կենսուրախ ժպիտով հալեցրել էր նրա սրտի սառույցը և խլել հանգիստը: Մինչդեռ նույն այդ շրջանում և դրանից շատ առաջ Թումանյանը միանգամայն այլ որակի, այլ մակարդակի ու բովանդակության հիացմունքի և սիրո խոսքեր էր գրում մեկ այլ կնոջ՝ իշխանուհի Մարիամ Թումանյանին:

Հետագա տարիներին՝ շնորհիվ Թումանյանի նրբանկատ վերաբերմունքի և դիմացինի սերը մերժելով հանդերձ՝ այն բարեկամության վերածելու կարողության, բանաստեղծի և Արմենուհու միջև հաստատվում են անկեղծ բարեկամական հարաբերություններ:

49 Նույն տեղում, 343:
50 Նույն տեղում, 343:

1914 թվին Մենուհի գրական կեղծանունով Արմ. Տիգրանյանը Թիֆլիսում հրատարակում է իր բանաստեղծությունների ժողովածուն, որտեղ ներառված էր նաև «Բեշտաուն» լեգենդը: Այն դարձավ հեղինակի ոչ միայն առաջին, այլև միակ ժողովածուն[51]: Գիրքը նվիրված էր իր վաղամեռիկ եղբորը՝ նկարիչ Հայկ Տիգրանյանին, որը մահացավ 1903-ին, երբ Արմենուհին ընդամենը 15 տարեկան էր (1917թ. կորցրեց մյուս եղբորը՝ Արամին): Գիրքն իր արձագանքը գտավ գրական շրջաններում: Ժամանակի անվանի քննադատ Ա. Տերտերյանը բարձր գնահատեց հեղինակի գրելու բանաստեղծական զարգացած տեխնիկան, սահուն «պարզ ու վճիտ, առանց խրթնաբանությունների» լեզուն[52]: Գրախոսը նկատեց նաև խորհրդապաշտական դպրոցի ազդեցությունը Արմենուհու պոեզիայի վրա: Գրքի 53 բանաստեղծությունները և մի լեգեդը դրսևորում էին կանացի մի չափազանց հետաքրքիր ներաշխարհ:

Սերն Արմենուհու պոեզիայում և մարդկային զգացմունք է, և հմայիչ բուրմունք, մի երևույթ, որը նյութականացվում է, օժտված է շարժվելու, թռչելու ունակությամբ: Արտաքին աշխարհի, բնության և մարդկային ներաշխարհի փոխադարձ ներթափանցումների շնորհիվ հուզապրումը փոխաբերական պատկերների խաղով դառնում է առարկայորեն տեսանելի:

Արմենուհու սիրո երգերում, անշուշտ, որոշ չափով առկա են իր կենսափորձից, այսինքն, նաև Թումանյանի հանդեպ տածած սիրուց ու նրանից մերժված լինելու ապրումներից ծնված տրամադրություններ: Թերևս այդ է վկայում, որ բանաստեղծուհու քնարերգության մեջ մերժվում է երկրային սերն ու մարմնական վայելքը: Հեղինակի քնարական երգերի շարքը սիրո և հիասթափությունների մի անվերջ շարք է, դրամա՝ «երազային աշխարհի», «զարթոնքի սպասման», «ափսոսանքի» և փրկության որոնումների մասին:

Երիտասարդ բանաստեղծուհու ժողովածուն գրախոսել է նաև Ն. Աղբալյանը: Քննադատը հեղինակի ապրումներն ու տրամադրությունները որոշ չափով պայմանավորում էր Վ.Տերյանի պոեզիայի ազդեցությամբ և, իհարկե, չէր սխալվում: Նա գրում է. «Արմենուհի Տիգրանյանը պատկանում է Վ. Տերյանի խմբին, նույն ժամանակի ծնունդ է և նույն տրամադրությունների երգիչ: Նրա գրքույկը, իբրև վավերագիր, կարող է մեզ նպաստել ճանաչելու հոգիների տեսակը, որ ստեղծել է մեր կյանքը վերջին տասնամյակում»[53]:

Երիտասարդ բանաստեղծուհու ժողովածուն արժանանում է նաև Թու-

51 **Էդ. Ջրբաշյանի** կարծիքով տպագրվել է 1912 թ.: Էդ. Տիգրանյանը նույնպես նշում է 1912 թիվը:

52 **Ա. Տերտերյան**, Արմենուհի Տիգրանյանի բանաստեղծությունները, գրախոսություն, «Հորիզոն», 1914, թիվ 86, էջ 4:

53 **Ն. Աղբալյան,** Գրական քննադատական երկեր, հ. 1, Բեյրութ, 1959, էջ 302:

մանյանի ուշադրությանն ու խրախուսանքին. չէ՞ որ այդ գրքի հեղինակից սիրո ու հիացմունքի այնքան ջերմ խոսքեր էր լսել պոետը: Թումանյանի խրախուսանքի արտահայտություններից մեկն էլ այն էր, որ նա Արմենուհուն առանձնացրեց երիտասարդ արվեստագետ ու մտավորական կանանցից և իբրև Հայ գրողների կովկասյան ընկերության նախագահ միայն Արմենուհուն վերապահեց հայ տիկնանց անունից Սայաթ-Նովայի մահարձանի բացման օրը (1914 մայիսի 15) Սուրբ Գևորգ եկեղեցու գավթում ելույթ ունենալու պատիվը: Բանաստեղծը բազմիցս աջակցել է Արմենուհուն աշխատանքի տեղավորման և զանազան այլ հարցերում, սակայն մինչ այդ մի որոշակի ժամանակահատված անպատասխան է թողել նրա զգացմունքներն իր նկատմամբ, մանավանդ որ մի քանի տարի անց Արմենուհին դառնում է բանաստեղծի ընկերոջ՝ Ավետիս Ահարոնյանի հարսը՝ Վարդգես Ահարոնյանի կինը:

Սակայն թերևս առաջին անգամ 22-ամյա Արմենուհին, 41-ամյա բանաստեղծին սիրահարվելով և նրա հայրական ու բարեկամական վերաբերմունքին արժանանալով, փորձեց հարմարվել կյանքին՝ հասկանալով իր երազի ու իդեալի անհասանելիությունը: Նա կարողացավ սիրո փոխարեն բարեկամությամբ բավարարվել, մանավանդ որ նոր, փոթորկալից սերերն առջևում էին: Թումանյանն այն տղամարդկանցից էր, որ կարողացավ հրաժարվել 20 տարով իրենից երիտասարդ հմայիչ բանաստեղծուհու ինքնամատույց սիրուց, միաժամանակ չնեղացնել նրան, չվիրավորել նրա անկեղծ զգացմունքները և դրանք վերածել ջերմ բարեկամության: 1919 թ. Թումանյանի հոբելյանի օրերին Արմենուհին բարձր գնահատեց բանաստեղծի ասպետական վարքագիծն իր նկատմամբ և բանաստեղծություն ձոնեց նրան.

Ի՞նչ ձոնեմ քեզ, որ չունենաս,
Սեր թե կարոտ, կապույտ երազ,
Անխրատ սիրտ, գարնան համբույր,
Սիրող աչեր, գինի՞ թե բույր:

Մենության ցավ, երգ թե ժպիտ,
Մտքե գրիչ, խոսքե մատիտ,
Հուզումներե կերտած տաճա՞ր,
Սիրո կնճիռ, փա՞ռք թե հանճար:

Գուցե մի սիրտ, խորունկ ու հեզ,
Մեծի, փոքրի հանդեպ բեհեզ,
Սիրող ու վեհ, հպարտ, անպարտ,
Ա՜հ, թե լիներ նաև անդարդ:

Եվ կուզեի ձոնել ես քեզ
Մոռացության թևերն անտես,
Որ հասնեին վշտիդ ժամին,
Օրորեին, հաշիշ տային:

Լինելով իր ժամանակի ամենաաչքի ընկնող, քնարական խառնվածքով, հրապուրիչ կանանցից մեկը՝ Արմենուհին հրապուրվել է ոչ միայն Թումանյանի անձով ու ստեղծագործությամբ: Նա մշտապես եղել է ժամանակի անվանի պոետների միջավայրում և նրանց ուշադրության կենտրոնում, վայելել է ժամանակի մեծերից ոչ միայն Հովհ. Թումանյանի, այլև Ավ. Իսահակյանի, Վ. Տերյանի, Ե. Չարենցի ընկերակցությունն ու մտերմությունը: 1910 թ. նա հրապուրված էր Թումանյանով, այնուհետև ամուսնանալուց հետո՝ 1920 թ., դարձավ Չարենցի մուսայաստեղծ կինը և մտերմուհին: Նրան է նվիրված Չարենցի «Էմալե պրոֆիլը Ձեր» շարքը: Չարենցն էլ իր հերթին ներշնչանքի աղբյուր դարձավ Արմենուհու համար: Նրանք միմյանց նվիրեցին բանաստեղծություններ ու գեղեցիկ զգացմունքներ: Արմենուհին մուսայաստեղծ էր նաև Տերյանի համար: Էդ. Տիգրանյանի հավաստիացմամբ Վ. Տերյանի «Կատվի դրախտ» շարքը նվիրված է Արմենուհուն[54]:

Մենուհին գիտեր իր բուռն զգացմունքների փոփոխականության մասին, փորձում էր խուսափել, բայց չէր ստացվում: Նա խոստովանում է.

Տարէք հողմեր, անսանձ հողմեր,
Սիրտս էլ անտուն, անկայուն....

Գուցե հենց բանաստեղծուհու բնավորության «փոփոխականությունը» դարձավ արդեն ամուսնացած Արմենուհու՝ Չարենցի սիրուն փոխադարձելու պատճառը, որը եղավ ճակատագրական քայլ և փոխեց բանաստեղծուհու ողջ կյանքը: Արմենուհին Խորհրդային Հայաստանը լքեց 1922-ին ու մեկնեց արտասահման՝ սկզբում Բեռլին, ապա՝ Փարիզ: Արդեն արտասահմանում հաստատված ամուսինը՝ Վարդգես Ահարոնյանը, բաժանվեց նրանից, միայնակ թողեց կնոջը՝ չներելով նրա մտերմությունը Չարենցի հետ: Վ.Ահարոնյանն ամուսնացավ երկրորդ անգամ, իսկ Արմենուհին իր հետագա ողջ կյանքն ապրեց միայնակ ու մոռացված: Թումայնանն էլ այլևս չկար, որ բարեկամական ձեռք մեկներ նրան և օգներ, ինչով որ կարող էր: Արմենուհին վախճանվեց 1962 թ. դեկտեմբերի 9-ին հեռավոր Նյու-Յորքում՝ ծանր, երկարատև հիվանդությունից: Նրա միակ մխիթարությունը սիրով ու կյանքով լի երիտասարդության ու անցյալի հուշերն էին, որտեղ ներկա էր նաև Թումանյանը՝ իր ասպետական կերպարով:

54 **Տիգրանյան Էդ.**, Մաքառման և արարման ուղիներով, Երևան, 2004, էջ 36:

ՋԱՊԵԼ ԵՍԱՅԱՆ

Անիկա անզուգական էր. անիկա կը ճառագայթեր...
Զապել Եսայան

Զապել Եսայան

20-րդ դարասկզբին սակավաթիվ էին հայ մտավորական կանայք, նրանցից էլ հատուկենտ կանանց է բախտ վիճակվել վայելել Թումանյանի մտերմությունն ու բարեկամությունը, և, որ չափազանց կարևոր է, հարգանքը: Այդ կանանցից էր գրող, թարգմանիչ, հրապարակագիր Զապել Եսայանը[55], որը ժամանակի այն կանանցից էր, որ բարձր էր պահում հայ կնոջ վարկն ու հեղինակությունը: Նա Թիֆլիս էր եկել թուրքական յաթաղանին զոհ դարձած արևմտահայ մտավորականների կանանց ու որբացած երեխաների հետ: Թումանյանը շտապում է հանդիպելու հոգեկան տագնապներ ապրող, հուսախաբ ու տառապած այդ խմբին: Այսպես, երկու գրողները ծանոթանում են ազգային մեծ ողբերգության կիզակետում՝ 1915 թ. նոյեմբերին: Զապել Եսայանի հավաստիացմամբ բանաստեղծն առաջին իսկ պահից **«բացառիկ մարդու»** (ԹԺՀ,151) տպավորություն թողեց: Նրանց մտերմությունը սկսվում է 1916 թ. փետրվարի 6-ին, երբ Թիֆլիսի ժողովարանի դահլիճում Զապել Եսայանը դասախոսություն է կարդում «Հայկական վերջին հալածանքները Կ.Պոլսի մեջ» թեմայով[56]: Այդ օրը պոետը ներկա էր ոչ միայն դասախոսությանը, այլև դրանից հետո ակումբում կազմակերպված ընթրիքին: Բանաստեղծը լսած զարհուրանքների տպավորության տակ էր, ինչպես վկայում է Զ.Եսայանը, նա «կը գտնվեր իմ ներկայացրած դրություններու տպավորության տակ: Անիկա թախծալի աչքերով կը նայեր ինձ, և պետք է ըսել, թե երեկոն անցավ տխրության մեջ» (ԹԺՀ,164): Այնուհետև բանաստեղծը լռելյայն «գրեթե անխոս» տուն է ուղեկցում տիկնոջը, իսկ վերջինս սփոփված էր, որ քայլում էր «սրտակից և անկեղծ բարեկամի հետ» (ԹԺՀ, 164): Երկու-երեք օր անց Զապել Եսայանը Թումանյանի աշխատասենյակում էր, որտեղ գտնվող արևելահայ գրողներից մեկը արևմտահայ գրողներին անվանում է օտար, հայ

55 **Զապել Մկրտչի Եսայան (Հովհաննիսյան)** (փետրվարի 4, 1878, Կ.Պոլիս, Սկյուտար -- 1943), հայ գրող, թարգմանիչ, հրապարակագիր:

56 «Հորիզոն»,1916, թիվ 30, «Մշակ», 1916, թիվ 29:

գրականության ուղիղ շաղվից դուրս: Զապել Եսայանը բանավեճի է բռնվում վիրավորված և «խստությամբ»: Նրան անմիջապես օգնության է հասնում Թումանյանը, ով արևելահայ ու արևմտահայ հակադրությունը միշտ համարել է արհեստական և վնասակար՝ կապելով դրանք «անհիմն փառասիրություններու» հետ: Այսպես, ծանոթությունից ընդամենը երկու ամիս անց, մինչև իր կյանքի վերջը պոետն իր աջակցության ձեռքն է մեկնում մտավորական կնոջը՝ անվանի հայուհուն:

Բանաստեղծի օգնությունը հատկապես մեծ էր ու անհրաժեշտ 1916 թ. առաջին ամիսներին, երբ Զ.Եսայանը դեռևս հոգեկան տագնապներից ուշքի չէր եկել, դյուրագրգիռ էր ու զգայուն: «Ոչ ոք այդ շրջանին այնքան խոր հասկացողությունով իր սրտագին և հուզիչ բարեկամությունը չէր ընծայեր ինձ, որքան Հովի. Թումանյանը... **կը զգայի իր պաշտպանությունը, իր հովանավորությունը և սրտակցությունը**, որոնք միշտ շնորհեր է ինձ ինքնաբերաբար», - գրում է Զ.Եսայանը (ԹԺՀ, 151):

1916 թվականը Զ.Եսայանի կյանքում առանձնանում է Թումանյանի հետ գրեթե ամենօրյա հանդիպումներով: Պատճառն արևմտահայ գրողների ու գաղթականների հոգսերը հոգալու, նրանց ամեն կերպ աջակցություն կազմակերպելու խնդիրներն էին: Այդ հանդիպումների մեծ մասը տեղի էին ունենում բանաստեղծի տանը, երբեմն էլ Վերայի թաղամասում, Բալյան ուսուցիչների տանը, որտեղ վարձով ապրում էր Զապել Եսայանը: «**Ես կերթայի Հովի. Թումանյանի մոտ, ինչպես մարդ իր տունը կը մտնե,** առանց որևէ կասկածի և մտահոգության: Այդ այցելությունը, **օրվան որ ժամուն որ ըլլար, կընդունվեր Հովի. Թումանյանե կողմե որպես մեծ ուրախություն պատճառող մի դեպք**... Անիկա երկու բազուկները բացած, ժպտուն դեմքով և մեծ գոհունակությամբ կընդուներ հյուրը, անմիջապես խոսելով նորեկին հետ այնպիսի բանի վրա, որ հավասարապես հետաքրքրական էր թե՛ իրեն, և թե՛ այցելուին և ներշնչելով այն զգացումը, որ այցելությունը ոչ միայն ցանկալի էր, այլև անհրաժեշտ... **Անոր կյանքը ողողված էր ուրիշներով... Անիկա անզուգական էր**» (ԹԺՀ,154-155):

Թումանյանը Պյատիգորսկում Միքայել Պապաջանյանի[57] աջակցությամբ հանգանակություն էր կազմակերպել արևմտահայ գրողներին ու մտավորականներին օգնելու նպատակով: Դրամաբաշխումը կատարելու համար բանաստեղծը դիմում է Զապել Եսայանի օգնությանը[58]: Երբ նա Հայկազյան

57 **Միքայել Հովհաննեսի Պապաջանյան** (1868-1929), հասարակական-քաղաքական գործիչ, Ռուսաստանի 4-րդ Պետական դումայի (1912-1917), հայ ազգային պատվիրակության անդամ, եղել է ՀՕԿ-ի Փարիզի մասնաճյուղի նախագահ, Անդրկովկասյան Հատուկ կոմիտեի (1917) և Հայոց Ազգային պատվիրակության (1919-1922) անդամ:

58 Թումանյանի տանը հրավիրվում է արևմտահայ գրողների ժողով, որտեղ Զապել

ընկերությանն անդամագրվող հայ գրական ընտանիքի անդամ գրողների ցանկն էր կազմում, սկզբում արևմտահայ գրողներից ներառել էր միայն երկու անուն՝ Երվանդ Օտյան և Զապել Եսայան: Պահպանվել է Զապել Եսայանի 1916 թ. նոյեմբերի 16-ի ստացականը, որից պարզվում է, որ բանաստեղծը նրան աջակցել է նաև նյութապես: Այնտեղ արձանագրված է. «Հայ գրողների ընկերության նախագահ պ. Հովհաննես Թումանյանից պ. Տիգրան Հովհաննիսյանի միջոցով ստացա 500ռ. միանվագ նպաստ»[59]:

Զապել Եսայան

Նույն 1916 թվականին Եսայանը մեկնում է Մոսկվա, Պետրոգրադ և այնտեղից գալիս է միանգամայն հյուծված: Թոքաբորբով հիվանդ տիկնոջ նկատմամբ վերստին դրսևորվում է պոետի մեծ հոգատարությունը. «Այդ ինձ համար բախտորոշ օրերուն Հովհ.Թումանյանը ինձ հետ վարվեցավ **հարազատ եղբոր** հոգածությամբ: Ինքն անձամբ բժիշկ բերավ, հակառակ որ ես բժիշկ ունեի, և ստիպեց, որ կետ առ կետ կատարվեն պատվերները» (ԹԺՀ,166): Ամռանը Թումանյանը Բորժոմում տուն է վարձում Զ. Եսայանի համար, սակայն վերջինս մերժում է և նախընտրում է բուժվել Կոջորում: Սակայն 1917 թ. ամռանը երկուսն էլ հանգստանում էին Պյատիգորսկում և հանդիպում էին ամեն օր. բանաստեղծի ամառանոցային տան պատշգամբում հաճախ էին զրուցում գրականության, արվեստի ու գիտության հարցերի շուրջ, քննարկում էին Հայկազյան ընկերության ստեղծման հետ կապված խնդիրներն ու դժվարությունները հաղթահարելու ուղիները: Թումանյանն իր դրվատանքի խոսքերն էր ասել Եսայանին՝ նրա «Վերջին բաժակը» վիպակի տպագրության առիթով[60]: Սակայն ծանոթանալով Եսայանի «Եվփիմե» վիպակին (1909), որը հայտնի է նաև «Երբ այլևս չեն սիրեր», «Պատվանդանը» խորագրերով, նկատում է նրա և արևմտա-

Եսայանի հետ բանաստեղծը պետք է վճռեր՝ ում և ինչ չափով պետք է հատկացնել դրամական աջակցություն: Բանաստեղծի սեղանատանը հավաքվում են 200 հոգի, և շարունակում են գալ այլք: Զապել Եսայանը իր զարմանքն է հայտնում, որ այդքան գրչակից ընկերներ ունի Թիֆլիսում, միաժամանակ առաջարկում է ներկաներից կազմել մի հանձնախումբ, որը կկազմի նպաստառու գրողների ցանկը: Սակայն հանձնախմբի «անարդարությունից» Թումանյանին սկսում են անվերջ բողոքել: Զապել Եսայանն առաջարկում է հավասարապես բաշխել գումարը ամենքին և խուսափել ամենօրյա դժգոհություններից (ԹԺՀ,158):

59 ԳԱԹ, ԿԸՖ, թիվ 231:

60 Տես «Գործ», Բաքու, 1917, թիվ 1:

հայ որոշ գրողների ստեղծագործության կտրվածությունը ժողովրդական ակունքներից: Եսայանի խոսքերով՝ Թումանյանը վստահ էր, որ «հայ գրականության երկու հատվածների միաձուլումը պիտի լրացներ մեկ կամ մյուս հատվածին բացերը և նոր շավիղ պիտի բանար մեր գրականության համար» (ԹԺՀ, 168): Մշակութային շատ միջոցառումների Թումանյանն ու Եսայանը գնում էին միասին: Նրանք միասին ունկնդրեցին Մարիետա Շահինյանի դասախոսությունը Պյատիգորսկի ընդարձակ սրահներից մեկում:

Իր միջավայրի կանանց շրջանում Թումանյանը ունեցել է կնամեծար, ազնվական ու ասպետական տղամարդու համբավ: Նա շատ էր սիրում ծաղիկներ նվիրել շրջապատի կանանց որևէ առիթով կամ առանց առիթի: Ամենասովորական, առօրեական, կենցաղային բնույթի նամակներում ուղարկում էր ծաղկի թերթեր: Բավական է որևէ կնոջ հետ անցներ ծաղկի խանութի կողքով կամ պատահաբար լսեր նրա նախընտրած ծաղկի անունը, անմիջապես կգներ ու կնվիրեր: «Թումանյանը բացառիկ քնքշությամբ կը վերաբերվեր ինձ հետ, ինչպես թե հիվանդ ըլլայի և խնամքի կարոտ»,- վկայում է Զապել Եսայանը և հիշում բանաստեղծի «եղբայրական» վերաբերմունքի մի օրինակ (ԹԺՀ, 165): Գոլովինսկի փողոցում 1916 թ. փետրվարի 7-ին Թումանյանը և Զապել Եսայանը պատահաբար կանգ են առնում ծաղկի մի խանութի ցուցափեղկի առջև, և Զապել Եսայանն «անխոհեմություն ունեցավ» ասելու, որ շատ է սիրում կապույտ հակինթներ: Փետրվարի 8-ի առավոտյան Թումանյանը գալիս է Զապել Եսայանին այցի՝ «կապույտ հակինթներով լի կողով մը գրկած» (ԹԺՀ, 166): Հաջորդ օրը բանաստեղծը, մոռանալով իր նվիրած ծաղիկների մասին, սակայն հիշելով Զապել Եսայանի նախասիրության մասին, կապույտ հակինթներով նոր կողով է գնում ու դարձյալ նվիրում բարեկամուհուն: Անսպասելի իրավիճակում հայտնված կինը հետագայում անթաքույց հրճվանքով պատմում է. «Ինչ եղավ իմ զարմանքը, երբ հաջորդ առավոտուն Հովի. Թումանյանը եկավ նմանօրինակ կողով մը գրկած... Բոլորովին մոռցեր էր, որ այդ կատարեր էր արդեն: Գոնե ինձ պնդեց, թե մոռցեր էր և համոզվեցավ այն ժամանակ, երբ նախորդ օրվան բերած կողովը տեսավ սեղանի մը վրա: Անիկա ծիծաղեցավ իր մտացիրության վրա և ինձ բացատրեց, որ այդպիսի բաներ հաճախ կը պատահին իրեն, երբ որևէ իրական զգացում մը գրաված է իր միտքը» (ԹԺՀ, 166): Բանաստեղծն ինքն էլ գիտակցում և խոստովանում էր, որ իր ուշադրությունը՝ իբրև հոգեկան ներքին հատկություն, կապված է իմացական գործընթացների հետ և միաժամանակ իր դիրքորոշումների, սպասումների և ցանկությունների դրսևորումն է: Առաջին հայացքից բանաստեղծի մեջ շատ ավելի զարգացած էր ներքին ուշադրությունը՝ իբրև հոգեկան գործունեութ-

յան ուղղվածություն դեպի սեփական ներաշխարհի հետաքրքրությունները, սեփական ապրումներն ու մտքերը: Սակայն նրա արտաքին ուշադրությունը նույնպես բավականին զարգացած էր, հատկապես եթե խոսքը վերաբերում էր ազգային-հասարակական կյանքի իրողություններին: Այնուամենայնիվ, Թումանյանին բնորոշ էր կյանքի, կենցաղի և զանազան այլ երևույթների նկատմամբ ցրվածությունը և անփութությունը: Նրա ցրվածությունը երբեմն անհավատալի չափերի էր հասնում՝ անհավանական, նույնիսկ զավեշտալի պատմությունների նյութ դառնալով: Նա կարող էր տարիներով չհիշել, որ իր «Բանաստեղծությունների» մոսկովյան հրատարակության տպաքանակի ուղիղ կեսը Թիֆլիս չի հասել, չհիշել, թե որ երեխան որ դպրոցում է սովորում, դուստրերի համար գնած կոշիկը խանութ ետ վերադարձնելուց հետո հաջորդ օրը նորից գնել: Մյուս կողմից, Թումանյանի ուշադրությունը բնորոշվում էր կայունությամբ, ինչը պայմանավորված էր նրա նախասիրություններով: Կանանց նկատմամբ պոետի հոգատարությունը և նրանց ուրախ ու երջանիկ տեսնելու ցանկությունն այնքան ուժեղ ու խորն էին, որ ապահովում էին նրա ուշադրության կայունությունը կանանց հետաքրքրությունների նկատմամբ:

Զապել Եսայանն այն հազվագյուտ կանանցից էր, որ շատ լավ էր հասկանում բանաստեղծին, ավելի, քան պոետին շատ մտերիմ ու նրա կողմից սիրված կանայք, այդ թվում և իշխանուհին: Զապել Եսայանի ընկալմամբ՝ Թումանյանը **«խորապես հպարտ մարդ էր. գիտակից իր արժանիքներուն և գրողի պատասխանատու դերին»** (ԹԺՀ, 161), **«Անոր սիրտը հարուստ էր»** (ԹԺՀ, 162), «Այդ լավատես և շեն սրտով մարդու տխրությունը սրտակեղեք էր» (ԹԺՀ, 163):

Զապել Եսայանը կարողացել է ճիշտ ընկալել բանաստեղծի զոհաբերվող բնավորությունը, նրա երջանկության և հոգեկան բավարարության հիմքերը: Նկատելով, որ Թումանյանի տունը «հյուրընկալ ու քաղցր» էր՝ նա գրում է. «Այդ բոլորը գոյություն ուներ մեծ պոետի զոհաբերություններու գինով: **Անիկա իր նյութական միջոցները և ժամանակը կը շռայլեր ուրիշներուն հաճույք պատճառելու և այդ հաճույքով երջանկանալու համար: Անիկա կը ճառագայթեր իր շուրջ բոլորը իր անձին արտակարգ հմայքով և իր տրամադրած բոլոր միջոցներու շռայլ շնորհումով, երբեք չմտածելով իր մասին, իր հանգիստին և անմիջական շրջապատին, ապագայի մասին»** (ԹԺՀ, 163), **«Անիկա կարծես կը գրկեր բոլոր տառապող ժողովուրդները իր բաբախուն և տաք սրտին վրա»** (ԹԺՀ, 167), **«Անիկա իմաստուն մարդ էր և խորը կը թափանցեր մարդոց հոգեբանության մեջ»:**

Թումանյանի և Զապել Եսայանի վերջին հանդիպումը եղել է 1917 թ.

սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Թիֆլիսում տեղի ունեցած «Հայոց ազգային համագումարում», որտեղ Զապել Եսայանն արևմտահայ պատվիրակների կազմում էր[61]: Հետագա կյանքի ողջ ընթացքում Զապել Եսայանի համար չխամրեց **«խորապես հպարտ, լավատես, հարուստ ու տաք սրտով, իմաստուն, բացառիկ ու անզուգական մարդու, հարազատ եղբոր»՝** Թումանյանի «այնքան մեծ և բացարձակ հմայքը», և երջանիկ էր, որ իր կյանքի ամենադժվար օրերին վայելել էր այդ «**մեծ մարդու**», բանաստեղծի սրտակից բարեկամությունը:

61 Տես «Հորիզոն», 1917, թիվ 194, 207. տես նաև **Ջ.Կիրակոսյան**, «Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը», Եր,, 1965, էջ 443:

ՊՈԼՍԱՀԱՅ ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ

Անայիս (Եվփիմե Ավետիսյան)[62]

Անայիս (Եվփիմե Ավետիսյան) (1270-1850)

1921 թ. աշնանը Թումանյանն արդեն անբուժելի հիվանդ, հոգնած և ուժասպառ մեկնում է Պոլիս՝ իբրև ՀՕԿ-ի (Հայաստանի օգնության կոմիտե) նախագահ: Հոկտեմբերի 30-ին նավը հասնում է Բոսֆորի ափերին: Պոլիսն արդեն երևում էր. բանաստեղծը զարմացած էր, քանի որ կորցրել էր օրերի հաշիվը, ժամն ու ժամանակը: Նա երեք օր շարունակ նավախցում անկողնուց վեր չէր կացել: Թումանյանի նպատակն էր օգնություն կազմակերպել Հայաստանի սովյալներին և կամրջել հայության տարբեր հատվածները՝ սփյուռքն ու Հայաստանը, ինչը նա իրականացրեց մեծ հաջողությամբ: Բանաստեղծի ժամանումը Պոլսում մեծ աշխուժություն ու մշակութային եռուզեռ է առաջացնում: Եվ որքան էլ պոետը ֆիզիկապես ու հոգեպես հյուծված էր, իր մեջ ինչ-որ գերբնական ուժեր է գտնում իր առաքելությունն իրագործելու, ամենքին ժպտալու և ոգեշունչ խոսքեր ասելու: Նա կարողանում է հույս ու հավատ ներշնչել Եղեռնից մազապուրծ արևմտահայության բեկորներին: Ինչպես վկայում են ժամանակակիցները՝ Թումանյանի ժամանումով Մարմարա ծովի վրա հայրենասեր հայերի համար մի արև ծագեց, Հայաստանի Արևը:

Բանաստեղծին շրջապատում և նրա անձով հմայվում են պոլսեցի հայ մտավորական կանայք, արվեստագետներ, լրագրողներ, երգչուհիներ, որբանոցների կառավարչուհիներ: Նրանք զբոսնում են բանաստեղծի հետ, ուղեկցում պոետին ամենուր և ոչ մի քայլ չեն հեռանում միմյանց հաջորդող զանազան հավաքների, հանդիպումների, հանդեսների, ճաշկերույթների ընթացքում:

Պոլսահայ կանանցից բանաստեղծի նկատմամբ մասնավորապես առաձնակի ջերմություն է տածում գրող, լրագրող **Անայիսը (Եվփիմեն): Նրա հետ զբոսանքներից մեկի ժամանակ** Թումանյանը զրույցի ընթացքում պարզում է Անայիսի՝ ծաղիկների ու ծխախոտի խանութներ տնօրինելու ցանկությունը: Նույն օրը բանաստեղծն Անայիսին ուղեկցում է «Հայ կին» պարբերականի

62 **Անայիս (Եվփիմե Ավետիսյան)**- 1870 թ., Կոստանդնուպոլիս - 04.08. - 1850 թ. Փարիզ - գրող, աշխատակցել է «Մասիս», «Արևելյան մամուլ», «Բյուզանդիոն» և այլ պարբերականների.

Թումանյանը Օրիորդաց վարժարանի մի խումբ վարժուհիների հետ, Պոլիս, 1921

խմբագրի՝ **Հայկանուշ Մառքի**[63] տուն, իսկ ինքը խնդրում է կառապանին սպասել: Անայիսը հիշում է. «Ժպտեցավ քերթողը և կառք մը կեցուց մեզ տանելու համար... Հանձնարարեց կառապանին, զիս տեղավորեցնելե հետև, որ սպասե պահ մը, ու ներողություն խնդրելով հեռացավ:

Քիչ մը զարմացած մնացի: Կարճ միջոցե մը հետո վերադարձավ, Նիսեն եկած շատ գեղեցիկ մեխակներու երկու փունջերով բեռնավոր, հետո ծունկներուս վրա դրավ ոսկեզօծ տփիկ մը տիկիններու հատուկ անմոռանալի սիկառեթներու: Այդ **ժեսթը** իր կնամեծարության մեկ շատ նուրբ արտահայտությունն էր» (ԹԺՀ, 825) (Ընդգծումը հեղինակինն է. Ս.Հ.):

Հիշենք, որ Թումանյանը չէր ծխում և չէր սիրում ծխելը որպես երևույթ և իր աշխատասենյակի պատին փակցրել էր գրություն՝ «Խնդրում եմ չծխել և գիրք չխնդրել»: Այնուամենայնիվ, մոխրաման էր դնում սեղանին, որովհետև հյուրերին մերժել չէր կարողանում: Այս դեպքում էլ բանաստեղծն ընդառաջ է գնում այն կնոջը, որը «երազ տվող սիկառեթների» նկատմամբ անտարբեր չէր:

Եվփիմեի գնահատականով՝ Հայկանուշ Մառքն իր մտավոր զարգացածությամբ, սրամտությամբ, «փոքր-ինչ չարաճճի», աշխույժ վարքագծով «հրապուրեց քերթողը»: Ըստ հուշագրի՝ Հայկանուշն ուներ «մտավորական կնոջ բոլոր հազվադեպ հատկությունները» (ԹԺՀ, 825): Բանաստեղծը «եռանդագին» քաջալերանքի խոսքեր է ուղղում հայ գրականության դժվարին ասպարեզում աշխատող մտավորական կնոջը: Պոլսահայ կանանց համար իրենց իսկ վկայությամբ «Անհունորեն հաճելի եղան անցնող ժամերը» (ԹԺՀ, 825):

Թումանյանն առանձին հանդիպումներ է ունենում կին գործիչների հետ՝ այցելելով «Հայ կին» հանդեսի խմբագրատուն: Այստեղ իր ելույթում բա-

63 **Հայկանուշ Մարգարի Մառք** (1883-1966), հայ գրող, հասարակական գործիչ: 1909 թ. Կ. Պոլսում արձակ ու չափածո գործերով հանդես է եկել «Բյուրակն», «Հայաստանի կոչնակ», «Ժամանակ», «Երիտասարդ հայուհի» և այլ պարբերականներում: 1919-1932 թթ. հրատարակել է «Հայ կին» կիսամսյա հանդեսը: 1921 թվականին լույս է տեսել նրա «Ծուլության պահերես» արձակ բանաստեղծությունների ժողովածուն:

Հայկանուշ Մառք
1883-1966

նաստեղծն ընդգծում է կանանց իրավունքների կարևորության խնդիրը և խոստանում, որ ինքն ու իր դուստր Նվարդը կաշխատակցեն «Հայ կին» հանդեսին: Խմբագրատանը պոետի հետ հանդիպման մանրամասները տպագրվում են «Հայ կին» պարբերականի նոյեմբերի 16-ի համարում, որտեղ կարդում ենք. «Հաճույք ունեցանք ընդունելու մեր հարկին մեջ՝ այցելությունը արևելահայ մեծանուն բանաստեղծ և Հայաստանի օգնության կոմիտեի նախագահ պրն. Հ.Թումանյանի, ընկերակցությամբ մեր հարգի աշխատակցուհու - տիկին Անայիսի:

Պրն. Թումանյան՝ ֆեմինիզմի ջերմ ու հավատացյալ պաշտպան մը՝ գնահատելով «Հայ Կին»-ի հիմնարկությունն ու նպատակը՝ իր հեղինակավոր թելադրանքներով **զորացուց զմեզ**: Բախտավորությունը պիտի ունենանք այսուհետև մերթ ընդ մերթ օգտվելու իր թանկագին աշխատակցութենեն, ինչպես նաև գործակցությունեն օր. Հ.(պիտի լինի Ն.՝ Նվարդ) Թումանյանի, որ համալսարանական կրթություն մը ստացած ըլլալով՝ պիտի կրնա ապահովապես մեր աշխատակցուհիներու շարքին մեջ պատվո տեղ մը գրավել... **Հայրենաձայն այս սիրված քերթողին մտերմիկ այցելության ժամերը անմոռանալի հրճվանքին հիշատակ մը պիտի մնա մեզի համար**»[64]:

1921 թ. նոյեմբերի 14-ին Թումանյանն այցելում է Դպրոցասեր տիկնանց Գատը գյուղի վարժարանը՝ «որբանոց վարժուհինոցը»: Իր ելույթում պոետը բարձր է գնահատում վարժարանի խնամակալուհիների գործունեությունը: Անայիսի ողջույնի խոսքը հուզիչ էր թե՛ բանաստեղծի, թե՛ ներկաների համար: Ողջունելով Թումանյանին՝ **Անայիսը** խոստովանել է, որ նրա երկերը ընթերցելիս «անսահման երանություն է զգացել»: Համեմատելով պոետին եվրոպացի բանաստեղծների հետ՝ Թումանյանին ավելի բարձր է դասել, ավելի սրտին մոտ, ավելի հոգեհարազատ, ավելի շքեղորեն զգայուն: «Մեծ բանաստեղծներուն տավիղին ոսկելար մակդիրը կուտան, բայց ես չեմ ուզեր, ով մեր անըստգյուտ քերթող, տալ այդ մակդիրը քու տավիղիդ, անոր լարերը լուսասպիտակ մուսաները հյուսած են ոչ թե ոսկե թելերով, այլ մարդկային սրտին ամենեն խորունկ և ամենեն քնքուշ զգացումներովը, մարդկային հոգիին ամենեն վսեմ թռիչքներովը և ամենեն անպատում տառապանքներովը:

Դուն երգիչն ես, որուն տաղերը՝ մերթ հրճվանքի և մերթ ամենաբուռն

64 «Հայ կին», 1921, թիվ 2, էջ 812:

ցավի շեշտերով, կանցնին լեռներեն, անապատներեն, ձորերեն, կթռին հողմավար թռչուններու պես սարերն ի վեր, ծովերեն վեր և կհուզեն, կցնցեն ամեն անոնց, որ սիրած են, տառապած են, լացած են: Հուսավրեպներուն խրախույս կուտան, դառնացածներուն՝ կորով, անժպիտներուն՝ ժպիտ, չսիրվածներուն՝ գգվանք:

Քու երգերդ, քու անմոռանալի տաղերդ կմրմնջեն մեր շրթունքները ինչպես աղոթք մը սրբանվեր, և մեր հոգիներուն հիացումը... բանաստեղծության նվիրված մեհյանի մը շողակնազարդ խնկամաններուն մեջ ծխված կնդրուկին պես, կուգա քեզի, անոսրացած հեռավորության մեջ, տարտամ բայց միշտ հաշտաբույր:

Ես կողջունեմ քեզ հոս՝ մեր մեջը, կողջունեմ ոչ թե քաղաքացի մեծ մարդը, այլ **հոգիներու սարսուռ տվող՝ սրտերը քնքշորեն սփոփող և զրկանքի արցունքները սրբող բանաստեղծը**: Կողջունեմ հայ քերթողը, որ երգած է հայ սրտերուն հույսերը, հայ սրտերուն խռովքը, հայ սրտերուն թրթռումները:

Կողջունեմ քեզ, որ ինձ երանություն տված ես՝ քու բանաստեղծություններդ կարդացած միջոցիս, անսահման երանությունը տված ես զքեզ եվրոպացի քերթողներու բաղդատելու և քու երգերդ ավելի սրտիս մոտիկ, ավելի շքեղորեն զգայուն գտնելու:

Ինձ տված ես երանությունը հպարտ ըլլալու հայ բանաստեղծությունով: Ընդունե զմայլումս այնպես, ինչպես իշխան մը կընդունի համեստ ու պարզուկ կնոջ մը ձեռքեն լեռան ծաղիկներու փնջիկ մը:

Միայն թե փնջիկս կապված է իդեալի ծաղիկներով, որոնք քաղած են վերացումի պահերուս, ուր քու մեծ հոգիիդ հետ, քու հեշտալուր տաղերուդ մեջեն սավառնած եմ դեպի բանաստեղծություն, դեպի արվեստի գեղեցկության անրջային աշխարհները:

Բայց իմ ողջույնիս պետք է կցեմ քույրերուս, դպրոցասեր տիկիններուն և սանուհիներուս ողջույնները: Դպրոցասեր տիկինները և մատաղատի սանուհիները, որոնց ճակատին վրա **հրճվանքի ճառագայթը սփռեցիք, իրենց սրտերուն խորը առհավետ պիտի պահեն հիշատակը այս օրվան, պիտի պահեն հիշատակը Ձեր՝ իրենց մոտ գտնված պահերուն, ինչպես կպահվին մեծ երջանկության օրերու հիշատակները հույզի և լույսի մեջ»**[65]:

Որբանոցի սանուհիները ի պատիվ բանաստեղծի կազմակերպել էին գեղարվեստական հանդես, ուր հնչում են երգեր «Անուշից», Թումանյանի բանաստեղծությունները, «Չարի վերջը», երգեր, և կատարվում են «փոքրիկ որբուհիներու պարեր»: Թումանյանը հուզվում է, դրվատանքի խոսքեր է ասում

65 «Հայ կին», 1921, նոյեմբերի 16, թիվ 2, էջ 811

որբ սանուհիներին, ըստ արժանվույն գնահատում դպրոցասեր տիկնանց անձնվեր գործունեությունը: Լրագրերը հավաստում են. «Պ. Թումանյան սաստիկ զգացված, հմտալից բանախոսությամբ մը վեր հանեց դպրոցասեր տիկնանց գործին վսեմությունը, քաջալերեց սանուհիները և իր երջանկությունը հայտնեց Պոլսո մեջ գտած ըլլալուն այդպիսի վարժարան մը... Դուք, ըսավ, **կանգուն կը պահեք ցեղին արժանիքը, ձեր պահպանումը ավելի հզոր է, քան բանակներու ուժը, որովհետև սուրբի ուժը չէ ան, այլ բարոյական կորովի ուժը:** Ես՝ իբր բանաստեղծ, ինչ որ տված եմ ձեզի հաճույք իմ գրություններով, դուք հոս ինձ կրկինը տվիք, ձեր հառաջադիմությունովը դեպի զարգացում: **Տղա մը կրթելը մարդ մը կրթել է, բայց մայր մը պատրաստելը ընտանիք մը կրթել է**: Ես երջանիկ եղա այսօր ձեր մեջ և չպիտի մոռնամ այս երջանկությունը» [66]:

Գատը գյուղի Դպրոցասիրաց վարժարանին հրաժեշտ տալու պահին Թումանյանը գրառում է կատարել տպավորությունների մատյանում. «Մեր ցեղին մասին երբ վկայություն ուզեին, ես Դպրոցասիրաց տիկնանց վարժարանը պիտի ցույց տայի, որ տեսնեին հայ կինը և հայ որբուհին, և սա ավելի շատ պիտի պաշտպաներ մեր դատը, քան բոլոր դիվանագետները միասին առած:

Իմ լավագույն հիշողություններից մեկը Պոլսից՝ պիտի մնա Դպրոցասիրաց վարժարանը»[67]:

Սիպիլ. Զաբել Հովհաննեսի Խանջյան

Պոլսում Թումանյանը մտերմանում է նաև **Սիպիլի[68] հետ:** Պոլսի երիտասարդության կազմակերպած միջոցառմանը Թումանյանը օգնում է **Սիպիլին** և Անայիսին հաղթահարել հոծ բազմության պատնեշը. «Բարեբախտաբար, նույն պահուն Թումանյանը ևս հասավ իր զավկին հետ և, մեզ հոն գտնելով, գոհունակություն հայտնեց՝ խնդրելով, որ իրմեն առաջ անցնինք, թերևս չէր կրնար ըմբռնել, թե այր մը կարելի է, որ կնոջմե մը առաջ անցնի: Ներսն ալ դժվար գտնվեցավ մեզի աթոռ, և մինչև մենք չնստանք, մեծանուն հյուրն ալ ոտքի կեցավ, գեղեցիկ դաս մը տալով հյուրամեծարերիտասարդներուն» (ԹԺՀ, 825): Ուշագրավ է, որ

66 Տես «Հայ կին» երկշաբաթաթերթ, 1921, նոյեմբերի 16, թիվ 2, էջ 811: Տես նաև Թումանյան ԵԼԺ, հտ 7, էջ 559:

67 Նույն տեղում:

68 **Սիպիլ** (Զաբել Հովհաննեսի Խանջյան, արևմտահայերեն՝ Զապէլ Յովհաննէսի Խանճեան), 1863, հոկտեմբերի 21, Կ.Պոլիս - 1934, հուլիսի 19, Կ.Պոլիս, հայ գրող, մանկավարժ, հասարակական գործիչ:

Թումանյանի բնավորության աչքի ընկնող հիմնական գծերը՝ բարությունն ու լավատեսությունը, ամենքին պարզ էին դառնում առաջին իսկ հանդիպումից.«Բայց քերթողը այնքան խորապես բարի էր, այնքան մեծահոգի, գեղեցկություն փնտրող նույնիսկ ամենեն տգեղ բաներուն մեջ» (ԹԺՀ, 826):

Պոլսում Թումանյանը մտերմանում է նաև երգչուհի, Անուշի դերակատար **Մաշա Սուրաբյանի հետ**[69]**:** Պոլսի «Նավասարդ» միությունն ի պատիվ Թումանյանի՝ 1921 թ. **նոյեմբերի 10-ին** կազմակերպում է ցերեկույթ: Անուշի դերակատար Մաշա Սուրաբյանը երգում է «Անուշ» օպերայից հատվածներ և ժողովրդական երգեր: Թումանյանին դիմավորում են մեծ խանդավառությամբ: Ցերեկույթի ավարտին Մաշան խնդրում է ներկա լինել «Անուշի» բեմադրությանը: Մաշան այնքան էր ուզում իր արվեստով տպավորություն գործել բանաստեղծի վրա, որ Անուշի խելագարության տեսարանը բնական «կատարյալ և պատկերավոր» խաղալու նպատակով գնում է հոգեբուժարան՝ տեսնելու հոգեկան հիվանդներին, ուսումնասիրելու նրանց վարքագիծը բուռն և խաղաղ պահերին: Թումանյանին հատկացված օթյակը Մաշայի ամուսինը զարդարում է գորգերով և ծաղիկներով: Իսկ բանաստեղծը «սաստիկ զայրացավ» և դիմելով Մաշայի ամուսնուն՝ ասաց. «Այ տղա, ես էսպես բաներ չեմ սիրում, ինչո՞ւ ես արել» (ԹԺՀ, 828):

Բանաստեղծը Մաշա Սուրաբյանին ծաղիկներ է նվիրում հանպատրաստից գրած քառատողի հետ: Մաշան երբեք չի մոռացել այդ ծաղկեփունջը, որը բանաստեղծն օպերան դիտելու ընթացքում է ինչ-որ մեկին հանձնարարել գնել՝ վճարելով «տասը ռուբլիանոց ոսկե դրամ»: Ինչպես հիշում է Մաշա Սուրաբյանը. «Վերջին վարագույրին ես ստացա ծաղկեփունջ՝ բանաստեղծի այցետոմսի հետ» (ԹԺՀ, 829):

Երբ ժողովուրդը պահանջում է, որ պոետը բեմ բարձրանա, նա հրաժարվում է՝ ասելով, թե իր Անուշն իր փոխարեն ամեն ինչ ասաց: Ուսանողները վազում են օթյակի մոտ և Թումանյանին ուսերի վրա տանում են փողոց. «Ինքն, իրարկե, շատ էր նեղվում» (ԹԺՀ, 829): Երկու օր անց բանաստեղծը «Անուշի» դերակատարներին հրավիրում է ճաշի: Ավարտին Մաշային նվիրում է իր լուսանկարը՝ մակագրությամբ. «Իսկական Անուշիս Թումանյանից»:

Թումանյանի բարությունը, նրա աննկարագրելի ջերմացնող և ամենքին հիացնող ժպիտը, անզուգական խոսքն ու կնամեծար վերաբերմունքը օրերի

69 Դերասանուհի Մաշա Սուրաբյանը պրոֆեսիոնալ բեմ է բարձրացել 1912 թվականին՝ Թիֆլիսի հայոց դրամատիկական խմբում: Մ. Սուրաբյանը երաժշտական կրթություն է ստացել Մոսկվայում, որպես դերասանուհի առաջին անգամ ելույթ է ունեցել 1918 թվականին՝ Եկատերինոդարում (Կրասնոդար): 1918 թվականին գործել է Կովկասում, 1919 թվականից՝ Կ. Պոլսում և Իզմիրում, 1923 թվականից՝ ԱՄՆ-ում:

ու շաբաթների ընթացքում պոետին պոլսահայ կանանց այնքան հարազատ դարձրեցին, որ նրանից բաժանվելը վիթխարի ցավ պատճառեց՝ հեքիաթի, գեղեցկության, լույսի և աստվածային շնորհի կորստյան ցավ: Անայիսը գրում է. «Երբ մեզմե բաժնվեցավ ան, կարծես իր ետևեն թողուց վետվետուն լույսի, քաղցրության, ներդաշնակության հեքիաթներ, իր սպիտակ գլուխը մնաց մեր աչքերուն առջև իբրև խորհրդանշանը ճառագայթող հյուսված բանաստեղծության և իր հերոսները վերակենդանացան մեր հոգիներուն մեջ իբրև բարեկամներ վաղեմի, ապրած հոգնավրդով կյանքով ու պսակված անմահությամբ... **Իր մեկնած օրը Պոլիսը կորսնցուց շնորհ մը, որ իր վրա իջած էր աստվածներու ծոցեն, գոգցես կորսնցուց իր լուսափայլ պայծառությունը, սև թռչունի թևեր վարագուրեցին երկինքն ու ծովը, և Ոսկեղջուրի դալար ափերուն ուռիի փոխված աղջիկները հորդառատ արցունք թափեցին ու տակավին**.

Ջրերի վրա
Գլուխնին կախած,
Դողում են անոնք
Ու լալիս կամաց...» (ԹԺՀ, 826-827):

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԵՐԿՐԱՅԻՆ «ՄՈՒՍԱՆ»՝ ՎԱՐՅԱ ԽԱՆԴԱՄԻՐՅԱՆ

1902 թ. նոյեմբերին Արիստակես Զարգարյանը[70] Բորժոմից խնդրում է Թումանյանին մի ֆրանսուհու համար սենյակ փնտրել Աբասթումանում: Հավանաբար բանաստեղծն արդեն ծանոթ էր այդ ֆրանսուհուն, ով «գեղեցիկ էր և հաճելի շարժուձևով»: Իրեն բնորոշ հումորով պոետն ընկերոջը պատասխանում է. «Եթե նա է, որին ես այդտեղ (Բորժոմում - Ս.Հ.) տեսա կարետում, ոչ թե սենյակ կգտնեմ, այլ իմ սենյակը կտամ իրեն... մուզաներս հուզվում են արդեն» (9, 367): Ֆրանսուհու համար բնակարան գտնելու նպատակով Թումանյանը, իրոք, հետաքրքրվել էր, նույնիսկ պայմանավորվել իր տանտիրոջ ու նրա կնոջ հետ և արդեն լրջորեն տեղեկացրել. «Ես դեկտեմբերի սկզբին հեռանալու եմ, և այս սենյակը ազատ կլինի, եթե կարգին էլ վճարեն, ինձանից ավելի լավ կկերակրեն, սենյակն էլ լավն է, տեղն էլ, իրենք էլ» (9, 368): Ըստ ամենայնի՝ Ռուստեմը և ֆրանսուհին չեն համաձայնել այդ տարբերակին, այդ պատճառով էլ նոյեմբերի 15-ին բանաստեղծը գրում է վարձով տրվող ևս երկու բնակարանների մասին (9, 370): Թումանյանը չի մոռանում այդ մասին վերստին գրել նաև կնոջը՝ իր անվերջ կատակներով փորձելով մեղմել իր և ընտանիքի հեռավորությունը. «Իրեն պալատից մի ֆրանսուհի աղջիկ է ղրկում մոտս. տեսնեմ հիմի ինչ կասես: Իհարկե, այն ժամանակ մի քանի ամիս էլ կուշանամ: Այնուհետև մնաս բարով քո երեխաներով - իմ симпатия-ն էլ՝ իրեն նազերով» (9, 369): «Симпатия» ասելով Թումանյանը նկատի ուներ **Վարյա (Վարդուհի) Խանդամիրյանին**: Մի շաբաթ անց գրում է, թե Ռուստեմը «ոչ մի ֆրանսուհի էլ չի ուղարկել, այնպես որ, չփախչես» (9, 373):

Ֆրանսուհու համար «մուզաների հուզվելը», իհարկե, կատակ էր, սա-

70 **Արիստակես (Ռոստոմ) Զարգարյան Հայրապետի** -23.12.1864 (Գողթան գվ.,Ներքին Ագուլիս գ.) - 13.02.1935 (Թիֆլիս) - բժիշկ, հասարակական գործիչ, Թումանյանի հովանավորներից: Բացի Ռոստոմից Ա.Զարգարյանին մտերիմները ասում էին նաև Ռուստեմ:

Վարյա Խանդամիրյան
1875-1933

կայն այն, որ Աբասթումանում այդ մուսաները որոշ ժամանակով «հուզվել էին», անժխտելի փաստ է:

Վարյա Խանդամիրյանը սերում էր Ղարաբաղի մելիքների նշանավոր տոհմից, որոնք Շուշիում հայտնի էին որպես «Խանդամիրյան» թատրոնի հիմնադիրներ[71]: Նրա ազնվական ծագումը, գեղեցիկ արտաքինը, կրթված մտավորական լինելը գրավում են Թումանյանի ուշադրությունը: Կարճ ժամանակում Վարյան դառնում է բանաստեղծի մուսան, նրա ներշնչանքի առարկան: Նա պոետի տաղանդի ջերմ երկրպագուներից էր: Թումանյանը հաճախ էր լինում երիտասարդ ուսուցչուհու տանը, օգնում էր իր խորհուրդներով, անվերջ զրուցում ու երբեմն էլ վիճաբանում: Բանաստեղծը հաճախ է ականատես եղել, թե ինչպես է Վարյան ուղղում աշակերտական տետրերը, ինքն էլ իր մասնակցությունն էր բերել գնահատելու կարևորության մասին արտահայտած իր մոտեցումներով, որոնցից հիմնականն ամփոփվում էր Նիցշեի մի նախադասության մեջ՝ «Գնահատել, նշանակում է ստեղծել» (6.392):

Հատկապես քնարերգության մեջ Թումանյանի ելակետը միշտ կյանքն է եղել, շրջապատից ստացած կենսական ազդակները, անմիջական կենդանի իրողությունները: Իր ստեղծագործական կյանքի ամենաբեղմնավոր տարում Թումանյանը մի վերջին անգամ գրեթե տասնամյա ընդմիջումից հետո՝ 1902 թ. ապրիլի 29-ին, գրում է «Դու քո ճամփեն գընա, քույրիկ...» բանաստեղծությունը և հրաժեշտ է տալիս սիրո քնարերգությանը:

Դու քո ճամփեն գընա, քույրիկ,
Եվ թող լինի նա պայծառ:
Ինձ մի՛ ժըպտա, ինձ մի՛ սիրիր,
Ես ընկեր չեմ քեզ համար (1, 196):

---

71 Փարիզում կրթություն ստացած **Մկրտիչ (Նիկիտա) Աբրահամի Խանդամիրյանը** 1891 թ. հիմնադրում է «Խանդամիրյան» 350 տեղանոց պրոֆեսիոնալ թատրոնը, որն իր գործունեությունը սկսեց «Ռուզան» պատմական դրամայի բեմադրությամբ: 1891 թ. մինչև 1896 թ. բեմադրվել է 119 ներկայացում՝ խաղացանկում ունենալով այնպիսի հայ և արտասահմանյան հեղինակներ, ինչպիսիք են՝ Հ. Պարոնյան, Շիրվանզադե, Պուշկին, Գոգոլ, Լերմոնտով, Օստրովսկի, Նայդյոնով, Չեխով, Վլ. Նեմիրովիչ-Դանչենկո, Իբսեն, Սերվանտես, Շիլլեր, Մոլիեր, Հյուգո, Ջիակոմետտի, Զուդերման և այլն: Կարճ ժամանակում «Խանդամիրյան» թատրոնը հռչակվում է ամբողջ Կովկասում: Թատրոնը գործեց մինչև 1905 թ. ազգամիջյան կռիվները, որի արդյունքում այն հրո ճարակ դարձավ, բայց և այնպես Խանդամիրյան գերդաստանի շնորհիվ չէին դադարում բեմադրությունները Շուշիի թեմական դպրոցում, Մելիք Հայկազյանի տան դահլիճում, քաղաքային ակումբում և այլուր:

Բանաստեղծությունը Թումանյանը սկզբում վերնագրել է «Ն-ին» և միայն 1903 թ. «Լույս» օրացույց-հանդեսում տպագրելուց հետո (էջ 313) մշակված տարբերակը հրատարակել է «Դու քո ճամփեն» վերնագրով և զետեղել 1903թ. «Բանաստեղծություններ» ժողովածուի մեջ (էջ 38): Թումանյանի ոչ մի ստեղծագործության մասին հեղինակի այդքան հանգամանալից քննադատական վերլուծություն չի պահպանվել: Վերոհիշյալ և «Պանդուխտ եմ, քույրիկ, մանուկ օրերից...» բանաստեղծությունների մասին ինքնադատության փորձն արվել է Փիլիպոս Վարդազարյանին[72] ուղղված հեղինակի նամակների մեջ: Այդ երկու, ինչպես նաև «Նըստած եմ տըխուր, մենակ մի ժայռի...» բանաստեղծությունները նվիրված են Վարյա Խանդամիրյանին: Փիլ. Վարդազարյանին Բելի Կլյուչից ուղարկած Թումանյանի նամակից պարզվում է, որ բանաստեղծը Վարյայի հետ 1902 թ. հուլիս ամսին կարճատև «նամակագրական սիրավեպ է ունեցել». («Մի փոքրիկ հոգեբանական - փիլիսոփայա - բանաստեղծական նամակագրություն ունեցանք») (9, 295): Թե՛ Թումանյանի և թե՛ Վարյայի այդ նամակներն անհայտ են, հավանաբար, ոչնչացվել են հասցեատերերի կողմից: Սակայն Թումանյանի խոսքերից պարզվում է, որ Վարյային հասցեագրված այդ նամակներում ինքը խոսել է նաև կյանքի անհետաքրքիր, ձանձրալի ու տաղտկալի կողմերի մասին, ոչ քնարական, ներշնչանքը սպանող մթնոլորտի մասին, իսկ Վարյան էլ նրան պատասխանել է. **«Դուք ծույլ եք, ոչինչ չեք շինում, դրա համար էլ կյանքը ձեզ ձանձրալի է թվում»** (9, 295): Այս խոսքերը խոցում են պոետին, թվում են կարճ ու խիստ, և նա ընկերոջը հավաստիացնում է. «Իհարկե, ես կաշվից դուրս կգամ ու կապացուցեմ, որ այդպես չի: Ոչ թե ծույլ եմ, նրա համար է ձանձրալի, այլ ձանձրալի է, նրա համար եմ ծույլ» (9, 296):

Առհասարակ պետք է ասել, որ Թումանյանի ժամանակակից ոչ մի կին չի կարողացել թափանցել բանաստեղծի հոգու խորքը, տեսնել «հատակի փրփուրները»: Եվ ոչ միայն կին. նույնիսկ Թումանյանի մոտիկ ընկեր-բարեկամները կարծում էին, որ նա ծույլ է: Բանաստեղծը միշտ մեծ եռանդով մերժել է իր մասին եղած «ծուլության» առասպելը[73]: Այդ այսպես կոչված «ծու-

72 **Փիլիպոս Հակոբի Վարդազարյան** (մտերիմների շրջանում Ֆիլիպ) - 1858 (Գողթան գվ., Ներքին Ագուլիս գ). - 01.09.1935 (Թիֆլիս) - հրատարակիչ, մշակութային գործիչ, Թումանյանի մտերիմ ընկերն ու մեկենասը:

73 1902 թ. հոկտեմբերին, երևի դեռ չմոռացած Վարյայի հանդիմանությունը, Լեոյին ուղղված նամակում Թումանյանը գրում է. «...Որքան էլ ծիծաղելի համարվի ճանաչողների համար - ես ինձ ծույլ չեմ համարում» (9, 344): Թումանյանը նկատի ուներ կյանքի անբարենպաստ հանգամանքները: 1913 թ. դեկտեմբերին նա Ցոլակ Խանզադյանին գրում է. «Էնքան էլ ճշմարիտ չի էդ շատ տարածված կարծիքը, թե ես ծույլ եմ» (10, 194): Իսկ 1920 թ. իր բանավոր զրույցում ասել է. «Մարդիկ սովորաբար բանաստեղծին չեն հասկանում, պարապ են կարծում,

լությունը» կամ պարզապես չգրելը, չստեղծագործելը ոչ թե պատճառ, այլ հետևանք է եղել բանաստեղծի մշտական զբաղվածության, համապատասխան քնարական տրամադրության, հոգեվիճակի բացակայության: Բազմազբաղ, անվերջ ու անդադար հոգսերով պաշարված բանաստեղծը չէր կարող ոգևորվել, ներշնչվել, որովհետև այդ ճնշող հոգեվիճակն ու տրամադրությունը եղել են հասարակական համապատասխան միջավայրի արդյունք: Եթե նա զգում էր, որ շրջապատված է «չնչին մարդուկներով», որոնք անսիրտ են, փոքրոգի, կոպիտ, «լրբորեն հանգիստ», եթե այդ մարդկանց հայացքից մեռնում են հոգու բարձր մղումները, սրտի բերկրանքն ու կյանքի տխրությունը, ապա ստեղծագործելն անհնար էր դառնում: Թումանյանի հոգու այդ բարձր մղումներն են, որ հաճախ անընկալելի են եղել միջավայրի համար, սակայն քանի որ հարազատ, մտերիմ մարդկանց, հատկապես գեղեցիկ ներշնչանք պարգևող կնոջ համար են անմատչելի եղել, ապա բանաստեղծի հոգու ցավն ավելի է խորացել, և ծնվել է «Տրտունջ» բանաստեղծությունը: Վերջինս գրվել է 1902 թ. օգոստոսի առաջին օրերին, և նրա կենսագրական ազդակը, անշուշտ, եղել է այդ նույն ժամանակահատվածում պոետի և Վարյայի միջև եղած «հոգեբանական-փիլիսոփայա-բանաստեղծական նամակագրությունը»:

«Տրտունջը» պատասխան էր և՛ Վարյային, և՛ չստեղծագործելու պահերին իրեն «պարապ» համարող մտերիմ բարեկամներին: Պատահական չէ, որ բանաստեղծությունը գրելուց անմիջապես հետո՝ օգոստոսի 10-ին այն ուղարկում է ընկերոջը:

Օրերս անպտուղ, տխուր, ծանձրալի,
Ու գնում եմ ես ունայն տրրտունջով
Իմ սիրած մարդկանց, իմ լավ հույսերի
Գերեզմանների շարքերի միջով:

...Չընչին մարդուկներ, լրբորեն հանգիստ,
Անսիրտ, փոքրոգի, գրծծի ու կոպիտ.
Մեռնում են, մարում նրրանց հայացքից
Եվ հոգու ծրգտում, և՛ սրրտի ժրպիտ:

Էլ ու՞մ առաջին սիրտրդ բաց անես,
Ու՞մ համար երգես սրրտալի երգեր,
Ո՞ր չրքին սիրես, կյանքրդ նվիրես,
Էլ ինչպե՞ս ապրես անսեր, անընկեր... (1, 197)

երբ նա չի գրում... նրանք չեն հասկանում, որ հենց էդ **պարապ ժամանակն է, որ բանաստեղծը պարապում է, ստեղծագործում է: Էդ պարապ ժամանակը հղացումի, լցվելու ժամանակն է, և դա ավելի կարևոր է գրողի համար, քան թե գրելը»** (ՀՁ, 205, 221 և այլն):

Սա բանաստեղծության մշակված, վերջնական տարբերակն է, իսկ Ֆիլիպին հասցեագրած տարբերակում այդ ձանձրույթը Թումանյանը բացատրում է սիրելի մարդկանց ու լավ հույսերի կորստյան ցավով, ինչը և պատճառ է դառնում մի կողմից մարդկանց դաժան գործերն ավելի խիստ դատելու, մյուս կողմից՝ այդ ցավը խնջույքներում մոռանալու համար:

Դատում եմ մարդկանց գործքերը դաժան
Կամ բարձր երգում՝ խընջույքում նըստած...

Սու՛տ, որ կարճացնեմ իմ երկար ուղին,
Որ օրը մի կերպ մըթնի աղմուկով,
Ու դարձյալ մենակ, դարձյալ տխրագին
Գընում եմ մռայլ ու դատարկ հոգով:

Ես էլ չեմ սիրում, ես էլ չեմ խընդում,
Մաշել եմ սիրտըս անվերջ կըսկիծով,
Էլ չեմ հավատում, էլ չեմ աղոթում,
Թունավորել եմ հոգիս կասկածով (9, 298):

Այս տողերը, անշուշտ, ավելի են «տեղայնացված», նրանց մեջ կենսագրական տարրն ավելի է շեշտված, ընդգծված, ավելի թափանցիկ բնույթ ունի: Հույսերն ու լավատեսությունը հաճախ տեղի են տալիս, երբ պոետը զգում է իր միայնակությունը, միջավայրի, նույնիսկ ամենամերձավոր մտերիմների կողմից չհասկացված լինելու ցավը: Շատերը նրան ընկալում էին իբրև ուրախ-զվարթ, խնջույքներին թամադայող խոսքաշեն մի պոետ: Մինչդեռ բանաստեղծը լավ գիտեր, թե քանի-քանի անգամ է նա թամադայել խնջույքներում, բարձր ձայնով երգել և մռայլ ու դատարկ հոգով տուն վերադարձել կամ բազմաթիվ մարդկանցով շրջապատված՝ իրեն միայնակ ու չհասկացված զգացել: Թումանյանը կյանքում ամենից դժվարը համարում էր հոգու հանգիստը, անդորրը, խաղաղությունը, որը երբեմն կարող էր ձեռք բերվել նաև խնջույքի սեղանի շուրջ: Թերևս այդ պատճառով էլ բանաստեղծությունից հանում է այն տողերը, որտեղ խնջույքում ուրախանալը «սուտ» է համարվում: Բանաստեղծության նախնական տարբերակում հեղինակը պարզապես իր սիրտն էր բացում ընկերոջ առջև՝ մարդկանց մաղթում է անկեղծորեն ուրախանալու, երջանիկ լինելու բերկրանքը:

1902 թ. Թումանյանի կարդացած գրքերի թվում եղել է նաև ֆրանսիացի նշանավոր հոգեբան Ալֆրեդ Բինեի աշխատությունների ժողովածուն[74]:

74 **Ալֆրեդ Բինե** (1857-1911) - Ստույգ որ աշխատության մասին է խոսքը, չենք կարող

Դրանցում նրան հետաքրքրել են հատկապես սիրո հոգեբանության փիլիսոփայական արծարծումները: Սակայն պոետը ոչ այնքան սովորել է նրանից, որքան զգացել է, որ հոգեբանի մտքերն իրեն հոգեհարազատ են, հատկապես սիրո անհագության գաղափարը, որն արդեն արտահայտվել էր նրա պոեզիայում.

Դու ինձ չես սիրում, չես սիրում ինձ պես,
Հենց ես եմ մենակ լալիս ու տանջվում,
Դու սարի լանջին խաղեր ես կանչում...
Վաղուց, վաղուց ես դու ինձ մոռացել (3, 87):

Վարյայի նկատմամբ զգացմունքները նորից Թումանյանի խոհերի առարկան են դարձնում սիրո անհագության գաղափարը. «Շատ դյուր եկավ ինձ Բինեի խոսքը, թե **սերը քաղց է:** Բայց որքան դյուր եկավ, այնքան էլ ծանոթ թվաց: Չէ՞ որ մենք էլ ենք ասում, թե կշտացանք, կարոտը, սիրո, կրքի հագուրդն առնելու մտքով նրանից կշտացա, ասում ենք, կամ թե՝ կլինի՞ մի նրանից կշտանամ» (9, 300): Սակայն քանի որ բանաստեղծի ընկալմամբ սերը չի կարող հագուրդ, բավականություն բերել, «կշտացնել», որովհետև այն մշտական քաղց է, ուրեմն այն կարող է միայն անհասանելի լինել, «անհագ մնալ», միայն ցավ ու տառապանք պատճառել: Այստեղ Գր.Զոհրապի և Թումանյանի սիրո հոգեբանության ընկալումները ընդհանուր եզրեր են գտնում:

Իր նրբատեսությամբ ու ներքնատեսությամբ «կիներու հոգեբան» հռչակված Գր. Զոհրապը կնոջ հոգեբանության մեջ հայտնաբերում էր առեղծվածայինն ու անբացատրելին: Նրա նովելներում սերը մերթ անձնազոհություն ու անմնացորդ նվիրում է, մերթ կյանքն իմաստավորող նուրբ գեղեցկություն, մերթ մահվան սարսափը հաղթահարելու միջոց, սակայն սիրո հոգեբանական բոլոր փոխակերպումների ողջ բարդության մեջ Զոհրապն ընդգծում է սիրո անհասանելիությունն ու ոչ հարատև բնույթը: Ո՛չ սիրո արբեցումն ու մեծությունը, ո՛չ սիրելիին հասնելու անսահման տենչը չեն դառնում սիրո հարատևության պայման: Եթե «չի կարելիների» առկայությունը ուժեղացնում է սիրո ձգտումը, ապա հասանելիությունն ու փոխադարձումը բերում են հետաքրքրության կորուստ, դառնում բաժանման պատճառ, և յուրաքանչյուրն ունի իր միշտ անհասանելի սիրո իդեալը. «Ամեն մարդ իր ճոկոն, իր ստեղծած ու չգտածը կը սիրե միշտ»: Զոհրապը չէր հավատում փոխադարձ սիրո երջանկությանը, քանի որ հասանելի

ասել, սակայն Թումանյանի անձնական գրադարանում պահվում են Ա. Բինեի ավելի ուշ հրատարակված երեք գրքերը Ե.Էյշտեյնի, Ս.Խ.Զանդերի թարգմանությամբ. «Методы измерения умственной одаренности», «Развитие интеллекта у детей», «Современные идеи о детях»: Տես՝ «Հ. Թումանյանի անձնական գրադարանը Երևանում» մատենագիտական նկարագրությունը, գիրք 2, Եր., 1989, էջ 77:

սերը, ըստ նրա, դադարում էր սեր լինելուց, հենց այդ պատճառով էլ սիրո մեջ «մեկուն երջանկությունը մյուսին տառապանքեն կը բաղկանա»: Սիրո գոյության ու մշտատևության համար անհրաժեշտ է, որ սերը երբեք հագուրդ ու բավարարություն չտա:

Սիրո «ագահության» մասին Թումանյանն ակնարկում է նաև Վարյային նվիրված «Դու քո ճամփեն գընա, քույրիկ» բանաստեղծության մեջ.

Ելած կյանքի ամեն ճամփից,
Կարոտներով անմեկին,
Ագահ, անվերջ ու անհանգիստ
Թափառում է իմ հոգին (1, 196):

Փիլ. Վարդազարյանը, որը «Դու քո ճանփեն գընա, քույրիկ» բանաստեղծությունը շատ կողմերով ու առումներով չէր հավանել՝ մի շարք տողեր ու արտահայտություններ համարելով անբնական, միևնույն ժամանակ հրապուրվել էր սիրո ծարավի ու քաղցի գաղափարով[75]: Այդ մասին նա գրել է օգոստոսի 22-ի իր նամակում, որի պատասխանը բանաստեղծը չի ուշացնում և խոստովանում է իր հրապուրանքն ու սիրահարվածությունը. «Ասում ես, կարելի էր **քաղցը** գործ ածել: Իհարկե, կարելի է, մինչև անգամ շատ լավ է, բայց միայն այն դեպքում, երբ խոսքը կրքի, տոփական սիրո մասին է...

Ինչևէ, քո նոր ոճով խոսելով, դու գիտես, որ ես այժմ քաղցած եմ... (9, 300-301). (ընդգծումը հեղինակինն է, Ս.Հ.): Սակայն Թումանյանի ասած «քաղցը» կապ չուներ կրքի, «տոփական» սիրո հետ, հակառակ դեպքում Վարյային նվիրված բոլոր բանաստեղծություններում նա չէր խնդրի հեռանալ և ոչ էլ «քույրիկ» կանվաներ, ինչպես նաև չէր աղոթի՝ երբեք չհանդիպելու համար:

Դու քո ճամփեն գընա, քույրիկ,
Եվ երբ լինենք մենք հեռու,
Աղոթք արա, որ մյուս անգամ
Չհանդիպենք իրարու (1, 196):

Պարզապես նա պոետ էր՝ քնարական հոգով մի մարդ, որը «**միշտ ունի քնքուշ էակի հետ գեղեցիկ, գեղարվեստական կապերով կապված լինելու կարոտը, երազային կյանքով երբեմն ապրելու տենչը**» (9, 301):

Երկու գեղեցիկ հոգիների անկեղծ «գեղարվեստական կապերը» գրողի համար միշտ էլ ավելի բարոյական են համարվել: Լինելով հայ գրողների ընտանիքում թերևս ամենաօրինակելի ամուսիններից ու հայրերից մեկը՝ Թումանյանը սիրող սրտերի միության մասին գրում է. «Այս ավելի օրինավոր և

75 ԳԱԹ, Թ.Ֆ., 2050, ԹԹ, 1341:

ընդունելի կապ է, քան թեկուզ Վանքի եկեղեցում կատարված և մետրիկական մատյան մուծած ամուսնական կապը» (9, 301) [76]:

Վարյա Խանդամիրյանի՝ հոկտեմբերի 6-ին գրած բացիկից պարզվում է, որ Թումանյանը Աբասթումանից նրան գրել է մեկից ավելի նամակներ, այնինչ հայտնի է միայն սեպտեմբերի 25-ին գրվածը[77]: Մեզ չհասած, առայսօր անհայտ նամակները մեծ լույս կսփռեին Թումանյանի և Վարյա Խանդամիրյանի մարդկայնորեն գեղեցիկ ու վերկենցաղային, իրոք ռոմանտիկ, մաքուր, վեհ ու վսեմ հարաբերությունների վրա: Ընդ որում, այդ հարաբերությունների մասին պահպանված վավերագրերը մեկ անգամ ևս հավաստում են Թումանյանի բնավորության առաքինություններից, արժանիքներից մեկը՝ լուռ գաղտնապահությունը: Նա անչափ խորն էր թաքցնում թե՛ իր, թե՛ իրեն վստահված բոլոր գաղտնիքները, որպեսզի դրանց բացահայտումը ստվեր չգցեր որևէ մեկի վրա: Նա գաղտնապահ էր նույնիսկ այն դեպքում, երբ գաղտնիք վստահողն այլևս կենդանի չէր:

Հայտնի է, որ 1887-1888 թթ. Թումանյանը մտերիմ էր Ներսիսյան դպրոցի իր դասընկերներ Արամ Առաքելյանի, Դավիթ (Դաթիկո) Շահլամանյանի հետ: Նրանց էին միացել Արսեն Ղլտճյանն ու Գրիգոր Վանցյանը, և ձևավորվել էր գրական մի խմբակ, որը մեր գրականության պատմության մեջ ստացել է «Հնգյակ» անվանումը: Նրանք ամեն շաբաթ հավաքվում էին Թումանյանի հարևանությամբ՝ Հովհաննես քահանա Մարտիրոսյանի տան (որտեղ այդ ժամանակ բնակվում էր Թումանյանը) վերևի հարկում գտնվող Դաթիկո Շահլամանյանի առանձնասենյակում: Բանաստեղծի կարծիքով, այդ հնգյակից Դաթիկոն ամենապայծառն ու զգայունն էր: Նա առանձնապես մոտ ու սրտակից էր Թումանյանին, որին վստահում էր իր ամենանվիրական գաղտնիքները, «ազնիվ հոգին կրծող վիշտը» (ԹԺՀ, 274), որի պատճառով էլ 1894 թ. ինքնասպան եղավ: Արսեն Ղլտճյանը վկայում է, թե ինչպես իրենց՝ Դաթիկոյի մյուս ընկերների առջև նույնիսկ նրա մահից հետո Թումանյանն այդպես էլ չբացեց ընկերոջ գաղտնիքը. «Օվանեսը հաղորդակից էր Դաթիկոյի հոգեկան ապրումներին. նա գիտեր, թե ինչն էր տանջում իր սիրելի ընկերոջը, գիտեր, որ մի խոր գաղտնիք մշտապես ուղեկցում ու հալածում էր Դաթիկոյին, և լուռ էր մնում, նույնիսկ ինձ մինչև վերջ էլ չասաց: Ես շատ անգամ եմ Օվանեսին հարցրել, բայց միշտ էլ պատասխանը եղել է մի վշտահար ժպիտ և երկու խոսք, թե՝ **իմս չի, որ քեզ տամ**» (ԹԺՀ, 275):

76 Վանքի եկեղեցին գտնվում էր Թիֆլիսի այն փողոցում, որտեղ գտնվում էր հայոց հոգևոր առաջնորդարանը, կոնսիստորիան, որտեղ գրանցվում էին ծնունդ, ամուսնություն, մահ: Այժմ Վանքն ավերված է: Տարիներ առաջ մնացել էր միայն զանգակատունը, իսկ Վանքի տեղում դպրոց է կառուցվել:

77 ԳԱԹ, Թ.Ֆ., թիվ 2152:

Թումանյանը հրապարակ չէր հանում ոչ միայն ուրիշի, այլև իր հոգու գաղտնիքները: Մի առիթով Անուշավան Աբովյանին գրում է. «Ես բոլորովին հրաժարվում եմ եղելությունը պատմելուց, դա այն մի քանի գաղտնիքներից մեկը կմնա, որոնցից յուրաքանչյուրը մի մարդ ունենալով, չէ հաղորդում աշխարհում և ոչ մեկին, որովհետև շրթունքները չեն զորում և յուր մարդկային զգացմունքները փակում են բերանը» (9, 37):

Ինքը՝ բանաստեղծը, հրաշալի գիտեր իր բնավորության այդ գիծը. «Ես շատ գաղտնապահ եմ - նայած թե որքան թանկ է գաղտնիքը կամ վտանգավոր» (ՀՋ, 75):

Ընկեր-բարեկամների աչքից չէր վրիպել, որ Վարյան դարձել է Թումանյանի «սիմպատիան», բանաստեղծական ներշնչանքի առարկան: Եվ նրանք բնականաբար ուզում էին ավելին իմանալ: Այսպես՝ Լևոն Շանթը 1902 թ. հունիսի 23-ին Փարիզից հարցնում է ընկերոջը. «Սաստիկ կըհետաքրքրվեմ, թե ինչ կ'ընես, ինչ հալի ես, «Ա՛խ, Վարյա՛դ» ինչ հալի է»[78]: Շանթի համար այդ հարաբերությունները «սքանչելի կատակի» և գեղեցիկ «վիպակի» տպավորություն են թողնում, և նա սիրահարված պոետին գրում է. «Վիպակիդ շարունակությանը կ'սպասիմ արդեն այս քանի ատեն է, որ չի գար... փիս թերթոն ռոմանիստի պես ինչու՞ կեսին լռեցիր, գրե շուտով. կրնաս երևակայել, որ հետաքրքիր եմ հետևանքն իմանալու, այսինքն՝ հանգույցն ու լուծումը...»[79]:

«Հանգույցի» և նրա «լուծման» համար դեռ երկու տարի կար, իսկ Թումանյանի լռությունը շարունակվում էր: Նրա և Փիլ. Վարդազարյանի նամակագրությունից զգացվում է, որ վերջինիս հետաքրքրությունը նույնպես չի բավարարվել: «Դեռ քեզանից պատասխան չստացած - ես վճռում եմ, որ իրավունք ունեմ քննության առնելու քո հոգեկան դրությունը...»,- գրում է Ֆիլիպը 1904 թ. օգոստոսի 13-ին[80]: Թումանյանի պատասխանի մեջ կարդում ենք. «...Հարցիդ, թե չեմ ուզել սիրել, տեսար, որ ուզել եմ սիրել, քեզ ավելին կասեմ... - բայց ինչի՞դ է պետք պատմությունը» (9, 440):

Ավ. Իսահակյանը 1902 թ. հոկտեմբերին իր նամակում հարցնում է. «Գրիր քու մասին մանրամասն... ինչ եղավ... սերդ...»[81]: Մտերիմ ընկերոջ այս հարցասիրությանը Թումանյանը պատասխանում է նոյեմբերի 9-ին. «Սիրուս մասին ինչ ես հարցնում, գրելով բան չի դառնալ» (9, 360):

Սակայն առավել հետաքրքրական է, որ այն, ինչ բանաստեղծը հաճախ

78 **Շանթ Լևոն**, Երկերի ժողովածու 9 հատորով, հտ. 9, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2017, էջ 356: Այսուհետև սույն աշխատությունից մեջբերումները կարվեն տեքստում՝ փակագծերում նշելով հատորն ու էջը:

79 Նույն տեղում:

80 ԳԱԹ, ԹՖ., թիվ 2056:

81 Իսահակյան Ավ., Երկերի ժողովածու 6 հատորով, հտ 6, Եր., 1979, էջ 42:

չի խոստովանել ընկերներին, կեսկատակ-կեսլուրջ պատմել է կնոջը՝ Օլգային: Երբ «Современные армянские поэты» ժողովածուի հրատարակիչները Թումանյանից խնդրում են նրա նոր ստեղծագործությունները, լուսանկարը և կենսագրությունը, նա առաջարկում է. «Կենսագրությանս համար կնոջս դիմեցեք» (9, 333):

Եվ իրոք, ամենից շատ Թումանյանի և Օլգայի նամակագրության մեջ են պահպանվել բանաստեղծի կյանքի մանրամասները: Ամենից շատ Օլգայի նամակներում ենք հանդիպում Վարյայի անվանը և նրա նկատմամբ Թումանյանի ոչ միանշանակ զգացումների հավաստիացումներին: Ինչպես երևում է Օլգային ուղղված Թումանյանի նամակներից, Վարյան մտերիմ է եղել թե՛ Թումանյանի ողջ ընտանիքի և թե՛ անձամբ Օլգայի հետ: Ավելին, հաճախ է նրա առջև բացել իր սիրտը, պատմել իր զգացմունքների մասին և վստահեցրել Թումանյանի ողջ ընտանիքի նկատմամբ իր հավատարմությունն ու նվիրվածությունը: Բանաստեղծը կնոջը գրում է. «Շատ ուրախ եմ, որ օրիորդ Վարդուհու հետ քննադատություններ եք անում և գալիս այդքան բարոյական եզրակացությունների» (9, 341): Այդ «բարոյական եզրակացությունները» չեն խանգարում, որ Վարյան սիրահարվի բանաստեղծին, սակայն, մյուս կողմից, երիտասարդ օրիորդին ստիպում են խուսափել նրանից և «խրատներ կարդալ»: Մինչդեռ Թումանյանը շարունակում էր նրան քնարական նամակներ գրել: Միևնույն ուղևորության, միևնույն դեպքերի ու տպավորությունների մասին նա միաժամանակ գրում է ընկեր-բարեկամներին, կնոջը, Վարյային: Սակայն վերջինիս հասցեագրված նամակներն առանձնանում են իրենց նրբությամբ, քնարական շեշտադրումներով: Դրանցից յուրաքանչյուրը կարծես մի արձակ բանաստեղծություն լինի: Իր և բնության ներդաշնակ կապի մասին պոետը Աբասթումանից ոգեշունչ տողեր է գրում Վարյային. «Սքանչելի, սքանչելի օրեր են: Չգիտեմ՝ Դուք երբևէ աշնանը եղե՞լ եք բնության մեջ, անտառներում, սար ու ձորերում: Աբասթումանի հովիտը լիքն է արևի շողերով, սոճի անտառների բուրմունքով, թռչունների՝ աշնան հրաժեշտի երգերով ու մի անուշ, թախծալի խաղաղությամբ: Ամբողջ օրը զբոսանքներ եմ կատարում. թաղվում եմ անտառների խորքում, բարձրանում եմ սարերի գլուխները, նստում եմ ժայռերի գագաթներին ու մտորում, ցնորում՝ չնայելով Ձեր խրատին» (9, 320):

Հենց այդպիսի ժայռերից մեկի գլխին էլ 1902 թ. սեպտեմբերի 22-ին Թումանյանը գրում է Վարյային նվիրված բանաստեղծություններից մեկը՝ անտեսելով նրա «խրատը»: Ինքը՝ պոետը, հակված էր այն համարելու «հիշատակարանի ոտանավոր» և ոչ թե արվեստի գործ, և իր կենդանության օրոք այն ոչ մի տեղ չտպագրեց:

Նըստած եմ տըխուր, մենակ մի ժայռի,
Կանչում եմ հուշերն անցած օրերի,
Փընտրում եմ նըրա պատկերը կարոտ
Իմ մըտքու՛մ... ինձ մո՛տ...

Եվ ահա զըվարթ ծիծաղը հընչում...
Ցոլում են աչքերն... ըզգեստը շըրշում...
Լըսվում են արագ քայլերը ծանոթ...
Իմ շո՛ւրջը... Ինձ մո՛տ...

Բայց, ա՛խ, միմիայն չի գալիս կըրկին
Իմ էն լիասիրտ հըրճվանքը նախկին...
Ու նըստած եմ ես ժայռին նորից նոր
Տըխու՛ր, գըլխակո՛ր[82] (9, 321):

Տխրության պատճառներից մեկն էլ հարազատ, մտերիմ մարդկանց կողմից կյանքի բանաստեղծականն ընկալելու, գրողի հոգու խորքում թաքնված, պատսպարված նվիրական թրթիռներն ու ելևէջները հասկանալու անկարողությունն էր: Հենց այդ մարդկանցից մեկն էլ, նրա կարծիքով, իր «սիմպատիան» էր: Ահա թե ինչու նա այդ քերթվածը նվիրում է Վարյային հետևյալ խոսքերով. «Բայց Դուք բանաստեղծություն չեք սիրում, գոնե ոտանավորներ, որքան գիտեմ և, ափսո՛ս, որ գիտեմ» (9, 321):

Թումանյանի զգացմունքներն անկեղծ էին, ու թեև հասկանում էր, բայց նաև զայրանում ու վիրավորվում էր Վարյայի խուսափողական վերաբերմունքից, մեծ ընդմիջումներով իր նամակներին պատասխանելուց, դստեր կամ կնոջ միջոցով բարևներ ուղարկելուց: «Օրիորդին ասա՝ շնորհակալ եմ, որ հարցնում է» (9, 363),- գրում է բանաստեղծը դստերը՝ Նվարդին 1902 թ. նոյեմբերի 11-ին: Այդ «զայրույթը» Վարյայի խուսափումներից դարձյալ ավելի շատ արտահայտվել է կնոջը հասցեագրված նամակներում: Թումանյանը ամենևին էլ չի թաքցրել կնոջից, որ հրապուրված է Վարյայով. «Իսկ ես ու՞մ պատկերն եմ հետս ման ածում. նրա, որ ոչ թե վերմակ չի տալ, եթե ձյունի մեջ էլ լինեմ կանգնած, այլ չի էլ բարեհաճում նամակ գրելու: Երևի կարծում է աշխարհքը կքանդվի կամ կինս մարդաթող կլինի: Այսպես էլ իրեն ասա, եթե տեսնես» (9, 312): Ահա այսպես իր սեպտեմբերի 19-ի նամակում բանաստեղծը բողոքում է կնոջը, հայտնում իր վրդովմունքն ու խնդրում միջնորդել իր համար, որ Վարյան նամակ գրի: Գրեթե նույնը կրկնում է մեկ

82 Առաջին անգամ տպագրվել է «Գրական թերթում», Եր., 1956, թիվ 18:

ամիս անց՝ հոկտեմբերի 21-ին. «Հարգելի օրիորդը խանդով լռում է, ինձ նամակ չի գրում, երևի կարծում է «իրավունք չունի»» (9, 341): Թեև «իրավունք չունին» դնում է չակերտների մեջ, բայց և անմիջապես ավելացնում է. «Ես էլ աղոթում եմ, որ միշտ այդպես մնա» (9, 341):

Վարյայից ստացած ոչ մի նամակի փաստը գաղտնի չէր պահում կնոջից. «Օրիորդ Վարյայից ստացա մի քանի տող. բարեհաճել էր վերջապես երջանկացնել այդքանով: Լավ: Ես էլ պատասխանը իրենի կեսի չափ գրեցի» (9, 333):

Մեկ այլ նամակում՝ նոյեմբերի 22-ին, պոետն արդեն փորձում է հովանավորության տակ վերցնել Վարյային, որովհետև վերջինս, հավանաբար իր հոգում փոթորկվող զգացումից անհարմար զգալով, սկսել էր խուսափել նաև Օլգայից, ինչը լուրջ անհանգստություն էր պատճառել բանաստեղծին: Վտանգվում էին կնոջ և ընտանիքի հետ Վարյայի ջերմ, բարեկամական հարաբերությունները: Թումանյանը, որ անգիր գիտեր Վարյայի առօրյան, փորձում է արդարացնել նրա խուսափողական վերաբերմունքը. «Իսկ իմ սիմպատիան շատ մազալու մարդ դուրս եկավ ...Մի աղջիկ, որ իր եղբորը երեք տարին մի նամակ է գրում, նրանից ես ինչ պահանջեմ: Իսկ քեզ մոտ երևի նրա համար չի գալիս, որ ինչպես ինքն ասել է, հոգնած է լինում, ժամանակ չի ունենում: Դե մինչև ճաշը պարապում է, ճաշից հետո էլ ուրիշին է պատրաստում, այնուհետև էլ նկարչության դաս է առնում» (9, 373-374):

Եթե այս նամակում Թումանյանն իրեն անվանում է Վարյայի «եղբայրը», ապա հաջորդ՝ նոյեմբերի 27-ի նամակում ուղղում է սխալը: Պատմելով անփոխադարձ սիրո պատճառով ինքնասպանության փորձ կատարած Սախվարելիձեին մխիթարելու իր ջանքերի մասին, այն կատակների մասին, որոնք պիտի ապրելու ձգտում առաջացնեին հուսահատ պատանու մեջ, բանաստեղծը գրում է. «Ասում եմ՝ տո հիմար, ես էլ մի սիմպատիա ունեմ: Նամակիս չի պատասխանում. բայց ես գիժ հո չեմ, որ ինձ սպանեմ, կգնամ հազիր նրան կսպանեմ» (9, 379): Եվ կնոջն էլ հանձնարարում է Վարյային տեղյակ պահել նրան «սպանելու» իր մտադրության մասին՝ փորձելով կատակով ու ժպիտով հարթել ստեղծված լարված ու անախորժ վիճակը: Ինչպես պարզվում է կնոջ և ամուսնու նամակագրությունից, Օլգան սիրել և գնահատել է Վարյային և ընկերական-բարեկամական հարաբերություններ է ունեցել նրա հետ: Վարյայի «արտաքուստ անտարբերությունը» ուրիշի ամուսնու նկատմամբ գուցե պայմանավորված էր անհասանելի սիրուց տառապելու վախից կամ իր զգացմունքներով Օլգային ցավ չպատճառելու մտահոգությամբ: Իր զգացմունքների մեջ մոլորված և շփոթված օրիորդը, Ֆիլիպի կարծիքով, «նազ էր անում»: Իրականում Վարյան Թումանյանին

ընտանեկան կյանքում համարում էր բախտավոր և իրեն՝ նրա կայացած երջանկության մեջ՝ միանգամայն ավելորդ: Սակայն պոետը չի համաձայնում Փիլ. Վարդազարյանի հետ: «Հարցիդ, թե նազ էր անում. եթե ավելի պարզ ասեիր, թե խուսափում էր, կարծում եմ՝ ավելի ճիշտ կլիներ: Ասում է՝ «Դու բախտավոր ես արդեն» (չհասկանալուց)» (9, 440):

Վարյան հետզհետե սկսում է մերժել նաև Օլգայի հրավերները և դրանով վիրավորում նրան, հետևաբար և անհանգստացնում Թումանյանին: Նա խորհուրդ է տալիս կնոջը չնեղանալ, ավելի հանդուրժող ու մեծահոգի գտնվել: «Նա, ինձ թվում է, որ ինձ լավ չի ճանաչում, կամ կարծում է, **դու էլ կնեղանաս, եթե ինձ ավելի բարեկամավարի վերաբերվի**» (9, 322): Բանաստեղծը Վարյայի արհեստական անտարբերությունն ու անուշադրությունը իր հանդեպ վերագրում է նրա բծախնդրության աստիճանի ազնվությանն ու պարկեշտությանը: Օլգան կարծում էր, թե Վարյան ինքն իրենից էր վախենում՝ «թե հեռու կգնա»: Ամուսնուն մշտապես հիացմունքով շրջապատող կանանց բազմության միջից ինչ-որ մի պահ Վարյան խանդ ու մտահոգություն է առաջացնում պոետի կնոջ սրտում: Թումանյանն էլ շտապում է խաղաղեցնել կնոջը՝ համոզելով, որ օրիորդը «բավական հասկանում է աշխարհքն ու իրեն և մանավանդ **այնքան մաքուր սիրտ ունի, որ անընդունակ է հասնելու պախարակելի սահմաններ**: Եվ հենց այս է լավը, թե չէ հակառակ դեպքում քանի՞ գրոշ կարժենար» (9, 322-323):

Խանդում էր ոչ միայն կինը: Մարուսյա Վարդազարյանը եղբոր՝ Փիլ. Վարդազարյանի՝ Թումանյանին հասցեագրված նամակի երրորդ էջը գրում է անձամբ և փորձում է համոզել բանաստեղծին, որ Վարյան արժանի չէ նրա «սիմպատիան» լինելու, քանի որ ինքն անձամբ հանդիպել է նրան և համոզվել, որ նա բանաստեղծի մասին ամենևին չի մտածում. «...Մխիթարվեք նրանով,- գրել է Մարուսյան,- որ մենք և, կարծեմ, Ձեր կինն էլ, մտածում ենք Ձեզ համար»[83]:

Թումանյանը, տեսնելով, որ համընդհանուր քննարկման և «խանդի» առիթ է տվել իր՝ «սիմպատիայի» նկատմամբ վերաբերմունքը, ընկերոջը գրում է. «Մարուսյային շնորհակալություն եմ հայտնում մխիթարանքի համար: Հիրավի, աշխարհքում ինչեր չեն պատահում, և բոլորը թյուրիմացություններից: Իսկ կանայք իրանք արդեն թյուրիմացություններ են, և վա՛յ նրան, ով իրեն «իմացությունը» կտա այդ «թյուր»-երին: Նրա հետ շատ բան կպատահի աշխարհքում, և պետք է նրան միշտ մխիթարել» (9, 326):

Խոսելով «պախարակելի սահմանների» մասին՝ բանաստեղծը, որը թե՛ կյանքում, թե՛ արվեստում առաջնորդվել էր չափի զգացումը միշտ պահ-

83 ԳԱԹ, ԹՖ, թիվ 1024:

պանելու անհրաժեշտության գիտակցությամբ, մեկ անգամ ևս ընդգծում է մարդու մեջ անկախ սեռից միշտ մարդ տեսնելու և գնահատելու իր հավատամքը. **«Կինը (օտար կինը) մարդու աչքում մինչև այն ժամանակ հարգ ունի, քանի որ բարձր է և իբրև մարդ: Այս դեպքում ես հարգում եմ նրա ազնիվ ու շիտակ բնավորությունը** և նույնիսկ հասկանում եմ նրա ակամա արած անքաղաքավարությունը, որ դժվարանում է նամակ գրի, որովհետև մեր կյանքը լիքն է ստոր մարդկանցով ու ստոր արարքներով, և նա ինչ գիտի, թե ես էլ ինչ եմ» (9, 323):

Այնուհետև ինչ-որ բացատրություն եղել է նաև Օլգայի և Վարյայի միջև, որը վերջինիս մեծ հուզմունք է պատճառել: Եվ կրկին Թումանյանն անտարբեր ու անմասն չի մնում, նա անվարան իր պաշտպանության տակ է վերցնում Վարյային: Կնոջը գրում է հուզված ու վրդովված, կեսլուրջ, կեսկատակ նախատում ու կշտամբում է նրան և խոստանում հրաժարվել Վարյայի հետ ամեն տեսակ հարաբերությունից. «Վարդուհուն եթե այսպես ես ասում՝ գժվում է... ինձ վրա չի գժվում, քո մի դատարկ խոսքի վրա է գժվում... գուցե կտրեմ իմ բոլոր կապերը, թող այնուհետև մնա կապը կտրած» (9, 348): Իսկ նոյեմբերի 8-ին կնոջը խաղաղեցնելու նպատակով գրում է. «...Ափսոս, որ մին ու մին դրան հռչակել եմ իմ սիմպատիան» (9, 358): Սակայն Օլգայի և Վարյայի բարեկամական հարաբերությունները շատ շուտով վերականգնվում են, և Թումանյանն այլևս չի հրաժարվում «իր սիմպատիայից», իսկ Վարյայի հետ կապ հաստատելու համար կնոջից է խնդրում նրա նոր հասցեն. «Օրիորդ Վարյային ինչ հասցեով ես գրում, ես հասցեն չգիտեմ, գրի» (9, 358):

Վարյան էլ իր հերթին Թումանյանից է հարցնում Օլգայի հասցեն, երբ վերջինս Մանգլիսի ամառանոցում էր (9, 408, 411): 1903 թ. սեպտեմբերի սկզբին, երբ Թումանյանը Շուլավերում էր, կինը նրան տեղեկացնում է, որ Վարյան շատ անտրամադիր է, տխուր է ու թախծոտ: Ըստ ամենայնի՝ Վարյայի անտրամադիր լինելու պատճառներից մեկն էլ այն էր, որ կյանքի հանգամանքները ստիպում էին հրաժարվել բանաստեղծի սիրուց, նրա նվիրած վարդերից: Միևնույն նամակով Օլգան ամուսնուն է ուղարկում Վարյայի նվիրած վարդը: Իբրև պատասխան՝ պոետը, անկեղծ անհանգստացած, բայց և կատակով գրում է. «...Լավ... ինչու՞ է այդքան տխրել, չասավ պատճառը: Շնորհակալ եմ, որ նրա վարդը ղրկել էիր: Եթե իմանա, որ իրեն վարդը ղրկել ես ինձ՝ ինչ կասի... Կասի գիժ են սրանք մարդ ու կին: Բարևիր, որ տեսնես» (9, 414): Կնոջ խնդրանքով ու նրա միջոցով բանաստեղծն այդ նույն օրերին Վարյային Շուլավերից ընկույզ է ուղարկում:

Նույն ժամանակահատվածում՝ սեպտեմբերի 12-ին, Թումանյանը գրում է կնոջը. «Վարյայի մասին չես գրում, թե ինչ էիք մասլահաթ անում կամ, ինչու

է այդքան դարդոտել. չլինի՞ թե հիասթափության է հանդիպել» (9, 416): Մեկ-երկու տարի գուցե ոչ նույն ուժով, այնուամենայնիվ, բանաստեղծին շարունակում էին լրջորեն անհանգստացնել Վարյայի զգացմունքները:

Լ.Շանթի խոսքերով՝ «ռոմանտիկական-բանաստեղծական հարաբերությունների հանգույցն ու լուծումը» տեղի ունեցավ 1904 թ. հունիսին Էջմիածնում: Թումանյանը եկել էր Օշական և Էջմիածին՝ մասնակցելու հունիսի 17-ին աննախադեպ մեծ հանդիսավորությամբ նշվող Թարգմանչաց տոնին: Արարողությանը ներկա լինելու համար «Հեռավոր տեղերից և մերձակա գյուղերից ահագին բազմություն էր հավաքվել՝ ս.Մեսրոպի գերեզմանին երկրպագություն տալու և երախտամատույց լինելու»[84]: Պատարագից հետո բազմությունը ցրվում է Օշականի այգիներն ու Վեհափառ հայրապետի ամառային մեծ այգին, և տասնյակ ընտանիքներ ու հարյուրավոր մարդիկ խմբվում են միևնույն սեղանի շուրջը. նրանք «արժանավորապես դրվատում էին այդ օրվա խնկելի սրբոց անունն ու գործը»»[85]:

Գարեգին Ցրտատարյանի անտիպ հուշերում նշվում է, թե ինչպես են դիմավորում Թումանյանին: «Մեկ էլ կարծես հանկարծակի խորհրդավոր լռություն, շշուկ, իրարանցում... Սեղանի կառավարիչը հայտարարում է, որ Օշական է ժամանել հանրածանոթ բանաստեղծ Հովի. Թումանյանը և, որտեղ որ է, կներկայանա մեր սեղանին» (1, 610):

Թումանյանը, հնարավոր է հանպատրաստից, էքսպրոմտով, իսկ հնարավոր է նաև հաջորդ օրը, գրում է «Այստեղ մի վսեմ խորհուրդ է ապրում» բանաստեղծությունը:

Այստեղ սրբազան մի շունչ է բուրում,
Որ վեր է տանում մեզ այս աշխարհքից:

...Մի շունչ, մի խորհուրդ, մեծ, հըրաշալի,
Խառնըված հայոց մեր խորունկ հոգուն,
Եվ որքան դարեր, դարեր են գալի,
Մենք միշտ հավատով, մենք միշտ աննկուն (1, 210):

Հաջորդ օրն իսկ՝ 1904 թ. հունիսի 18-ին, Թումանյանը Օշականից գալիս է Էջմիածին[86]: Առավոտյան ճանապարհվում է Զվարթնոցի ավերակները

84 «Արարատ» ամսագիր, Էջմիածին, 1904, թիվ 78:

85 «Նույն տեղում:

86 Թումանյանի ԵԼԺ գիտական երկրորդ հրատարակության առաջին հատորի «Այստեղ մի վսեմ խորհուրդ է ապրում» բանաստեղծության ծանոթագրության մեջ ճիշտ չի նշված, թե պոետը հունիսի 21-ից էր Էջմիածնում, և բանաստեղծությունն էլ գրել է Օշականում, հունիսի 19-ին կամ 20-ին: Իրականում Թումանյանը Օշականում եղել է հունիսի 17-ին, որը հին տոմարով Թարգմանչաց տոնի օրն էր, և բանաստեղծությունն էլ ամենայն հավանականությամբ գրել է

տեսնելու, և ինքն էլ ականատես է լինում, թե որքան ուշադիր է Հակոբ Մանանդյանը Վարյայի նկատմամբ, ինչպես է նրա «չորս կողմն անում»: «Այս մասին հետո կպատմեմ,- գրում է բանաստեղծը կնոջը: - Աստված վերջը բարի անի: **Իսկ ես ինչ պետք է անեմ՝ չգիտեմ...»** (9, 432):

Երեք օր անց՝ 1904 թ. հունիսի 21-ին, նա արդեն կնոջը տեղեկացնում է, որ **«Վարյային Մանանդյանն առաջարկություն արավ: Վարյան ընդունեց»** (9, 433):

Հունիսի 24-ին մի մեծ խմբի ուղեկցությամբ, որի մեջ էին նաև Վարյան, Նունե Թաիրյանը, Մուրացանը, Ա.Աթանասյանը, բանաստեղծը գնում է Անի, և այնտեղ տպավորությունների մատյանում[87] գրում է .

Մենք փառքեր ունենք թաղված հողի տակ,
Մենք հույսեր ունենք պահված մեր երկրում.
Մի՞թե հավիտյան կողբանք ավերակ,
Մի՞թե հավիտյան կըմնանք տըրտում (1, 211):

Անիից հեռանում են երեկոյան՝ մի վերջին անգամ միասին դիտելով «շքեղ վերջալույսը... կանաչ տարածության միջից» (9, 437):

Թումանյանը 1904 թ. հունիսի վերջին օրերին (26 և 27) Մեսրոպ վարդապետի և արդեն Վարյայի ընտրյալի՝ Հակոբ Մանանդյանի հետ հասնում է Թիֆլիս և այնտեղից ուղևորվում Շուլավեր՝ ընտանիքի մոտ: Այստեղից նամակ է գրում Ղարաքիլիսա՝ Վարյային: Եթե նախկինում միայն բանաստեղծության մեջ էր «քույր» անվանում, իսկ նամակներում՝ «Թանկագին օր. Վարյա», ապա այժմ արդեն դիմում է «Իմ սիրելի քույր Վարյա» (9, 436): 1904 թ. հուլիսի 29-ին գրած Թումանյանի նամակը վերջինն էր, որ նա հասցեագրել էր Վարյա Խանդամիրյանին: Այստեղ դարձյալ կեսկատակ, կեսլուրջ կարծես հանդիմանում է Վարյային, որ իր գեղեցկությամբ և հմայքով գրավեց Էջմիածնի Մատենադարանում հայկական ձեռագրերն ու հայոց պատմությունն ուսումնասիրող գիտնական Հակոբ Մանանդյանի սիրտը: «Բայց դու

այդ նույն կամ հաջորդ օրը, որովհետև շեշտել է Օշականում լինելու հանգամանքը. «Այստեղ մի վսեմ խորհուրդ է ապրում»: Բացի դրանից՝ հունիսի 18-ին արդեն Էջմիածնից նա գրել է կնոջը. «Երեկ Օշական էինք» (9, 432):

87 Անիի այցելուների ալբոմը պահվում է ՀՀ Ազգային արխիվում, ֆ.57, գ. 704, թ. 83: Առաջին անգամը չէր, որ Թումանյանն Անիում էր, սակայն առաջին անգամ էր, որ տպավորությունների գրքում գրառում էր անում, թեև առաջին անգամ քաղաքը շատ ավելի էր հուզել բանաստեղծին: Այս անգամ նա ընթերցել էր այդ մատյանը և նրա 83-րդ էջում հանդիպել էր Արամ Դալլաքյանի և Պետրոս Ղամբարյանի ստորագրությամբ մոտ մեկ շաբաթ առաջ՝ հունիսի 16-ին արված հետևյալ մակագրությունը. «Եկի, տեսի ու ողբացի, հիշելով անցյալը, տեսնելով ներկան, սիրտս մորմոքված դառնում եմ արտասվողի աչքերով» (ՀԱԱ, ֆ.57, գ. 704, թ. 83): Թումանյանը նրանց պատասխանում է. «Ես էլ եկի, տեսի ու ողբացի այս դավթարի վրա» և լալկանությանն ու ողբին հակադրում է ազգային հույսերն ու փառքերը: Տես ՀԱԱ, ֆ.57, գ. 704, թ. 83):

վատ սովորեցիր. հայտնվել վանքերում և կրոնական խաղաղության նվիրված սրտերը վրդովել ու շեղել Աստծու ճանապարհից: Մի ժամանակ սատանան ուներ այդպիսի սովորություն. գեղեցիկ աղջկա կերպարանքով հայտնվում էր վանքերում, և վանականները թողնում էին իրենց ձեռագիրներն ու փախչում նրանց հետ: Դու՛ գիտես, բայց լավ բան չի» (9, 436):

Մի վերջին անգամ Շուլավերում բանաստեղծը հիշում է, որ նշանվելուց հետո Վարյան ուզում էր գալ այնտեղ՝ Թումանյանի ընտանիքում հյուրընկալվելու և Օլգային տեսնելու, բայց քանի որ նշանված էր՝ արդեն պետք է հաշվի նստեր իր նոր կարգավիճակի և հասարակական կարծիքի հետ. «...Ուրիշները չհամաձայնեցին» (9, 434): Այդ մասին պոետը շատ զգայուշ, մեծ նրբանկատությամբ է գրում. «...Մեկը շատ ուզեց Շուլավերի թութն ուտել, բայց չկերավ ու... կորավ...» (9, 437):

Թումանյանը, կախման կետեր դնելով և բավական թափանցիկ ձևով ակնարկելով Վարյայի անհետանալն իր կյանքից, միևնույն ժամանակ անմիջապես արձանագրում է, որ գուցե ճիշտ չէր ասել նրա մասին՝ «կորավ», քանի որ նրա մասին չէր էլ կարելի նաև վստահաբար ասել, թե եղել էր: Ո՛չ, իրականում պարզապես եղել է բանաստեղծական զգացմունքների գեղեցիկ, վեհ ու վսեմ պոռթկում, սիրո պատրանք, արգելված պտուղի ձգողական ուժ, արվեստագետի խոնարհում բնության անթերի էակի առջև, վերջապես մարդկային ուշացած սիրո տենչ, որն իր մեջ միաժամանակ պարունակում է պարտադիր հոժարակամ հրաժարում, անձնուրացություն, որը միակ հնարավոր ելքն էր այդ անելանելի վիճակից, ծառացած գորդյան հանգույցի միակ լուծումը: Այդ շատ հասկանալի մարդկային զգացումը, կարոտը նա այդպես էլ պահեց իր սրտի խորքում, այլևս երբեք չանդրադարձավ դրան, չբարձրաձայնեց այդ մասին՝ մեկընդմիշտ փակելով իր կյանքի այդ նվիրական էջը:

Ահա թե ինչու «Թութ չկերավ ու...կորավ» արտահայտությունը պոետը ներկայացնում է իբրև սոսկ հանգավորված բառեր, բառեր, և ուրիշ ոչինչ: «Հիմար բան է այդ հանգը, ինչ-որ չես ուզում ասել՝ շատ անգամ հենց այն ես ասում, որովհետև հանգումը գալիս է» (9, 437): Չի բացառվում, սակայն, որ այդ բառերն ունեին նաև միայն իրեն հայտնի ենթատեքստ: Իրականում Թումանյանն անկեղծորեն ուրախ էր Վարյայի համար, քանի որ Հ.Մանանդյանի մասին բարձր կարծիքի էր թե՛ որպես գիտնական, թե՛ որպես մարդ:

Այնուհանդերձ, պոետի և Վարյայի գեղեցիկ հարաբերությունների արդյունքում ոչ միայն հայ գրականությունը հարստացավ երկու-երեք հիասքանչ բանաստեղծությամբ, այլև հայ գրականագիտության և գրական քննադատության պատմությունը ձեռք բերեց գրողի կողմից սեփական ստեղծագործությունը վերլուծելու և մեկնաբանելու մի հետաքրքիր նախադեպ-օրինակ՝ «ինքնադատության փորձ»:

Թումանյանը տարբեր առիթներով, ինչպես յուրաքանչյուր գրող, իր գրառումներում, նամակներում կամ հոդվածներում, գուցե ավելի շատ իր բանավոր զրույցներում, երբեմն-երբեմն անդրադարձել է իր այս կամ այն ստեղծագործությանը, թե՛ դրանց ստեղծագործական պատմության, մտահղացման, թե՛ բովանդակային ու գեղարվեստական հարցերին, սակայն միշտ հպանցիկ ակնարկների ձևով, համենայն դեպս պահպանվել են որոշ կարծիքներ ու գնահատականներ: Սակայն «Դու քո ճամփեն գընա, քույրիկ...» և «Պանդուխտ եմ, քույրիկ...» բանաստեղծությունների առիթով բանավիճելով ընկերոջ՝ Փիլ. Վարդազարյանի հետ, հեղինակը մեկնում է ոչ միայն բանաստեղծություն դարձած իր խոհերն ու զգացումները, այլև առանձին տողերի, գեղարվեստական պատկերների, բառերի ու արտահայտությունների իմաստը: Սա Թումանյանի քննադատական ժառանգության մեջ բացառիկ երևույթ է: Ակադեմիկոս Էդ. Ջրբաշյանն այդ երկու բանաստեղծությունները համարել է պոետի քնարերգության մեջ ողբերգական թեմայի բարձրակետը և համոզված գրել է. «Կրկնում ենք՝ սա **եզակի երևույթ է** Թումանյանի ժառանգության մեջ»[88]:

Փիլ. Վարդազարյանի 1904 թ. օգոստոսի 13-ի և Հովհ. Թումանյանի օգոստոսի 7-ի, 14-ի և 18-ի նամակները հետաքրքիր երկխոսություն են բանաստեղծի և քննադատի միջև: Հեղինակն այս բանաստեղծությունների օրինակով արժևորում է կենսագրություն ունեցող, կենսական փաստից և ապրված զգացումից ծնված բանաստեղծությունը: Միայն այդպիսի գործերում է արվեստագետի հոգին թաքնվում իր ստեղծածի մեջ. «Այս այն ոտանավորներից է, որոնց մեկնությունը իրենցից շատ ու շատ է երկար, որոնք կենսագրություն ունեն, պատմություն ունեն իրենց ետևը: Այդպիսի ոտանավորների տողերում է, որ թաքնված է լինում բանաստեղծի հոգին» (9, 438):

Պետք է ասել, որ Թումանյանին դուր էր եկել սեփական ստեղծագործության քննադատի դերը: Այդ առիթով նա գրում է. «Քննադատությունը լավ բան է. շնորհակալ եմ, որ առիթ տվիր դրսից նայելու իմ այս ոտանավորներին, ինձ համար շատ ախորժելի ու հետաքրքրական եղավ այս» (9, 440):

Առհասարակ, Թումանյանը միշտ դրական է վերաբերվել առողջ քննադատությանը և բարձր է գնահատել քննադատի դերը գրականության զարգացման գործում: Այս մի քանի նամակներում թերևս ավելի, քան բազմաթիվ հոդվածներում նա բանաձևում է քննադատի կոչումը, գրում է խոսքեր, որոնք փիլիսոփայական խտացման, դարձվածքի, աֆորիզմի արժեք կարող են ունենալ բոլոր ժամանակներում. «Քննադատը թարգմանիչ է: Նա պետք է թարգմանի բանաստեղծին և ոչ թե նրա բառերը, այլ նրա սիրտը» (9, 442):

88 **Էդ. Ջրբաշյան**, «Չորս գագաթ», Եր., 1982, էջ 52:

Ավելին, բանաստեղծը նույնիսկ Աստծո հետ է համեմատում քննադատին, որովհետև մարդու հոգին մինչև վերջ կարող է կարդալ միայն Աստված, իսկ քննադատը, բանաստեղծի կարծիքով, պետք է սրտագետ լինի և այնքան խորաթափանց, որ գտնի ամեն մի բառի աղբյուրն ու արմատը, որ «կարողանա ճշմարիտ գնալ ու արդար դատել» (9, 442): Սակայն, քանի որ Աստծո նման լինելն այնքան էլ հեշտ բան չէր, նույնիսկ հարազատ ընկերը լավ չէր կարդացել իր սիրտը: Միաժամանակ նա գրում է Ֆիլիպին. «Զարմանալին այն է, որ դու հասկացել ես այդ ոտանավորները և չես հասկանում, որ հասկացել ես» (9, 444):

Պարզապես Ֆիլիպը, շատ լավ իմանալով ընկերոջ արտահայտությունների «արմատն ու աղբյուրը», չի կարծում, որ սիրահարված կնոջը «քույրիկ» անվանելը, «ամենքից զզված, ամենքին թողած» սիրո վայելքից ինքնակամ հրաժարվելը («դու չես ուզիլ սիրել») էապես ճիշտ են: 1904 թ. օգոստոսի 13-ին նա գրում է. «Սարսափելի չափազանցություն են, թվում են շինծու, արհեստական ձևով բայրոնա-լերմոնտովյան»[89]:

Փիլ. Վարդազարյանը ինչ-որ տեղ իրավացի էր՝ տեսնելով Թումանյանի այդ բանաստեղծություններում բայրոնա-լերմոնտովյան երանգների հետ որոշակի տիպաբանական աղերսներ: Սակայն պոետը համաձայն չէր ընկերոջ այդպիսի գնահատականին: Նա իր քննադատին հակադարձում է. «Առաջին սխալդ այն է, որ կարծում ես՝ տողերն են բայրոնա-լերմոնտովյան, ոչ թե ես: Երկրորդ սխալդ էլ այն է, որ կարծում ես՝ հակասություն կա մեջտեղը» (9, 443):

Ֆիլիպը հակասություն էր տեսնում Թումանյանի ողջ գրական ստեղծագործության մեջ, հատկապես լեգենդների, պոեմների, նույնիսկ նախորդ շրջանի սիրային ու այդ երկու բանաստեղծությունների միջև: Նրան շինծու էր թվում և այն, որ Վարյայի մասին բանաստեղծը գրում է իբրև «ամեն ճամփից ելած» մի մարդ և այդքան տենչալի օրիորդին էլ ասում է. «Դու ընկեր չես ինձ համար»:

«Ելած կյանքի ամեն ճամփից,- գրում է Փիլիպոս Վարդազարյանը,- Եթե սովորական մարդը կյանքի ճամփից դուրս է գալիս, նշանակում է նա հանցավոր է, նշանակում է նա դուրս է եկել սովորական ճանապարհից»[90]:

Ակնհայտ է, որ ինչպես այս, այնպես էլ «անմեկին կարոտներով» արտահայտությունը սխալ էին ընկալվել քննադատ-ընկերոջ կողմից: Ինչպես կասեր Թումանյանը, նա «կյանքի ամեն ճամփիցը» շփոթել էր «Աստծու ճամփից ելածի» հետ (9, 444): Քննադատը փորձում էր համոզել բանաստեղծին, որ կարոտը չի կարող անբացատրելի, անմեկնելի լինել, որովհետև կարելի է բացատրել միայն տեսածը, զգացածը, ծանոթը: Բանաստեղծության մակերեսային ընկալման արտահայտությունն էր Փիլ. Վարդազարյանի այն

89 ԳԱԹ, ԹՖ, թիվ 2056:

90 Նույն տեղում:

միտքը, թե եթե չլինեին մի քանի տողեր, ապա բանաստեղծության բովանդակությունն ու էությունը կլիներ «Մի նէ, որ իր սերն է առաջարկում, մյուս կողմից մի բանաստեղծ, որը սիրո մասին չի մտածում»[91], որն ինչ-որ անորոշ հոսանքի մեջ է, կտրված կյանքից, հրաժարվում է բախտից ու ամեն վայելքից և գնում է դեպի անհայտ: Թյուր կարծիք, որը հերքում է ութ երեխայի հայր երեսուներեքամյա բանաստեղծը. ««...Դու չես ուզել սիրել»: **Ո՛չ, ուզելը ուզել եմ, բայց չեմ կարողացել և, երևի, երբեք էլ չեմ կարողանալու սրտալի սիրել, որովհետև... այստեղ արդեն ամբողջ կենսագրություն»** (9, 438-439): Ահա թե ինչու բանաստեղծը սիրուց հրաժարումը համարում է միակ ճիշտ վճիռը. «...Եվ կյանքի հաճույքն, և կընոջ սերը ընկան իմ սրտից» (9, 439): Այդ հրաժարումը բխում է նաև սիրած էակին իր տանջանքներից ու տվայտանքներից հեռու պահելու ազնիվ մղումից: Գրեթե այդ նույն մղումից էր ծնվել Մատթեոս Զարիֆյանի «Կարեկցություն» բանաստեղծությունը.

Պըզտիկ աղջիկ մ'ինծի կ'ըսե,
Թե զիս խենթի պես կը սիրե.
Պըզտիկ աղջիկ մը զիս սիրե...

Եթե լսեր թե ոչ մեկ սեր
Այդ անդունդին մեջ կը շնչեր՝
Հեգ պըզտիկը չէր հառաչեր...

Ուստի եղբոր մը պես ըսի,
Թե լուսնին տակ մարդ կը մսի.
«Գընա՛, գընա՛, ննջե՛», ըսի.
Հետո գացի հեռուն լացի...

Նույն մղումից դրդված էր Ռուբեն Սևակը հարցնում «Փոքրիկ աղջկան».

Ինչու՞, ինչու՞ զիս սիրեցիր,
Փոքրիկ աղջիկ, քեզի մեղք էր,

...Քեզի փոքրիկ սեր մը պետք էր,
Դուն Սեր-Աստվածը սիրեցիր...

Սակայն եթե մեջբերված այս երկու բանաստեղծություններում երջանկությունից ինքնակամ հրաժարումը բացատրվում էր տարիքային տարբերությամբ, անքուն գիշերներ անցկացնող, «ոչ մեկ սեր» ապրած, «ծեր արծիվ» տղամարդու և կյանքի շեմը ոտք դնող «պըզտիկ» ու «փոքրիկ», միա-

91 Նույն տեղում:

միտ ու անմեղ աղջկա միությունից ծնվող անհանգստությամբ, ապա Թումանյանի հրաժարումը պայմանավորված էր, ինչպես ինքն էր ասում, իր կենսագրությամբ, ընտանիքի ու նաև Վարյայի նկատմամբ սիրո ու պատասխանատվության զգացումով.

Դու քո ճամփե՛ն գընա, քույրի՛կ,
Եվ թող լինի նա պայծառ:
Ինձ մի՛ ժըպտա, ինձ մի՛ սիրիր,
Ես ընկեր չեմ քեզ համար (1, 196):

Չնայած քնարական հերոսի կտրուկ հայտարարությանը՝ «Ես ընկեր չեմ քեզ համար», այն, թերևս, ճիշտ չի լինի համարել մերժված սեր՝ սովորական ընկալմամբ: Բանաստեղծն իր հոգու ամենանվիրական խորքում զգում էր՝ ինչպես են մարդկային բարձր մղումները, մարդկային կարոտն ու թախիծը բախվում աշխարհում բազում սկզբունքների, սահմանափակումների, երբեմն էլ պայմանականությունների հետ ու գրեթե միշտ պարտվում: Այդ պարտության ցավը կանխազգալով՝ քնարական հերոսը պանդուխտ է դառնում, մի տարագիր և փախչում աշխարհի վայելքներից, փախչում է ինքն իրենից, իր ապրած սիրուց ու կարոտից: Թումանյանի քնարական հերոսը, որն այս քերթվածներում նույնանում է նրա անհատականությանը, սիրո անհասանելիությունը գիտակցող, կյանքի որոշակի հանգամանքի բերումով հույսը կորցրած ու հավասարակշռված մարդու խոստովանություն է:

Մի ձեռք չըկա, մի գիրկ չըկա՝
Պահի նըրան իրեն մեջ,
Խենթ, խելագար գընում է նա
Ձըգտումներովն իր անվերջ (1, 196):

Թումանյանը համաձայն չէր նաև «քույրիկ» բառի քննադատի մեկնությանը. «Այն ճիշտ է, որ սեռական իմաստը (սիրո) միանգամայն չքանում է այդ «քույրիկի» շնորհիվ, բայց դրանից չպետք է եզրակացնել, թե չի սիրում» (9, 441): Ասել է, թե բանաստեղծը տեր է իր սիրուն, չի թաքցնում այն, սակայն դա սեր չէր «սեռական» իմաստով, որովհետև «քույրիկը» դուրս էր եկել «հոգեկան կարոտի ուժից, և այդ սիրո մեջ առհասարակ հոգին շատ է իշխում» (9, 441): Սա, իհարկե, ամենևին չի նշանակում, թե Թումանյանը հերքում է մարմնականը սիրո մեջ, նա պարզապես ընդգծում էր, որ «քույրիկ» դիմելու ձևը ծնվել էր սիրո առարկայի անհասանելի հեռավորությունից, անհուսությունից և այլն:

«Քույրիկ» բառի մեջ պոետն ընդգծում էր սովորական սիրուց բարձր, մարդասիրական իմաստը: Սակայն մի բանում նա համոզված էր՝ այդ բա-

նաստեղծությունների յուրաքանչյուր բառն ու արտահայտությունը ծնվել են ապրված զգացումից. «անկեղծ էր ասված, այնպես, ինչպես զգացել եմ. իսկ ես գիտեմ, որ **եթե այդպես եմ զգացել՝ արդեն ճիշտ է, բնական է, իմաստ ունի, թեկուզ ինքս էլ չկարողանամ բացատրել»** (9, 443):

Թումանյանի կասկածները տեղին չէին, որովհետև որպես քննադատ նա յուրովի և հետաքրքիր էր վերլուծել և ճիշտ էր արժևորել իր բանաստեղծությունները: Նրա քնարական հերոսի վիշտը ծնվում էր ոչ միայն կյանքի իրական հանգամանքներից, այլև կյանքի ողբերգական ու դրամատիկ կողմերի խոր ճանաչողությունից, որն իր հերթին առաջացնում էր մարդկանցից ու աշխարհից այնպիսի հիասթափություն, որի արդյունքում ծնվում են հետևյալ տողերը.

Չեմ եղել երբեք ես այնքան ըստոր,
Որ կարենայի այդ դաժան բանտում
Լինել բախտավոր... (1, 202):

Անձնական երջանկության մղումը մշտապես իդեալ է յուրաքանչյուրի համար, և այդ ճանապարհին բանաստեղծին խանգարում են շրջապատի, ընդհանուրի ցավն ու հոգսը, անուրախ կյանքը: Այդ ամենը նրան դարձնում է թափառող հոգի, որը, «**կորցրած կյանքի հաճույքն ու կնոջ սերը** և ամեն լավ բան» (9, 439) (ընդգծում է Ս.Հ.), փախչում է անցավորից.

Ես էլ վիրավոր գընում եմ փախած՝
Անհայտ օրերի խավարի ընդդեմ...

Կյանքում իրեն հյուր զգալով, մերժելով անցողիկը՝ բանաստեղծի կենսատենչ հոգին արդեն ձգտում էր դեպի այն իդեալը, որին անվանել էր «Վերը», Անանցը ու Անհայտը, սակայն ինչպես ինքն է խոստովանում. «Անցավորը ընկել է իմ սրտից, իսկ անանցի հետ կապված չեմ դեռ, անհայտը, որ պետք է ունենա ոգևորված գրողը, դեռ խավար է, մութն է ինձ համար ու թափառում է իմ հոգին» (9, 439):

Պոետն իրավացի էր: Նա դեռ որոնումների մեջ էր, նրա հանդիպումը այդ «Վերի», անհայտի ու տիեզերականի հետ պետք է տեղի ունենար կյանքի վերջում՝ քառյակներում, որոնց մեջ պիտի ցրվեր այդ խավարը, և քաոսի փոխարեն հայտնվեր ներդաշնակությունը:

Հետաքրքիր է նաև, որ ինքը՝ Թումանյանը, 1902 թ. գրած այս երկու բանաստեղծությունները համարում էր ընդհանուրի, համամարդկային զգացումների, իր բազմաթիվ կարևոր մոտիվների ու տրամադրությունների բանալին:

Վարյային նվիրված բանաստեղծությունները ծնվել էին մարդու գեղեցիկ մղումների, զգացմունքների ազատության, երազի և միջավայրի կաշկան-

դումների խոր գիտակցությունից: Այդ պատճառով էլ նրանցում բացակայում է թումանյանական լավատեսությունը, և իշխում է ողբերգականը, որոնք որպես մարդկային հոգուն բնորոշ հակառակ բևեռներ՝ մշտապես հարազատ են եղել հոգեվիճակների և ձգտումների ներքին հարստությամբ ու բազմազանությամբ օժտված հոգուն: Նախ Թումանյանը համոզված էր, որ բանաստեղծը նրանով է բանաստեղծ, որ ապրում է ընդհանուրով, «շատերից է խոսում, ոչ թե մի քանիսից» (9, 445), և կարծում էր, որ «Պանդուխտ եմ, քույրիկ» և «Դու քո ճամփեն գընա...» բանաստեղծությունները առաջին շրջանի իր սիրային ստեղծագործությունների տարբեր հոգեվիճակների յուրօրինակ ամփոփումն են. «Կարծես թե իմ ոտանավորների եզրակացությունները կամ ամփոփումները հավաքված են այդ ոտանավորների մեջ: Անշուշտ, քննադատը մի օր կանգ կառնի դրանց վրա» (9, 443):

Կյանքի վերջին ամիսներին հետադարձ հայացքով զննելով իր անցած ուղին՝ բանաստեղծը խոստովանում է, որ իր ստեղծագործությունների մեջ բայրոնյան մի ամբողջ շրջան կա «ինչպես և կյանքումս՝ շրջան, բայց դա եղել է ոչ հարազատ, ինչպես, օրինակ՝ «Դու քո ճամփեն գընա, քույրիկ» և այլն» (ՀԶ, 291): Ահա թե ինչու Թումանյանի՝ Վարյային նվիրված այս բանաստեղծությունների վերլուծությունը երկար խորհրդածությունների նյութ է:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԻՇԽԱՆՈՒՀԻ ՄԱՐԻԱՄ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Ծանոթություն

Մարիամ Թումանյան

Թումանյանի մեկենաս-հովանավորների (Փիլիպոս Վարդազարյան, Արիստակես Զարգարյան, Խրիմյան Հայրիկ և այլք), անդավաճան բարեկամների ցանկում պայծառ մի անուն է իշխանուհի Մարիամ Թումանյանը՝ Արցախի մելիքներից սերող, իրավաբան և հասարակական գործիչ Մարկոս Դոլուխանյանի դուստրը: Հայ մշակույթի բազմադարյան պատմությունը չի կարող մատնանշել մտավորական, արվեստասեր մի կնոջ և գրողի, նվիրյալ մեկենասի և արվեստագետի այնպիսի սերտ, անկեղծ ու ջերմ հարաբերություններ, ինչպիսին եղել են իշխանուհու և բանաստեղծի միջև: Ավելին, դրանք մարդկային հարաբերությունների մեջ նույնպես հազվագյուտ են՝ որպես տղամարդու և կնոջ միջև մաքուր, բանաստեղծական, անբասիր սեր ու բարեկամություն:

Հովհաննես Թումանյանը և իշխանուհին ճանաչում էին միմյանց դեռևս 1892 թ., երբ 23-ամյա բանաստեղծը ծառայում էր Հրատարակչական ընկերության գրասենյակում: Հոգևոր կոնսիստորիայում աշխատելուց հետո, որտեղ Թումանյանը վաստակում էր 16 ռուբլի 60 կոպեկ, բանաստեղծը մեկ ու կես տարի ծառայում էր Հրատարակչական ընկերությունում՝ զբաղեցնելով գրասենյակապետի պաշտոնը, իսկ 22-ամյա իշխանուհին նոր ընտրվել էր այդ ընկերության վարչության անդամ: Ծանոթության առաջին իսկ օրից Թումանյանը, քիչ է ասել, թե գրավում է իշխանուհու ուշադրությունը. նա պարզապես հմայում է

ապագա «քնքուշ» բարեկամուհուն՝ իր «համակրելի դեմքով» և «քաղցր ժպիտով»: Իշխանուհուն հրապուրում է բանաստեղծի գրավիչ արտաքինը, որն իր տակ թաքցնում էր նրա բանաստեղծական նույնքան հմայիչ ներքինը: «Նրա փայլուն աչքերը,- հիշում է Մ.Թումանյանը,- արտահայտում էին նրա բանաստեղծական ոգին, ու ես կարդում էի նրանց մեջ այնքան զգացմունք ու ոգևորություն»[92]:

Իշխանուհին ինքն է խոստովանում, որ Թումանյանի մեջ նախ և առաջ իրեն դուր է եկել արտաքինը և նրանում դրսևորված հոգու լույսը: Երիտասարդ կինը հրապուրված էր երիտասարդ գրասենյակապետով, երբ դեռևս անծանոթ էր Թումանյան-բանաստեղծին, նրա հրապարակումներին ու ժողովածուներին: Իշխանուհի Մարիամը խոստովանում է. «...Չէի կարող անտարբեր վերաբերվել նրա անձնավորությանը» (ՄԹ, 95): Եվ նա սկսում է մեծ ուշադրությամբ հետևել բանաստեղծին. աչքից չէր վրիպում ոչինչ: Օրինակ, նա նկատում է, որ Թումանյանը աշխատանքի ժամին ստեղծագործում է՝ «մերթ-մերթ փակելով աչքերը»՝ վերացած ու անէացած իրականությունից:

Հենց սկզբից իշխանուհու և բանաստեղծի նամակներում զգացվում էր փոխադարձ մեծ համակրանք ու սեր: 1899 թ. հուլիսի 30-ին Թումանյանին հասցեագրած նամակում իշխանուհին խոսք ու զրույց է բացում սիրո իդեալի, տղամարդու և կնոջ երազների, պոետին նորից հանդիպելու իր մեծ ցանկության մասին: «Այսօր չէ՞ր կարելի, որ հիշեիք իմ խնդիրը - ինձ համար մի քիչ բան գրեիք Ձեր այն հիշողություններից, որ ինձ համար այնքան թանկ են,- գրում է Թումանյանը հուլիսի 24-ին Դսեղից: - Գուցե թե և հոգեբանական անալիզներ անեիք, որ այնքան սիրում եք Դուք: Այդ արդեն շատ կուրախացնի ինձ: Նամակիս այս տեղը հասած՝ կարկուտ եկավ, գյուղացիք ուրախ են՝ այնքան սոսկալի է երաշտը» (9, 213): Իշխանուհու պատասխան նամակը նույնպես գրվել էր բնության այդպիսի մի պահի՝ անձրևի կաթկթոցների ձայնի ուղեկցությամբ: Եվ պատահական անձրևը իշխանուհու համար սիրո խորհուրդ է ձեռք բերում. «Երևակայեցեք,- գրում է իշխանուհին,- երբ ես կարդացի Ձեր նամակը, սարսափելի անձրև էր գալիս. ինչ կնշանակի այդ, ուրեմն մեր նամակագրությունը առաջացնում է բնության մեջ կատարյալ ապստամբություն: Դուք իբրև տղամարդ գոռոցով ու կարկուտով եք գալիս, իսկ ես՝ իբրև կին, արտասուքով:

...Անհամբեր սպասում էի, թե երբ կվերջանա ամառը...

Ինձ թվում է, ես չեմ սպասում, ուզում եմ ջնջել այս ամիսները, թեև երբ

92 **Մարիամ Թումանյան**, «Իմ համառոտ կենսագրությունը և իմ հիշողությունները», Եր., ԳԱԹ հրատ., 2003, էջ 95: Այսուհետև սույն աշխատությունից մեջբերումները կարվեն տեքստում՝ նշելով ՄԹ և էջը:

Հովհաննես Թումանյան, 1902 թ.

Թումանյանի ընտանիքը. ձախից՝ առաջին շարք՝ Արփիկ, Հովհ.Թումանյան, Սեդա, Աշխեն, Օլգա Թումանյան, Թամար, Անուշ, երկրորդ շարք՝ Արտավազդ, Նվարդ, Արեգ, Մուշեղ, Համլիկ, 1915թ.

Թումանյանի տան պատշգամբում. ձախից՝ Աշխեն Թումանյան, Հովհ. Թումանյան, Սուսաննա Տերյան, Դ. Դեմիրճյան, Նվարդ Թումանյան, Վ.Տերյան, Հ.Այվազյան, Լ.Շանթ, Մ.Սարյան, Ջավահիր Ներսիսյան, Թամար Թումանյան, Գ.Խատիսյան, Ս.Թումանյան, Հովհ. Բոզիյան (Ճերմակ), Հովհ.Տեր-Մարտիրոսյան, 1914թ.

Արեգը, Անուշը, Թամարը, Սեդան և Արփիկը կեգլի խաղալիս, Ձաղվեր, 1914թ.

Սեդան՝ հայրիկի Ծիփիկը

Թումանյանները և Մանանդյանները ամառանոցում կրոկետ խաղալիս, 1914 թ.

Հովհաննես Թումանյանը ընտանիքի հետ Ձաղվերում: Օլգա, Արեգ, Սեդա, Նվարդ, Աշխեն, Անուշ, Թամար, Արփիկ, 1914 թ.

Խնջույք ի պատիվ Թումանյանի Արազինդո այգում

Աշխենը հորեղբայր Ռոստոմի Խանլու ձիու հետ, Դսեղ, 1908 թ.

Արփիկ Թումանյան

Արփիկ, Արտավազդ և Համլիկ, Թիֆլիսմ 1902 թ.

Թումանյանը կոմպոզիտոր Ան. Տեր-Ղևոնդյանի, նրա կնոջ, քույրերի և Ստ. Քափանակյանի հետ, Ձաղվեր, 1914թ.

Նվարդ Թումանյան. հեղինակը՝ Մ. Սարյան, 1929 թ.

Ձախից՝ Անուշ, Արփենիկ, Սեդա, Թամար, Պյատիգորսկ, 1917 թ.

ժամանակ եմ ձեռք գցում, սկսում եմ երազել... և երբեմն այնպես հեռու եմ գնում, որ արթնանալս դժվար է լինում...

Դուք ասում եք, որ ես անալիզներ սիրում եմ. ահա Ձեզ իմ անալիզներից մեկը....ես այն կարծիքին եմ, որ ինչքան շատ ես սիրում մի մարդու, այնքան աշխատում ես բարձրացնել նրան, ցանկանում ես, որ նա ունենա բոլոր առավելությունները և քեզանից բարձր լինի: Այնպես չէ: Ինձ թվում է, որ ես չէի կարող սիրել մի մարդու, որ ինձանից բարոյապես ցածր լինի: Իսկ դուք ինչպես եք կարծում»[93]:

Այս խոսքերը հավաստում են, որ Թումանյանը իշխանուհու համար եղել է երազ, որից նա չի կամեցել արթնանալ, նրան ընկալել է իրենից անհամեմատ բարձր կանգնած, բարոյապես ուժեղ, բազում առավելություններով մի տղամարդ: Շուտով իշխանուհին պոետին ծանոթացնում է ամուսնու՝ Գեորգի Թումանովի հետ, ով սկզբնական շրջանում առանձնապես չէր կիսում կնոջ ոգևորությունը և վստահ էր, որ կինը չափազանցնում է բանաստեղծի տաղանդը, և ամեն անգամ, երբ Թումանյանն այցելում էր նրանց, լուրջ թե կատակով կնոջն ասում էր. «Ահա քո Պուշկինը եկավ», իսկ իշխանուհին նրան հակադարձում էր. «Ա՜յ կտեսնես, որ Թումանյանը կգերազանցի Պուշկինին» (ՄԹ, 96):

Աստիճանաբար բանաստեղծը արժանանում է նաև Գեորգի Թումանովի համակրանքին, որն սկսում է ավելի բարձր գնահատել պոետին և «սիրում էր նրա հետ զրույց անել» (ՄԹ, 96): Այսպես, Գեորգի Թումանովի՝ «Новое обозрение» թերթի խմբագրի (1891-1904 թթ.) և նրա երիտասարդ կնոջ՝ իշխանուհի Մարիամ Թումանյանի տունը բանաստեղծի համար դառնում է այցելության ամենասիրելի վայրերից մեկը, և ոչ միայն այն պատճառով, որ այնտեղ էր ապրում իր պոեզիայով և իրենով հմայված, հրապուրված ժամանակի հայ գրասեր, բարեգործ, հազվագյուտ հայուհիներից մեկը, այլև այն պատճառով, որ այստեղ լինում էին հանդիպումներ ժամանակի ականավոր, ինքնատիպ մարդկանց՝ տարբեր ազգերի գրողների, հասարակական գործիչների, գիտնականների, դերասանների հետ, իսկ տաղանդի զորացման համար այդպիսի միջավայրը պարզապես անհրաժեշտություն է[94]:

93 ԳԱԹ, ԹՖ, թիվ 1242 (658): Տես նաև՝ ՈւՀ 4, 309: Նամակի հրապարակված տեքստում տարեթիվը սխալ է նշված՝ 1892: Մինչդեռ Թումանյանի այն նամակը, որին պատասխանում է իշխանուհին, գրվել է 1899 թ. հուլիսի 24-ին: Պարզապես իշխանուհու նամակի 99-ը հրատարակողների կողմից սխալմամբ ընթերցվել է 92:

94 Մարիամ Թումանյանի թոռնուհին՝ Նատալյան, իր ինքնակենսագրական վիպակում հիշատակում է Կորոլենկոյի, Մեյերխոլդի, դերասանուհի Յավորսկայայի, ողբերգակ, Պետերբուրգի օպերայի հայտնի երգիչ Կոմիսարժևսկու անունները: Իշխանուհու թոռնուհին վկայում է, որ նրանք հաճախ էին խմբագրություն գալիս: Մարիամ Թումանյանն էլ իր հերթին նշում է, որ նշված անվանի արվեստագետները խմբագրական գործերով «մեր տանը լինում էին», ուստի չի բացառվում, որ Թումանյանը հանդիպել է նրանց և Գ.Թումանովի շրջապատի մի շարք գործիչներին: Գ. Թումանովը, աշխատակցելով ռուսական կենտրոնական և վրացական

Մարիամ Թումանյանի խոսքերով՝ բանաստեղծը դառնում է նրանց «ընտանիքի մշտական անդամը», որտեղ նա «հոգով հանգստանում էր» (ԹԺՀ, 468): Դա մի ընտանիք էր, որտեղ պոետը գտնում էր իր հոգսերի նկատմամբ սրտացավություն, իր տաղանդի հանդեպ՝ հավատ:

«Հինգշաբթիներ»

Ձախից՝ Ժոզեֆինա Զարգարյան, Մարիամ Թումանյան, Արիստակես Զարգարյան, Հովհ. Թումանյան, Փիլիպոս Վարդազարյան Զարգարյանների հյուրասենյակում. (մոտ 1903թ.-1904)

Փիլ. Վարդազարյանի և Ար. Զարգարյանի հետ ծանոթանալուց հետո՝ 1897 թ. վերջերին, իշխանուհին հինգշաբթի օրերին իր տանը կազմակերպում է գրական երեկոներ, որոնք, ստացել են **«Հինգշաբթիներ»** (երբեմն նաև **«Չորեքշաբթիներ»**) անվանումը: Գրական այդ խմբակի նախաձեռնողն իշխանուհին էր: Պատճառների թվում էին գրականության հանդեպ իշխանուհու սերը, գրական կյանքի կազմակերպման մտահոգությունը ու, թերևս ենթագիտակցորեն, ոչ միայն Թումանյանին օգնելու, այլև յուրաքանչյուր շաբաթ նրան իր տանը տեսնելու ցանկությունը:

«Հինգշաբթիների» մշտական անդամները («անբաժան հոգի էինք», ՄԹ, 107) հինգն էին՝ տանտիրուհին՝ Մարիամ Թումանյանը, Հովհ. Թումանյանը, Լ.Շանթը, Փիլ. Վարդազարյանը, բժիշկ Ար. Զարգարյանը: Սկզբնական շրջանում, մինչև Բաքու տեղափոխվելը, երեկոներին մասնակցում էր նաև Հովհաննես Քաջազնունին: Այստեղ նույնպես, ինչպես «Վերնատանը», անպակաս էին հյուրերը: Քանի-քանի անգամ Թումանյանին ընկերակցում

պարբերականներին, անձնապես ծանոթ է եղել Ն.Կ.Միխայլովսկու, Գ.Ի.Ուսպենսկու, Մ.Գորկու, Ալ.Ղազբեկիի, Իլ.Ճավճավաձեի, Ա.Ծերեթելու, Գր.Արծրունու, Աբգ.Հովհաննիսյանի և ժամանակի այլ նշանավոր գործիչների հետ: Տես Г.М.Туманов, Характеристики и воспоминания, кн. 1, 1900, кн. 2, 1905, кн. 3, 1908. Տես նաև՝ Наталья Туманова, "Давно в Цагвери", стр. 55-56. 1, 1900, кн. 2, 1905, кн. 3, 1908. Տես նաև՝ Наталья Туманова, "Давно в Цагвери", с. 55-56,. 55-56, ինչպես նաև ՄԹ, 97:

էին Դ.Դեմիրճյանը, Ղ.Աղայանը, Ավ.Իսահակյանը, Շիրվանզադեն: «Հինգշաբթիների» ընթացքում ծավալվում էին գրական բանավեճեր, քննարկվում էին հատկապես հիմնական անդամների գրական դեռևս անտիպ գործերը: «Հիշում եմ,- գրում է իշխանուհին,- Շանթի առաջին դրաման մենք այնքան խիստ քննադատեցինք, որ նա պատռեց ձեռագիրը» (ՄԹ, 107):

«Հինգշաբթիներում» է քննարկվել նաև Շիրվանզադեի «Ուներ իրավունք» պիեսը, ինչպես նաև իշխանուհու զավակների մշտական բժիշկ Ար. Զարգարյանի պիեսներն ու արձակ երկերը, որոնք անխնա քննադատության էին ենթարկվում, սակայն «նա չէր նեղանում, ընդհակառակը, ինքն էլ ծիծաղում էր մեզ հետ միասին ու կատակում» (ԹԺՀ, 470):

Բացի գրական ընթերցումներից և քննարկումներից՝ «Հինգշաբթիներում» արծարծվել են նաև ազգային-քաղաքական, հասարակական-մշակութային զանազան հարցեր, այդ թվում նաև գրողների ընկերություն հիմնելու խնդիրը:

Հինգշաբթի երեկույթները տևել են մինչև 1902-1903 թթ.[95]: «Հինգշաբթիներում» լուրջ քննության առարկա էր դարձել նաև Թումանյանի տնտեսական և առողջական ծանր վիճակը:

Իշխանուհին և Հովհաննես Թումանյանի «քահանայության» պատմությունը

Հովհաննես Թումանյան, 1902 թ.

Դարասկզբին, ինչպես շատ հաճախ հետագա ողջ կյանքում, Թումանյանի նյութական-տնտեսական դրությունը շատ ծանր էր: Նա այդ շրջանում մի «համեստ ցնորք» ուներ՝ «գնալ մի երկու տարի մնալ Պետերբուրգ կամ Մոսկվա» (9, 220), սակայն ծով հոգսերի մեջ ամաչում էր նույնիսկ բարձրաձայն խոսել այդ մասին. «Մի մարդ, որ շաբաթներով կոնկով մի տեղ գնալու փող՝ 5 կոպ. չի ունենում գրպանում, ինչ լրբություն է՝ մտածի, թե գնալու եմ... Շռայլ բախտ կլիներ ինձ համար, եթե կարողանայի պարտքերս վճարել, այս կամ այն փողոցով անցնելու ազատությունը ձեռք բերել կամ պարտք անելու կարիքից ազատվել» (9, 220):

Այս խոսքերը բանաստեղծը գրում է ընկերներից մեկին՝ Արսեն Ղլտճյանին, որն այդ պահին Բաքվում Հովի. Քաջազունու հետ փորձում էր միջոցներ հայթայթել՝ 1900 թ. նոյեմբերին պոետին արտասահման ուղարկելու

95 Հետագա տարիներին «Հինգշաբթիների» մասին որևէ տեղեկություն չի պահպանվել:

համար: Թումանյանը դառը ծիծաղում էր՝ պատասխանելով, թե ցնորքները միայն բանաստեղծներին են վայել, իսկ վարդապետները պետք է ավելի իրատես լինեն, հիշեն, որ **«Էջմիածնի միաբանությունից» մեծ մի ընտանիք կա իր «շալակին». «Ես չեմ կարողանում այս սահմանում ապրել, դու արտասահման ես ղրկում»** (9, 220):

Թեև Թումանյանը համոզված էր, որ Բաքուն կարող է օգնել որոշ գրողների, եթե, իհարկե, ենթադրի, որ «մի քահանա էլ ավելի ունեն, եթե մի գրողին քահանայի չափ կարևորություն կտան» (9, 220): Եվ քանի որ գրողին քահանայի չափ կարևորություն չէին տալիս, տարբեր կողմերից պոետին առաջարկում են քահանա դառնալ: Հետագայում պոետը դառնությամբ հիշում է. «Տանը չէին ուզում, որ բանաստեղծություններ գրեմ, խանգարում էին և ստիպում, որ տերտեր դառնամ» (ՀՋ, 176): Այդ տրտունջներն ու նախատինքները Թումանյանը հաճախ էր լսում հատկապես զոքանչի ամուսնուց՝ տեր Հովհաննես քահանայից, որը մեղադրում էր փեսային լուրջ գործի փոխարեն «ծռտի-պռտի» բաներով զբաղվելու մեջ[96]:

Եվ հուսահատության տխուր մի պահի՝ 1901 թ., բանաստեղծը, զգալով իրեն մի մարդ, որ «ոչ վանքից բաժին ունի, ոչ կյանքից» (9, 245), հուսահատված որոշում է կայացնում՝ քահանա դառնալ: Ի դեպ, այդ որոշմանը կողմ էր նաև Ղ.Աղայանը (9, 245): 1901 թ. հունվարին Բաքվից Արսեն Ղլտճյանից 100 ռուբլի ստանալուց անմիջապես հետո, նրան պատմում է ծանր կացությունից դուրս գալու նպատակով իր՝ քահանա դառնալու մտադրության մասին. «Վերջերս այնպիսի տագնապների մեջ ընկա, որ որոշեցի(նք), չգիտեմ այս բառն ինչպես գրեմ, քահանա դառնալ... այդ տեր Հովհաննեսի մուրազն էր» (9, 245):

Նա արու զավակ չուներ և ուզում էր, որ Թումանյանն իր մահից հետո

96 Տեր Հովհաննեսն իր որդեգրուհու և Թումանյանի ամուսնությունը արտոնել էր՝ փեսային քահանա դարձնելու պայմանով: Նա ստիպել էր բանաստեղծին ստորագրել գրավոր պայմանագիր, որով ապագա փեսան պարտավորվում էր քահանա դառնալ: Ըստ այդ պայմանագրի՝ տեր Հովհաննեսն իր վրա էր վերցնելու բանաստեղծի ընտանիքը պահելու հոգսը մինչև նրա քահանա դառնալը (այս մասին ավելի հանգամանորեն տես **Ա.Ինճիկյան**, նշվ. աշխատ. էջ 193): Ամուսնությունից անմիջապես հետո Թումանյանը փորձել է կատարել իր ստանձնած պարտավորությունը: Տեր Հովհաննեսը երկու շաբաթ նրան տիրացու էր կարգել Թիֆլիսի Վանքի եկեղեցում: Այնուհետև բանաստեղծը ստիպված է եղել կարճ ժամանակով ծառայել այլ եկեղեցիներում: Պոետի դուստր Նվարդը հիշում է, որ երբ հայրը պատմում էր իր տիրացության շրջանից, նշում էր 16 եկեղեցի, որոնցից յուրաքանչյուրում «մի արկածի հանդիպելով՝ թողել ու փախել» էր (ՀՋ, 148): Պողոս Հովվյանի վկայությամբ, խնջույքների ժամանակ Թումանյանն իր գլխով անցածը ներկայացնում էր զվարճալի պատմությունների տեսքով: Հումորով ու անեկդոտներով պոետը խոսում էր այն «խայտառակ ու այլանդակ տեսարանների մասին», որոնցից փախչում էր, ժպիտով էր ներկայացնում, թե ինչպես երազելով գրական շրջան, ստիպված էր ճնշում գործադրել իր ցանկությունների և ձգտումների վրա, փորձել էր հոգևոր կոչում ընդունելով՝ կապվել խորթ ու օտար միջավայրի հետ:

դառնար իր ծխերի ժառանգորդը: Հենց այն օրը, երբ բանաստեղծը, կարիքից դրդված, խոսում է առաջնորդի հետ, խոստանում է վերջնական պատասխանը տալ հաջորդ օրը, անմիջապես գալիս է՝ քահանա դառնալու որոշման լուրը հայտնելու տեր Հովհաննեսին և իշխանուհուն: «Այդ լուրը ինձ սարսափեցրեց,- ամենայն մանրամասնությամբ այդ օրվա տպավորությունը հիշում է իշխանուհին,- և ես ասացի Թումանյանին, որ փարաջայով ներս չեմ թողնի նրան ինձ մոտ, որովհետև ոչ կարող եմ երևակայել նրան քահանայի դերում, ոչ էլ կուզենայի տեսնել» (ՄԹ, 119): Բանաստեղծը փորձում է արդարանալ, թե ուրիշ կերպ ինչպես պահի ընտանիքը: «Երևի կսովորեմ էլի»,- ասում է նա (ՄԹ, 119): Բանաստեղծն իր պատմվածքի Նեսոյի քարաբաղնիսը իրականացնող հերոսների նման փորձում է իր վճռի դրական կողմերը ցույց տալ, թեև կատակով, բայց բարեկամներին համոզել չի կարողանում, որովհետև նրանք բոլորն էլ միանգամից հասկանում են, թե որքան ծանր է արվեստագետի համար այդպիսի որոշում ընդունելը: Այդ օրը իշխանուհու տան հավաքը տևում է մինչև գիշերվա ժամը երկուսը, և բոլորի «տրամադրությունը տխուր էր ու իջած, ու մեր խոսակցությունը՝ կցկտուր» (ՄԹ, 120):

Իշխանուհի Մարիամի զգացմունքները բանաստեղծի հանդեպ չի կարելի համարել բարերարի, մեկենասի սովորական մշակութային շահերից բխող վերաբերմունք գործչի նկատմամբ՝ պայմանավորված միայն նրա տաղանդի կամ հանճարի գիտակցությամբ: Նա Թումանյանի համար անհանգստանում էր այնպես, ինչպես կարելի է ցավել միայն աշխարհում ամենահարազատի համար: Մի ամբողջ գիշեր մռայլ, մղձավանջային մտածմունքների տպավորության տակ անհանգստանում է, թե պոետը ինքնասպանություն կգործի: Երբ վաղ առավոտյան վազում է բանաստեղծի տուն, բանաստեղծի կինը՝ Օլգան, նրան դիմավորում է հանգիստ և տեղեկացնում է, որ ամուսինը գնացել է առաջնորդարան: Ամեն դեպքում, ուրախանալով, որ Թումանյանը ողջ է, իշխանուհին շտապում է իր դպրոցական ուսուցիչ Քիշմիշյանի տուն, որպեսզի վերջինս միջնորդի իր փեսային՝ «Մուրճի» խմբագիր Կոստանդին Կրասիլնիկյանին՝ բանաստեղծին ընդգրկելու ամսագրի աշխատակիցների շարքում: Քիշմիշյանը շատ է զարմանում՝ առավոտյան ժամը 9-ին տեսնելով իշխանուհուն իր տանը, մանավանդ որ Մարիամը, չկարողանալով զսպել հուզմունքը, սկսում է հեկեկալ: Այդ մասին պատմում է ինքը՝ իշխանուհին. «Նրանք շատ վախեցան... վալերյանի կաթիլներ խմացրին, բայց ինչքան շատ էին հոգատարություն ցույց տալիս ինձ՝ այնքան շատ էի թափում արցունքներ...

- Դուք հասկանու՞մ եք - ասում էի ես,- Թումանյանը, ճարը կտրած, քահանա է ձեռնադրվում... մի՞թե խայտառակություն չէ դա մեզ համար, որ այդպիսի մի տաղանդավոր բանաստեղծին մենք չենք կարողանում ապահովել... այդ

քայլը անում է լոկ նրա համար, որ հացի խնդիր կա մեջտեղը դրված: Քահանա դառնալով՝ նա ստիպված կլինի շարունակ կեղծել ու բռնություն գործ դնել իր զգացմունքների վրա, իսկ Դուք գիտեք՝ որքան է մաշում մարդուն ներքին խռովությունը: Տեսեք, թե Եվրոպայում ինչպես մեծարում են գրողներին, ինչպես ճոխ են նրանք ապրում այնտեղ, իսկ մեզանում Թումանյանի պես տաղանդավորները պիտի կորչեն աղքատության ճիրաններում» (ՄԹ, 121-122):

Այսպես, Մարիամի սրտի միջով էր անցնում այն ամենը, ինչ կատարվում էր նրա սիրելի պոետի հետ. «Ձեր ամեն մի վիշտը արձագանք է գտնում սրտիս մեջ»,- խոստովանել է նա Թումանյանին (ՈւՀ 5, 290):

Իշխանուհին, Փիլ. Վարդազարյանը, Ար. Զարգարյանը միացյալ ուժերով ամեն ինչ անում են բանաստեղծին այդ հուսահատական որոշումից ետ պահելու համար, օգտագործում են բոլոր հնարավոր միջոցները, դիմում են տարբեր ազդեցիկ մարդկանց. «Էլ կաթողիկոս, էլ Մանթաշով, ամենքին էլ, ում հարմար են դատում ու կարևոր» (9, 245):

Մեկենաս ընկերները փորձում են ոչ թե թեթևացնել, այլ էապես շտկել բանաստեղծի նյութական վիճակը. «Մտածում են մինչև անգամ միանգամից պարտքերիցս էլ ազատեն. այս արդեն շատ հեշտ չի» (9, 245): Թումանյանի բարեկամներին, այնուամենայնիվ, հաջողվում է դուրս բերել նրան այդ անելանելի թվացող կացությունից, ազատել բոլոր մեծ ու փոքր պարտքերից, այնպես որ քահանա դառնալու հարկադրված որոշումը կորցնում է իր անխուսափելիությունը:

Իշխանուհին, իհարկե, գիտեր, որ Ֆիլիպը նյութապես միշտ օգնում է Թումանյանին, սակայն նրան հայտնի էր նաև, որ «դա մի կաթիլ էր ծով կարիքի մեջ» (ՄԹ, 109): Այդ պատճառով էլ Թումանյանը չի դադարում մնալ նրա «մշտական հոգատարության և մտատանջության աղբյուրը» (ՄԹ, 97): Եվ իշխանուհին իր ուժերի ներածին չափ ստանձնում է պոետի մեկենասի դերը, հովանավորում է նրան, որքան ուժերն ու հնարավորությունները ներում են:

Իշխանուհու մեկենասության պատմությունից

Աբասթումանի աշունը

1902 թ. Աբասթումանի աշունը Թումանյանի գրական-ստեղծագործական գործունեության և կյանքի ամենահագեցած ու ամենաբախտավոր շրջանն էր, որն աչքի ընկավ բացառիկ արգասավորությամբ և ազդարարեց բանաստեղծի գեղարվեստական վարպետության կատարելության բարձր աստիճանը, բանաստեղծական խոսքի, ասելիքի պարզության ու փիլիսոփայական խորության ներդաշնակ միասնության, ազգային ոգու աննախադեպ մարմնավորման գրականության հաղթանակը:

Ըստ ամենայնի բարձր ու կատարյալ շրջափուլը Թումանյան-գեղագետի զարգացման ու հասունացման արդյունքն էր, սակայն պակաս կարևոր չէին Թումանյանի կյանքի այն հազվադեպ բարենպաստ հանգամանքները, որոնք ընձեռվեցիննրա բարեկամների՝ Փիլ. Վարդազարյանի և իշխանուհի Մարիամ Թումանյանի շնորհիվ: Այդ նրանց օգնությամբ ու օժանդակությամբ Թումանյանը կարողացավ կտրվել տաղտկալի կենցաղային առօրյա հոգսերից ու անմնացորդ նվիրվել ստեղծագործական աշխատանքին:

Շատ անգամ է իշխանուհին նյութական և բարոյական աջակցություն ցույց տվել իր սիրելի «Պուշկինին», սակայն այն, ինչ նա կարողացավ անել Թումանյանի կյանքում հատկապես 1901-1903 թթ., հիրավի, անգնահատելի ծառայություն էր ոչ միայն բանաստեղծին, այլև ընդհանրապես հայ գրականության պատմությանը: Նա Թումանյանին և մեր գրականությանը նվիրեց «Աբասթումանյան աշունը»: Այդ աշունը նույնքան արդյունավետ ու արգասաբեր էր պոետի համար, որքան «Բոլդինյան աշունը» Պուշկինի համար: Նա և Ֆիլիպը ստանձնեցին Թումանյանի ընտանիքի նյութական հոգսերն ու խնամքը, որպեսզի բանաստեղծը խաղաղ տրամադրությամբ բուժվեր ու ստեղծագործելու հնարավորություն ստանար Աբասթումանի առողջարանում ամիսներ շարունակ: Եվ իրոք, Թումանյանը բնության գրկում գրում

Իշխանուհի Մարիամ

էր ավելի հեշտ, ավելի հաճույքով՝ անվերջ զգալով ներշնչանքի բերկրանքը: Գյոթեն ասում է. «Ստեղծագործական ուժ ունեն հանգիստն ու քունը.... Թարմ օդը ընդարձակ դաշտում, ահա թե որտեղ ենք մենք առանձնապես ոգևորություն ապրում. այնտեղ, թվում է, թե Աստծո ոգին է անմիջականորեն տոգորում մարդուն, և աստվածային ուժն է ներգործում նրա վրա»[97]:

Աբասթումանի աշունը, օդը, ջուրը, լեռնային բնությունը, անտառը, ամառանոցային քաղաքի մթնոլորտը, հանգիստն ու քունը ստեղծագործական նոր ուժ հաղորդեցին Թումանյանին, և նրա ֆիզիկական ապաքինումը զուգորդվեց հզոր ներշնչանքով, «աստվածային ոգու և ուժի» տոգորմամբ:

* * *

1901-1902 թթ. Թումանյանի առողջական վիճակը գնալով վատանում էր: Դեռ երիտասարդ տարիներից բանաստեղծը հաճախ էր հիվանդանում, նրա թոքերը լավ վիճակում չէին. 1902 թ. հունվարի 1-ից մինչև փետրվարի 18-ը անկողնային հիվանդ էր (9, 286): Պոետի անվերջ ջերմելը, չափից դուրս նիհարությունը անհանգստացնում էին Մարիամ Թումանյանին: Նա իր ծանոթ բժիշկներից Գ.Թադևոսյանին խնդրում է քննել հիվանդին: Վերջինս ախտորոշում է արյան սաստիկ պակասություն: Գ.Թադևոսյանը արգելում է Թումանյանին տնից դուրս գալ, ապա խորհուրդ է տալիս՝ առանց հետաձգելու գնալ Աբասթուման, ընդ որում՝ առանց ընտանիքի: «Հակառակ դեպքում,- գրում է Թումանյանը Ա.Ղլտճյանին,- ասում են անբուժելի կհիվանդանամ և այնպես կընկնեմ, որ էլ չեմ կանգնիլ: Այո՛, իհարկե, լավ են ասում, և եթե կուզես՝ ես էլ գիտեի - բայց այս բայցն է բանը: Երեխաներիս բանը պետք է հոգամ, ինչպես իմ մասին մտածեմ» (9, 303):

* * *

Թումանյանը չէր էլ կարող երազել իր միջոցներով բուժվելու մասին: Նա ուներ բազմաթիվ պարտքեր թե՛ խանութներին, թե՛ անհատներին՝ ապառիկ ապրանք վերցնելու համար, չէր վճարել յոթ ամսվա տան վարձը: Եվ ահա իշխանուհին ու Ֆիլիպը ստանձնում են թե՛ այդ բոլոր պարտքերը մարելու, թե՛ պոետի բազմաթիվ ծախսերը հոգալու, ինչպես նաև նրան Աբասթումանում, իսկ նրա ընտանիքին՝ Թիֆլիսում պահելու հոգսը: Նրանք անմիջապես գումարներ են հայթայթում և բանաստեղծին ուղարկում են Աբասթուման: 1902 թ. սեպտեմբերի 6-ին Թումանյանը Բորժոմով ուղևորվում է Աբասթուման:

Իշխանուհին գրում է. «Հարկավոր էին մեծ գումարներ՝ նրան ուղարկելու համար, որպեսզի նա այնտեղ կարգին բուժվեր, մի կողմից լավ էր նրա

97 **Էքերման**. Զրույցներ Գյոթեի հետ, Եր., 1975, էջ 323:

համար մենակության մեջ ապրել. մենք հույս ունեինք, որ Աբասթումանում մի բան կգրի» (ՄԹ, 111): Սակայն միանվագ օժանդակությունը բավարար չէր, այն պետք է շարունակական լիներ, և իշխանուհին անվերջ նորանոր միջոցներ էր փնտրում: Եվ նա ձեռնարկում է ֆրանսիացի դրամատուրգ Պալեյերոնի «Տաղտկալի աշխարհք» կատակերգության բեմադրությունը՝ սիրող դերասանների մասնակցությամբ. արդյունքը՝ 600 ռուբլի, հատկացնում է Թումանյանին (ՄԹ, 111): Ընդ որում, բեմադրությունը կայացել է դերասան Պողոս Արաքսյանի[98] անունով, որպեսզի հասարակությունից գաղտնի պահվի, որ այն բարեգործական նպատակ ունի, և հասույթը հասնելու է 33-ամյա բանաստեղծին: Այդ մասին գիտեին միայն դերակատարները, որոնք սիրով համաձայնել էին խաղալ հանուն Թումանյանի: Պիեսն ընտրել էր Արաքսյանը՝ Մարիամ Թումանյանի խնդրանքով: Իբրև դերասանուհի՝ բեմ էր բարձրացել ինքը՝ իշխանուհին. դերակատարների թվում էին՝ Ս.Արղության Երկայնաբազուկը, Ա.Խատիսյանը, Ա.Զարգարյանը, Մարիամ Թումանյանի ազգականներ Պ. և Գ.Դոլուխանյանները, Ա.Մելիք-Բեգլարյանը, բժիշկներ, ինժեներներ, քաղաքային ինքնավարության պատգամավորներ («ձայնավորներ»): Իշխանուհին ներկայացումը հետաքրքիր դարձնելու համար աշխատել էր հրավիրել հարուստ շրջանի մարդկանց: Նրանց զգալի մասն առաջին անգամ էր բեմ բարձրանում, և դժարություններն ու խնդիրները շատ էին[99]: Նա մեծ ջանք էր գործադրել համոզելու համար, որ միայն կենտրոնական և համակրելի դերերով ներկայացում չի ստացվի, և ինքն անձամբ օրինակ էր ծառայում՝ ոչ իր սրտով ու նաև աննշան մի դեր (անգլուհի Լյուսիի դերը) վերցնելով: Պիեսի գլխավոր հերոսի՝ Սերանի դերը հանձնարարել էր երաժիշտ Խրիստաֆոր Կարա-Մուրզայի եղբայր Պողոս Կարա-Մուրզային: Սակայն երբ ընդամենը երկու փորձ էր մնացել, մահանում է նրա երաժիշտ եղբայրը, և հենց ներկայացման օրը՝ մարտի 30-ին, նշանակվում է նրա թաղումը: Սակայն Մարիամ Թումանյանը չի վհատվում և ներկայացումը չի հետաձգում: Մեծագույն դժվարությամբ և միայն մեկ օրով էր տրամադրվել արքունական թատրոնը: Հետաձգելը կնշանակեր անորոշ ժամանակով Թումանյանին զրկել նյութական աջակցությունից, որն այնքան հրատապ էր: Իշխանուհու խնդրանքով Ս.Վ.Արղությանի աշակերտը՝ Մինասյան ազգանունով, երկու օրում պատրաստում է Սերանի դերը և բեմ բարձրա-

98 **Պողոս Հարությունի Արաքսյան** (Քալանթարյան) - 1869 մայիսի 22, Երևան – 1918, օգոստոսի 29, Թիֆլիս - հայ դերասան, ռեժիսոր, թատերական գործիչ:

99 Տես «Մշակ», 1902, ապրիլի 2, թիվ 71, Վ.Նալբանդյանի «Սիրողների ներկայացումը» հաղորդումը: Մարիամ Թումանյանն իր հուշերում շփոթում է ժամանակը. իրականում սիրողների ներկայացումը տեղի է ունեցել գարնանը, հետևաբար գումարն էլ տրամադրվել է ամռանը Բելի Կյուչում հանգստանալու համար, կամ ավելի ուշ՝ սեպտեմբերին:

Մարիամ Թումանյանը լեռնեցու փարազով

նում: Մարիամ Թումանյանը ոչ միայն ներկայացումն էր պատրաստել, այլև ցրել էր տոմսերը, որոշել, թե ով որ կարգում և որտեղ պիտի նստի: Շատերը ամիսներով ձգձգել էին տոմսի վճարը: Ներկայացումից հետո իշխանուհին հերթով այցելության էր գնում՝ շնորհակալություն հայտնելու միջոցառմանը մասնակցած տիկիններին, թեև իր այդ քայլն իրեն տարօրինակ ու անհեթեթ էր թվում. «...Այդքան չարչարանքներից ու հուզմունքներից հետո դարձյալ ես պիտի գնայի շնորհակալություն անելու մի ներկայացման համար, որ տրվել էր բոլորիս համար հավասարապես թանկագին բանաստեղծի օգտին» (ՄԹ, 115):

Աբասթումանում բանաստեղծն ապրում էր ռուս Տյաչկինի բնակարանում, որը նրա համար վարձել էր իշխանուհին: Տանտերերի հետ պայմանավորվածություն էր ձեռք բերվել՝ հոգ տանել բանաստեղծի մասին, և դրա համար առանձին վարձատրվելու էին: Կերակուրները պատրաստում էր տանտիկինը: Թեև Թումանյանին ռուսական կերակուրներն ամենևին դուր չէին գալիս, նա ոչ մի դժգոհություն չէր արտահայտում տանտերերից և ոչ մի պահանջ չէր դնում. ինքն էր դրսից ինչ-որ բան գնում սնվելու համար, իսկ հովանավորներին էլ ոչ տեղյակ էր պահում, ոչ էլ դժգոհում. «գանգատվելու կարիք չկար: Գանգատվելս անխղճություն կլիներ, մանավանդ նրա համար, որ շատ քաղաքավարի են հետս, մաքուր և կանոնավոր» (9, 366): Թումանյանը «գանգատվելը անխղճություն» էր համարում այն դեպքում, երբ գիտեր, որ իր սննդի համար վճարվող գումարից տանտիրուհին «խնայողություն էր անում». «ինքը՝ կինը, մի բան ետ է գցում, որ պարտքերը վճարի» (9, 366):

Սակայն երբ իշխանուհին պատահաբար տեղեկանում է այդ մասին, անհանգստանում է ու զայրանում: Մեկ անձի սննդի համար վճարում էր 30 ռուբլի, ինչն այնքան էլ փոքր գումար չէր այն ժամանակների համար: Բանաստեղծը, սակայն, թույլ չի տալիս նեղացնել իր տանտիրուհուն. «Մարդիկ աղքատ մարդիկ են և հաճախ այնպիսի նեղությունների մեջ են ընկնում, որ մարդու մեղք է գալիս»,- բացատրում է նա իր բարեկամներին (9, 371): Միաժամանակ անմիջապես էլ հանգստացնում է նրանց՝ ասելով իբրև թե առանց այդ էլ շատ լավ է զգում. «Առողջ եմ: Աբասթումանում՝ այս օդի ու

ջրի մեջ, կարելի է ոչինչ չուտել և առողջանալ» (9, 366): Այսպես բանաստեղծը պաշտպանում էր իր առողջության հաշվին սեփական կարիքները հոգացող տանտերերին:

Մեկ-երկու ամիս այդ բնակարանում ապրելուց հետո Թումանյանը զարմանքով հայտնաբերում է, որ իր տանտեր Տյաչկինը խանդում է կնոջն իր հանդեպ: Նոյեմբերի 20-ին գրում է. «Ես շատ ուշ իմացա՝ այս մի երկու օրս, որ ես ու իմ хозяйка-ն այդքան քնքուշ կապերով ենք կապված: ...Այժմ... ես ծիծաղում եմ, տիկինը զարմանում է, իսկ Իվան Օսիպովիչը լուրջ Օթելլո է խաղում» (9, 372): Տյաչկինը հետաձգել էր իր՝ պաշտոնական գործով Ախալցխա գնալը, որպեսզի կնոջն ու վարձակալին առանց հսկողության չթողնի: Դժվար է ասել, թե խանդի հիմքն ինչն էր ծառայել, հավանաբար այն, որ Թումանյանն իր համակրելի արտաքինով դուր էր եկել տիկնոջը, ով երբեմն հաճոյախոսություններ էր անում. «Իմ տանտիրուհին ասում էր՝ կարծես եղջերու լինեք» (9, 387):

Թումանյանն այդ ամենն ընկալում է իր սովորական հումորով՝ որպես զավեշտ ու անհեթեթություն: Ավելին, կա բանաստեղծի խոստովանությունը, որ տանտիրուհին՝ իբրև կին, նրան ամենևին չի հրապուրել. «...Ինձ համար միշտ գերադասելի է լինել մի կնոջ пазух-ի տակ... Թեև, տարաբախտաբար, բանաստեղծական ոչինչ չկա մեջը, և հենց դրանով էլ застрахована» (9, 320):

Միաժամանակ բանաստեղծը փորձում է ցրել տանտիրոջ հիվանդագին ու անհիմն կասկածները, որովհետև «մին-մին խղճում եմ, հիվանդ մարդ է»: Խանդի առիթ չտալու համար երեկոները նա սենյակից դուրս չէր գալիս և խուսափում էր տանտիրուհուց (9, 370): Տյաչկինն էլ իր հերթին գնահատում է Թումանյանի նրբանկատությունը, և նրա մռայլ ու կասկածամիտ վերաբերմունքը պոետի հանդեպ փոխվում է մեծ համակրանքի: Նա անկեղծանում է ու բացում է սիրտը նրա առջև. «Իմ Тячкин-ը վերջերս մռայլ էր: Այժմ էլ հանկարծ բացվել է արևի նման և սիրահարվել ինձ վրա: Գալիս է, այս մի քանի իրիկունները մոտս նստում, խոսու՛մ, խոսու՛մ... Շատ **հետաքրքրական բան է, երբ մարդը, թեկուզ ամենահետին, ամենաչնչին մարդը բաց է անում իր սիրտը: Անդունդներ են սրտերը՝ լի՛քը-լի՛քը. ի՞նչ չեք գտնիլ այնտեղ»** (9, 377):

Բանաստեղծը դժվարությամբ էր ապաքինվում: Բժիշկը նշանակում է տաք վաննաներ: Սկզբնական շրջանում նա չէր կարողանում ընդունել վաննաներ «ֆինանսական շատ հարգելի պատճառով», որովհետև յուրաքանչյուր վաննան արժեր 60 կոպեկ: Համապատասխան գումարը չունենալը թաքցնում էր հովանավորներից (9, 327): «Պատճառը նրանց չեմ ասում»,- գրում է բանաստեղծը: Թումանյանը զարմանում էր, որ բժիշկն իրենով

զբաղվելու համար վարձատրվում է. «Բանից երևում է, որ բժիշկն էլ այստեղ փող է ստանում ինձ համար, այնպես որ ես նստում եմ այստեղ ամսական մոտ 100 ռուբլի» (9, 332 - 333): Այսինքն, հովանավորներն էլ իրենց հերթին բանաստեղծից գաղտնի էին պահում, թե որքան են ծախսում և ինչի վրա:

Հանրային կյանք ու բազմություն սիրող բանաստեղծն այդ պահին զգում էր, որ «**Մենակությունը աստվածային դրություն է: Եվ մենակ մարդիկ են լավ բաներ տվել աշխարհքին**» (9, 290): Հոգեկան անդորրը ստեղծագործական աշխատանքի կարևոր պայմաններից է: Թումանյանն այս իմաստով բացառություն չէր: 1902 թ. օգոստոսի 6-ին գրողը խոստովանում է. **«Բանաստեղծությունը խաղաղություն է սիրում, այնտեղ է ծաղկում»** (9, 294):

Աբասթումանը հենց այդ խաղաղությունը նվիրեց բանաստեղծին, նաև արվեստագետի այն «հրաշալի ազատությունը», որը նպաստավոր պայմաններ է ստեղծում «ներքին ուժեղ դրդումների», գեղարվեստական մի շարք ծրագրերի իրականացման համար: Այդ մենության ժամերը, հոգեկան անդորրն ու խաղաղությունը Թումանյանը կարոտելու էր դեռ Աբասթումանը չլքած (9, 372): Եվ այս ամենը նաև իշխանուհու մեծ ջանքերի արդյունքն էր:

Թումանյանի՝ 1903թ. «Բանաստեղծություններ» ժողովածուի նախապատրաստական շրջանում

1902 թ. Աբասթումանի աշունը դարձավ Թումանյանի երկերի 1903 թ. ժողովածուի նախապատրաստական շրջանը: Եռանդուն գործունեություն էին ծավալել իշխանուհի Մարիամ Թումանյանը, Փիլիպոս Վարդազարյանը, Լևոն Շանթը և Արիստակես Զարգարյանը: Հեղինակի և նրա ժողովածուն հրատարակողների, հովանավորների ու կազմակերպիչների միջև հաճախ էին ծագում տարաձայնություններ: Նրանք կամենում էին՝ որքան հնարավոր է մեծ քանակով ու ծավալուն երկեր հրատարակել: Սակայն ինչպես ստեղծագործության մեջ տողերի քանակի խնդիրը, այնպես էլ ժողովածուում երկերի քանակի խնդիրը Թումանյանի համար ինքնանպատակ չէր, «առանձին նշանակություն» չուներ: Եվ այս հարցում նա փորձում է համոզել նաև իշխանուհուն. «Ես կարծում եմ՝ ինձ հետ կհամաձայնեք Դուք, որ **մանավանդ գեղարվեստական գործի մեջ, որքան կարելի է պետք է, ընտիրը, լավը տալ, քանակը կախված կլինի արդեն դրանից» (9, 325-326):**

Իշխանուհի Մարիամը և մյուս հովանավորները մշտապես բախվում էին հեղինակի՝ սեփական ստեղծագործությունների ընտրության գործում դժվարահաճ բնավորությանը, անսահման բծախնդրությանը և խնդրում էին իրենց

թողնել երկերի ընտրության խնդիրը: Թումանյանն էլ արտաքուստ համաձայնում էր, «բայց մի հավելվածով», որ «ջոկվածներն էլ վերջին անգամ ես նայեմ» (9, 326): Հեղինակի «հավելվածը», անշուշտ, հարգվում էր: Ինչպես հետագայում հիշում է իշխանուհին. «Տպվելիք նյութերը մենք մեր ճաշակով ընտրեցինք, բայց վերջնական ընտրությունը թողինք հեղինակին» (ՄԹ, 121):

Թումանյանի 1903 թ. «Բանաստեղծություններ» ժողովածուն

Ամեն անգամ, երբ ընկեր-հրատարակիչները շտապեցնում էին, Թումանյանը կտրուկ հայտարարում էր. «...Գրքի տպագրության հարցով խնդրում եմ առայժմ ինձ չզբաղեցնեք» (9, 343): Իսկ հոկտեմբերի 28-ին բանաստեղծը խնդրում է հրատարակիչներին մի կողմ թողնել միառժամանակ նաև գրքի բաժանորդագրության խնդիրը: Իհարկե, մասնավորապես իշխանուհին նրան չի լսում և տարբեր ճանապարհներ է որոնում՝ այդ խնդրի լուծման գործում հաջողության հասնելու համար:

Բաժանորդագրության հարցում իշխանուհին նյութական օժանդակություն էր խնդրել և մերժվել Սմբատ Շահազիզից: Վերջինս խոստացել էր միայն գրքի հրատարակումից հետո նպաստել նրա տարածմանը: Այդ պատասխանը շատ անսպասելի էր Մարիամ Թումանյանի համար և նրան անակնկալի է բերում, մեծ հիասթափություն պատճառում: Իշխանուհին գրում է. «Ինձ շատ վշտացրեց Ս.Շահազիզի մերժումը... ես բոլորովին հակառակ սպասելիքներ ունեի»[100] (ՄԹ, 121): Իշխանուհին այս հարցում համակարծիք էր բանաստեղծի հետ. նա մտադիր չէր ամեն մարդուց աջակցություն խնդրել:

Յուրաքանչյուր մերժում կամ անհաջողություն, որին հանդիպում էին Թումանյանի հովանավոր-բարեկամները, նույնքան ցավ էր պատճառում նաև բանաստեղծին: Մարիամ Թումանյանին հասցեագրած նոյեմբերի 29-ի պոետի նամակում կարդում ենք. «Ճշմարիտ, ցավում եմ, երբ ամեն անգամ

100 Սմբատ Շահազիզը, փորձելով ինչ-որ կերպ մեղմացնել մերժման տպավորությունը, անձամբ բաժանորդագրվում է գրքի քսան օրինակի և առաջարկում է աջակցություն խնդրել վաճառականներից, մասնավորապես Մինաս Բոգդանի Լազարյանից: (ԳԱԹ, ՄԹ ֆ., թիվ 633):

Իշխանուհուն վշտացնում է ոչ այնքան Շահազիզի մերժումը, որքան վաճառականի մատնացույց անելը: Մարիամ Թումանյանը Շահազիզի հետ ծանոթացել էր Ղրիմում՝ Յալթայում: Եվ նրա առաջին տպավորությամբ՝ Շահազիզի մեջ «քիչ բանաստեղծական ոգի կար», դրա համար էլ «նա չէր ըմբռնում, թե որքան վիրավորական էր գրողի համար, երբ նրան օգնության են գալիս ոչ թե նրա տաղանդը հարգողները, այլ վաճառականներ, որոնք, սրան-նրան խլսբելով, փողեր էին դիզում և իրանց խիղճը հանգստացնելու համար բարեգործություններ են ուզում անել» (ՄԹ, 121):

իմ մոտիկ բարեկամները մերժվում են ինձ համար: Այդ ինձ ավելի է ցավեցնում, քան թե ես լինեի մերժված» (9, 387):

Մարիամ Թումանյանը տպագրել էր տվել բաժանորդագրական անդորրագրեր, որոնք ցանկանում էր տարածել գրականությանը և մշակույթին մոտ կանգնած մարդկանց միջոցով:

* * *

Իշխանուհու տանը կազմակերպվող հերթական չորեքշաբթիներից մեկի ժամանակ (1902թ. հոկտեմբերի 10) վերստին քննարկվում է գրքի հրատարակության խնդիրը: Որոշում են Թումանյանից խնդրել տարբեր քաղաքներում ապրող նրա ծանոթների ու բարեկամների ցուցակը, որպեսզի նրանց հասցեներով ուղարկեն բաժանորդագրության անդորրագրերը: «Վա՛հ, ախար ըսենց ժողով ու ըսենց հրատարակիչներ ոչ թե լապտերով, այլ աշխարհի բոլոր էլեքտրական լամպերը եթե միացնես, նորեն չես կրնար գտներ»,- գրում է Շանթը Թումանյանին (Շ 9, 114): Եվ նա իրավացի էր:

Այդ շրջանում պոետի հովանավորների և հատկապես մտահոգության և հոգածության գրեթե միակ առարկան Թումանյանի գրքի հրատարակությունն էր, ինչպես նաև նրա առողջական վիճակը:

Աբասթումանն առողջարանային քաղաք էր, և այնտեղ մեծ թիվ էին կազմում թոքային հիվանդություններով տառապողները: Չնայած իշխանուհին և Ֆիլիպը անվերջ զգուշացնում էին պոետին, որ Աբասթումանում հիվանդները շատ են, և նա պարտավոր է խուսափել այցելություններից, այնուամենայնիվ, նա չէր ենթարկվում (9, 369): Զարմանալի կլիներ, որ Թումանյանի խառնվածքի ու բնավորության տեր մարդը հետևեր նման խորհուրդների: Նա ամեն օր հանդիպումներ էր ունենում, ամառանոցի բնակիչների հետ շրջագայում էր մոտակա գյուղերում: Եվ ամեն անգամ, երբ Թումանյանն այցելում էր վարակիչ հիվանդների, Թիֆլիսում այդ լուրը զայրույթի մեծ ալիք էր բարձրացնում: Շխյանների տուն գնալը նկատի ունենալով՝ Լևոն Շանթը գրում է. «Իշխանուհին նեղացել է քեզնից... դուն գնում ես այն տեսակ տներ, ուր ամբողջ ընտանիքը հիվանդ է... մի քիչ ավելի կը մտածեիր քու սեփական առողջությանդ մասին... նայե, որ ուտես, քնես ու կազդուրվես շատ չափավոր աշխատանքով» (Ժ 9, 116):

Մարիամ Թումանյանը, տեսնելով, որ բանաստեղծի առողջությունը դեռ երկար բուժում կպահանջի, մտածում է նոր միջոցներ հայթայթելու մասին: Լսելով իր ծանոթներից մեկի առաջարկը՝ նա 1902 թ. դեկտեմբերի 5-ին դիմում է Պետերբուրգի հայոց Եկեղեցական խորհրդին, հավաստիացնում բանաստեղծի տաղանդի աներկբա մեծությունը, այդ տաղանդից հայ գրակա-

նության մեծ սպասելիքները, նշում էր Թումանյանի առողջական ծանր վիճակը և ընդգծում նրան աջակցելու կարևորությունը: Դիմումը Պետերբուրգ է հասնում դեկտեմբերի 10-ին և 10 օր անց մերժվում: Թեև Եկեղեցական խորհուրդը չի ցանկանում նպաստ հատկացնել բանաստեղծին և մերժում է իշխանուհու խնդրանք-միջնորդագիրը, սակայն միաժամանակ փորձում է չնեղացնել իշխանուհուն: Խորհուրդն իր հերթին դիմում է ուսանողությանը՝ առաջարկելով մի ներկայացում կազմակերպել Թումանյանի օգտին: Վահան Տերյանի եղբայրը՝ իրավաբան, թարգմանիչ Արամ Տեր-Գրիգորյանը, կարծում է, որ շատերը «առիթից կօգտվեն և իրանց համար էլ մի բան կպոկեն այդտեղից» (9, 115), և վրդովված տեղեկացնում է իշխանուհուն Եկեղեցական խորհրդի որոշման մասին[101]:

1902 թ. դեկտեմբերի 22-ին այդ նամակից իշխանուհին եզրակացնում է, որ Արամ Տեր-Գրիգորյանն «ազնիվ տղա է... ըմբռնում է իր դիմումի գաղափարական կողմը ու խորհրդի տգեղ վարմունքը, վիրավորվում է՝ տեսնելով, որ գրողի պատիվն է շոշափվում» (ՄԹ, 115): Իշխանուհին, առանց տեղյակ պահելու Աբասթումանում բուժվող բանաստեղծին, անմիջապես հեռագրում է Ա.Տեր-Գրիգորյանին՝ խնդրելով միջոցներ ձեռնարկել՝ անմիջապես դադարեցնելու ներկայացման կազմակերպումը: Իսկ 1903 թ. փետրվարի 3-ին դիմում է Կարապետ Եզյանին՝ կարծելով, թե նա է խորհրդի նախագահը[102]: Վերջինս, վիրավորված իր նկատմամբ իշխանուհու «հուսախաբ լինելուց», և մշակույթին արժանավայել օգնելու մասին «խրատներից», իշխանուհու՝ հիասթափություն արտահայտող խիստ խոսքերից, ձգտում է արդարանալ[103]:

Մարիամ Թումանյանին հաջողվում է այդ դիմումի մասին լուրը թաքցնել բանաստեղծից: Սակայն **դիմում-շրջաբերականը**, որը կազմել էին ժողովածուի հովանավորները նրա ժողովածուի հրատարակության ծախքերը հոգալու համար, մեծ հուզումներ է պատճառում բանաստեղծին[104]: Այդ դիմումի

---

101 Տես Արամ Տեր-Գրիգորյանի նամակը Մարիամ Թումանյանին, ԳԱԹ, ՄԹՖ, թիվ 79:

102 Իրականում խորհրդի նախագահը իշխան Աբա Մելիք-Լազարյանն էր (Տես ՄԹ, 116):

103 Կարապետ Եզյանը փորձում է իշխանուհուն համոզել՝ իբր ձեռնպահ է եղել, խորհրդի՝ որոշումն ընդունելու պահին ներկա չի եղել, նույնիսկ թաքցնում է, որ խորհրդի փոխնախագահն է և իրեն ներկայացնում է որպես խորհրդի ութ շարքային անդամներից մեկը: Միմյանց հակասող «փաստարկներ» բերելով՝ գրում է. «Խորհրդարանը մերժել է Ձեր առաջարկությունը, թե ինչ պատճառներով, այդ ինձ հայտնի չէ»: Տես ԳԱԹ, ՄԹՖ, թիվ 202:

104 Հետագայում իշխանուհի Մարիամ Թումանյանն իր հուշերում շփոթում է Եկեղեցական խորհրդին արված իր անձնական դիմումը (դեկտեմբերի 5) ժողովածուի հրատարակչական խմբի կազմած դիմում-շրջաբերականի (հոկտեմբերի 16-17) հետ, գուցե այն պատճառով, որ երկու դիմումների մեջ էլ ոչ մի նվաստացուցիչ, անպատվաբեր բան չէր տեսնում թե՛ իր և թե՛ Թումանյանի համար (ՄԹ, 117): Նա Եկեղեցական խորհրդին՝ իբրև կազմակերպության, դիմել էր միայն այն բանից հետո, երբ բանաստեղծը ստիպել էր չդիմել խնդրանքով որևէ անհատի:

մեջ նրա բարեկամները նախ նկարագրել էին «համակրելի գրագետի»՝ Թումանյանի տնտեսական և առողջական ծանր վիճակը և ապա բացատրել, որ միայն նրա ժողովածուն հրատարակելու միջոցով հնարավորություն կտրվի պոետին «արտադրել ու աշխատել իր կյանքի այս ամենահասուն տարիների մեջ», և չի կարելի սպասել, որ «նրա ծերության ու այլևս արտադրելու ապարդյուն օրերի մեջ միայն հասարակությունը գա իր համակրանքն ու օգնությունը մատուցանելու» (Շ 9, 117):

Այդ դիմումը իշխանուհին և Ֆիլիպը պատրաստվում էին հասցեագրել այն բոլոր «մոտիկ» մարդկանց, որոնք կարող էին մեծացնել բաժանորդների թիվը և գտնել կամ դառնալ նվիրատուներ. «Այդ նվերները որքան խոշոր լինեին և որքան շատ, այնքան մեծ կը լինի բնականաբար և հեղինակին հասանելիք զուտ արդյունքը... Ավելացնենք, որ հրատարակիչները ոչ մի դրամական շահ չունեն գործին մեջ, հրատարակության անմիջական ծախքերից դուրս, բոլոր մնացած գումարը հեղինակի սեփականությունն է» (Շ 9, 117-118):

1902 թ. Աբասթումանում Շանթի հոկտեմբերի 16-18-ի նամակից տեղեկանալով դիմումի բովանդակությանը՝ բանաստեղծը մեծ ցավ է ապրում. «Դիմումը... ինձ այնքան վշտացրեց, որ ես պատրաստ էի թքել և գրականության, և կյանքի վրա: Դիմել հազար ու մի մարդու, գրել, թե Հ. Թումանյանը անապահով է, հիվանդ է, ընտանիք ունի» (9, 343): Բանաստեղծի հպարտությունն ու արժանապատվությունն այնպես են ընդվզում, որ նա չի հանդուրժում ոչ մի բացատրություն, դիմում-խնդրագիրը արդարացնող ոչ մի պատճառաբանություն[105]: Նա կտրուկ մերժում և գրողի արժանապատվությանն անվայել է համարում իր կամ իր ընտանիքի անվան հիշատակությամբ որևէ մեկին դիմելը և այդ ճանապարհով նյութական աջակցություն գտնելը: Շատ լավ գիտակցելով իր հովանավորների և բարեկամների բարի ցանկությունները՝ ամենայն խստությամբ արտահայտում է իր խորին ցավն ու վիրավորանքը՝ չվախենալով նույնիսկ սիրելի մարդկանց ակամա վիրավորելուց: Չէ՞ որ նրանց ձեռնարկը շատ-շատ անապահով գրողների գուցե և երջանկացներ: 1902 թ. նոյեմբերի 9-ին պոետը գրում է. «Ես միանգամայն հրաժարվեցի: Ավելին ասեմ, այդ դեպքը, որ մեզանում ոմանց նախանձն է շարժել, այնքան խիստ ազդեց ինձ վրա, որ ինչքան էլ ինձ զսպեցի, այնուամենայնիվ... նրանք վշտացել են» (9, 359):

Թումանյանը ստիպված եղավ վշտացնել իր բարեկամներին, իր սիրելի

105 Նույն կերպ Թումանյանը վարվել էր 1901 թ., երբ Արսեն Ղլտճյանը հայտնել էր նրան, որ նյութապես օժանդակելու նպատակով Բաքվում ուզում են անձամբ տեսնել: Բանաստեղծը հրաժարվել էր՝ համարելով դա «անվայել», գրողի արժանապատվության դեմ արված առաջարկ (9, 249) և վճռական հայտարարել. «**Գրողի հետ չպետք է պայմաններ կապել, գրողին պետք է ընթացք տալ, հնար տալ, և նա կանի այն, ինչ որ թերևս չեն էլ սպասում» (9, 248)**:

իշխանուհուն, որովհետև ինքն այնքան էր վշտացել, որ առողջական վիճակը դարձյալ վատացել էր: Դիմելով Ֆիլիպին՝ Թումանյանը գրում է. «Բայց քեզ, որպես մի մտերիմ մարդու, որ այդքան հոգում է իմ մասին, անշուշտ, իբրև մի բանաստեղծ ընկերի, քեզ ասում եմ, հիշեցնում եմ, որ սիրես՝ **բացի իմ ֆիզիկական առողջությունը, մի քիչ էլ հոգու հպարտություն տեսնել իմ մեջ**:

Ինչ անենք, որ բանաստեղծ լինելով, նյութական նեղության մեջ լինելով, ապավինած եմ մի քանի մարդու օգնության, միթե դեռ պետք է շրջաբերականով հռչակեմ իմ խեղճությունն ու նպաստներ ժողովեմ:

Այդ դիմումը չպետք է լինի» (9, 343)[106]:

Ավելի հուզիչ էր իշխանուհուն ուղղված՝ Թումանյանի դժգոհությունը, մանավանդ որ նրանց հարաբերությունները միշտ էլ հիմնված են եղել **«սրտի քնքշության և հոգու ազնվության»** վրա (9, 350): 1902 թ. նոյեմբերի 1-ին նա դիմում է իշխանուհուն. «Ես միշտ համոզված եմ եղել, որ Դուք քույրորեն տանջվում եք իմ վիճակով: Եվ այդ է պատճառը, որ որքան էլ տեսել ու ընդունել եմ Ձեր զգացմունքների իրական ապացույցները, երբեք չեմ զգացել սրտիս վրա այն ահագին ծանրությունը, որ զգացի այս վերջին դիմումի... խոսքերից:

Սիրելի Մարիա Մարկովնա, ավելի ծանր ու դժվար դեպք չի կարող լինել երբեք, քան երբ մարդու՝ իրեն ապրելու և իր ընտանիքը պահելու հոգսն ու խնդիրը դուրս է գալի իր ձեռից ու դրվում հրապարակ: Այդ միշտ է անտանելի, բայց մանավանդ այն դեպքում, երբ այդ հրապարակը լիքն է ստոր մարդկանցով:

...Ես տեսել ու լսել եմ շատ շատերին, որ լավություն են արել այս կամ այն գրողին, ու մտքումս ասել, **երանի թե չլիներ այն գրողն ու գրականությունը, որ ընկած չլիներ սրա հուսով ու սրա մունաթին**: Ես անձնական դժբախտ փորձով էլ գիտեմ, թե ինչ մարդիկ են դրանք: Դրանք ինչ են հասկանում՝ ինչ բան է բանաստեղծը: Դրանք միմիայն բանաստեղծ կարող են սպանել» (9, 350):

Իր ապրած ժամանակը բանաստեղծը համարում էր պատմական մի շրջան, երբ տաղանդը «որքան էլ կաշվից դուրս գա, միայն նահատակ կարող է լինել: Իսկ նահատակել ամեն ձևով ու ամեն ձեռով՝ մեղք բան է» (9, 350): Թումանյանը դիմում-շրջաբերականի հետ իր ապրած զգացումները համեմատում է հոգեկան երկրաշարժի հետ («...Դղրդեց իմ հոգին», 9, 350): Մինչ այս նամակը ստանալը և նրա գրվելուց մեկ օր առաջ իշխա-

106 Թումանյանը դեռ չէր մոռացել, որ 1899 թ., երբ Փիլիպոս Վարդազարյանը դիմել էր մեծահարուստ Ալ.Մանթաշյանին՝ Թումանյանին օգնելու նպատակով, ոմն «հայտնի տիկին», որի ով լինելը չկարողացանք պարզել, յոթ երեխայի հայր Թումանյանի մասին ասել էր, թե «բանաստեղծը միթե այդքան երեխա կունենա» (9, 351):

նուիին արդեն հուզված ու ծանր ապրումների մեջ էր, քանի որ Լևոն Շանթը տեղեկացրել էր նրան պոետի հոգեկան ապրումների մասին: Գուցե ոչ պակաս վշտացած, քան բանաստեղծը, իշխանուհին գրում է, որ շատ լավ է հասկանում նրա ապրումները և մտածում է միայն ու միայն նրա հոգեկան հանգստության մասին. «Սիրելի՛ս,- դիմում է նա Թումանյանին,- **մի՞թե Դուք կասկածում եք, որ Ձեզ հետ միասին տանջվում է և իմ սիրտը, մի՞թե Դուք կարծում եք, որ ցավալի չէ ինձ դիմել սրան-նրան՝ Ձեզ օգնելու համար: Դուք չկարծեք, որ ինձ ուզում եմ հեռու պահել ... նեղություններից... Ո՛չ, և հազար անգամ ո՛չ: Ինձ մեծ կսկիծ է պատճառում, որ ես չեմ կարող ապահովել Ձեզ այնքան, որ ստիպված չլինեմ ամեն անգամ դիմումներ անելու՝ շոշափելով Ձեր զգայուն ինքնասիրությունը: Ես Ձեզանից ավելի կուզենայի, որ մարդիկ ուրիշ կերպ նայեին հարցին... բայց ի՞նչ արած, շատ քչերն են, որ արժանի են մարդ կոչվելու: Իմ փափագն է Ձեզ այնպես պաշտպանեմ, որ ոչ մի մարդ չդիպչի Ձեր զգայուն սրտին, որ Ձեր հոգին հանգիստ լինի» (ՈւՀ 5, 289)**:

Մարիամ Թումանյանն այնքան էր հուզված, որ նամակը կիսատ է թողնում, իսկ գրելու ողջ ընթացքում արտասվում է, սակայն այն, ինչ գրում է, միանգամայն բավական է, որ հավաստի իր մեծ ու անպարփակ սերը բանաստեղծի նկատմամբ, որն անհամեմատ ավելի մեծ է, քան հովանավորի սերն իր գործի, իր նպատակի, իր հովանավորյալի հանդեպ, ավելի մեծ է, քան սերը որևէ թեկուզ ամենատաղանդավոր բանաստեղծի հանդեպ, նույնիսկ ավելի մեծ է, քան կնոջ սերը տղամարդու նկատմամբ, ավելի բարձր, ավելի մաքուր: Այն թե՛ բանաստեղծական է և թե՛ պարզապես մարդկային: «Հավատու՞մ եք,- գրում է իշխանուհին,- որ այս տողերը գրելիս ես լալիս եմ, որ իմ բոլոր ճիգերը իզուր են... որ չեմ կարող պաշտպանել Ձեր սիրտը կոպիտ ձեռքերից:

Ես կուզենայի Ձեզ խնամել, ինչպես մի քնքուշ ծաղիկ, պահպանել թե՛ արեգակի այրող ճառագայթներից, թե՛ ձմեռվա ցրտից: Ձեր ամեն մի վիշտը արձագանք է գտնում սրտիս մեջ: Շատ անգամ խուսափել եմ խոսելու մի քանի հարցերի մասին, որովհետև չեմ ուզեցել Ձեր վերքերը նորոգել, բայց Դուք կարծում եք, որ ես չեմ զգացել Ձեզ պես, չեմ համակրել Ձեր զգացմունքներին իմ սրտի խորքումը: Ի՞նչ արած, կյանքը անողոք է... վա՛յ նրան, որ զգայուն է և սրտին մոտիկ է առնում ամեն բան» (ՈւՀ 5, 290):

Թեև արցունքներն այլևս թույլ չէին տալիս շարունակել, սակայն իշխանուհին, այնուամենայնիվ, փորձում է խաղաղեցնել բանաստեղծի հոգու խռովքն ու փոթորիկը՝ վստահեցնելով նրան երկու բանում. «... որ նախ Դուք մենակ չեք տանջվում, որ Ձեզ հասկացողներ ու համակրողներ կան, և երկրորդ, որ **ես ամեն միջոց գործ կդնեմ, որ Ձեզանից հեռու պահեմ մունաթները և**

խայթոցները» (ՈւՀ 5, 290): Նա խորհուրդ է տալիս զոհել զգացմունքներն ավելի բարձր գաղափարների համար, փիլիսոփայորեն մոտենալ խնդրին և մտածել «մեր խեղճ գրականության մասին»: Սակայն Թումանյանը չի համաձայնում, որովհետև համոզված էր, որ բանաստեղծը, արվեստագետը «ամեն բան» կարող է զոհել, բացի զգացմունքներից, որովհետև գրականությունը «զգացմունքների գործ է» (9, 351): Թումանյան-մարդու, մտածողի համար նույնիսկ հանուն գրականության չի կարելի զոհել գրողին, որովհետև նա գրականությունից առաջ է, և ինքն է ստեղծողը. «**Գրողն էլ իր զգացմունքներով է գրող: Եվ երբ այդ զգացմունքները կզոհվեն, այնուհետև էլ գրող չի լինիլ, իսկ երբ գրող չի լինիլ - գրականություն էլ չի լինիլ» (9, 351):**

Իշխանուհին շատ է վշտանում՝ տեսնելով, որ չի կարողանում Թումանյանին համոզել, «իր միտքը հասկացնել» (ՄԹ, 117):

Ի վերջո, Թումանյանը «հաղթում է»՝ հարկադրելով իշխանուհուն և մյուս մտերիմ-բարեկամներին մտափոխվել, որովհետև իր հուզումներով խիստ անհանգստացրել էր նրանց: Վերջիններս հասկացել էին բանաստեղծի վրդովմունքը, որն արտահայտվել է նաև Թումանյանի այս տողերում. «Այդ դիմումի մեջ կա մի բան, որ ուժգին քացի է տալիս իմ սրտին, որ կատաղեցնում է ինձ, որ **ես անիծում եմ իմ ճակատագիրը, թե ինչու ես բանաստեղծ եղա այս աշխարհքում...**

Ինչու՞ ես էլ չեղա այն ավազակներից մեկը, որ առողջ ապրում են իմ հայրենիքի լեռներում: Միթե, ճշմարիտ, արժե երկարացնել այդ անտանելի հոգեվարքը, անվերջ պտտվել այս կոշմարի մեջ» (9, 345-346)[107]:

Հոգեկան այս ապրումներից Թումանյանի մոտ ուժեղ անքնություն է առաջանում, նա սաստիկ նիհարում է (տասը օրում վեց ֆունտ): Ահա թե ինչու նույնիսկ բժիշկներն են սկսում անհանգստանալ բանաստեղծին նյարդայնացնող զանազան դիմումների հարցով: Թերևս այդ պատճառով է, որ բժիշկ Արտաշես Բուդաղյանը խորհուրդ է տալիս իշխանուհուն խնդիրը նորից չբարձրացնել հրապարակայնորեն (ՄԹ, 117):

Լ. Շանթը փորձում է հարթել հովանավորների և բանաստեղծի միջև եղած տարաձայնությունը. «Բայց որքան որ քեզ եմ հասկանում, այնքան էլ հասկանում եմ «նրանց», որոնք քեզ բոլոր սրտով օգնել են ուզում» (Շ 9, 118-119):

Նոր ժողովածուի հրատարակությունը համարելով գրողի համար նյութական միջոցներ հայթայթելու «վերարկու»՝ Շանթը խնդրում է գիտակցել ճա-

107 Ավազակներ ասելով՝ Թումանյանը նկատի ուներ Չոփուռանց տղաներին, որոնք ապստամբել էին ցարական պաշտոնյաների դեմ, հռչակվել ավազակներ, բանտարկվել, աքսորվել, պատսպարվել լեռներում: Թումանյանը մտերիմ է եղել Չոփուռանց Ռամազի հետ: Իսկ Սիմոն Հովվյանի վկայությամբ Թումանյանը պատրաստ է եղել միանալ նրանց և «ձորերն ընկնել» (ԹԺՀ, 255):

կատագրի դառնությունն ու «փիլիսոփայաբար մտածել», շատ կարևորություն չտալ «մանրիկ որդերու» չարությանը (Շ 9, 119), որովհետև հրատարակիչների հաշվարկով նրանք կարող են այդ դիմումով երեքից չորս հազար ռուբլի հայթայթել:

Գրքի բաժանորդագրության հարցի շուրջ բանակցությունները տևում են մոտ մեկ շաբաթ: Եվ եթե հաշվի առնենք բանակցող կողմերի տարբեր քաղաքներում գտնվելը, ապա պետք է եզրակացնել, որ Թումանյանը հատկապես իշխանուհուն երկար համոզելու խնդիր չի ունեցել: Նրա առաջին իսկ դժգոհությունն արձագանք է գտել բարեկամների սրտում և դարձել նրանց կամքին հակառակ, հարկադրված ու պարտադրված, ստիպողական վճռի ընդունման հիմք, վճիռ, որը բացասաբար պիտի անդրադառնար գրողի նյութական բարեկեցությանը, սակայն դրականորեն կազդեր նրա հոգու խաղաղության վրա: Իշխանուհին և առհասարակ Թումանյանի միջավայրը, նրա բարեկամներն ու ընկերները, ցանկանալով, թե առանց ցանկության, չէին հակառակվում նրա կամքին: Եվ արդեն հոգեպես հանգիստ՝ նոյեմբերի 1-ին պոետը իշխանուհուն գրում է. «Ես միայն այժմ, երբ համոզված եմ, որ այլևս դիմում չի լինելու, միայն այժմ, ասում եմ՝ այս մի քանի օրը, ինձ զվարթ եմ զգում և ազատ շունչ եմ քաշում» (9, 351):

* * *

Հոկտեմբերի 15-ին տպագրության համար գրաքննչական թույլտվությունն արդեն ստացվել էր: Իշխանուհին տպագրությունը հանձնում է Մնացական Մարտիրոսյանի տպարանին, որի տնօրենը, նրա վկայությամբ, «հայտնի էր իբրև մաքուր և գեղարվեստորեն տպագրող» (ՄԹ, 122): Իշխանուհուն թվում էր, որ հեղինակն այլևս չի միջամտի, սակայն նրա համար «նոր տանջանքների դուռ բացվեց» (ՄԹ, 123):

«Թումանյանը մտնում էր տպարան՝ սրբագրելու պատրվակով, բայց փոփոխության էր ենթարկում շարվածը կամ բոլորովին դուրս էր գցում իր բանաստեղծությունները» (ՄԹ, 123):

Իշխանուհին անվերջ ու անդադար վիճում էր բանաստեղծի հետ՝ փորձելով բացատրել նրան, որ այսուհետ իրավունքն արդեն հրատարակչինն է և ոչ թե հեղինակինը: «Ո՞նց թե իրավունք չունեմ,- զարմանում էր Հովհ.Թումանյանը,- չէ՞ որ ես եմ հեղինակը» (ՄԹ, 123):

Երբեմն էլ իշխանուհին բանաստեղծի հետ միասին էր գնում տպարան, սակայն հաճախ այնպես էր ստացվում, որ Թումանյանը նշանակված ժամին չէր ներկայանում, մեծ ուշացումով էր գալիս: Տպագրիչներին իշխանուհին մի հանձնարարական էր տալիս, հեղինակը՝ մի այլ: «Ու խեղճ Մարտիրոսյանը

ընկել էր երկու կրակի մեջ: Նա ինձ շատ էր հարգում,- գրում է իշխանուհին,- և պատրաստ էր ամեն բան անել, որ հրատարակությունը վայելուչ կերպով կատարվեր, բայց հեղինակի խաթրին էլ չէր ուզում դիպչել» (ՄԹ, 123):

Ժողովածուի հրատարակումից հետո, երբ իշխանուհին վերջապես ազատ շունչ է քաշում և իրեն «անսահման երջանիկ» զգում, որ Թումանյանի «ձեռքից ազատվեց», իսկ բանաստեղծն արդարանում էր.

«Դուք անհրագործելի բաներ էիք պահանջում ինձանից, Մարիա Մարկովնա. այսինչ ժամին արի տպարան, այնինչ ժամին գնա փլան տեղը, շու՛տ սրբագրիր, հեղինակի իրավունքից զրկվիր ու այս տեսակ պահանջներ: Դուք չէիք ուզում հասկանալ, որ ես բանաստեղծ եմ ու ազատություն եմ սիրում» (ՄԹ, 124):

Ի վերջո, գիրքը լույս է տեսնում 1200 օրինակ տպաքանակով, «շքեղ թղթի վրա», գինը նշանակվում է երեք ռուբլի: Իշխանուհին կատարել էր 1902 թ. սեպտեմբերի 25-ին պոետին տված իր խոստումը. «Մենք կանենք շքեղ հրատարակություն» (ՈւՀ 5, 289): Տպաքանակի մի մասը հանձնում են Թիֆլիսի առաջնակարգ կազմարարին՝ Տիֆֆերտին, որը «մեծ ճաշակ ուներ և գործ էր ածում արտասահմանյան ընտիր նյութեր» (ՄԹ, 124): Տպագրության համար ծախսվել էր 1305 ռ. 5 կոպ.[108]:

Առավել շքեղ օրինակների գինը նշանակվում է 10 ռուբլի, սակայն գտնվում էին մարդիկ, որոնք հոժարակամ և մեծ ուրախությամբ վճարում էին 100 ռուբլի: Սակայն սովորական կազմ ունեցող գրքերի գինը մնում է 3 ռուբլի: Ժամանակի մամուլում գրքի գինը հատուկ քննության առարկա է դառնում: «Տարազի» գրախոսը, շնորհակալություն հայտնելով իշխանուհի Մարիամ Թումանյանին հայ լավագույն բանաստեղծին աջակցելու համար, դիմում է ընթերցող հասարակությանը. «Ով որ չի զլանա իր քսակից 3 ռ. հանելու, որպեսզի մեր յիշատակած գիրքը ձեռք բերէ, նա կորուստ չի ունենայ, շատ հաճույք կվայելէ և շնորհակալ կլինի հեղինակից»[109]:

Գրքի 1200 օրինակից միայն 400-ն է վաճառում իշխանուհին: Ստացված 2163 ռուբլուց մի մասը նա հատկացնում է տպագրական ծախսերը ծածկելուն, մյուս մասը՝ մոտ 850ռ., ամբողջությամբ տրամադրում է հեղինակին: Նա մտադիր էր գրախանութներին հանձնված մոտ 800 օրինակի գումարն էլ տրամադրել բանաստեղծին, սակայն հեղինակն այլ կերպ է տնօրինում

108 Հետագայում իշխանուհին մեկ առ մեկ հիշում է գրքի վրա ծախսված յուրաքանչյուր կոպեկը: Նրա հավաստիացումներով թղթի վրա ծախսվել էր 644 ռ. 88 կոպեկ, տպարանին վճարվել էր 300 ռուբլի, նկարների տպագրության արժեքն էր 70 ռուբլի, շքեղ կազմերի ծախսը կազմել էր 201 ռուբլի 15 կոպեկ, բաժանորդագրերի տպագրության և փոստի ծախսն էր 56 ռ. 94 կոպ., լրագրերի հայտարարությունների արժեքն էր 32 ռ. 08 կոպ. (ՄԹ, 125):

109 «Տարազ» հանդես, Թիֆլիս, 1904, N 7, էջ 47:

խնդիրը՝ առաջացնելով իշխանուհու արդարացի վրդովմունքը: Մարիամ Թումանյանը գրում է. «Մի շաբաթ հազիվ էր անցել, որ Թումանյանը մտել էր գրախանութները, վերցրել էր ժողովածվի օրինակներ ու ձրի բաժանել էր սրան-նրան: Չբավականանալով դրանով՝ նա ինձ էլ դիմում էր, որ իր հաշվին այսինչ մարդուն գիրք տամ: Ես շատ էի չարանում և համոզում էի Թումանյանին, որ այդպիսի բաներ չաներ: «Ես ուզում էի օգնել Ձեզ,- ասում էի ես Թումանյանին,- որ Դուք Ձեր գրչի աշխատանքով ապրեիք, որ ստիպված չլինեիք անհամապատասխան գործով պարապել ընտանիքը պահելու համար: Իսկ Դուք ի՞նչ եք անում, ձրի բաժանում եք գրքերը ամենքին, և ի՞նչ է լինելու սրա վերջը...»» (ՄԹ, 125):

Իշխանուհին փորձում է գեթ տպաքանակը պահել իր մոտ և ամբողջությամբ վաճառքի հանձնելով՝ օգնել բանաստեղծին: Գրքերի վաճառքից կգոյանար 4326 ռ., որը բավական մեծ օգնություն կլիներ բանաստեղծի համար: Սակայն Թումանյանն անվերջ միջնորդություն-դիմումներ է անում, որ իշխանուհի Մարիամն անվճար տրամադրի գրքերը ծանոթ-անծանոթ բոլոր ցանկացողներին: «Հուսահատված,- պատմում է իշխանուհին, ես հավաքեցի ինձ մոտ մնացած գրքերը և ուղարկեցի նրան մանրամասն հաշվետվությամբ... նա շարունակեց անմիտ կերպով ցրել գրքերը, և նրա աշխատանքը միայն այն էր, ինչ որ ստացել էր ինձանից և գրախանութներից կանխիկ դրամով» (ՄԹ, 126):

Նման պահվածքով ու վարվելակերպով, նվիրելով մոտ 4000 արժողություն ներկայացնող գրքերի գրեթե ողջ տպաքանակը, բանաստեղծը միայն խանգարեց իր բարեկեցության խնդիրներով մտահոգված մտերիմներին գեթ որոշ ժամանակով նյութապես ապահովելու իրեն: Ու թեև նրանք տխրեցին այդ կապակցությամբ, քանի որ իրենց այդքան մեծ ջանքերն ապարդյուն անցան, պտուղ չտվեցին, սակայն նաև մխիթարվեցին նրանով, որ «գիրքը շատ լավ ընդունելություն գտավ հասարակության մեջ» (ՄԹ, 124):

«Մի խոսքով,- գրում է Մարիամ Թումանյանը,- ամեն կողմից շնորհակալական նամակներ էի ստանում և բերանացի գովասանքներ էի լսում: Մի հայտնի ինժեներ (ըստ ամենայնի՝ Հովհաննես Քաջազնունին-Ս.Հ.) Բաքվից գրել էր ինձ. «Ափսո՛ս, որ չափազանց խիստ գտնվելով՝ շատ գեղեցիկ բաներ բաց եք թողել, երևի այդ հեղինակի համեստությունն է...Պարզ բան է, որ ինձ շատ էին մխիթարում այդ գովասանքները, ու ես մոռացության էի տվել իմ անցած չարչարանքները» (ՄԹ, 124-125):

Իշխանուհին, իհարկե, չափազանցնում է՝ ասելով. թե «այդքան մեծ ջանքերը ապարդյուն անցան, պտուղ չտվեցին»: Թումանյանը ստացավ ոչ միայն 850 ռ. ավելի քան 5000 ռուբլուց. նա շահեց շատ ավելին, անցկացրեց իր կյանքի

ամենագեղեցիկ ու «բերքառատ» աշունը Աբասթումանում, որոշ չափով վերականգնեց առողջությունը, ունեցավ ստեղծագործական վիթխարի վերելք: Իշխանուհու ջանքերը ոչ միայն ապարդյուն ու անպտուղ չանցան, այլև ապահովեցին գրական-ստեղծագործական նոր ձեռքբերումներ, մնայուն արժեքներ ոչ միայն բանաստեղծի, այլև հայ գրականության պատմության համար:

Իշխանուհու զավակների տնային ուսուցիչը

Թումանյանի մեկենասները հաճախ են փորձել նրա համար եկամուտի մշտական աղբյուր գտնել: Օրինակ, Ֆիլիպը դեռևս 1891 թ. դեկտեմբերի 15-ին առաջարկել էր նրան հաշվապահությամբ զբաղվել, սակայն բանաստեղծը մերժել էր[110]: Մարիամ Թումանյանն առաջարկում է պոետին ստանձնել տնային ուսուցչի պաշտոնն իր երեք երեխաների համար: Թումանովների ընտանիքում խոսակցական լեզուն եղել է վրացերենը, և իշխանուհին, թեև դժվարությամբ, բայց կարողացել է զավակներին հայերեն սովորեցնել: Բանաստեղծին արված իր առաջարկը նա բացատրում է հետևյալ կերպ. «Ինքս ազատ փող չունեի, իսկ ես երբեք չէի դիմում ամուսնուս իմ անձնական ծախսերը բավարարելու համար» (ՄԹ, 105): Այս աշխատանքից արդեն Թումանյանը չի հրաժարվում, և դա հասկանալի է, մանկավարժությունը, տնային ուսուցչի պարտականությունները, որոնք թեև այնքան էլ սրտովը չէին, բայց ի տարբերություն հաշվապահության, շատ ավելի հոգեհարազատ ու ընդունելի էին նրա համար: Սակայն այդ դասերն ընդամենը երեք-չորս ամսից դադարեցվում են, որովհետև, ըստ իշխանուհու, աշակերտները չէին առաջադիմում: Թումանյանն անկանոն էր հաճախում դասերին, հաճախ ուշանում էր, իսկ երբեմն նույնիսկ բաց էր թողնում դրանք: «Աղջիկս մինչև հիմա հիշում է,- պատմում է իշխանուհին,- ինչպես Թումանյանը բաց էր անում

110 Պահպանվել է այդ ամսաթվով մի երկտող՝ ուղղված գրասենյակի հաշվապահ Հակոբ Անագյանին, որով, ըստ նախնական պայմանավորվածության, Ֆիլիպը խնդրում էր գրաբերին՝ այսինքն՝ Թումանյանին, սովորեցնել կրկնակի հաշվապահություն: Սակայն այդ միջնորդագիր-երկտողն այդպես էլ չի հասել Անագյանին, այն մնացել է բանաստեղծի ծոցատետրում (ՈւՀ, 5, 168): Հաշվապահ դառնալու հեռանկարը բնականաբար չէր կարող հրապուրել Թումանյանին, թեև այն հանգամանքը, որ նա, այնուամենայնիվ, պահպանել է երկտողը, ապացուցում է, որ նրա նյութական վիճակը բավական ծանր էր, և այնքան էլ հեշտ չէր այդ մտքից հրաժարվելը:

Աղայանի «Մայրենի լեզուն» և ստիպում էր նրան կարդալ «Դեկտեմբերին ձյուն է գալիս» և այլն: Եթե պատահում էր, որ իսկապես ձյուն էր գալիս, նա ուրախ-ուրախ ցույց էր տալիս պատուհանից և ասում էր. «Ահա, տեսնու՞մ եք, հիմա դեկտեմբեր է, և ձյուն է գալիս» (ՄԹ, 110): Նկատենք, որ այն, ինչ իշխանուհին ներկայացնում է իբրև մանկավարժին ոչ բնորոշ վարքագիծ, իրականում շատ արդյունավետ է եղել և ժամանակակից մանկավարժության պահանջներին համապատասխան: Թումանյանը ոչ միայն բնազդով էր զգում, այլև խորապես գիտակցում էր, որ այն ամենը, ինչ խաղով ես սովորեցնում, շատ ավելի լավ է տպավորվում և գիտելիք դառնում: Ինչ վերաբերում է անկանոն հաճախումներին, ապա իշխանուհին իրավացի էր, սակայն բանաստեղծին, առավել ևս Թումանյանի պես մեծությանը, երբեք և ոչ մի ասպարեզում չի հաջողվել մնալ որևէ շրջանակում, տեղավորվել ինչ-որ սահմաններում: Բանաստեղծն ինքն է մի առիթով նկատել. «Մեծությունը օրենքներ ու կանոններ չի ճանաչում. իրեն ցանկապատով չի փակում, եղած ցանկապատն էլ քանդում է» (ՀՀ, 238):

Ժամանակի մանկավարժական մեթոդները Թումանյանին ձանձրալի և ոչ արդյունավետ էին թվում, և նա չէր օգտվում դրանցից. «Առհասարակ,- գրում է իշխանուհի Մարիամը,- Թումանյանը շատ բացասական կարծիք ուներ դասավանդության մասին: Նա գտնում էր, որ դասավանդումը վերջ ի վերջո բթացնում է մարդուն և միակողմանի դարձնում» (ՄԹ, 110):

Մարիամ տատիկը և Օհան պապիկը

Ստեփան և Եկատերինա Լիսիցյաններ

Երկու սրտակից բարեկամները հաճախ են միակարծիք եղել և գործել գրական ու ազգային կյանքի տարբեր ոլորտներում: Մանկական գրականության զարգացման դժվարությունները մշտապես հուզել են բանաստեղծին և իշխանուհուն, եղել են նրանց ընդհանուր մտահոգության առարկան, ինչպես արվեստի, գրականության, բարեգործության, ազգային կյանքի և հասարակական բազմաթիվ այլ խնդիրներ: Ստեփան Լիսիցյանը

և նրա կինը՝ Եկատերինա Լիսիցյանը, 1905 թ. նախաձեռնեցին **«Հասկեր»** մանկական ամսագրի հրատարակությունը: Այն լույս է տեսել մինչև 1916թ.: Հայտնի մանկավարժն ու հրատարակիչը «Հասկերի» շուրջը համախմբեցին ժամանակի նշանավոր մանկագիրներին ու արվեստագետներին՝ **Հովհաննես Թումանյանին, Ղազարոս Աղայանին, Ավետիս Ահարոնյանին, Ավետիք Իսահակյանին, Հակոբ Աղաբաբին, Հայրապետ Հայրապետյանին, Վրթ. Փափազյանին, Աթաբեկ Խնկոյանին, Գևորգ Մեսյանին, Շիրվանզադեին, Հովհաննես Հովհաննիսյանին** և մի շարք երիտասարդ խոստումնալից բանաստեղծների: Ամսագրի նյութերը բարձր ճաշակով նկարազարդում էին ժամանակի նշանավոր նկարիչները՝ **Վարդգես Սուրենյանցը, Փանոս Թերլեմեզյանը, Գևորգ Բաշինջաղյանը, Եղիշե Թադևոսյանը, Վրթանես Ախիկյանը, Ռոտտերը, Գարեգին Երիցյանը, Շմերլինգը:**

«Հասկերի» նշանակությունն այնքան մեծ է եղել, որ նրա փակումից տասնամյակներ անց դեռ տոնվում էր ամսագրի հոբելյանը: Ամսագրի 80-ամյակին անվանի մանկագիր Խաժակ Գյուլնազարյանը ընդգծում էր ամսագրի վիթխարի դերը հայ մանկական գրականության զարգացման գործում. «Մանկական գրականությամբ հարուստ հայ ժողովուրդը մանկական ամսագրեր շատ է ունեցել, բայց նրանցից և ոչ մեկին չէր վիճակված անել այն, ինչ կատարեց «Հասկերը»[111]»: Ու թեև **«Հասկերի» ոգին ու սյունը դարձավ Հ. Թումանյանը, սակայն իշխանուհին նույնպես իր մեծ նշանակությունն ունեցավ ժամանակի լավագույն մանկական ամսագրի համբավի տարածման գործում և նպաստեց հայ մանկագրության պատմության մեջ բանաստեղծի խաղացած վիթխարի դերին:**

Հենց սկզբից Թումանյանը «Հասկերի» հիմնական աշխատակիցն էր, տարեցտարի ամսագրի հետ նրա կապերն ավելի էին սերտանում: 1908 թ. հունվարի 22-ին ընկերոջը՝ Ֆիլիպին, տեղեկացնում է. «Էս տարի կապվել եմ «Հասկերի» հետ, որ ամեն ամիս բան տամ ու մոտիկ խառնվեմ գործին: Ռուստեմն ու Մարիա Մարկովնան էլ մոտեցել են «Հասկերին» (10, 38): Թումանյանը նկատի ուներ իշխանուհի Մարիամ Թումանյանի կողմից ամսագրի՝ «մի ամբողջ բաժնի» ղեկավարությունը՝ «Մարիամ տատիկի» անվան տակ: Երբ Լիսիցյանը հրավիրում է իշխանուհուն՝ ամսագրին աշխատակցելու, Մարիամ Թումանյանը տալիս է իր համաձայնությունը՝ առաջարկելով երեխաների և խմբա-

111 **Ա.Գևորգյան**, «Հասկերի» 80-ամյակը», «Երեկոյան Երևան», Եր., 1985, դեկտեմբերի 21, էջ 4:

գրության գրագրությունն արտացոլող բաժին բացել: Նա նկատի ուներ իր մանկության տարիներին Փարիզից ստացած «St. Nicolas» ֆրանսերեն շաբաթաթերթի օրինակը: Լիսիցյանը սիրով համաձայնում է. «Հենց առաջին համարից համակրություն գտավ այդ բաժինը երեխաների մեջ,- պատմում է Մարիամ Թումանյանը: - Ես հայտարարեցի երեխաներին, որ պառավ տատիկ եմ, խոսում եմ նրանց հետ իրանց հասկանալի լեզվով և իրանց հետաքրքրող նյութերի մասին: Փոքրիկ ընթերցողները ինձ նամակներ էին գրում, զանազան հարցեր էին տալիս, իսկ ես նրանց պատասխանում էի թերթի միջոցով» (ՄԹ, 127):

Իրոք, ամսագրի **«Մարիամ տատիկի տոպրակից»** խորագրով բաժինը աշխույժ կապ էր հաստատել ամսագրի պատանի ընթերցողների հետ: Երեխաներից ոմանք այնքան են կապվում խմբագրության հետ, որ սկսում են անձամբ թղթակցել ամսագրին՝ դառնալով նրա աշխատակիցները: Նրանցից մեկն էր Կարսից «Գիժ Աղասին»՝ միաժամանակ «Աղբյուրին» թղթակցող Գրիգոր Էփրիկյանը: Կարճ ընթացքում «թղթակից» երեխաների նամակներն այնքան են շատանում, որ «Մարիամ տատիկը» ստիպված ներողություն է խնդրում երեխաներից, որ, «պառավ լինելով», չի կարող բոլորին առանձին-առանձին պատասխանել: Երեխաները հաճախ ցանկանում էին անձամբ ծանոթանալ «Մարիամ տատիկի հետ», սակայն իշխանուհին միշտ խուսափում էր ու մերժում, իբրև թե շատ է պառավ, հիվանդ է և անկողնու մեջ է: Տարիներ անց երիտասարդ դարձած այդ փոքրիկներից մեկին իշխանուհու բարեկամներից մեկը ծանոթացնում է Մ. Թումանյանին՝ ասելով. «Ահա քեզ և «Մարիամ տատիկը», որին դու մանկությանդ օրերին այնքան փափագում էիր տեսնել: Զարմացած երիտասարդը հիասթափվում է՝ զգալով, որ իրենից խլեցին մանկության հեքիաթը, և ասում է. «Դուք քանդեցիք իմ երևակայած պատկերը... այժմ ես կորցրեցի իմ մանկության հիշողություններից մեկը» (ՄԹ, 129):

Թիֆլիսի ռուսալեզու թերթերից մեկը խրախուսում է «Մարիամ տատիկի տոպրակից» բաժնին երեխաների մասնակցությունը, նրանց նամակագրությունը խմբագրության հետ և «Հասկերին» առաջարկում է ընդլայնել երեխաների գրած պատմվածքների և հոդվածների բաժինը (ՄԹ, 127): 1910 թ., երբ իշխանուհին իր հիվանդ որդու՝ Միքայելի հետ ստիպված մեկնում է Շվեյցարիա, դադարում է «Հասկերին» աշխատակցելուց, խնդրում է Թումանյանին շարունակել այդ բաժինը «Օվաննես պապիկի» անվան տակ:

Սակայն «Հորիզոնի» խմբագրությամբ զբաղված՝ Թումանյանը չէր կարող արձագանքել իշխանուհու ցանկությանը: Նրա մերժմանը Մարիամ Թումանյանը պատասխանում է Լեյզենից 1910 թ. սեպտեմբերի 6-ին. «Գրեցեք նաև «Հասկերի» մասին... Հետաքրքիր է, թե ով է ինձ փոխարինել և ինչ-

պես: Ախ, ափսոս, ինչպես լավ բաներ կարելի էր անել Մարիամ տատիկի և Օհան պապիկի հետ միասին» (ՈւՀ 5, 346):

Նույն առաջարկով Թումանյանին դիմել էր նաև Ստեփան Լիսիցյանը: Այդ մասին վկայում է Վիեննայից Շվեյցարիա՝ իշխանուհուն ուղղված 1911 թ. հունվարի 11-30-ի նամակը, որտեղ ասվում էր. «...Ես էլ հեռացա «Հասկերից» և այս րոպեիս իմ առանձնության մեջ, երբ մտքիս մեջ մեկ-մեկ պատկերացնում եմ այս հինգամյակը, հույսերի, սպասելիքների ամբողջ ձիգ շարքը, մի առանձին հոգեկան մխիթարանքով հիշում եմ Ձեզ, որ ամսագրի դառը րոպեին այդպիսի անկեղծ քաջալերությամբ մոտեցանք խմբագրությանը: Մանավանդ այժմ, երբ «Հասկերի» թիվ 11-12-ի մեջ չեմ տեսնում «Մարիամ տատիկի տոպրակից» և «Պատասխանների» բաժինները, կարծես թերթի համ ու հոտից մի ահագին բան է պակասել... բայց խմբագրությունը ամեն կերպ աշխատում էր այդ բաժինները չթուլացնել՝ Ձեր հոգին, Ձեր ուղղությունը, խոսելու Ձեր եղանակը մեջը պահելով, և ես գրեցի Հովհաննեսին, որ կցանկանայի այդ բաժինները շարունակվեին նույն հոգվով, և եթե որևէ պատճառով իր համար անհարմար է գտնում «Մարիամ տատիկի» անունից խոսել կամ ոճը ուզենա փոխել, թող գրի «Օհան պապի» կողմից»:[112] Իհարկե, եթե Թումանյանը շարունակեր իշխանուհու ղեկավարած բաժնի աշխատանքները, անշուշտ, կընտրեր «Պապից» ստորագրությունը, որովհետև դեռ 1908 թ., երբ «Հասկերում» առաջին անգամ տպագրվեց «Չարի վերջը», այն ուներ «Պապի առակներից» ենթավերնագիրը[113]:

Այսպես 1908-1916 թթ. «Հասկերի» խմբագրատունը որոշակի ընդմիջումներով դարձավ այն գրական միջավայրը, որտեղ հաճախադեպ էին Թումանյանի և իշխանուհու հանդիպումները:

«Մանկական գրադարան»

Մանուկների շրջանում Հովհ.Թումանյանի համբավն ու հռչակը մեծացրեց և նրա առավել մեծ ճանաչմանը նպաստեց իշխանուհի Մարիամ Թումանյանը: Նա «Մանկական գրադարանը» մատենաշարով 1908 թ. իր իսկ հիմնադրած «Իշխանուհի Մարիամ Թումանյան և ընկերություն» հրատարակչության միջոցով, այս-

112 ԳԱԹ, ՄԹՖ, թիվ 352:

113 Տես «Հասկեր», 1908, թիվ 1, էջ 3-9:



ինքն՝ իր միջոցներով հրատարակեց Թումանյանի 15 պատկերազարդ գրքույկները՝ Ռոտտերի, Գ.Երիցյանի գեղեցիկ նկարազարդումներով: Այդ միտքը իշխանուհին հղացավ, երբ «Հասկերի» խմբագրությունը «Մանկական գրադարան» ընդհանուր մատենաշարով լույս էր ընծայում մանկական ստեղծագործություններ առանձին գրքերով, որոնց «Հրատարակութիւնը խնամքով է, տիպը՝ մաքուր, թուղթը՝ լաւ»[114]:

Մինչև իշխանուհու նախաձեռնությունը՝ ներկայացնել Թումանյանին մանուկ ընթերցողին առանձին գրքերով, գրողի մանկական ստեղծագործություններն արդեն մի քանի անգամ լույս էին տեսել նրա տաղանդի այլ երկրպագուների՝ Փիլ. Վարդազարյանի, Ստ. Լիսիցյանի և Գ. Գալստյանի հովանավորությամբ («Լոռեցի Սաքոն», (1896), «Սասունցի Դավրթը» (1904 թ. «Հայ բանաստեղծներ» մատենաշարով), «Գիքորը», «Կաքավի երգը», «Շունն ու կատուն» և այլն): 1907 թվականից արդեն Հովի. Թումանյանի որոշ հեքիաթներ և արձակ այլ երկեր հրատարակվեցին առանձին գրքերով իշխանուհու նախաձեռնությամբ: Միայն 1909 թ. մի քանի ամիսների ընթացքում Մարիամ Թումանյանի հովանավորությամբ «Մանկական գրադարան» մատենաշարով լույս տեսան **«Աղվեսը»**, **«Անբախտ վաճառականները»**, **«Գառնիկ ախպերը»**, **«Շունն ու կատուն»**, **«Անհաղթ աքլորը»**, **«Ծիտը»**, **«Ուլիկը»**, հաջորդ տարիներում՝ **«Խոսող ձուկը»**, **«Տերն ու ծառան»**: «Հասկեր» ամսագիրը 1911 թ. հրատարակեց **«Քեֆ անողին քեֆ չի պակսիլ»**, իսկ Մ. Թումանյանը 1912-ին՝ **«Քաջ Նազարը»** հեքիաթները: Այնուհետև ազգային քաղաքական անբարենպաստ պայմաններն այլևս հնարավորություն չընձեռեցին պոետի մանկական երկերի հրատարակության համար: Թերևս բացառություն են կազմում «Փարվանայի» և «Շունն ու կատվի» ռուսերեն հրատարակությունները Ս.Քափանակովի և Գ.Երիցյանի թարգմանությամբ (Թիֆլիս 1913 թ.): «Լեզուն կտրած ծիտիկը»՝ մատենաշարի 14-րդ գրքույկը, լույս է տեսնում ավելի շուտ, քան 12-ն ու 13-րդը[115]: Լսելով, որ իշխանուհուն դուր չի եկել գրքույկը, Թումանյանը 1911 թ. օգոստոսի 6-ին գրում է. «Սիրելի՛ Մարիա Մարկովնա, Մի՞թե ճշմարիտ «Լեզուն կտրած ծիտիկը» չեք

114 «Հասկեր», Թիֆլիս, 1908, թիվ 4, էջ 439:

115 Մատենաշարի 13-րդ գրքույկը ճապոնական «Փոքրիկ ձկնորսը» (Ռոտտերի նկարազարդմամբ) հեքիաթի փոխադրությունն էր, իսկ 12-րդը՝ «Քաջ Նազարն» էր:

հավանել: Դա մանկական ամենալավ հեքիաթներից մինն է, իսկ նկարները, կարծեմ, իրենց նմանը դեռ չեն ունեցել մանկական գրականության մեջ:

Շուտով պատրաստ կլինի հետևյալը՝ «Փոքրիկ ձկնորսը»: Ուրիշ բան է, որ թանկ է նստում» (10, 123): Թե՛ Թումանյանը և թե՛ նրա հրատարակչուհին չէին կամենում, որ գրքույկները թանկ լինեին, թեև նախանձախնդիր էին պատկերազարդ հրատարակությունների բարձրորակ տպագրությանը: Օգոստոսի 8-ին բանաստեղծին ուղղված իշխանուհու պատասխանում կարդում ենք. «Բայց նկարները չափազանց նուրբ են և գեղեցիկ: Գինը շատ թանկ է, և այդ բանը ինձ անախորժ է... Ես կուզենայի, որ հրատարակությունները լինեն մի ձևի, որպեսզի գրադարան կազմվի»[116]:

Մանկական երկերը տպագրվում էին այն օրերի համար բավական մեծ տպաքանակով, օրինակ «Ծիտը» տպագրվել է 2400 տպաքանակով: «ՄԳ» մատենաշարով հրատարակվող Թումանյանի ստեղծագործությունների մասին 1908 թ. դեկտեմբերի 31-ին տպագրված հոդվածում ասվում էր. «...Նոր տարվա առթիվ, կարծում ենք, այս գեղեցիկ գրքույկները ամենանպատակահարմար նվերները կարող են լինել հայ մանուկների համար»[117]: Իսկ «Մշակի» խմբագրությունը խորհուրդ էր տալիս. «Այլ և այլ անմիտ խաղալիքների և ընծաների տեղ՝ պարգևատրել մանուկներին այդպիսի շքեղ ու ընտիր մանկական գրքույկներով՝ մոտեցող Նոր տարվա առթիվ»[118]:

Հեքիաթների հրատարակությունը սկսելուց առաջ իշխանուհին, զգուշանալով բոլոր գրքերի գրեթե ողջ տպաքանակը նվիրելու՝ Թումանյանի սովորությունից, նախօրոք պարտավորեցնում է նրան 50 օրինակից ավելին չպահանջել. «...Ստորագրություն վերցրի նրանից հետևյալ բովանդակությամբ. «Համաձայն եմ հեղինակին հատկացրած 50-ին և ոչ մի բանի մեջ չեմ խառնվելու. Հ.Թ., 1908 1.11.»»: «Ես հույս ունեի,- շարունակում է իշխանուհին,- որ այդ ստորագրությունից հետո Թումանյանը կզսպի իրան, և ես հնարավորություն կունենամ նրա համար մի պատկառելի գումար հավաքել, բայց նա շարունակեց ըստ իր սովորության ձրի բաժանել գրքույկները, և իմ բոլոր ջանքերը ապարդյուն անցան: Տեսնելով, որ Թումանյանը անուղղելի է, ինձ մնում էր միայն այլևս չվրդովվել ու մատների արանքով նայել այդ թուլությանը» (ՄԹ, 126):

Իշխանուհու հրատարակած մատենաշարը Հակոբ Անագյանին ուղղված 1910 թ. օգոստոսի նամակում Հովհ. Թումանյանը բնորոշում է իբրև «բազմաչարչար «Մանկական գրադարան»՝ նկատի ունենալով հրատարակության

116 ԳԱԹ, ԹՖ, թիվ 676:

117 «Գործ», 1908, թիվ 292:

118 «Մշակ», 1908, թիվ 290:

ձգձգվելը իր բանտարկության պատճառով (10, 106): Երբ իշխանուհին բացակայում էր քաղաքից, Փիլ. Վարդազարյանն էր ստանձնում հրատարակչի իրավունքները: Այդպես էր 1910 թ. սեպտեմբերին, երբ Մարիամ Թումանյանը Լեյզենում էր: Նույն թվականի դեկտեմբերի 23-ին «Հորիզոնում» զետեղվում է հայտարարություն, ըստ որի՝ «ՄԳ» մատենաշարով շուտով լույս կտեսնեն Թումանյանի «ՄԳ» թիվ 12, 13, 14 գրքերը՝ «Քաջ Նազարը», «Փոքրիկ ձկնորսը», «Լեզուն կտրած ծիտիկը» («ՄԳ», թիվ 14) Ռոտտերի նկարազարդումներով, և առաջարկում են «դիմել գրավաճառներին»:[119] Մինչդեռ հեքիաթի հրատարակությունը ձգձգվում է 1911 թ. հունվարին բանաստեղծի բանտարկության պատճառով: 1911 թ. ամռանը միայն հունիսի վերջին լույս են տեսնում 1910 թ. դեկտեմբերից տպագրության պատրաստ «**Փոքրիկ ձկնորսը**», «**Լեզուն կտրած ծիտիկը**» («ՄԳ», թիվ 14) գրքույկները[120]:

Հովհ. Թումանյանի հեքիաթների ու պատմվածքների մանկական մատենաշարը մեծ հիացմունքով ու սիրով ընդունվեց ոչ միայն մանուկների կողմից: Ամեն կողմից Հրատարակչական ընկերության հասցեին հնչեցին դրվատանքի խոսքեր գրքերի գեղարվեստական բարձրաճաշակ ձևավորման համար: Հիրավի, հենց իշխանուհու ջանքերով հայ գրական կյանքում հիմք դրվեց աննախադեպ և բացառիկ գեղարվեստական բարձրաճաշակ հրատարակությունների: «Նոր դպրոցում» լույս տեսավ Հրատարակչական ընկերության աշխատակից, մանկավարժ **Հովհ. Տեր-Միրաքյանի**[121] գրախոսականը, որը վերաբերում էր «ՄԳ» մատենաշարի՝ մի քանի ամսում լույս տեսած Թումանյանի 7 հեքիաթների առանձին հրատարակությանը: Գրախոսը, ընդգծելով բանաստեղծի «պատկերագրքերի» կարևորությունը հայ մանուկների համար, գրում է. «Պատկերները գրքերի թևերն են, սրանց թռցնելու, տարածելու ամենալաւ արտաքին միջոցը»[122], Թումանյանն այդ գրախոսականի մասին Թիֆլիսից Աբասթուման հայտնում է այնտեղ հանգստացող Մարիամ Թումանյանին և 1909 թ. հուլիսին նրան հաղորդում է իր տպավորությունները (10, 77):

119 «Հորիզոն», 1910, թիվ 286, դեկտեմբերի 22:

120 1908 թ. գրած «**Քաջ Նազարի**» ձեռագրերը անհետացել էին 1911 թ. հունվարի 19-ի խուզարկության ժամանակ, երբ Հովհ. Թումանյանի տնից ժանդարմական վարչություն տարվեցին պարկով ձեռագրեր: Միայն բանաստեղծի՝ բանտից դուրս գալուց հետո «Քաջ Նազարի» նոր շարադրանքը տպագրվեց Մարիամ Թումանյանի հրատարակությամբ՝ առանձին գրքով (1908-1909):

121 **Հովհաննես Տեր-Միրաքյան Հարությունի** - 06.01.1869 Ալեքսանդրապոլ - 24.09. 1938 Երևան - մանկավարժ լրագրող: Աշխատակցել է «Արշալույս», «Ժամանակ, «Խարիսխ», «Կովկասի առավոտ», «Հորիզոն», «Մշակ», «Մուրճ», «Նոր աշխատավոր», «Նոր դար», «Նոր դպրոց», «Վտակ», «Աղբյուր» պարբերականներին:

122 «Նոր դպրոց» ամսագիր՝ Թիֆլիս՝ 1909՝ թիվ 6-7՝ էջ 114:

Հ.Տեր-Միրաքյանը Թումանյանի «Շունն ու կատուն» («ՄԳ», թիվ 1), «Աղվեսը», «Անհաղթ աքլորը» («ՄԳ», թիվ 4), «Ծիտը» («ՄԳ», թիվ 5), «Ուլիկը» («ՄԳ», թիվ 6), «Գառնիկ ախպերը» և «Անբախտ վաճառականները» գունատիպ, պատկերազարդ գրքույկների երևան գալը խոշոր իրադարձություն և երևույթ էր համարում թե՛ հայ մանկագրության ասպարեզում, թե՛ հայ հրատարակչական և գունավոր տպագրության ոլորտում: Ավելին, համեմատելով ոչ հայկական տարբեր մանկական հրատարակությունների հետ՝ առավելությունը տալիս էր Թումանյանի գրքույկներին՝ դրանք դիտելով գրական-մշակութային կյանքի այնպիսի նվաճում, որը կբավարարեր ցանկացած ընթերցողի ճաշակին: «Մինչև հիմա,- գրում է Հովհաննես Տեր-Միրաքյանը,- մեր ընտանիքներում հազարավոր օրինակներով տարածվել են մեծ մասով թէ՛ բովանդակութեամբ և թէ՛ պատկերներով անճաշակ ռուսերէն գրքոյկներ «լուբոչնի» հրատարակութիւնից: Այժմ մեր ձեռքի տակ եղած հայերէն պատկերագրքերը ոչ միայն բարձր են այդ արտադրութիւններից, այլ և կարող են մրցել ռուսական աւելի արժանաւոր գրականութեան արտադրութիւնների հետ»:[123]

Հովհաննես Տեր-Միրաքյանը շեշտում էր գրքերի թե՛ գեղարվեստական արժանիքներն ու բովանդակությունը, թե՛ մատուցման ձևը՝ բարձրարվեստ նկարազարդումները: «Թումանյանի գրքույկները հրատարակել է իշխանուհի Մարիամ Թումանյանը, և պատկերազարդել է Գ.Երիցյանը: Ահա այսպէս՝ բանաստեղծութեան հետը միանալով **նրա վրայ գուրգուրացող, ազնիւ սիրտը** և նկարչական շնորհքը, մեր մանկական աշխարհին ընծայել են այս գեղեցիկ գրքույկները, որոնք, իբրև մանուկների կենսական պահանջ՝ պէտք է առատօրէն նուիրուին նրանց»[124]:

Ինչպես Տեր-Միրաքյանի հոդվածում («գուրգուրացող, ազնիվ սիրտ»), այնպես էլ «Հորիզոնի» 1909 թ. դեկտեմբերի համարներից մեկում «Տերն ու ծառայի» մասին գրախոսականում բարձր էր գնահատվում իշխանուհի Մարիամ Թումանյանի նախաձեռնությունը: Անստորագիր առաջնորդողում ասվում էր. «Իշխանուհի Թումանյանը ձեռնարկել է մի շատ օգտակար գործ... ճշմարտությունն այն է, որ մանուկների մեջ սեր զարթնեցնելու համար ամենալավ ճանապարհը գրավիչ զրույցների, հեքիաթների, առասպելների պատկերազարդ գրքույկների հրատարակությունն է... Այսպիսով, հասարակական գործը, որը ձեռնարկել է իշխանուհի Թումանյանը, առերևույթ փոքր է, բայց բերում է արդյունավետ ապագայի»:[125]

123 ՅՏՄ ստորագրությամբ հեղինակը (Հովհ. Տեր-Միրաքյան) անդրադարձ էր կատարում նաև Աթաբեկ Խնկոյանի «Գյուղացին ու արջը» և Ստ. Լիսիցյանի «Քաջ ճամփորդները» գրքերին: Տես «Նոր դպրոց» ամսագիր, Թիֆլիս, 1909, թիվ 6-7, էջ 115:

124 «Նոր դպրոց» ամսագիր, Թիֆլիս, 1909, թիվ 6-7:

125 Նույն տեղում:

«Խոսող ձուկը» և «Տերն ու ծառան» լույս էին տեսել գրեթե միաժամանակ՝ 1909 թ. դեկտեմբերի վերջին տասնօրյակում: 15 կոպեկ արժողությամբ այդ գրքույկները հռչակվեցին «ընթերցանության համար ցանկալի»:

Իշխանուհին «Մանկական գրադարանի» յուրաքանչյուր հրատարակության մասին գրախոսականները հավաքում և խնամքով պահում էր. նրանցում կային գովեստի բազմաթիվ խոսքեր նաև իշխանուհու հասցեին: Հրատարակչուհու հավաքածուից պարզվում է, որ Թիֆլիսի ռուսալեզու թերթերն ավելի լայնորեն են արձագանքել Թումանյանի գրքույկների հրատարակությանը, քան հայկական մամուլը: Այդ մասին հավաստիացում կա Հովի. Թումանյանի «Դժբախտ աստղի տակ ծնված մարդը» անավարտ, սևագիր հոդվածում. «Մ. Թումանյանը հավաքել է իր հրատարակած գրքերի գրախոսությունները, ցույց տվեց մի օր, և բանից դուրս եկավ, գիտեք, [ով] հայ քննադատ, գրքույկների մասին խոսել ու գովել էին գրեթե միայն ռուս թերթերը, իսկ հայ թերթերը՝ հազարից մի անգամ...» (6, 479):

Նամակագրությունը

Թումանյանի և իշխանուհու նամակագրությունը հայ գրականության և մշակույթի պատմության թերևս ամենագեղեցիկ ու մնայուն էջերից են: Նրանցում պահպանվել են ոչ միայն ժամանակի ազգային-հոգևոր կյանքի նշանակալից իրադարձությունների արձագանքները, այլև մեծ բանաստեղծի կենսաբաղձ ու կենսատենչ բնավորության անկեղծ դրսևորումները, երկու խոշոր հայերի՝ մեծ բանաստեղծի և մեծ հայուհու գաղտնածածուկ, թաքթաքուն փոխադարձ սիրո խոստովանությունները: Այդ նամականին երկու մեծ հայերի բացառիկ սիրո պատմություն է:

Թումանյանի և իշխանուհու միջև ձևավորված բարեկամությունն աստիճանաբար վերաճում է ավելի բարձր մի զգացումի՝ երկրային, միաժամանակ վերերկրային մի սիրո: Պոետի համար երբեմն «մտերմական բոպեներում» Մարիամ Մարկովնան դառնում է **Մարմար**: Դիմելու այդ ձևը բավական խոսուն ու դիպուկ էր, քանի որ նրանում մի կողմից արտահայտվել էր իշխանուհու անուն-հայրանվան (Մարիամ Մարկոսի) առաջին վանկերից կազմած հապավումը, իսկ մյուս կողմից բնորոշվում էր նրա դեմքի մարմարյա սպիտակությունը:

Հասարակության մեջ զբաղեցրած իր դիրքի շնորհիվ իշխանուհին ապրում էր բարձրաշխարհիկ կյանքով, ելումուտ ուներ և անձամբ առնչվել էր Ռուսաստանի կայսրուհի Մարիա Ֆեոդորովնայի, իսկ ավելի ուշ՝ նաև Նի-

կոլայ Երկրորդի հետ: Քսանմեկ տարեկանից նա զբաղվում էր հասարակական ակտիվ գործունեությամբ, եղել էր «Ազգագրական հանդեսի» և այլ հրատարակչական ընկերությունների վարչության անդամ: Հասարակական գործունեությունն էր իշխանուհուն ինքնահաստատվելու հնարավորություն և գործելու ուժ տալիս: Նա լիարժեք ապրում և իրեն երջանիկ էր զգում միայն գործի մեջ, իսկ ազատ ժամերին «հոգնում էր» և «հաճախ նույնիսկ ուշաթափվում» (ՄԹ, 6):

Թումանյանին ուղղված նամակներում իշխանուհին մշտապես պատմում էր իր սկիզբ ու վերջ չունեցող նախաձեռնությունների, բարեգործությունների մասին: 1902 թ. սեպտեմբերի 25-ին նա գրում է. «Թատրոնը պետք է պահել ժողովրդի համար... Եթե ինձ հաջողվի լավ խումբ կազմել սիրողներից, ես ինձ երջանիկ կհամարեմ, որովհետև կարող կլինեմ թատրոնի միջոցով զարգացնել ժողովրդի թե՛ միտքը և թե՛ ճաշակը» (ՈւՀ 5, 288):

Մեկ այլ նամակում իշխանուհին հավաստիացնում է. «Ամառը վերջանում է, և ես չափազանց ուրախ եմ: Ձեռքերս քոր են գալիս, ինչպես ասում են՝ գործ և գործ եմ ուզում... Առանց գործի՝ կյանքը կյանք չէ» [126]:

Թումանյանը լավ էր ճանաչում իր մտերիմ բարեկամուհուն, սակայն իշխանուհին առիթը բաց չէր թողնում բանաստեղծի առջև իր սիրտը բացելու, իր զգացմունքները, իր մոտեցումները կյանքի բազմաբնույթ հարցերի նկատմամբ արտահայտելու համար: Իշխանուհու ինքնաբնութագրական խոստովանությունները, որոնցում նա փորձում է ինքնավերլուծության միջոցով բացահայտել իր խառնվածքի և բնավորության առանձնահատկությունները, ամենից շատ պահպանվել են նրա՝ Թումանյանին հասցեագրած նամակներում: 1901 թ. օգոստոսի 13-ին իշխանուհին գրում է. «Հիանալի գիշեր է. լուսնյակը փայլում է երկնքում, իսկ այստեղից ներքև այնպիսի լռություն է տիրում... Ես մենակ նստած եմ պատշգամբում և երազում եմ: Որքան ծրագիրներ, որքան ցանկություններ: Կարող եմ, արդյոք, այդ բոլորը գլուխ բերել և կբավականանամ դրանով, թե՛ հետզհետե նոր մտքեր կհղանան գլխիս մեջ. նոր ցանկություններ կմտնեն սիրտս. ինձ մեծ ուրախություն է պատճառում, երբ ես մրցում եմ խոչընդոտների հետ, որ կտրում եմ ճանապարհս:

Օ՛, ես ոչինչ չեմ կարող անել կիսաչափ, եթե մի բան սկսում եմ էլ, ո՛չ հանգստություն ունեմ, ո՛չ քուն... Որքան դժվարություններ են պատահում, այնքան ավելի եմ ցանկանում մրցել և հաղթել: Ես չեմ հարգում այն մարդուն, որ հենց առաջին անհաջողությունից հուսահատվում է և ձեռքերը ծալում»[127]:

126 ԳԱԹ, ԹՖ, թիվ 1252:
127 ԳԱԹ, ԹՖ, թիվ 1247:

Հայ կանանց միջավայրում իշխանուհին սեր ու համակրանք չէր վայելում: Նրան անվերջ նախանձում ու բամբասում էին, և նա նախընտրում էր ընկերություն անել տղամարդկանց հետ, հատկապես՝ գրողների ու արվեստագետների հետ: Չափազանց լայն էր իշխանուհու հետաքրքրությունների և գործունեության շրջանակը: Գրեթե ոչ մի մշակութային բարեգործական նախաձեռնություն Թիֆլիսի հասարակական կյանքում առանց իշխանուհու մասնակցության և նախաձեռնության տեղի չէր ունենում: Նա հսկայական հրատարակչական գործունեություն էր ծավալել: Գ.Սունդուկյանի ու նաև նրա ջանքերով էր 1902 թ. ստեղծվել Թիֆլիսի Հայոց դրամատիկական ընկերությունը: Դեռևս 1901 թ. ամռանը նա կազմակերպել էր «Թատրոնական ընկերությունը», որը մտադիր էր առաջիկա աշնանից մշտական թատերական հայկական խումբ պահել Թիֆլիսում[128]:

Իշխանուհին Թիֆլիսի հայ և վրացի ունևոր ընտանիքների անդամներից կազմել էր սիրողական թատերախմբեր և նրանց մասնակցությամբ ներկայացումներ էր կազմակերպել բարեգործական նպատակներով: Այդ միջոցառումներով, ինչպես նաև մշակութային այլ ձեռնարկներով, տարբեր ոճի պարահանդեսներով նա պարզապես կենդանացրել էր Թիֆլիսի հայկական կյանքը, նոր շունչ հաղորդել նաև Հայկական ժողովարանին: Իշխանուհին է հիմնադրել նաև Հայուհյաց բարեգործական ընկերությունը և նախագահել այն (1903 - 1907 թթ.): Նա կազմակերպել է անվճար թեյարաններ ու ճաշարաններ, բացել է գորգագործական արհեստանոցներ, որբանոցներ, որտեղ սովորող երեխաները նրան «մայրիկ» են անվանել՝ այնպես, ինչպես Էջմիածնի որբերը բանաստեղծին «հայրիկ» էին ասում: Եվ իրոք, միայն մայրիկը կարող էր որբերի համար դաշնամուր գնել, անձամբ երաժշտություն ու կարուձև սովորեցնել: Թումանյանի նման, իշխանուհին էլ մտահոգվել է երեխաների համար խաղեր կազմակերպելով, հրատարակել է մանկական լոտոներ, «Պատկերազարդ այբուբեն»՝ փայտե խորանարդիկներով: Օգնության ձեռք է մեկնել Չիսար գյուղի վնասված հրեաներին, գործադուլավորների, չքավոր ուսանողների, հիվանդների: Իշխանուհու միջոցներով է Աբասթումանում Արազինդո սարի վրա կառուցվել առողջարան, որը բացվել է 1911 թ. հոկտեմբերին: Այդ նա է նախագահել Թիֆլիսի «Թոքախտի դեմ մաքառող կովկասյան ընկերությունը», նա է իբրև դերասանուհի հանդես եկել իր կազմակերպած սիրողական թատերախմբերում, պարել ու երգել բեմադրություններում, հրապարակային զեկուցումներ կարդացել մշակութային հարցերի շուրջ, գրել «Բողոքը» ծրագրային ակնարկը, մասնակցել կանանց գենդերային շարժմանը, աշխատակցել տասնյակ պարբերականների՝ «Աղբ-

128 «Մշակ», 1901, թիվ 117:

յուր», «Տարազ», «Հասկեր», «Վտակ», «Ժողովրդի ձայն», «Մշակ», «Հորիզոն», «Тифлисский листок», «Закавказское обозрение», «Новое обозрение» և այլն:

Իշխանուհին իր հոդվածների քաղաքական բովանդակությամբ բաց նամակների համար օգտագործել է «Արմյանկա», «Իմենթո» ծածկանունները:

Իր ժամանակի ամենաառաջադեմ հայուհին իր հմայիչ արտաքինով և նույնքան հմայիչ ներաշխարհով ու էությամբ, բնականաբար, չէր կարող անտարբեր թողնել բանաստեղծին, մանավանդ որ նրանք մտերիմ հոգիներ էին դեռևս 1892 թ. ծանոթության առաջին օրերից:

Իշխանուհի Մարիամը արտաքին աշխարհի համար շատ երջանիկ ու նախանձելի ճակատագրի տեր կին էր: Եվ իրոք, նա ապրում էր բարեկեցիկ, ապահով, հետաքրքիր, լիարյուն, բարձրաշխարհիկ կյանքով: Նա սիրված ու հարգված էր և՛ ընտանիքում, և՛ թե հասարակական միջավայրում: Սակայն դա միայն նրա կյանքի ու ճակատագրի արտաքին փայլն էր: Մինչդեռ գոյություն ուներ նաև այլ, ոչ տեսանելի, մարդկանց աչքից ամենայն խնամքով թաքցվող իրականություն:

Վեց երեխաների մայրը իբրև կին ամուսնական կյանքում երջանիկ չէր: Նրան ամուսնացրել էին 16 տարեկան հասակում Գ.Թումանովի հետ, երբ դեռևս Թիֆլիսի Առաջին իգական գիմնազիայի սան էր: Ամուսնու ընտանիքում «հայության ոչ մի նշույլ չկար» (ՄԹ,45): Ընդ որում, այդ ամուսնությանը հետամուտ էր եղել նախ Թումանովի մայրը, որը, Մուղնու եկեղեցում տեսնելով Մարիամին, որոշել էր ամուսնացնել որդուն: Վերջինս սկզբում՝ դեռևս առանց տեսնելու, դժգոհել էր Մարիամի՝ ղարաբաղցի, այսինքն գավառացի լինելու հանգամանքից, քանի որ իշխանական տներին վայել էր կնության վերցնել միայն քաղաքացի աղջիկների: Սակայն տեսնելուց հետո անմիջապես տվել էր իր համաձայնությունը՝ «երկու ամիս շարունակ գրպանում ման ածելով նշանի մատանին» (ՄԹ, 41): Իշխանուհու հայրը հորդորել էր աղջկան ընդունել այդ առաջարկությունը, և նա ենթարկվել էր հոր կամքին:

Ամուսինը՝ Գեորգի Թումանովը, թեև երբևէ որևէ արգելք ու սահմանափակում չէր դրել կնոջ առջև, սիրել և խորապես հարգել էր նրան, սակայն լինելով կնոջից տարիքով գրեթե կրկնակի մեծ՝ իր հանդեպ նույնպիսի սեր երբեք չէր զգացել: Ամուսնու այդպիսի առաջադեմ պահվածքը նույնպես իր դերն է խաղացել իշխանուհու ազատ, համարձակ ու անկաշկանդ գործելակերպը դրսևորելու գործում: «Ես անթիվ նամակներ էի ստանում զանազան դիմումներով, և ամուսինս երբեք չէր հետաքրքրվում իմ գրագրությամբ, և եթե ինքս չպատմեի նրան որևէ նամակի մասին, նա սովորություն չուներ հարցնելու» (ՄԹ, 196):

Եվ, անշուշտ, ամուսնու համար անընթեռնելի են մնացել իշխանուհուն հասցեագրված Թումանյանի նամակները: Դրանցից շատերն իսկական գեղարվեստական ստեղծագործություններ են: Խոսքը վերաբերում է հատկապես Աբասթումանից գրած նամակներին: 1902 թ. աշնանը, երբ պոետի սիրազմայլ զգացմունքներն ավելի ուժեղ էին Վարյա Խանդամիրյանի նկատմամբ, նա իշխանուհուն գրած նամակներում ակնարկում է արգելված սերը չճաշակելուց ծնված ափսոսանքի մասին: «Ամբողջ օրը զբոսնում եմ. թաղվում եմ անտառների խորքերում, աշնան այնքան անուշ ու տխուր լռության մեջ, լսում եմ միայն թափվող դալուկ տերևների վերջին կարճատև շշունջները և թռչունների հրաժեշտի սրտաճմլիկ ծլվլոցը, որ դեղնած ճյուղերի մեջ իզուր գարուն են որոնում ու... ծլվլում, ով գիտի՝ **ինչ ափսոսանքներ, ինչ հիշողություններ, ու արևի – վերջալույսի շողերի տակ մտածում եմ, որ վերջն էլ, մահն էլ կարող է սիրուն լինել, ինչպես աշունն այս հովիտում**» (9, 324):

Թումանյանի այս տողերը իշխանուհին անգիր էր արել և բառ առ բառ հիշել էր թե՛ այն պահին, երբ թաքուն ու միայնակ կանգնած էր բանաստեղծի աճյունի առջև, և թե՛ տարիներ հետո, երբ շարադրում էր իր հուշերը նրա մասին:

Սիրո զորավոր արգելքը, բարոյականության անհաղթահարելի պատնեշները, անհասանելի վայելքի տենչանքն ու տառապանքը ափսոսանքին հուզական մեծ արժեք են հաղորդում և հանգեցնում են ընդհուպ «սիրուն մահվան» մասին խոհերի: Նույնիսկ նամակները եզրափակող հրաժեշտի խոսքերը քնարական շնչով էին տոգորված և բարձր զգացումների արտահայտություն էին: 1902 թ. սեպտեմբերի 30-ի նամակը ավարտվում է այսպես. «Խոնարհ ողջույն Հայրիկին, հիացման մի հայացք վեհափառ Արարատին, մի խոր հառաչանք Անի քաղաքին և Ձեզ կարոտալի բարևներ» (9,326):

Թումանյանը շատ բարձր էր գնահատում իշխանուհու ծավալած հասարակական գործունեությունը և ամեն կերպ խրախուսում ու քաջալերում էր նրա յուրաքանչյուր նոր նախաձեռնություն: 1902 թ. իշխանուհուց տեղեկանալով, որ նա արդեն հրատարակել է թվաբանական խնդիրներով «Մանկական լոտոն»[129], որ նրա կազմակերպած դեկտեմբերի 28-ի «դեկադենտական պարահանդեսը» առաջացրել է մեծ հետաքրքրություն, բանաստեղծը գրում է. «Շնորհավորում եմ թվաբանական լոտոն և հաջողություն եմ ցանկանում դեկադանս պարահանդեսին: Հրաշալի միտք է. զարդարվեցեք շուշաններով» (9, 367):

Իսկ երբ իշխանուհին 1902 թ. նոյեմբերի 20-ի նամակով դժգոհում է, որ իր կազմակերպած ներկայացումներին բազմաթիվ ցանկացողներ դրսում են

129 ԳԱԹ, ԹՖ, թիվ 665:

մնում, որովհետև դահլիճները միշտ ավելի փոքր են, քան նրանց թիվն է[130], բանաստեղծը մխիթարում է բարեկամուհուն. «Ես ուշադրությամբ հետևում եմ և ուրախանում: Թող Ձեր լացը դրա համար լինի, որ գալիս են ու հնար չկա տեղավորելու, և այդ դժգոհությունները թող Ձեզ ավելի ուրախացնեն, քան թե վշտացնեն» (9, 375):

Դեռևս 1902 թ. սեպտեմբերի 30-ին Թումանյանը գրում էր. «Ես սրտանց հաջողություն եմ մաղթում Ձեր սիրողների խմբին: Ես աներկբա եմ, որ դա կտա իրեն օգուտը, և այդ խումբը շնորհքներ երևան կհանի մշտական բեմի համար» (9, 325): Թումանյանը նկատի ուներ իշխանուհու նախաձեռնությամբ սիրող դերասանների 90 հոգուց բաղկացած խումբը, որի առաջին ներկայացումը՝ «Պեպոն», տեղի է ունեցել հոկտեմբերի 8-ին Թիֆլիսի ժողովարանի դահլիճում: Այնուհետև յուրաքանչյուր երեքշաբթի տեղի էին ունենում տարբեր բեմադրություններ, որոնց թվում էին նաև Ա. Օստրովսկու «Արդյունավոր պաշտոն», Գ. Սունդուկյանի «Քանդած օջախ», Ազովի «Ոսկու ստրուկներ» և այլ պիեսների ներկայացումները: Դրանք գրավում էին հանդիսատեսների մեծ բազմություն և մամուլի էջերում արժանանում բարձր գնահատանքի: Գլխավոր դերերի կատարմամբ և որպես բեմադրիչ հանդես էր եկել Պողոս Արաքսյանը: Յուրաքանչյուր գործ ձեռնարկելիս իշխանուհին ինքն էր սրտատրոփ սպասում Թումանյանի գնահատականին, որը երբեք չէր ուշանում: Բանաստեղծի խրախուսանքին էր արժանացել 1902 թ. հունվարի 20-ին Թիֆլիսի ժողովարանում տեղի ունեցած Թիֆլիսի Հայոց բարեգործական ընկերության երեկույթը, որի կառավարչուհին իշխանուհի Մարիամ Թումանյանն էր: Երեկույթին մասնակցել էր աշուղ Ջիվանին իր խմբով, դերասաններ Ամիրան Մանդինյանը և Պ. Ամիրաղյանը: Նրանք «Օրվա չարիքներից կուպլետներ» են արտասանել, որոնք պատրաստել էր իշխանուհին՝ նախօրոք դրանք ուղարկելով Թումանյանին՝ կարծիքի[131]: Այդ քառատողերը երգիծական զվարճալի բնույթ են ունեցել:

1902 թ. փետրվարի առաջին օրերին արդեն վաճառվում էին Մարիամ Թումանյանի նախաձեռնությամբ պատրաստված խաղալիքները՝ հետևյալ հայտարարությամբ. «ռուսերեն, հայերեն կուբիկներ երեխաների համար՝ սովորելու տառեր և բառեր. ռուսերենը բաղկացած է 144 տառերից, հայերենը՝ 168 տառերից առանձին արկղներում»[132]: Այս հայտարարությունից անմիջապես հետո Թումանյանը հարցնում է. «Կարդացիք, որ հայերեն կուբիկներ են դուրս եկել» (9, 285):

130 Նույն տեղում, թիվ 289:

131 «Տարազ», 1902, թիվ 3, էջ 17:

132 «Մշակ», 1902, թիվ 201:

Բանաստեղծը հավատում էր Մարիամ Թումանյան հասարակական գործչի տաղանդին, դժվարությունների առջև երբեք չընկճվող, երբեք չնահանջող նրա բնավորությանը. «Դուք հուսահատվել չգիտեք»,- գրում է բանաստեղծը՝ հիշեցնելով 69 անգամ հատիկը գցող և միայն 70-երորդ անգամ այն բարձրացնող, իր նպատակին հասնող մրջյունից (մորմոնջ) ամոթահար եղած Լենկթեմուրին, որը թշնամուց հաղթված մտել էր մի քարի տակ (9, 338): Մրջյունի արարքից ոգևորված և հուսադրված Լենկթեմուրը դուրս է գալիս իր թաքստոցից, հավաքում զորքն ու հաղթանակ տանում:

Հիշելով այս ավանդությունը՝ Թումանյանը գրում է. «Այս առակն ավելորդ է Ձեզ համար» (9, 338):

Պոետը համոզված էր, որ իշխանուհին չէր կարող չհաջողել. «Գիտեք, առհասարակ, որ ասում են՝ այս ենք անելու կամ այն, ես դրանից ոչինչ չեմ հասկանում, ինձ անբովանդակ բառեր են թվում, բայց երբ որ Դուք եք ասում, ես արդեն երևակայում եմ գործը, անպայման հավատում եմ, որ բան է լինելու:

Ճշմարիտ, որ անհատներն են գործ ստեղծում, կերպարանք տալիս, ձև տալիս, ընթացք տալիս հասարակական կյանքին: Մի քանի մարդ, և կյանքը դառնում է եռուն, կենդանի, գեղեցիկ» (9, 300):

Թումանյանը թե՛ անձամբ իշխանուհուն էր խոստովանում, որ նա այն հազվագյուտ մարդկանցից է, որոնք կյանքին ձև ու կերպարանք են տալիս և այն դարձնում կենդանի ու գեղեցիկ, թե՛ իր մյուս մտերիմ ընկերներին ու բարեկամներին: Այդ մասին կարդում ենք նաև Ֆիլիպին գրված 1902 թ. օգոստոսի 23-ի նամակում. «Մարիա Մարկովնան երևի եկած կլինի... գրում է, որ նոր ծրագիրներ է կազմել: Տեր Աստված: Ես կարծում եմ՝ այս ձմեռ նոր բաներ ենք տեսնելու. նա կանի, ես հավատում եմ: Զարմանալի կին է: Ափսոս, նրան լավ չեն ճանաչում առհասարակ: Էհ, վերջումը կճանաչեն, միշտ վերջումը...» (9, 302): Դարձյալ Ֆիլիպին ուղղված մեկ այլ՝ 1908 թ. մարտի 18-ի նամակում բանաստեղծը գրում է. «Մարիա Մարկովնան է – էստեղ իբրև քիչ ծրագիրներ ուներ, եկել է էդտեղից էլ նոր-նոր բաներ սովորել ու նոր ծրագիրներ բերել: Ու սկսել է՝ էս որբևայրի կանանցն է նստել կրուժևա գործել սովորեցնում, էս որբանոցի երեխաներին՝ երաժշտություն, աղքատներին՝ նոր տեսակի հովանավորություն, անգործներին՝ մեր աշխարհքում չլսված գործեր, հինգշաբթի երեկոների զրույցներ, և միշտ նոր ու նոր ծրագիրներ և նոր ու նոր գործեր...» (10, 39):

Այսպես, Թումանյանը բարձր էր գնահատում իր **«ընքուշ բարեկամուհուն»,** և երբ մեկ-երկու ամիս նրա որևէ նոր բարեգործական ձեռնարկի մասին լուր չէր ստանում, անհանգստացած գրում էր. «...Ինչպես եք, ինչ նոր

ծրագիրներ եք մտածում, արդյոք թատրոնա- գրա- բարեգործա... և այլն ական: Քանի ժամանակ է՝ մի նոր գործ չեք հնարում, թե՞ Ձեզ էլ ինձ նման թողել է մուզան» (9, 434):

Թումանյանի նամակներում իշխանուհին բնորոշվում է իբրև «քնքույշ ընկեր», «գեղեցիկ հրատարակչուհի» (10, 77), «բանաստեղծության վրա գուրգուրացող քնքույշ» սիրտ (10, 78):

* * *

1902 թ. սեպտեմբերի 8-ին Թումանյանը իշխանուհուն է ուղարկում մի չափածո քառատող:

Թափառելով Բորժոմ-պարկում՝
Հիշում է Ձեզ և ուղարկում
Շատ բարևներ ու սեր անկեղծ՝
Ձեր բարեկամ մի բանաստեղծ (1, 392):

Սկսած 1901 թ.՝ բանաստեղծի և իշխանուհու նամակներում կարելի է հանդիպել փոխադարձ սիրո ուղղակի և անուղղակի խոստովանությունների: 1901 թ. հուլիսի 19-ի նամակում, խոսելով առհասարակ կարոտի մասին, Թումանյանը ընդգծում է իշխանուհու հազվագյուտ հայուհի լինելը. «Երևակայում եմ, որքան խոսելու նյութ կունենաք: **Որքան շատ կանանց եմ հանդիպում, հետները խոսում, ճանաչում, այնքան ավելի եմ կարոտում մեր հոգեբանական- փիլիսոփայական- բանաստեղծական զրույցները**» (9, 261):

Այդ «փիլիսոփայական» զրույցներում հաճախ էր խոսք լինում մարդու անկատարության, կյանքի իմաստի, նրա անցողիկության և այլ հարցերի շուրջ: Պոետին հասցեագրած նամակներից մեկում իշխանուհին գրում է. «Դուք չեք կարող երևակայել, թե որքան մեծ ուրախություն եմ զգում, որ մենակ եք, ես հոգնեցի մարդկանցից, այսինքն, ավելի լավ է ասել ոչ մարդկանցից... Գոնե ես հրճվում եմ՝ նայելով երկնքին, սարերին, և ժամերով լուռ նստում եմ իմ բազկաթոռի մեջ և մտածում կյանքի ունայնության վրա, փիլիսոփայական հարցերի, Աստված և այլն»[133]:

Առհասարակ Հովհ. Թումանյանի և Մարիամ իշխանուհու նամակագրության մեջ հաճախ կարելի է հանդիպել հայ կնոջ կերպարի մասին դիտարկումների: Այս հարցում իշխանուհին ու բանաստեղծը շատ ավելի համակարծիք էին ու համախոհ, քան հակառակորդ: Ուրավելից Վիծիսի իշխանուհուն ուղղված նամակում Թումանյանն Ախալցխայի կանանցից ստացած

133 Տես Մարիամ Թումանյանի՝ Հովհաննես Թումանյանին հասցեագրած 1901 թ. հուլիսի 8 ի նամակը, ԳԱԹ, ԹՖ, 1245:

իր տպավորության մասին այսպես է գրում. «Շատ անբանաստեղծական ժողովուրդ են, մանավանդ գեղեցիկ... սեռը: Կան, ճիշտ է, եվրոպական տարազով հագնված (շատ անճոռնի), եվրոպական սանրվածքով տիկիններ և օրիորդներ, բայց միշտ նույն հաջի-խանումներն ու աբլաները՝ անկենդան, անհրապույր, եթե մեկին նայում են, կարծես մի բան են որոնում բամբասելու, եթե մեկի հետ խոսում են, կարծես թե վեճի լինեն բռնվելիս: Իսկ լավագույն դեպքում հաճոյախոսում են ամենազզվելի կերպով: Սաստիկ զգալի էր ինձ համար մի կրթված կնոջ բացակայությունը» (9, 252):

Եվ երբ պոետը հանկարծ ամառանոցային քաղաքում հրաշքով կրթված կնոջ էր հանդիպում, անմիջապես «կավալերություն էր անում բնության ծոցում», դաշտերից վայրի ծաղիկներ քաղում այդ կնոջ համար և անմիջապես պատմում այդ մասին թե՛ կնոջը, թե՛ իշխանուհուն, թե՛ բոլոր այն կանանց, որոնց հետ անկեղծ բարեկամական հարաբերությունների մեջ էր: Եվ միակը այդ կանանցից, ով խանդով էր վերաբերվում այդ «կավալերությանը», Մարիամ Թումանյանն էր: Իսկ բանաստեղծն էլ ստիպված էր լինում արդարանալ. «Իմ այստեղի ծանոթուհու մասին ինչ կետեր էիք շարել: Մենք միայն բանաստեղծություն ենք անում... վերջապես այդ էլ շատ քիչ» (9, 261):

1902 թ. փետրվարի 7-ին իշխանուհու «կարոտել եմ» խոստովանությանը Թումանյանը պատասխանում է. «**Հապա եթե իմանաք՝ ես ինչքան եմ կարոտել:** Հիմա ես զգում եմ, որ սանդուղքները ինձ վնասում են, եթե սրանք չլինեին, գոնե մի անգամ Ձեզ տեսած կլինեի» (9, 285):

Բանաստեղծի նամակներում այդ շրջանում հաճախադեպ էր կարոտի թեման: Նույն թվի օգոստոսի 6-ին գրում է. «Իմ հոգին այժմ հակառակ տրամադրությունն ունի՝ անհագուրդ կարոտի, պապակող ծարավի, անսփոփ տառապանքի ցանկություն» (9, 292):

Թումանյանը բանաստեղծ և արվեստագետ էր և, բնականաբար, չէր կարող չնկատել գեղեցիկ ու հետաքրքիր կանանց, չհրապուրվել ու չսիրահարվել: Սակայն ամեն անգամ նա ավելի խորն էր գիտակցում այն պատրանքները, որոնցով ապրում էր: Նա մեծ ընտանիք ուներ և սիրող ու հոգատար ամուսին ու հայր էր: 1902 թ. օգոստոսի 6-ին բանաստեղծը գրում է ընկերոջը. «Ես քեզ անկեղծ եմ ասում, ես կյանքից էլ եմ զզվել, և **եթե մի բան կա, որ ինձ կապում է՝ այդ երեխաներն են»** (9, 294): Այս տողերը գրում է սիրահարված բանաստեղծը, որն իր ուսերին զգում էր մեծ ընտանիքի ծանրագույն բեռը և միաժամանակ չէր կարողանում դիմագրավել հոգու մեջ արթնացող քնարական զգացմունքներին: Ահա թե ինչու այդ երկվությունից և մեծ վարանքից ծնվում էր ազնիվ տառապանքը. «Այսպես,- գրում է Թումանյանը 1902 թ. օգոստոսի 23-ին,- **չգիտենք՝ ինչի հավատանք, ինչ**

սիրենք, ինչ ցանկանանք. տարուբերվում ենք մի մեծ վարանքի մեջ, բարոյական մի անեզր ալեկոծության մեջ, նավահանգիստ չենք հասնում, փարոս չենք տեսնում, և մեր բոլոր մխիթարությունն այն է, որ ազնիվ են մեր տանջանքները» (9, 301-302):

Այս խոսքերը գրելու առիթը եղել էր Ֆիլիպի և իշխանուհու անհանգստությունը՝ պայմանավորված Թումանյանի տխուր, նրանց կարծիքով, հուսահատական տրամադրությամբ: Ֆիլիպն իշխանուհուն հավաստիացրել էր, թե պոետն ապրում է առանց հավատի: Անշուշտ, ինչպես յուրաքանչյուր սիրահարված տղամարդ, Թումանյանը նույնպես ինչ-որ տեղ զգում էր ազատության կարիք, սակայն անմիջապես գիտակցում էր դրա անհնարինությունը. «Այս էլ կյանքի ամենախախուտ կողմերից մինն է. մարդիկ առհասարակ դժգոհ են. կնշանակի՝ այսպես չպիտի լինի: Ուրիշ տեսակ պետք է կարգադրվի, թե չէ բոլորս անբախտ ենք, և ամուսնացածներ, և ամուրիներ:

...Մենք կարծում ենք՝ ազատությունը կվնասի: Մենք միշտ վախենում ենք ազատությունից. այնինչ բոլորս կուզենայինք, որ ազատ լինեինք» (9, 301):

Երբ 1902 թ. սեպտեմբերին բանաստեղծը տեղեկանում է, որ իշխանուհին մեկնում է Անի, գրում է. «Որքան կուզենայի Ձեզ հետ լինել» (9, 325):

1904 թ. փետրվարի 12-ին վախճանվում է իշխանուհու մայրը՝ Եղիսաբեթ Դոլուխանյանը: Թումանյանն իր ցավակցական նամակում ընդգծում է, որ թեև զարմանալի է, բայց իր սիրտը շատ ավելի տխրում է, երբ ծերունին է կորցնում իր կյանքի ընկերոջը, քան երիտասարդը. «Ինձ թվում է, թե ջահել սիրտը դեռ կարող է մխիթարվել, դեռ կրում է իր մեջ նորից ապրելու հույսը և այդ հույսով էլ, թեկուզ վշտի արցունքների տակից, նայում է կյանքին ու աշխարհքին. իսկ ծեր մարդը այսպես չի, երբ որ կորցնում է իր բազմամյա միակ մտերիմ հոգին: Նրա համար մնում են աշխարքում միայն նրա գերեզմանը և անցյալ օրերի հիշողությունները» (9, 424):

Նույն նամակում Թումանյանը ընդգծում է նաև իր և Մարիամի հոգեկան հարազատությունը, սրտակից մտերմությունն ու բարեկամությունը.

«Շատ էի ցանկանում Ձեզ տեսնել...

Իսկ ինչ վերաբերում է Ձեզ, պետք է համոզված լինիք, թե **որքան ցավ կարող են զգալ Ձեր վշտից այն սրտերը, որ այնքան մոտիկ են Ձեզ և այնքան լիքը՝ սերտ բարեկամության մաքուր զգացմունքներով:**

Բայց չէ՞ որ Դուք այնքան առողջ եք նայում կյանքին և նրա ամեն փոփոխություններին, որ հարկ չկա ձևական բաներ ասելու» (9, 424-425):

Իր հերթին Թումանյանի կյանքի յուրաքանչյուր դժվարություն, ֆիզիկական կամ հոգեկան ամեն մի ցավ խորապես վշտացրել է իշխանուհուն, երբեմն նույնիսկ ավելի շատ, քան բանաստեղծին, հատկապես, երբ խոսքը

վերաբերել է Թումանյանի առողջությանը: Իշխանուհին գրում է. «Բայց ավելի շատ եմ ուզում Ձեզ շուտով կատարյալ առողջ տեսնել, ուստի Դուք լավ պահեցեք Ձեզ, մի՛ հոգնեք և զգույշ եղեք մրսելուց: Մրսելը շատ վտանգավոր է Ձեզ համար» (ՈւՀ 5, 289):

Առհասարակ իշխանուհին որևէ գործ կամ պատճառաբանություն ու հիմնավորում չէր ընդունում բանաստեղծից, եթե այն պիտի սպառնար նրա առողջությանը: 1909 թ. հուլիսի 24-ին նա պոետին գրում է. «Լուսաբերը» և ուրիշ գործեր կոպեկ չարժեն ի դիմաց Ձեր առողջության» (10, 496):

Իշխանուհու և Հովհաննես Թումանյանի մտերմության ընթացքում չի եղել գեթ մի օր, որ նա չանհանգստանա բանաստեղծի առողջության համար: Թումանյանին հասցեագրած նամակներում չկա մեկը, որում արտահայտված չլինի նրա հոգատարությունն ու մտահոգությունը: «Մի բան միայն ինձ դուր չեկավ, որ Դուք լողանում եք սառը ջրի մեջ: Ձեզ իսկի լավ չի սառը ջուրը մտնել, և ես կխնդրեի, որ զգուշանայիք»[134]: Մեկ այլ նամակում կարդում ենք. «Ինձ ցանկալի է առայժմ միմիայն Ձեր առողջությունը»[135]: Երբ իշխանուհին տեղեկանում է, որ բանաստեղծը՝ դեռևս չկազդուրված, ուզում է ճանապարհորդել, գրում է. «Ես ուրախ կլինեմ, եթե Դուք փոքր-ինչ ճանապարհորդեք, բայց որ գրել եք, թե որքան տաքություն ունեք, այս իսկի լավ չի: Եվ ես վախենում եմ, որ ճանապարհորդության ժամանակ չմրսեք: Խնդրեմ, լավ մտածեք գնալուց առաջ»[136]:

Թումանյանը զգում էր իշխանուհու զգացմունքների անկեղծությունը և շատ բարձր էր գնահատում դրանք. «Դուք էլ եք ինձ համազգաց: Իմացած եղեք, որ հենց այդ զգացմունքն արդեն ինձ համար շատ բան է, որովհետև **մենք արդեն սրտի մարդիկ ենք,** թեկուզ և մեր կյանքն այսքան թաղված ու զբաղված նյութական խնդրով:

Եվ չէ՞ որ հենց նյութականի խնդիրն էլ նրա համար է այդքան ծանրանում, որ սիրտ չկա, անսիրտ, կոպիտ մարդիկ են... **Պետք է մարդ, որքան կարող է, իր սիրտը պատսպարի հեռու, թեկուզ չքավորության մեջ: Որքան հնարավոր է, թեկուզ հենց միմիայն խաղաղ լինելու համար: Չէ՞ որ կարելի է պակաս ապրել ու խաղաղ լինել»** (9,352):

Այսպես տարիներ շարունակ մեծ բանաստեղծն ու մեծ հայուհին փոխադարձաբար միմյանց առջև խոստովանում էին իրենց բարեկամական զգացումներն ու ամենանվիրական ապրումները:

134 Տես իշխանուհու 1901 թ. հուլիսի 8-ի նամակը, ԳԱԹ, ԹՖ, 1245:

135 Տես իշխանուհու 1901 թ. օգոստոսի 13-ի նամակը, ԳԱԹ, ԹՖ, 1247:

136 Տես իշխանուհու 1901 թ. օգոստոսի 3-ի նամակը, ԳԱԹ, ԹՖ, 1246:

Բնության ձայնի և պարտքի առաքինի վարքի պայքար

Երազն էլ, նուրբ ու խուսափուկ, վրռազ եղավ, անցկացավ.
Վռազ անցան երազ, մուրազ, ու չըհասա ոչ մեկին...

Հովհ. Թումանյան

Ի տարբերություն կանանց հանդեպ տղամարդկանց՝ ժամանակի իշխող տրամադրության՝ Թումանյանն ընդունում էր անձնավորության, անհատի իրականությունը կնոջ մեջ: Նույնիսկ հայ մտավորականներից ու արվեստագետներից շատերն էին իջեցնում կնոջն իր սեռի աստիճանին, Թումանյանը՝ ոչ:

Բանաստեղծի սերն ամուսնությունից հետո խաբկանք չէր, ոչ էլ պատրանք, այլ միանգամայն իրական զգացմունք: Նա և փիլիսոփա էր, և բարոյախոս, և բանաստեղծ, և պարզապես մարդ: Իբրև բանաստեղծ՝ դեռ երիտասարդ հասակից ստանձնել էր իդեալական կերպար ստեղծողի պարտականություն, սիրահարների անկեղծ զգացմունքները մերժող մարդկանց, հասարակության խիղճն արթնացնողի պարտականություն: Սիրո հարցում սահմանախախտությունը Թումանյանը «մեղք» չէր համարում, քանի որ **«Սերն ու ատելությունը խելք չունեն և իրենց դատողությունների կամ, ավելի ճիշտ, զառանցանքների մեջ սահման չեն ճանաչում»** (6, 242): Երկար ժամանակ, հավանաբար Վարյա Խանդամիրյանի նկատմամբ իր հրապուրանքը հաղթահարելուց հետո, Թումանյանը զգում էր, որ իր զգացմունքներն իշխանուհու նկատմամբ խաբեպատիր չեն, այլ միանգամայն իրական: Սակայն զգայասիրության վայելքը երբեք չի առաջնորդել բանաստեղծին, և նրա հոգում մշտական պայքար է մղվել սիրո և պարտականության, անձնական զգացումի և գրեթե նույնքան հզոր մեկ այլ սիրո՝ ընտանիքի և երեխաների հանդեպ տածած սիրո ու նվիրվածության միջև: Այդ պայքարը եղել է երկարատև ու ցավալի, քանի որ նա լավ գիտեր, որ սիրո կիրքը համազոր է դժբախտության և տառապանքի: Սակայն հոգու և մարմնի բանավեճը հաղթահարած, նրանց համերաշխված բռնկման պահին կարոտի ողբերգականը վերածվում է հույզի, և Թումանյանը խոստովանում է իր հոգեկան փոթոր-

կումների մասին: Կարոտի ուժգնությանը նպաստել էր այն հանգամանքը, որ 1906-1908 թթ. իշխանուհին բացակայում էր Թիֆլիսից և ապրում էր Շվեյցարիայում:

Ամուսնացած կնոջը սեր խոստովանելու Թումանյանի համարձակությունը ինչ-որ տեղ բացատրվում էր նաև իր նկատմամբ իշխանուհու անթաքույց հիացմունքով և մշտատև, շարունակական, անսահման սիրով: Իշխանուհին գիտակցաբար թե ենթագիտակցաբար իր սևեռուն ուշադրությամբ, միայն սիրող կնոջը բնորոշ հոգատարությամբ, նաև սիրված լինելու գրեթե բացահայտ մղումով, իր չխոստովանած, սակայն միանգամայն իրական սիրով սեր էր հարուցում: Նախ Մարիամն ինքն է խնդրում բանաստեղծին իր ալբոմում «հատուկ իր համար» որևէ բան գրել: Վերցնելով ալբոմը՝ Թումանյանը մի քանի օրից վերադարձնում է այն երեք բանաստեղծություններով, որոնք իշխանուհին «շատ հավանեց»: Սակայն մի շաբաթ անց բանաստեղծը խնդրում է ետ տալ ալբոմը, որպեսզի նոր ոտանավորներ գրի: Եվ այդպես էլ չի վերադարձնում՝ պատճառաբանելով, որ դրանք պատռել է իշխանուհուն արած իր սիրո խոստովանության օրը:

Այդ խոստովանությունը տեղի էր ունեցել 1908 թ. գարնանը՝ իշխանուհու՝ Պասկևիչի փողոցում գտնվող հայրական տանը: Իշխանուհին պարբերաբար թողնում էր ամուսնու տունը՝ Բարյատինսկու փողոցի թիվ 8 հասցեում, և բնակվում էր իր ծնողների տանը, որտեղ և պարբերաբար լինում էր Թումանյանը:

Այդ օրն իր բոլոր մանրամասներով անջնջելի դրոշմվում և ապրում է իշխանուհու հիշողության մեջ նրա կյանքի ողջ ընթացքում, և նա մտապահում է բանաստեղծի սիրո խոստովանության յուրաքանչյուր բառը, հայացքը, շարժուձևը: Ահա ինչպես է նկարագրում իշխանուհին իր կյանքի ամենաերջանիկ օրը, օրերի օրը:

«Շատ տաք և դուրեկան օդ էր. սարերից մեղմ զեփյուռ էր փչում ու բերում էր ծաղիկների բուրմունքը: Աննկատելի մթնեց, ու երկնքի վրա աստղեր փայլեցին: Փողոցը բոլորովին հանգիստ էր, և կարծես ամեն բան տրամադրում էր մտերմական խոսակցության, բայց այդ երեկո ինչ-որ կցկտուր էր մեր խոսակցությունը: Մերթ-մերթ լռում էր Թումանյանը և մի ուրիշ տեսակ հայացքներ էր գցում ինձ վրա: Չգիտեմ ինչու՝ ես էլ շփոթվեցի, և սիրտս սկսեց բաբախել:

- Մի խոստովանություն պիտի անեմ Ձեզ, Մարմար,- հանկարծ ասաց նա... Ես վաղուց սիրահարված եմ եղել մի տիկնոջ վրա, բայց նա ինքը ոչինչ չգիտեր: Եթե իմանաք՝ **որքան եմ տանջվել, որքան անքուն գիշերներ եմ անցկացրել,**- շարունակեց Թումանյանը,- բայց այժմ իմ սերը մեղմացել է, ու ես կարողանում եմ հանգիստ խոսել...

- Միթե այդ տիկինը ոչինչ չէր նկատում,- հարցրի ես:

- Ո՛չ, ոչինչ չէր կասկածում:

- Ուրեմն շատ հաստ կաշի է ունեցել այդ տիկինը:

- Ո՛չ, ո՛չ, նա հաստ կաշի չունի, ընդհակառակը: **Նա շատ քնքույշ է և զգայուն:**

- Բայց դա ինչպե՞ս կարող էր պատահել,- առարկեցի ես և նայեցի Թումանյանի երեսին:

Նրա փայլուն աչքերը թափանցեցին իմ սրտի խորքերը, նա մեկնեց իր ձեռքերը դեպի ինձ, և... կարծես քողը ընկավ իմ աչքերից, ու մի ակնթարթում ես ամեն բան հասկացա... Իսկույն վեր թռա տեղից, բայց գլուխս պտտվեց, ու վայր պիտի ընկնեի, եթե Թումանյանը չբռներ ինձ ու չնստացներ աթոռի վրա: Աչքերս փակվեցին, ու ես էլ չէի տեսնում Թումանյանի դեմքի արտահայտությունը, նա այլևս չէր խոսում, իմ գլուխն էլ շշմած էր, ու մեզ շրջապատող լռությունը ոչինչով չէր ընդհատում այդ վսեմ րոպեները: Որքան ժամանակ մնացինք այդ դրության մեջ՝ ես չեմ կարող ասել, դռան զանգի ուժեղ ձայնը սթափեցրեց մեզ: Ես կամացուկ վեր կացա տեղից ու առանց մի խոսք ասելու նրան՝ մտա սենյակ: Նա էլ անմիջապես հրաժեշտ տվեց ու տուն գնաց» (ՄԹ, 130-131):

Որքան էլ Թումանյանը պնդեր, թե իր սերը մեղմանալուց հետո է խոստովանել այն, այնուամենայնիվ, թերևս այդ պահին Մարիամը եղել է նրա հեռաձիգ ու հեռարձակ բաղձանքի ու երազանքի կինը, որը սիրելի էր դարձել ոչ թե կույր մղումներով, այլ իր արժանիքներով: 19 տարեկանում ամուսնանալուց հետո, եթե բանաստեղծը չսիրեր որևէ այլ կնոջ, դա նրա կյանքի և լինելիության աղքատացումը կլիներ: Հոգեկան ճգնակեցությունը համազոր կլիներ ներկան որպես բացակա սիրելու անզորության: Սակայն նա ի զորու էր սիրել այն, ինչ անհնար ու անհասանելի էր, հավերժ բացակա: Պոետն իր սերը խոստովանում է հոգևոր վերացումի գագաթին, երբ զգում է այդ պահին սիրո առարկայի կատարյալ ու կենդանի ներկայությունը: Նա այնպես է պատմում իր ներշնչանքը, կարծես ձգտում է լռության ու մոռացումի մատնել իր հոգում ծնված կյանքի հաճույքի ձգտումը: Այդ պատճառով էլ սիրո խոստովանությանը հաջորդում է գործելու երջանիկ չափավորությունը:

Թումանյանը հեռանալով՝ մատնում է իշխանուհուն մի անքուն ու տա-

ռապալից գիշերվա, երբ ալեկոծվում է նրա ներաշխարհը, խարխլվում են կյանքի մոտեցումներն ու պատկերացումները: Եվ նա ապրում է երկընտրանքի դժվարին դրաման: Այդ գիշեր նա «կրակի մեջ այրվում է»՝ մեկ առ մեկ հիշելով իրենց այն հանդիպումներն ու զրույցները, որոնք փոխադարձ սիրո ակամա և անուղղակի խոստովանություններ են եղել, նորովի է իմաստավորում իրենց հարաբերությունները, փորձում է հասկանալ իր իսկ ապրումները՝ ստուգելով իր սրտի «ամենախորքերում պահած զգացմունքները»: Իշխանուհին կորցնում է իր «հոգեկան հավասարակշռությունը», թեև իբրև ամուսնացած հայ կին, որը նաև վեց երեխաների մայր էր, փորձում է ինքն իրեն և ապագա սերունդներին համոզել, որ բանաստեղծի սիրո խոստովանությունն իր համար անակնկալ ու անսպասելի էր: «Ես գիտեի,- գրում է իշխանուհին տասնամյակներ անց,- որ նա ինձ շատ էր գնահատում, գտնում էր, որ ես գեղեցիկ եմ և խելոք, չափազանցնում էր իմ արժանիքները... Թումանյանն այնքան կոռեկտ էր պահում իրան, իսկ ես այնքան էի տարված նրա տաղանդով ու այնպիսի բուռն ցանկություն ունեի տեսնել նրան հռչակավոր բանաստեղծ, որ մոռանում էի նրա տղամարդ լինելը: Նա միշտ այնքան քնքույշ էր ու մեղմ ինձ հետ, որ ես չէի կարող երևակայել, որ նրա սիրտը ընդունակ է ալեկոծվելու սիրո բուռն տենչանքներով» (ՄԹ, 131):

Վաղվա օրը նրանց իշխանության տակ չէր, և, սակայն, նրանք փորձեցին հոգեկան ալեկոծումներն իրենց ենթարկել: Մեծ սերն անբաժան է խորունկ մտքից. նրանց երկուսի էլ մտքի լայնությունը հավասարվեց խորությանը...

Պոետի սիրո խոստովանությունից անմիջապես հետո իշխանուհին փաստում է, որ իր և Թումանյանի միջև ստեղծվել էր այնպիսի ներդաշնակություն, որ «առանց խոսքերի իրար հասկանում» էին, որ միշտ «այնքան բովանդակալից, գեղեցիկ ու մտերմական» զրույցներ էին ունենում: Եվ նա անհանգստանում էր, որ նոր ստեղծվող հարաբերությունները կարող են վտանգել իր «սիրած բանաստեղծի», իր «քնքույշ» ընկերոջ բարեկամական հարաբերությունները, որոնք իմաստավորում էին նրա կյանքը և չափազանց թանկ արժեին: Անքուն գիշերից հետո իշխանուհին արթնանում է «գլխացավով ու շփոթված մտքերով», անորոշ սպասումներով: Երեկոյան Թումանյանը դարձյալ գալիս է որևէ պատասխանի ակնկալիքով: Բանաստեղծի համար սերը շատ ավելին էր, քան մարմնական պարզ մի հեշտասիրություն: Սակայն նա նաև տղամարդ էր, հողեղեն, գուցե և պատրաստ խենթության: Իշխանուհին այդ երեկոյի մասին պատմում է.

«Արտաքուստ նա բոլորովին հանգիստ էր երևում, բայց բարևելիս նրան ես զգացի, որ նրա ձեռքը դողում էր, ու ինքս էլ դողացի:

«Այսօրվա օրը վճռողական է»,- մտածեցի ես» (ՄԹ, 132):

Իշխանուհին ամուսնու և երեխաների հետ Թումանյանին հրավիրում է թեյի սեղանի շուրջ և շարունակ զգում է իր վրա պոետի հայացքը: Նա խորհում էր, թե ինչպես կարող է իր բացասական պատասխանով չվշտացնել բանաստեղծին, իսկ հոգու խորքում ուզում էր լսել նրա սիրո խոսքերը, և համոզված էր, որ նրա սերը «դեռ չէր անցել բոլորովին, ու նա իր սրտի խորքերում ինչ-որ հույսեր ուներ» (ՄԹ, 132):

Իր հուշերում այդ պահի մասին իշխանուհին գրում է.

«- Մարմար,- ասաց նա ու ձեռքս բռնեց: - Վերջապես լսեցեք ինձ, ես չեմ կարող այլևս լռել...

Ես քաջություն չունեցա ձեռքս քաշելու, գլուխս իջեցրած լսում էի նրան: Նա խոսեց երկար-երկար, երբեմն մեղմ, երբեմն ուժեղ սեղմելով իմ ձեռքը...

- Բայց իմացեք, Մարմար, ես Ձեզ հիշել եմ ամեն օր, նույնիսկ ամեն ժամ, պատրաստ էի գրելու երկար նամակներ, բայց ուրիշ բովանդակությամբ: Դուք չեք կարող երևակայել, թե որքան **դժվար է հրամայել սրտին, որ լռի, երբ սիրտը ուզում է խոսել**: Մանավանդ դժվար է լռել մի բանաստեղծի համար: Որքան գեղեցիկ բանաստեղծություններ եմ գրել Ձեզ համար ու քամուն եմ տվել» (ՄԹ, 133):

Թե՛ իշխանուհու ալբոմում գրած բանաստեղծությունները պատռելը, թե՛ նրան նվիրած ոտանավորները Աբասթումանում «քամուն տալը» վկայում են, որ Թումանյանի պայքարը սեփական զգացմունքների դեմ երկարատև ու տառապալից է եղել: Այդ մասին նա խոստովանել է միայն Ֆիլիպին, որն էլ խորհուրդ է տվել՝ լռել: Սակայն ամեն անգամ իրեն սիրահարված որևէ կնոջ հանդիպելիս Թումանյանն ավելի խորն է զգացել իշխանուհու բացառիկությունը, նրա կանացի ու մարդկային արժանիքները. հոգու հարստությունը, և «սիրտը ոչ ոքի» չի ընդունել:

Իշխանուհին, թեև շփոթված, սակայն բարձրաձայն դժգոհում է պոետի՝ սեփական ստեղծագործությունները ոչնչացնելու արարքի դեմ, Մարիամի երազներից էր, որ Թումանյանն իրեն բանաստեղծություններ նվիրի, որ ինքը դառնա իր սիրած պոետի և տղամարդու ներշնչանքի աղբյուրը, նրա մուսաների ոգեշնչողը: Նույնիսկ բանաստեղծի մահից հետո իշխանուհին չէր հաշտվում իրեն նվիրված այդ ստեղծագործությունների կորստի հետ և քանիցս խնդրել է բանաստեղծի արխիվով զբաղվող դստերը՝ Նվարդին. գտնել դրանք և վերադարձնել իրեն:

Անկախ ամեն ինչից, իշխանուհին մշտապես զգացել է պոետի սիրո կարիքը: Այդ սիրո ապացույցներն ունենալու Մարիամի պահանջը քաջալերում է բանաստեղծին, և նա մի վերջին փորձ է անում իշխանուհու փոխադարձ սիրո հավաստիացումները լսելու: Թումանյանը հարցնում է.

«Ուրեմն լավ չեմ արել, որ լռել եմ և սիրտս չեմ բաց արել Ձեր առաջ» (ՄԹ, 133):

Իշխանուհին չի կարողանում անմիջապես պատասխանել հարցին, քանի որ զգում է, որ շատ մոտ է «այո» ասելուն, բայց անհանգստանում է ավելի մեծ բանի համար՝ «քնքույշ» բարեկամությունը կորցնելուց: «Ինքս ինձ հաշիվ չէի կարող տալ, թե ինչ հետևանք կունենար նրա խոստովանությունը: **Նրա սիրո բուռն արտահայտությունը և իմ երիտասարդությունը գուցե ուրիշ ընթացք տային մեր հարաբերությանը**» (ՄԹ, 133):

Մարիամ Թումանյանն ուղղակի չի խոստովանել, որ ինքն էլ նույն ուժգնությամբ, թերևս ավելի մեծ սիրով, փոխադարձել է բանաստեղծին; թեև միաժամանակ ամենևին չի թաքցրել, որ ընտանեկան կյանքում երբեք երջանիկ չի եղել. «Ամուսնացած եմ, բայց չեմ վայելում ամուսնության քաղցրությունը: **Գաղափարական, ազնիվ ու խելոք ամուսին ունեմ, բայց իմ մեջ չկա դեպի նա հարկավոր ջերմությունը, թեև շատ եմ գնահատում նրան և խորապես հարգում եմ: Երեխաներ ունեմ, որոնց շատ եմ սիրում, բայց նրանք չեն լցնում իմ ամբողջ էությունը...**

Մի մտերիմ ու քնքույշ բարեկամ ունեմ, որի երջանկության համար պատրաստ էի ամեն տեսակ զոհաբերություն անել...» (ՄԹ, 136):

Իշխանուհին չէր կարող մտովի չհամեմատել իր ամուսնու «սիրո խոստովանությունը», նրա հետ նշանադրության օրը, որն անցավ «առանց երկար ու բարակ խոսակցության, առանց քնքույշ արտահայտությունների», Թումանյանի զգացմունքների ռոմանտիկական դրսևորումների հետ, որն իշխանուհու համոզմամբ՝ «կյանքի գեղեցկություններից մեկն է կազմում» (ՄԹ, 41): Նրա համար իրողություն էր դառնում դեռևս չճաշակած «կյանքի գեղեցկություններից մեկը»: Նա միշտ էլ ափսոսանքով ու նաև դառնությամբ էր հիշում, որ դեռևս իր ապագա ամուսնու հետ հանդիպելիս խոսում էին «միմիայն գրականությունից և առօրյա նորություններից, և ոչ մի բառ չէր արտասանվում զգացմունքի կամ մեր ապագա կյանքի մասին» (ՄԹ, 43):

Դեպի ամուսինը «հարկավոր ջերմություն» չտածող և «ամուսնական քաղցրությունը» չվայելող կինը միայն մի «մտերիմ» է մատնանշում՝ Թումանյանին: Սակայն երբ գալիս է վճռական պահը, իշխանուհին դժվարանում է միանշանակ պատասխան տալ: Այժմ նրա հերթն էր ապրելու վարանքի տանջալի զգացումը և տատանվելու իր ապրումների և հասարակության ստեղծած պատնեշների ու պայմանականությունների միջև, այժմ նրա հերթն էր խորհելու այդ զգացմունքի և պարտականության միջև ընկած խոր անդունդը հաղթահարելու մասին: «Ես ընկա մտածմունքի մեջ և սաստիկ ցնցվեցի, երբ Թումանյանը կրկնեց իր հարցը.

- Ինչո՞ւ չեք պատասխանում, Մարմա՛ր, կարո՞ղ էիք արդյոք դուք սիրել ինձ:

Ես շարունակում էի լռել, մնացել էի շվարած, թե ինչ պատասխանեմ...

Գլուխս քաշ տվեցի ու ցածր ձայնով արտասանեցի՝ **«չգիտեմ»** և, իրոք, ես չգիտեի, թե որն է լավը. միայն մի բան էի զգում, որ կորցրել էի կյանքի գեղեցկություններից մեկը: Իմ աչքերը լցվեցին արտասուքով, ու իմ գլուխը ավելի ցած իջավ» (ՄԹ, 133-134):

Իր առջև տեսնելով սիրելի և սիրող կնոջ արցունքները, «ուղիղ նայելով» նրա աչքերին՝ Թումանյանին մտասևեռումի աստիճան համակում է դյուրին երջանկության պահը կորցնելու ափսոսանքը, իսկ նրա առաջարկը Մարմարին տանում է համեմատության աշխարհ, որտեղ որևէ երջանկություն հաստատվել չէր կարող: «Չգիտեմը» մերժում չէր, թերևս ավելի «այո» էր, քան «ոչ», սակայն սթափեցնող էր, և պոետը չէր կամենում իր երջանկությանը հասնել հարազատներին ցավ պատճառելու գնով:

Գրականության ականավոր տեսաբան Դենի Դը Ռուժմոնը գրում է. «Երջանկությունը էվրիդիկեն է. նրան կորցնում ենք այն պահին, երբ ցանկանում ենք որսալ: Նա կարող էր ապրել միայն, երբ համաձայնում ենք և հանձն առնում, և մեռնում է, երբ պահանջում ենք: Դա նշանակում է, որ նա կախված է լինելուց, ոչ թե ունենալուց... Ամեն մի երջանկություն, որն ուզում են զգալ, որն ուզում են պահել իրենց իշխանության ներքո (փոխանակ այդպիսին լինելու որպես շնորհ) անմիջապես վերածվում է անտանելի մի բացակայության»[137]:

Երկու սիրող սրտեր կորցրեցին երջանկության պահը հենց այն ակնթարթին, երբ փորձեցին որսալ, և նրանց սերը վերածվեց «անտանելի մի բացակայության»:

Թումանյանի սիրո բացատրությունը և Մարիամի «չգիտեմը» մի երկչոտ ու առաքինի ըմբոստացում, պայքարի փորձ էր ժամանակի պայմանականությունների, սերը կաշկանդող ու սպանող բարոյական օրենքների դեմ: Մի պահ իշխանուհին փորձել է ընդունել ճակատագրի և հասարակական կարծիքի ձևավորած, կարծրացած մարտահրավերը և վերացնել ստեղծված հանգույցը՝ հոգու խորքում և լեզվի ծայրին պտտվող դրական պատասխանով՝ «Սիրում եմ» (ՄԹ, 134): Սակայն հաղթում է այլասիրական մեկ այլ զգացում՝ անձնական երջանկության զոհաբերումը առաքինությանը և ընտանեկան պարտականություններին:

«...Մենք չէինք կարող միանալ,- բացատրում է իշխանուհի Մարիամ

137 **Դենի դը Ռուժմոն**, «Սերը և Արևմուտքը», ֆրանսերենից թարգմանեց Ալ. Թոփչյանը: «Գրականագիտություն 20-րդ դար մատենաշար», Ե., «Լուսաբաց» հրատարակչություն, 2006, էջ 287:

Թումանյանը,- որովհետև երկու ընտանիք պիտի քանդվեր, իսկ ուրիշի դժբախտության վրա հիմնված բախտավորությունը երբեք ուրախություն չի տալիս մարդուն» (ՄԹ, 136): Նույն կերպ էր զգում և խորհում Թումանյանը, և նա լռելյայն հեռանում է ու երկու-երեք ամիս շարունակ բացարձակ զգացնել չի տալիս իր գոյությունը: Նրանք երկուսն էլ հայտնվել էին ծայրահեղ հակասական մի վիճակում: Նրանք սիրում էին միմյանց աշխարհից վերացած, անպատմելի մի «անհայտի մեջ», որն անհամատեղելի էր իրական աշխարհի հետ: Սիրուց հրաժարվելու փաստը չէր կարող չուղեկցվել անձնական դրամայով: Եվ այդ դրաման տևում է ամիսներ: Սակայն երկուսի կողմից էլ երջանկության պահի կորուստը չի ընկալվում որպես աղքատացում, այլ՝ ընդհակառակը: Կորցրածի ցավը, իհարկե, տառապանք է պատճառում, սակայն բաժանումից ձեռք բերած հոգու խաղաղությունը հարստացնում է: Պլատոնականության ակունքները նույնքան հավաստի են, որքան նրա հակառակ ուսմունքներինը, որքան հեթանոսությանը: Այդ ակունքներից մեկը բանաստեղծի հոգու խոյանքն էր դեպի «Անհայտը», այսինքն, իդեալը, դեպի Լույսը, որն այնքան բնորոշ էր Թումանյանին: Այդ երկու-երեք ամիսների ընթացքում կարոտի դերը գլխիվայր շրջվում է:

Եթե 1906-1908 թթ., հեռու լինելով և չտեսնելով իշխանուհուն, ծնվել ու հասունացել էր սիրո պոռթկման, խոստովանության պահը, ապա այս դեպքում կարոտը ստիպում է դադարեցնել զգայական երջանկության կանչը, ընդունել կյանքն այնպես, ինչպես կա, և հաշտվել նրա հետ: Թումանյանի էությանը բնորոշ էր կարոտի հենց այդ որակը, կարոտ, որը վեհացնում էր մահկանացու մարդուն, բարձրացնում վեր, կարոտ, որից ծնվում էր բանաստեղծական հայտնությունը: Հենց Մարիամ Թումանյանին գրած նամակներից մեկում է այդպիսի կարոտից խոսել բանաստեղծը դեռ շատ ավելի վաղ՝ 1901 թ. հուլիսի 19-ին. «Գիտեք, 13 տարի է, ինչ որ ամուսնացել եմ, ես ազատ լինելու հաճույքը դեռ չեմ զգացած... և միայն կարոտ է, որ զգում եմ... իսկ **կարոտը ինձ համար ամենաթանկագին զգացումն է: Առհասարակ հագուրդը, կուշտ լինելը, ավելի ճիշտ՝ հղփանալը, իջեցնում է մարդուն ներքև: Կարոտից է առաջ գալիս ամեն բարձր բան: Իդեալներն ինչ են որ՝ հոգու կարոտներ**: Եվ հենց սրա համար է լավ մենակությունը. մե-

նակության մեջ ամենավսեմ հաճույքներ կան, և դրանք այն րոպեներն են, երբ մարդու հոգին լայն, խաղաղ, անվրդով ծփում է, և սիրտը քաղցր-քաղցր ճմլում՝ երբեմն որոշ, երբեմն անորոշ կարոտներով: Եվ այդ րոպեների մեջն է, որ հայտնագործություններ են անում մարդիկ, ստեղծագործում են, իհարկե, ևս առավել՝ բանաստեղծ մարդիկ» (9, 260):

Մինչ Թումանյանը սիրո հրաժեշտի մտապաշարումով և միայնության մեջ ապրում էր բաժանման տանջալի ընթացքը, իշխանուհին հազիվ էր զսպում իրեն՝ առաջին քայլը չանելու համար:

«Իմ մեջ երբեմն միտք էր ծագում գնալ նրան տեսնելու, **այնքան էի կարոտել...** բայց ես հասկանում էի, որ նա մենակ պիտի մնար, ինձ չտեսներ, մինչև այսպես թե այնպես լուծվեր այդ հարցը, և **ես զսպում էի ինձ»** (ՄԹ, 134):

Սիրո կրակը մեղմացվում է կամովի բաժանումով: Սիրո ասպետականությունն իր տեղը զիջում է առաքինությանն ու իրատեսությանը: Իշխանուհի Մարիամ Թումանյանից երկու-երեք ամիս հեռու մնալը, ինչպես նաև Վարյա Խանդամիրյանի նշանադրության փաստը բավարար եղան, որ բանաստեղծն ազատագրվեր սիրո անհաճո կաշկանդումից: Ողջախոհությունն ազատագրել էր նրան սիրո հրճվանքի և ցանկության բռնակալությունից, որովհետև չափի պաշտամունքը և անձնականը միշտ զոհաբերելու քաջագործությունը Թումանյանի էությունն էր: Գրեթե միշտ նրա սիրո հզորության զգացումը արտահայտվում էր սիրուց հրաժարվելու խիզախությամբ: Նա չէր ընկալում և ընդունում Արևմուտքի այն մարդուն, որը կարողանում էր նախընտրել այն, ինչը քայքայում էր ամուսնական երջանկությունը: Այս հարցում նա արևելցի էր, և ամուսնության ճգնաժամի գաղտնիքը նրա համար արգելված հրապույր էր: Ամեն անգամ, գուցե ոչ հեշտությամբ, սակայն պոետը կարողանում էր հեռանալ իր «սերերից»՝ ի վնաս գուցե խաբեպատիր, գուցե և իրական, թեկուզ կարճատև, բայց երջանկությունից: Մոլեգին մի ոգեղենություն մշտապես ուղեկցում էր Թումանյանին, քանի որ սիրո և մարդկայնության բարձր մակարդակում անգամ հասարակական պատնեշները չեն վերանում: Սակայն ճիշտ չի լինի կարծել, թե հրաժարվելով սիրուց՝ նա դառնում էր հասարակական կապանքների գերին: Ըստ նրա աշխարհայեցության՝ ազատ է համարվում այն մարդը, որը տիրապետում է իրեն ու իր կրքերին: «Վերջապես երևաց Թումանյանը,- գրում է իշխանուհին: - Երբ լսեցի նրա ձայնը նախասենյակում՝ հազիվ կարողացա ինձ պահել: Սիրտս սկսեց ուժգին բաբախել, ձայնս կտրվեց, իսկ վեր կենալով նրան ընդառաջ գնալու համար՝ ես նկատեցի, **որ ծնկներս դողում էին, ու ես վախենում էի նայել նրա աչքերին:**

- Ո՞ւր էիք կորել,- հարցրի ես անհաստատ ձայնով,- միթե այդքան զբաղված էիք, որ մեզ մոռացաք:

- Այո՛, ես շատ էի զբաղված,- պատասխանեց Թումանյանը,- բայց Ձեզ երբեք չեմ մոռացել,- ավելացրեց նա ավելի ցածր ձայնով և իսկույն փոխեց խոսակցության նյութը» (ՄԹ, 135):

Թումանյանն իշխանուհու աչքերում նիհարած ու գունատված էր: Սակայն նկատելով բանաստեղծի հայացքի մեջ պարզություն ու խաղաղություն՝ ինքն էլ է խաղաղվում. «Փառք Աստծո,- մտածում է նա,- Թումանյանը հաղթող է դուրս եկել իր ներքին կռվից և հաշտվել է այս դրության հետ» (ՄԹ, 135):

Բանաստեղծի սիրո անզուսպ տենչանքը կարողանում էր ապանձնավորել մարդկային հարաբերությունները: Նա ի զորու էր հաղթելու ներքին կռվում, տիրապետելու ինքն իրեն, և դա ոչ թե սիրո պակասից էր, այլ հանուն այդ սիրո ինքնակամ պարտադրված հրաժարումից: Նա չէր կարող հետևողական և համառ գտնվել մի հարցում, որը կարող էր մերժել, խաթարել ու կործանել կնոջ անհատականությունը, մարդկային լուսավոր հարաբերությունները կնոջ և տղամարդու միջև: Սիրո այդպիսի հրաժարումը նշանակում էր, որ բանաստեղծը նախ և առաջ ցանկանում էր այն կնոջ բարին, հոգեկան անդորրը, չմեղսագործելու անմեղության զգացողությունը, որին սիրում էր:

Մետեխի բանտում

Նույն 1908-ին, երբ սիրո գերիշխանություն էր պոետի և իշխանուհու անձնական հարաբերություններում, Թումանյանին քաղաքական հալածանքները դարձրին Մետեխի բանտի կալանավոր և մեծ վիշտ պատճառեցին իշխանուհուն: Ամիսներ անց՝ 1909 թ. հունիսի 20-ին, նա ինքն է նկարագրում իր ապրումներն արդեն բանտի պատերից դուրս գտնվող բանաստեղծին. «Սիրելի՛ Հովհաննես,- գրում է նա,- Դուք չեք կարող երևակայել, թե ինչպիսի տանջանք է ինձ համար մտածել, որ բոլորովին անմեղ, մի թյուրիմացության պատճառով Դուք տառապում էիք բանտում: Մերթ հույսով, մերթ հուսահատությամբ էի անցկացնում օրերը... Գիտենալ, որ անմեղ եք, և չկարողանալ ոչ ոքին հասկացնել Ձեր անմեղությունը, դա էր սարսափելի...» (ՈՒՀ 5, 331):

Բանաստեղծը մեղադրվում էր կառավարության դեմ ապստամբություն կազմակերպելու, զենք տեղափոխելու, ոստիկաններ սպանելու և այլ հորինված հանցանքների մեջ: 1908 թ. դեկտեմբերի 23-ի լույս 24-ի գիշերը Բեհբության փողոցի վրա գտնվող բանաստեղծի թիվ 44 տանը (Վերնատուն)

խուզարկություն է կատարվում, և նրան կալանավորում են որդու՝ Մուշեղի հետ միասին[138]:

Իշխանուհին տանջվում էր ոչ պակաս, քան բանաստեղծի բոլոր հարազատներն ու ընտանիքի անդամները: Իհարկե, Թումանյանի համար խիստ մտահոգ էին նրա բոլոր հարազատներն ու բարեկամները՝ Ֆիլիպը, Ար. Զարգարյանը, Ալ. Ծատուրյանը, Լեոն, Ավ.Արասխանյանը, Արշակ Չոպանյանը, նույնիսկ Գր. Զոհրապը և այլք: Բանաստեղծի բանտարկությունը շատ էր ազդել հատկապես Աղայանի վրա: Ինչպես հիշում է Նվարդը, Աղայանի «աչքերում արցունք էր փայլում, չէր կարողանում իրեն զսպել ու խոսել նրա մասին»[139]: «- Հրեն մեր Հովհաննեսը...,- ներկայացնում է Լեոն Ղ.Աղայանի խոսքերը,- էս մի քանի ամիս է, որ բանտումն է, երեխեքն անտեր, էգուց պիտի գնան ջուրը թափվեն... Ասում էր նա այս խոսքերը, և արտասուքի խոշոր կաթիլները ցողում էին նրա պատկառելի դեմքը: Տեսարանը ցնցող էր, իմ արտասուքներն էլ շարժվեցին»[140]: Իսկ Կոմիտասը 1909 թ. փետրվարի 14-ին իր անհանգստությունն ու ապրումներն առաջին հերթին արտահայտեց իշխանուհի Մարիամ Թումանյանին ուղղված նամակում՝ ըստ ամենայնի նրանից սպասելով որոշակի աջակցություն: Այսպես, անհանգստանում էին բոլորը, ովքեր ճանաչում էին բանաստեղծին, այդ թվում նաև Աբասթումանում տարիներ առաջ նրա հետ հանգստացողները և առողջարանային այդ քաղաքի բոլոր բնակիչները (10, 95):

Բոլորն անհանգստանում էին, իսկ իրական օգնության քայլեր ցուցաբերում է հատկապես իշխանուհի Մարիամ Թումանյանը, թերևս այն պատճառով, որ միայն նա ուներ այդպիսի հնարավորություններ և ամեն ինչ անում էր որևէ կերպ բանաստեղծի վիճակը մեղմացնելու համար: Հենց լսում է պոետի բանտարկության լուրը, անմիջապես գնում է փոխարքա Վորոնցով-Դաշկովի հետ տեսակցության, որպեսզի համոզի նրան Թումանյանի անմեղության մեջ: Փոխարքան ուշադրությամբ լսում է, իր գրքույկում ինչ-որ

138 Մետեխի բանտում Թումանյանին հատկացվել էր թիվ 15 բանտախուցը: Ընտանիքի հետ տեսակցությունը թույլատրվում էր շաբաթը մեկ անգամ: Բանտապետի՝ ազգությամբ ռուս օգնականը, օրենքը խախտելով, երբեմն թույլ էր տալիս գրողի տեսակցություններն ընտանիքի անդամների հետ առանց բաժանարար ցանցի: «Գիտեին, որ տասը երեխա ունի,- գրում է Նվարդ Թումանյանը,- և ամեն անգամ, երբ երեխաներով մայրիկի հետ բանտն էինք գնում, թույլ էին տալիս ազատ խոսելու» (ՀՋ, 90): Իսկ Օբեդնիկով ազգանունով բանտի մուտքի պահակներից մեկը երբեք չէր խուզարկում բանաստեղծին բերված ուտելիքը. նա էլ, իր հերթին, միշտ հյուրասիրում էր բանտի պահակին Բարյացակամ էր տրամադրված նաև բանտապետ Ռըմկևիչը, որը, ըստ Մարիամ Թումանյանի նկարագրության, «միջին հասակի, նիհար և շատ համակրելի դեմքով մի մարդ էր» (ՄԹ, 139

139 Ղազարոս Աղայանը ժամանակակիցների հուշերում. Եր., 1967, էջ 371:

140 **Լեո**,Երկերի ժողովածու 10 հատորով. հտ 8. Եր., 1985,, «Սովետ գրող» հրատ., էջ 431:

նշումներ է անում և խոստանում է ծանոթանալ գործին: Իր հերթին Կովկասի փոխարքային՝ կոմս Իլարիոն Վորոնցով-Դաշկովին, բանտից հունվարի 24-ին առանձին խնդրագրով դիմել էր նաև Թումանյանը՝ գրելով նրան, իր անմեղության և 1905-1906 թթ. իր խաղաղասիրական գործունեության մասին:

Դիմումն ավարտում է հետևյալ խոսքերով. «...Խոնարհաբար խնդրում եմ Ձեր բարձր հովանավորությունը, որպեսզի ես էլ դատապարտված չլինեմ կրելու այն դժբախտների ճակատագիրը, որոնք բանտում նստում են երկար ամիսներ, ավելի, քան շատ գողեր ու ավազակներ, և ժամկետն անցնելուց հետո ազատվում են որպես անմեղներ, թյուրիմացության զոհեր, այն, ինչին ես վկա եղա կալանքի ընթացքում» (10, 487):

Թումանյանի խնդրագիրը որևէ դրական արդյունքի չէր կարող հանգեցնել: Նույնիսկ իշխանուհին երկար ժամանակ փոխարքայից պատասխան չէր ստանում, սակայն չէր հուսահատվում: Մեկ ամիս ապարդյուն սպասելուց հետո, նա վերստին դիմում է փոխարքային, միջնորդում և հիշեցնում Թումանյանին ազատ արձակելու իր խնդրանքը: Այս անգամ փոխարքան անպատասխան չի թողնում, սակայն հավատացնում է իշխանուհուն, որ նա կարգադրություն է արել՝ արագացնելու գործի քննությունը: «- Ես կատարելապես հավատում եմ Ձեզ,- ասել է փոխարքան իշխանուհուն,- որ Թումանյանը մեծ բանաստեղծ է, բայց դա չի խանգարում նրան լինել և հեղափոխական» (ՄԹ, 139): Իշխանուհին հակադարձում է. «Ո՜չ, ո՜չ,- տաքացած պատասխանեցի ես, հավատացնում եմ Ձեզ, որ ներկա դեպքում նա կատարելապես անմեղ է» (ՄԹ, 139):

Փոխարքան ժպտում և դարձյալ նույնն է խոստանում՝ արագացնել քննության ընթացքը, իշխանուհին հուսադրվում է միայն երրորդ այցելության ժամանակ, երբ ստանում է նրա խոստումը, թե Թումանյանը «շուտով ազատ կլինի» (ՄԹ, 139): Ըստ ամենայնի՝ փոխարքան ձևացրել է, որ այնքան էլ կողմ չի համատարած ձերբակալություններին: Այդ մասին շրջանառվող լուրերին տեղյակ է եղել նաև բանաստեղծը, նա 1909 թ. դեկտեմբերի 21-ին գրում է. «Մեր գործի մասին էլ լուր կա, որ մի մասի գործը կընդհատեն, մյուս մասինը կտան դատի. սակայն փոխարքան պահանջում է, որ սրանց գործն էլ ընդհատեն» (10, 86):

Մյուս կողմից իշխանուհուն «շարունակ տանջում» էր Թումանյանին տեսնելու և հուսադրելու ցանկությունը: Բարեգործական երեկույթներից մեկում քաղաքագլուխ Ալ. Խատիսյանը նրան ծանոթացնում է Մետեխի բանտի տնօրենի (վարիչի)՝ բանտապետ Ռըմկևիչի հետ, որպեսզի բանաստեղծի համար հնարավոր լիներ արտոնություններ ստանալ. «Ինձ թեև շատ

զզվելի էր բանտապետի ձեռքը սեղմելու, այնուամենայնիվ ես զսպեցի ինձ՝ միշտ Թումանյանի շահը աչքի առաջ ունենալով և համարյա ամբողջ երեկո Ռըմկևիչի հետ անցկացրի: Ես աշխատում էի գրավել նրա համակրությունը, և իսկապես բաժանվելիս նա խոստացավ ինձ տեսակցություն տալ բանտարկյալի հետ, որ ինձ շատ ուրախացրեց» (ՄԹ, 140):

Նշանակված օրը՝ իր կյանքում առաջին անգամ, իշխանուհին գնում է բանտ, և «զանազան զգացմունքներ» ալեկոծում են նրա սիրտը: Կալանատանը նա նկատում է աչքերում անհուն հուսահատություն ունեցող բանտարկյալների, լսում է զբոսանքի դուրս եկած կալանավորների շղթաների ձայները. «Մի րոպե երևակայեցի Թումանյանին շղթայված, և սիրտս կսկծաց, աչքերս մթնեցին, և գլուխս պտտվեց: Ես հենվեցի աթոռին, որ չընկնեմ»,- հիշում է իշխանուհին (ՄԹ, 140): Նույն պահին մոտենում է բանտապետ Ռըմկևիչը և ազնվական տիկնոջն ուղեկցում է իր բնակարանը, որը գտնվում էր բանտի շինության ծայրում: Սակայն իշխանուհին, «կասկածելի փայլ» նկատելով բանտապետի աչքերում, «սարսափում է» նրա հետ նույն սենյակում մնալ կիսաուշագնաց դրության մեջ, հետաձգում է տեսակցությունը մեկ այլ անգամի և խնդրում է իրեն տուն ուղեկցել: Ռըմկևիչին դուր չի գալիս իշխանուհու այդ որոշումը, և նա «պաշտոնական սառը» ձևով հայտարարում է, որ հաջորդ անգամ իշխանուհին կարող է գալ միայն նահանգապետի թույլտվությամբ: Մարիամ Թումանյանը բանտի դռներից դուրս է գալիս կարծես «երազի մեջ»: Փողոցում դեռ երկար ժամանակ նրան հետապնդում են շղթաների ձայները, բանտից ստացած սարսռազդու տպավորությունն այնքան ուժեղ էր, որ մի քանի օր ուշքի չի գալիս: Երբ, այնուամենայնիվ, հանգստանում է, տեսակցության թույլտվության համար դիմում է նահանգապետին, սակայն մերժվում է: Մերժման պատճառն ազգակցական կապի բացակայությունն էր: Այսպիսով, իշխանուհին այլևս չի կարողանում բանաստեղծին այցելել բանտում և կորցնում է նրա հետ տեսակցելու համար ընձեռված միակ հնարավորությունը:

Փոխարքան, այնուամենայնիվ, ցանկացել է օգնել Թումանյանին, որովհետև արդեն բանտից դուրս գալուց հետո՝ 1909 թ. հուլիսի կեսերին, բանաստեղծը տեղեկացել է այդ մասին. «Միայն թե մի բան ինձ շատ զարմացրեց, թե ինչ սրտով են վերաբերվել իմ գործին փոխարքան ու կինը և մի քանի ուրիշ բարձրադիր անձինք» (10, 77): Այստեղ իր դերն են խաղացել իշխանուհու դիմումներն ու այցելությունները: Երբ Թումանյանը բանտից դուրս է գալիս, իշխանուհին Աբասթումանում էր: Բանաստեղծը նրան գրում է. «Կարոտով սպասում եմ, երբ կտեսնվենք ու կպատմեմ երկար, երկար» (10, 77): Նա խոստանում էր պատմել «երկար, երկար», թեև մեղադրական

գործից ընդհանրապես խոսել չէր ցանկանում, և կատարվածից հոգնած ու ուժասպառ ասում էր. «Հահլես գնում է»: Նա սովորաբար խուսափում էր տհաճ իրադարձությունների ու երևույթների մասին մտերիմների հետ խոսելուց: Մեկ այլ առիթով մյուս մտերիմ Փիլիպոս Վարդազարյանին, ասում է. «Ափսոս, ոչ սիրտ ունիմ, ոչ հնարավորություն գրելու քեզ իմ բոլոր տպավորություններն ու տեսածները» (10, 54): Սակայն իշխանուհու մոտ անկեղծանալու նրա խոստումը միանգամայն անկեղծ էր:

Մեր ամբողջ կյանքն անվերջ ափսոսանք է

Բանաստեղծի և նրա սիրելի բարեկամուհու երազն այդպես էլ անկատար մնաց: Իրականությունից խույս տալուց, սիրած էակից ինքնակամ հրաժարումից հետո բնականաբար ծնվում են ափսոսանքն ու զղջումը: Այն, ինչ ցանկանում էին, այդպես էլ չունեցան և կորցրեցին կյանքի վայելքը: Տարիներ հետո նրանց երկուսի խոստովանություններն էլ ավելի քան խոսուն էին:

1910 թ. հունիսի 26-ին, երբ իշխանուհին Լեյզենում էր, Թումանյանը նրան գրում է. «Հիմի, որ հեռացել եք, հազար ու մի բան է անցնում մտքովս, ու **ափսոսում եմ, թե ինչու էս ինչ բանից չխոսեցինք կամ էն մյուսն էնպես չարինք**: Սրա նման մի դեպք է հետս պատահել, բայց էն արդեն ուրիշ պատմություն է: Ես մի ժամանակ սիրահարված էի մի կնոջ վրա: Նա ոչինչ չգիտեր: **Անցան տարիներ, իմ սերն էլ մեղմացավ, ու միայն վերջին ժամանակներս բացվեց հանկարծ իմ երբեմնի զգացմունքը՝ բարեկամական մի խոսակցության ժամանակ: Այժմ նա էլ է հեռացել, ու ես շարունակ ափսոսում եմ, թե ինչու... բայց ավելորդ ինչուներ են: Անցել է, և ամեն ինչ պետք է անցնի, իսկ մենք էնքան ենք անշնորհք ու անճաշակ, որ աշխարհքի գեղեցկությունները գեղեցիկ ու սրտալի ապրել-վայելել չենք իմանում, և մեր ամբողջ կյանքը անվերջ ափսոսանք է»** (10, 93):

Դեռ այդ խոսքերը գրելուց մի տարի առաջ՝ 1909 թ. հուլիսի 18-ին, Թումանյանն Աբասթումանում հանգստացող իշխանուհուն հիշեցնում է իր համար նրա թափած արցունքները և ափսոսում իր ցնորքների համար: «Այդտեղ նամակներ եմ ստացել, որոնց վրա **արտասուքի կաթիլների հետքերն ամեն խոսքից ու գրչից ավելի պերճ են խոսել իմ սրտին**... Այդտեղ ես բանաստեղծություններ եմ գրել ինձ համար ու տվել քամուն... **Ճշմարիտ որ «սիրելի Աբասթուման», այնքան թանկագին ցնորքների, հիշողությունների ու զգացմունքների հետ է կապված – սկսած Աբասթուման գնալու պատմությունից ու արցունքներից»** (10, 82):

Այս շրջանում Թումանյանի կյանքում ափսոսանքի տրամադրությունն իշխող էր, և այդ մասին նա խոստովանում է նաև իր նամակների այլ հասցեատերերին: Հեղինե Մելիք - Հայկազյանին ուղղված 1909 թ. դեկտեմբերի 21-ի նամակում գրում է. «**Եվ ես էլ վաղուց լուրջ ափսոսում եմ ինձ**: Բայց ի՞նչ անենք. էս է ու էսպես մեր աշխարհը, մեր կյանքը, մեր մթնոլորտը... Եվ ես չեմ զարմանում, բայց ցավում եմ» (10, 85):

Թերևս իշխանուհին ոչ միայն նույնպես, այլ շատ ավելի էր ափսոսում կորցրած երջանիկ պահերի, գուցե նաև երջանիկ լինելու կորցրած հնարավորության համար: Սակայն լինելով հայ ավանդական դաստիարակություն ստացած կին՝ իր ափսոսանքը և ինչ-որ տեղ նաև զղջումն արտահայտում էր անուղղակի ձևով՝ ամեն անգամ վկայակոչելով Թումանյանի խոսքերը՝ թաքնվելով և պատսպարվելով դրանց ետևում:

«Ճիշտ որ մենք ամբողջ կյանքը ափսոսում ենք, ինչպես ասում է Թումանյանը»,- գրում է իշխանուհին և նույն ուժգնությամբ մշտապես զգում բանաստեղծի կարիքն իր կյանքի բոլոր դժվարին պահերին:

Իշխանուհին Լեյզեն էր գնացել որդուն՝ Միքայելին բուժելու նպատակով: Նա խնդրում է Թումանյանին նամակ գրել անձամբ որդուն և բարձրացնել երեխայի տրամադրությունը: Բանաստեղծի այդ նամակը չի պահպանվել, սակայն իշխանուհուն գրած լինելու հավաստիացումը կա պոետի 1910 թ. հունիսի կեսերին իշխանուհուն հասցեագրած նամակում. «Ես էլ շուտ-շուտ կգրեմ: Միքայելի նամակը տվեք իրեն - հետո երկար կգրեմ» (10, 91): Ու թեև Թումանյանը խոստման համաձայն հաճախ էր գրում Մարիամ-Մարմարին, սակայն նա միշտ դժգոհում էր և՛ նամակների քանակից, և՛ ծավալից:

Բանաստեղծն Աբասթումանից 1910 թ. հուլիսի 26-ին բացիկ է ուղարկում, որի վրա նկարված էր Արազինդո սարը, տեղեկացնում է, որ երեկույթ են կազմակերպել սարի վրա նաև իշխանուհու աջակցությամբ կառուցվող առողջարանի օգտին: Այդ առիթով, նշում է բանաստեղծը, իշխանուհուն շատ են հիշել ու մեծարել: Նույնի մասին գրում է նաև օգոստոսի 10-ին. «Ամեն անգամ, որ գնում ենք Արազինդո սանատորիայի տեղը, հիշում ենք Ձեզ ամենքս» (10,103): Իշխանուհին նեղացած պատասխանում է. «Նմանապես շատ հաճելի չէր լսել Ձեզանից, որ ինձ հիշում եք միայն, երբ Արազինդո եք բարձրանում, այն էլ սանատորիայի պատճառով, լավ է, որ գոնե այդքան էլ հիշում եք: Ես կարծում էի, որ Դուք ինձ հաճախ նամակներ կգրեք և սիրտ կտաք ինձ այս հեռու երկրում: Չէ՞ որ ես բոլորովին մենակ եմ» (ՈւՀ 5, 346): Թումանյանը, իհարկե, պատասխանում է անմիջապես՝ փորձելով սիրո ու գնահատանքի ջերմ խոսքերով փարատել իշխանուհու անհիմն կասկածներն ու ցրել նրա տխրությունը, վերստին ընդգծում է իշխանուհու մարդկա-

յին և կանացի նկարագրի եզակիությունը:

1910 թ. սեպտեմբերի 9-ին, ի պատասխան իշխանուհու սեպտեմբեր 6-ի վերոհիշյալ նամակի, Թումանյանը գրում է. «Զարմանում եք, սիրելի՛ Մարիա Մարկովնա, թե ինչու Ձեզ էդքան քիչ եմ հիշում ու նամակ գրում: Իսկ ես զարմանում եմ, որ Դուք կարծում եք, թե Ձեզ նամակ գրելու ժամանակ եմ հիշում» (10, 106): Մի ամբողջ տարի իշխանուհին շարունակ բողոքում էր Թումանյանի անուշադրությունից, իսկ բանաստեղծը չէր հոգնում արդարանալուց. «**Ձեզ հիշել եմ ամեն օր, ամեն օր, և այդ Դուք պետք է գիտենաք**: Եվ հանկարծ Դուք գրում եք, թե Ձեզ չեն հիշում: Այս «չեն հիշումն» ինձ այնքան վշտացրեց, որ այս նամակը գրում եմ հատկապես բողոքելու համար...

Վերջապես, մի լավ բան չի լինում, որ մարդ գրի. **չէ՞ որ ես ուզում եմ Ձեզ այնպիսի բան գրեմ, որ ուրախանաք** – և չկա... Իսկ **միմիայն ձևի համար գրել՝ առաջինը ես չէի կարող, երկրորդը՝ Ձե՛զ չէի կարող**» (10, 118): Որպեսզի իշխանուհին Թումանյանից չնեղանար, հաճախ օգնության էին հասնում նրանց ընդհանուր բարեկամները: 1907 թ. մայիսի 6-ին Շվեյցարիայում գտնվող իշխանուհուն Շանթը վստահեցնում է. «Ձեր նամակը Հանեսին ցույց եմ տվել. նա էլ ուզում է Ձեզ շարունակ գրի ու գրի, բայց թե երբ կը գրի, ճշմարիտը չգիտեմ, գիտեք էլի, մեր Օհանեսը»[141]:

Թեև սիրո խոստովանությունից անցել էր երկու տարի, և սերը «մեղմացել էր», սակայն Թումանյանի հիացմունքն իշխանուհու նկատմամբ ամենևին չէր նվազել:

1910 թ. օգոստոսի 10-ին բանաստեղծն Աբասթումանից գրում է. «Ավելի ու ավելի շատ հայ տիկինների հետ ծանոթանալով՝ ավելի ու ավելի էլ գնահատում եմ Ձեզ: Ինչ խեղճ արարածներ են, Տեր Աստված, ոչ մի հետաքրքրություն, ոչ մի կենդանություն, ոչ մի շարժում, ոչ մի գույն, բովանդակություն: Չափազանց շատ են ծանձրալի, նույնիսկ խղճալի» (10, 103):

Իշխանուհու համար այնքան հաճելի էր բանաստեղծի այդ համեմատությունը, որ նա անմիջապես համաձայնում է, մանավանդ որ ամբողջ կյանքում միշտ աշխատել է հեռու մնալ կանանց միջավայրից. «Տիկինների մասին ինչ-որ նկատել եք, ճիշտ է, և դա ինձ մեծ ցավ է պատճառում: Երբեմն ուղղակի ամաչում եմ տղամարդկանց առաջ՝ լսելով, թե ինչ կարծիք ունեն մեր մասին» (ՈւՀ 5, 347):

Տարիներ անց՝ 1916 թվականին, իշխանուհին 46-ամյա տարիքում հիվանդանում է մանկական դիֆտերիայով: Եվ նույնիսկ այդ հիվանդությունը նրան բամբասանքի առարկա է դարձնում: Թումանյանը նրան մխիթարում է՝ կես-կատակ, կես-լուրջ ընդգծելով իշխանուհու նկատմամբ կանանց ան-

141 ԳԱԹ, ՄԹՖ, թիվ 649 բ: Տես նաև Շ 9, 132:

բարյացակամ, խանդոտ վերաբերմունքը. «Ո՛չ բալեր սարքելով, ո՛չ ընկերությունների մեջ գործելով, ո՛չ հրատարակություններ անելով, ո՛չ թատրոնական խումբ պահելով, ոչ մի բանով այնքան չէիք գրգռել մեր կանանց նախանձը, որքան Ձեր վերջին դիֆտերիտով:

Ասում են՝ նա քանի՞ տարեկան է, որ դիֆտերիտով հիվանդանում է...

Ա՛խ, ինչպես Դուք հանգիստ չեք տալիս մեր այնքան հանգիստ սիրող տիկիններին, ինչպես գիտեք, Դուք նրանց միշտ եք վրդովել» (10, 236-237):

Իշխանուհին անվերջ հորդորում էր բանաստեղծին ավելի անկեղծ լինել իր հետ և ավելի համարձակ: 1909թ. հունիսի 20-ին նա գրում է. **«Ձեր նամակները բացի ինձանից ոչ ոք չի կարդալ, այնպես որ կարող եք շատ անկեղծ գրել ինձ»** (ՈւՀ 5, 331):

Յուրաքանչյուր փոքր առիթով իշխանուհին մինչև հոգու խորքը վիրավորվում էր բանաստեղծից: Բավական է՝ Թումանյանը չգնար նրա կազմակերպած պարահանդեսին և ստիպված էր լինում արդարանալ, դիմագրավել իշխանուհու հանդիմանություններին: 1902 թ. հունվարին իշխանուհին դժգոհում է բանաստեղծից. «Ձեր բացակայությունը իմ պարահանդեսին, առանց որևէ լուրջ պատճառների, ինձ այնքան վշտացրեց, որ ես չեմ կարող չհանդիմանել Ձեր անտարբերությունը դեպի ինձ: Ձեզ հայտնի է, թե որքան եմ տանջվում թե՛ ֆիզիկապես, թե՛ բարոյապես, մինչև կազմակերպում եմ մի պարահանդես...

Ձեզ հասկանալի պետք է լինի իմ ցանկությունը, որ իմ մոտիկ բարեկամները, հոգով բարեկամները բաժանեն ինձ հետ իմ հաճույքը... և խրախուսեն ինձ... **Հասկացեք, որ չկար ինձ հաճույք այս անգամ, որովհետև Դուք ներկա չէիք»**[142]:

Բանաստեղծը նրան պատասխանում է. «...Պարահանդեսին չէի եկել. Դուք վշտացել եք:

Դուք համոզված պետի լինեք, որ ես երբեք չեմ կամենա Ձեզ վշտացնել և այս դեպքում էլ կարող կլինեմ արդարանալ: Ես խնդրում եմ Ձեզ պարահանդեսի հետ չխառնեք: Դուք ուրիշ բան եք, պարահանդեսն՝ ուրիշ...

Ինչ վերաբերում է Ձեզ, դրա մասին թողնում եմ Ձեզ խոստովանելու, թե ինչպես եմ ես վերաբերվում:

Մարիամ Թումանյանը իշխան Վորոնցով-Դաշկովի պարահանդեսում

142 Տես Մարիամ Թումանյանի 1902 թ. հունվարի 22-ի նամակը, ԳԱԹ, ԹՖ, 1248:

Մի խոսքով, ավելի շուտ ինձ պիտի ցավակցեիք, որ ես չկարողացա գալ, այնինչ հանդիմանում եք» (10, 115):

* * *

Կնոջ և տղամարդու քսանհինգ տարվա անկեղծ սիրո ու բարեկամության ընթացքում Թումանյանը երբեք չի նեղացրել Մարիամին: Այդ մասին վկայում է ինքը՝ իշխանուհին՝ ասելով, որ ինքը բանաստեղծից երբեք չի լսել «ոչ մի կոպիտ խոսք, երբ տխուր էի՝ նա համակերպվում էր ինձ, **մոտենում էր հարցերին այնպիսի նրբազգացությամբ, որ կատարյալ ներդաշնակություն էր ստեղծվում մեր մեջ, ու նույնիսկ լուռ նստելը ինձ բավականություն էր պատճառում և հանգստացնում էր իմ երբեմնի ալեկոծված սիրտը**» (ՄԹ, 142):

Կյանքի վերջին տարիներին Թումանյանի և իշխանուհի Մարիամի միջև որոշակի տարաձայնություն ու հեռավորություն էր առաջացել: Ինքը՝ իշխանուհին, այդ սառնության երկու պատճառ է մատնանշում՝ քաղաքական իրադրությունը և բանաստեղծի՝ արդեն հռչակված լինելն ու նյութական ապահովվածությունը: Մեր կարծիքով՝ առաջին հանգամանքը, իրոք, համապատասխանում է իրականությանը: Եղեռնին հաջորդած տարիներին Թումանյանի կյանքը վերածվել էր դժոխքի, և նա դադարել էր իր կամ հարազատների, մտերիմների համար ապրելուց: Նրա ուսերին ծանրացել էր պետականություն չունեցող հայրենիքի, անհամար գաղթականների ու որբերի, ազգամիջյան՝ միմյանց հաջորդող բախումների, սահմանների, կորցրած տարածքների և հազար ու մի այլ խնդիրներ: Բանաստեղծը դարձել էր ժողովրդի ճակատագրի բոլոր հարվածների և ողբերգության կրողը: Անձնական, անհատական ապրումները ետին պլան էին մղվել, նրանք այլևս տեղ չունեին բանաստեղծի բյուր ցավերից բզկտված ու տառապած հոգում:

Սակայն ինչ վերաբերում է հռչակված լինելուն և նյութական ապահովվածությանը, ապա այստեղ իշխանուհու մեկնության հետ չենք կարող համաձայնել: Այդ պատճառաբանությունները մեզ հիմնավոր չեն թվում, քանի որ Թումանյանը հռչակավոր էր նաև 1908 թ., երբ սեր էր խոստովանում իշխանուհուն: Ինչ վերաբերում է նյութական ապահովվածությանը, ապա բանաստեղծը, ինչպես 1890-ական թթ., 60 պարտատեր ուներ, այնպես էլ կյանքի վերջում: Նրա մահից հետո կնոջը՝ Օլգային, ներկայացվում է 61 անձից կազմված պարտատերերի ցանկ[143]:

Առհասարակ, Թումանյանի կյանքի ու ապրելակերպի խորհուրդը ոչ

143 Այդ մասին մեզ հաղորդել է բանաստեղծի թոռնուհին՝ Իրմա Սաֆրազբեկյան-Թումանյանը՝ հենվելով ընտանեկան արխիվի նյութերի վրա:

միշտ էր հասկանալի իշխանուհուն: Նա բազմիցս մեղադրել ու հանդիմանել է պոետին նրա հյուրամոլության, շռայլության, անկանոն կյանքով ապրելու համար: Իշխանուհին գրում է. «Թումանյանը շատ անկարգ էր իր պարապմունքների մեջ: Որքան էլ լուրջ զբաղված լիներ նա՝ եթե մեկը գար իր մոտ, իսկույն կթողներ գործը և կսկսեր զրույց անել նրա հետ: Նա ժամանակը չէր գնահատում և դատարկ բաներով անց էր կացնում օրը» (ՄԹ, 101):

Ամենից շատ իշխանուհին չէր ընդունում Թումանյանի շռայլ ապրելու ձգտումը և անխտիր ամենքին իր հարկի տակ ընդունելու, անվերջ հյուրասիրելու սովորությունը. «Բացի գրողներից՝ ով ասես չէր լինում նրա տանը, և այդ քեֆերի համբավը տարածվել էր ամեն տեղ: Բայց ես, չնայած որ այնքան մոտ էի Թումանյանին, **խուսափում էի մտնել նրա բնակարանը, որ չտեսնեմ ու չլսեմ այդ հյուրասիրությունների մասին**... Նա այդ գումարները, որ կբավարարեր շաբաթներ, մի օրվա մեջ էր ծախսում, այն էլ այնպիսի անմիտ ձևով՝ կերուխումի համար: **Թումանյանի բնավորության այդ գիծը ես բացասական էի համարում»** (ՄԹ, 117-118):

Թումանյանը հիվանդության պատճառով բացակայում է հերթական «Հինգշաբթիներից» մեկից: Եվ իշխանուհին Ֆիլիպի հետ գնում է հիվանդատես՝ վերցնելով պաքսիմատ, թխվածքներ և այլն: Սակայն նրանց համար Օլգան այնպիսի «ճոխ» սեղան է բացում, որ իշխանուհին շփոթվում է. «Մնացի բերանը բաց... Ինձ վրա շատ ծանր տպավորություն արեց այդ ճոխ սեղանը: Բերածս տվի տիկնոջը՝ ասելով, որ երեխաների համար եմ բերել, և ոչ ոք չկասկածեց, թե ինչ էր կատարվել իմ սրտում: Այդ երեկո տրամադրությունս ճնշված էր» (ՄԹ, 118):

Իշխանուհին համեստ հյուրասիրության կողմնակից էր, և լինելով մեծահարուստ կին՝ նա միշտ «համեստ» հյուրասիրություններ էր կազմակերպում, որպեսզի չընդգծեր իր և իր տուն այցելող գրողների ու արվեստագետների սոցիալական տարբերությունը, որպեսզի հյուրերն ավելի ազատ ու լիարժեք զգային իրենց: «Իսկ Թումանյանը ինչ միջոցներով էր ապրում՝ ինձ համար մինչև վերջն էլ հանելուկ մնաց» (ՄԹ, 119):

Բանաստեղծի՝ «ճոխ ու շռայլ, անհաշիվ» ապրելու խորհուրդն ընկալելի չէր ոչ միայն իշխանուհու, այլև շատերի համար: Աղետալի կյանքի ալեկոծությունների ու նավաբեկությունների մեջ Թումանյանը փորձում էր իր լավ թաքցրած ցավաբեկ սրտով մարդկանց սովորեցնել վայելել կյանքը, ապրել ուրախ, «նյութից զատված», խաղաղ և ուրախ անցնել «երկու օրվա ճամփան»: Նրա նվիրական երազներից էր՝ ձուլվել թե՛ բնությանը, թե՛ մարդկությանը, իր ուժերի սահմաններում յուրաքանչյուրի համար ստեղծել հնարավորություն վայելելու «էս աշխարհքը շեն ու լի»:

Երնեկ էսպես՝ անվերջ քեզ հետ – իմ կյանքի հետ լինեի.
Հազար երնեկ՝ դաշտում մենակ՝ երկընքի հետ լինեի,
Բայց ով կըտա էն վայելքը՝ ինքըս ինձ էլ չըզգայի,
Ու հալվեի, ծավալվեի, ամենքի հետ լինեի... (2, 45):

Բանաստեղծը չգիտեր, որ «աշխարհքում» շատ բան ուներ՝ «էս, թե էն», նա ապրում էր ոչ այն ժամանակավոր աշխարհի օրենքներով, որտեղ իրեն ընդամենը հյուր էր զգում: Յուրաքանչյուր հանճար ապրում է իր օրենքներով, գրեթե մշտապես զգում է հասարակության ծուռ հայացքը, ապրում է չհասկացված լինելու դրաման, և շատ հաճախ է մտերիմներով ու հարազատներով շրջապատված՝ միայնակ զգում իրեն...

Ինչ իմանաս Ըստեղծողի գաղտնիքները անմեկին. -
Ընկեր տըվավ, իրար կապեց էս աշխարհքում ամենքին.
Բանաստեղծին թողեց մենակ, մեն ու մենակ Իրեն պես:
Որ Իրեն պես մըտիկ անի ամեն մեկին ու կյանքին:

Ահա այդպես 1920 թ. մարտի 30-ին Թումանյանը «մըտիկ» էր անում իրեն շրջապատող և իր էությունը մեկնել չկարողացող շատ մտերիմների: Այո, Թումանյանն անճշտապահ էր: Սակայն նա «այս անցավոր աշխարհում» այլ չափումներով էր ապրում: Ժամացույց չէր կապում, որ չզգա անցողիկ, երկրային կյանքի ժամանակը, իսկ իշխանուհուն անընկալելի էին մնում թումանյանական աշխարհի ոչ երկրային, տարածաժամանակային չափումները: Նա իր կարծիքն արտահայտում է այսպես. «Թումանյանի անճշտապահությունը ու անփութությունը ինձ վրա շատ վատ էր ազդում: **Իմ տեսակետից անճշտապահ մարդը կատարյալ մարդ չէ:** Գործունյա մարդը չի կարող անճշտապահ լինել, որովհետև նրա ժամերը ու րոպեները ձևած-չափած են» (ՄԹ, 123):

Իհարկե, Թումանյանը «գործունյա մարդ» չէր, ինչպիսին իշխանուհին էր: Նա բանաստեղծ էր, արվեստագետ, այն էլ տաղանդավոր, բացառիկ: Նա նման չէր ոչ իշխանուհուն, ոչ իր գործարար սիրելի ընկերներին՝ Ֆիլիպին, Արիստակես Զարգարյանին և այլոց: Նա նման էր ինքն իրեն, նա ուրիշ էր, անսովոր էր, և ճիշտը նա էր, որովհետև բանաստեղծն այդ աշխարհից չէր, նրանը տիեզերական չափումներն էին և հավերժությունը:

Տխուր վերջաբան

Թումանյանի և իշխանուհի Մարիամի հարաբերությունները շատ տխուր ավարտ ունեցան: Կյանքի վերջին տարիներին բանաստեղծն իր առօրյայով շատ էր հեռացել մտերիմներից և ամբողջությամբ մխրճվել էր ազգային գործունեության բնագավառը: Այդ հեռացումն արդեն տխրեցրել ու մեծ վիշտ էր պատճառել իշխանուհուն, որովհետև նրա սերը պոետի նկատմամբ շատ ավելի մեծ էր, քան գրողի ու բարեկամի նկատմամբ սերն էր: Եվ եթե Թումանյանի համար կարելի է ասել, որ նրա սրտում սերը մոխրացել, մարել էր, ապա նույնը չի կարելի ասել իշխանուհու համար: Մարիամի մեջ խոսում էր նաև վիրավորված կանացի արժանապատվությունը, որն էլ ավելի խորացավ 1921 թ. գարնանը, երբ նա Դիլիջանում խնդրեց բանաստեղծին՝ օգնել իրեն Ղարաքիլիսա հասնել նույն մեքենայով, այնուհետև Թիֆլիս՝ գնացքով, որը Թումանյանին էին տրամադրել խորհրդային իշխանությունները և անձամբ Ս. Օրջոնիկիձեն: Սակայն բանաստեղծը չկարողացավ նրա խնդրանքը կատարել:

Թումանյանը դստեր՝ Աշխենի հետ գալիս էր Երևանից, ուր գնացել էր Փետրվարյան ապստամբությանը վերջ տալու, Հայաստանի դաշնակցական իշխանություններին բոլշևիկների հետ հաշտեցնելու, քաղաքացիական եղբայրասպան կռիվները դադարեցնելու նպատակով:

Սիմոն Վրացյանը Երևանում բանաստեղծին ծանոթացրել էր Կասյան-Ավիս-Դովլաթյան ստորագրությամբ բոլշևիկյան մի հեռագրի, որի խիստ, կոպիտ և վիրավորական արտահայտությունները բանաստեղծին բնորոշում էին որպես «մի խաբեբա», որը Թիֆլիսում բոլշևիկներին խաբելով՝ եկել էր Երևան և անցել Դաշնակցության կողմը: Կասկածի տակ էին առնվում բանաստեղծի ուղղամտությունն ու սկզբունքայնությունը: Նա այդ պահին տառապում էր այն մտքից, որ անզոր եղավ որևէ կերպ փոխել դեպքերի ընթացքը: Նա տանջվում էր, որովհետև իր աչքի առջև սիրելի ընկերները՝ «վերնականները»՝ Լևոն Շանթն ու Նիկոլ Աղբալյանը, ինչպես նաև իր հարազատ որդին՝ Համլիկը, նախ կառքով, ապա ոտքով փախուստի ճամփա էին բռնել Պարսկաստանի լեռնանցքներով: Պոետը ոչ մի լուր չուներ նրանց մասին, չգիտեր, թե ինչպես տեղ կհասնեն: Չգիտեր, որ տիկերից պատրաստած լաստերով պիտի անցնեին Արաքսը, որ լեռներ պիտի հաղթահարեին՝ հասնելով Զանգեզուր ու Մեղրի, իսկ այնտեղ էլ կհայտնվեր ոմն Ռուբեն կամ մի քուրդ, որոնց միջոցով կանցնեին քրդական հողերի միջով: Դեռ չգիտեր, հոգում անորոշություն էր, իսկ ուսերին ծանրացել էր փախստական բոլոր ընկերների ընտանիքների մասին հոգ տանելու պատասխանատվության այն

ծանր բեռը, որ կամովին ստանձնել էր Թումանյանը: Այդ մասին իր հուշերում վկայում է Սիմոն Վրացյանը. «Նա աշխատեց ամէն կերպ թեթեւացնել հեռացած գործիչների ու մտաւորականների ընտանիքների դրութիւնը: Անձնապես ես այդ տեսակէտից առանձին երախտիք ունիմ նրա այն ազնիվ, կարելի է ասել, հայրական վերաբերումի համար, որ նա ցույց էր տվել դէպի իմ ընտանիքը: Եվ այժմ տարագրության մէջ գտնուողներից շատերը ջերմ երախտագիտութեամբ են խօսում նրա՝ այդ օրերի մարդկային գործերի մասին»[144]:

Ահա այսպիսի պահի Թումանյանի գործունեությունից դժգոհ բոլշևիկները, այնուամենայնիվ, նրա համար գնացքով շտապ Թիֆլիս հասնելու հնարավորություն էին ստեղծել: Դիլիջանում, տեսնելով իշխանուհուն, Թումանյանն ինքն է իջնում մեքենայից և ողջունում, սակայն 20 րոպե սպասելու և իր հետ նրան Ղարաքիլիսա հասցնելու խնդրանքին պատասխանում է. «Ժամանակ չգտա Ձեզ տեսնելու... Հիմա էլ վռազում եմ Ղարաքիլիսա հասնելու, մի ժամից գնացքը պիտի շարժվի, ինձ են սպասում... Մի րոպե անգամ չեմ կարող կորցնել, առանց այն էլ ես ուշացել եմ» (ՄԹ, 144):

Ո՞վ գիտե, մերժման իրական պատճառների մեջ իրոք շտապելուց բացի եղել է մեկ այլ մտահոգություն թե ոչ, դժվար է ասել: Բանաստեղծը գիտեր, որ Թիֆլիս հասնելու հատուկ պայմանները ստեղծել էին միայն իր համար և ըստ ամենայնի՝ նրան թույլ չէին տալու այլ անձանց օգնել գնացք բարձրանալու, և իշխանուհուն անզոր էր լինելու օգնել, մյուս կողմից՝ ավագ դուստրն ու թոռնիկն էին միևնույն մեքենայում: Այնուամենայնիվ, չենք կասկածում, որ Թումանյանի մերժման չբարձրաձայնված պատճառը, եթե, իհարկե, այդպիսին եղել է, պարզապես չէր կարող հիմնավորված չլինել:

Հուշագրությունն առհասարակ չափազանց կարևոր է յուրաքանչյուր անհատի կենսագրության համար, սակայն չպետք է մոռանալ և անտեսել այդ ժանրին բնորոշ անխուսափելի սուբյեկտիվությունը, այս կամ այն դեպքից հուշագրողի ստացած սխալ տպավորությունը, հնարավոր թյուրիմացությունը, հետագայի տպավորությունների ազդեցությամբ նախկինի վերանայումը: Այս դեպքի հետ կապված՝ բացի իշխանուհու հուշերից ոչ մի այլ վավերագիր չի պահպանվել: Մենք չենք կարող չհավատալ այդ ազնվագույն մեծ հայուհուն, սակայն չենք կարող նաև կասկածի տակ առնել միայն ուրիշների համար ապրած մեծ մարդու և հանճարի առաքինությունը: Իշխանուհու նկարագրած միջադեպի մեկնությունը համոզիչ չի թվում մեզ և մի տեսակ դուրս է մնում պոետի ապրելակերպի, կենսազգացողության տրամաբանությունից, չի տեղավորվում նրա մարդկային նկարագրի ընդհանուր պատկերում, խա-

144 «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1923, թիվ 10, էջ 76:

թարում է նրա բնավորությանը բնորոշ ամբողջականությունը, հակառակվում ու հակադրվում է նրա ողջ էությանը:

Այս անգամ էլ իշխանուհու աչքերը լցվում են արցունքով, նա իր ափսոսանքն է հայտնում, որ այդ խնդրանքով դիմել է Թումանյանին, և ոչ միայն վշտանում է, այլև խոր հիասթափություն է ապրում՝ կարծելով, թե ժամանակը փոխել է «իր Թումանյանին», և նա մոռացել է անցյալը. «Թումանյանը այդ րոպեին իր բարձրությունից ընկավ իմ աչքում» (ՄԹ, 144):

Թումանյանի հանդեպ իշխանուհու վերաբերմունքի փոփոխությունն ու հիասթափությունը ինչ-որ տեղ կարելի է բացատրել նաև այն հանգամանքով, որ Մարիամ Թումանյանը հուսահատված էր. և ոչ միայն գնացքների անկանոն երթևեկության պատճառով առաջացած դժվարություններից: Հասարակության աչքում նա այլևս իշխանուհի չէր, այլ դասակարգային թշնամի, որին սկսել ու դեռ պետք է ունեզրկեին նոր իշխանությունները: «Սիրտս կսկծում էր ոչ թե այն պատճառով, որ մնացի Դիլիջանում մենակ, անօգնական դրության մեջ, այլ Թումանյանի վերաբերմունքը ինձ վշտացրեց: Ես չէի կարող բացատրել նրա վարմունքը. արդյոք վախենում էր նա հասարակության մեջ երևալ ինձ հետ. Չէ՞ որ ժամանակը փոխվել էր, և «իշխանուհու» բարեկամությունը կարող էր նրան վնասել. կամ թե մեծ մարդ էր դառել, կարող էր մոռանալ իր անցյալը և ամեն բան, ինչ որ կապված էր նրա հետ» (ՄԹ, 144):

Այս տխուր տրամադրությունն էլ ավելի են խորացնում Թիֆլիս հասնելու ճանապարհին հետագա դժվարություններն ու խոչընդոտները:

Բազմաթիվ դիմումներից հետո Դիլիջանի զինվորական մարմինը իշխանուհուն թույլտվություն է տալիս N 4 զինվորական գնացքով Ղարաքիլիսայից մեկնել Թիֆլիս: Սակայն կայարանում հայտնում են, որ նա ուշացել է, և գնացքն արդեն մեկնել է նույն առավոտյան: Նոր թույլտվություն ստանալը երկար ժամանակ էր պահանջում: Մարիամ Թումանյանին հուսահատությունից դուրս է բերում նրա ծանոթներից մեկը, որն այդ պահին աշխատում էր զինվորական հիվանդանոցում: Նրա միջնորդությամբ իշխանուհին նստում է Թիֆլիս մեկնող սանիտարական գնացքը, որը Թիֆլիս էր տանում դեռևս լրիվ չապաքինված զինվորականների: Այնուամենայնիվ, իշխանուհին «երջանիկ» էր ստեղծված հնարավորության համար: Սակայն դեռ նոր էր նստել գնացք, երբ նրա կուպե է մտնում զինկոմը, որի հետ նա ընդհարված էր:

Սամսոն Հարությունյանը և Մարիամ Թումանյանը խորհրդային իշխանության առաջին իսկ օրերին Դիլիջանի իրենց շքեղ ամառանոցները նվիրել էին Հայաստանին[145]: Սակայն Ս.Հարությունյանի ամառանոցներից մեկի մի

145 Այդ սյունազարդ պատշգամբներով գեղեցիկ շենքերում հյուրընկալվել են Հովհաննես Թումանյանը, Սիրանույշը, Ե.Չարենցը, Ֆրիտյոֆ.Նանսենը և այլ նշանավոր անձինք: Այդտեղ է վախճանվել դերասանուհի Ազնիվ Հրաչյան (ՄԹ, 398):

սենյակում թույլ էին տվել իշխանուհուն ապրել իր ընտանիքով: Զինկոմը իշխանուհուց խնդրել էր նրա հայելին՝ վերադարձնելու պայմանով, և յուրացրել այն. «Առհասարակ,- հիշում է իշխանուհին,- կարգադրություն կար՝ ոչ մի իր չտանել իրա հետ, իսկ հայելին գրավված չէր, ու մանավանդ իրավունք չկար հայելին վերցնելու, բայց Военком-ը խախտեց այդ օրենքը և շատ բան տարավ, ի թիվս և իմ սեփական հայելին: 2-3 ամիս անց նա գործով եկել էր Դիլիջան, ես էլ օգտվեցի դեպքից, նախատեցի նրան ու երեսին «գող» կպցրի» (ՄԹ, 146): Տեսնելով իշխանուհուն՝ զինկոմը կոպտորեն հայտարարում է. «Գնացքի տերը ես եմ, իսկ ես թույլ չեմ տալիս Ձեզ այստեղ նստելու» (ՄԹ, 146): Իշխանուհին կուպեից դուրս է գալիս և աննկատելի անցնում գնացքի այն մասը, ուր հիվանդ զինվորներն էին պառկած, և վարակվելու վտանգ կար: Գթության քրոջ զգուշացումը անհանգստացնում է իշխանուհուն. «Ես սարսափեցի... որովհետև բծավոր տիֆը հենց ոջիլներով էր տարածվում... Ինչ անեի, վերադառնալ կուպեն, ուր տիրում էր իմ թշնամին, ես չէի համարձակվում, դուրս գնալ գնացքից՝ նույնպես չէի կարող, ու ես մնացի... Ամբողջ գիշեր անքուն անցկացրի այդ դրության մեջ» (ՄԹ, 146-147): Ասես բավական չէր այդ սարսափը, լուսադեմին զինվորները նրան դուրս են հանում վագոնից: Իշխանուհին ստիպված էր վերադառնալ իր «թշնամու» կուպեն: Նա կարողանում է զինկոմի հետ լեզու գտնել՝ միայն կաշառելով նրան ուտելիքով և կոնյակով: Լսելով խմիչքի անունը՝ զինկոմն անմիջապես կերպարանափոխվում է: Իշխանուհին գրում է. «Ես հյուրասիրեցի նրան, և կարճ ժամանակից հետո մենք արդեն բարեկամաբար զրույց էինք անում» (ՄԹ, 148-149):

Այսքան դժվարություններից հետո հասնելով Թիֆլիս՝ Մարիամ Թումանյանը տեղեկանում է, որ իր տունը բռնագրավված է: Սակայն դա բոլշևիկյան իշխանությունների այնքան սովորական և սպասելի գործելակերպ էր, որ առանձնապես չի հուզում իշխանուհուն, մինչդեռ բանաստեղծի մերժման ցավը ոչ մի այլ ունեցվածքի կորստի հետ համեմատվել չէր կարող: Իհարկե, Թումանյանը կապ չուներ բոլոր այն տանջանքների ու վիրավորանքների հետ, որ կրեց իշխանուհին ինչպես այդ տարիներին, այնպես էլ Դիլիջանից Թիֆլիս ճանապարհին, սակայն այդ պահին կյանքից անվերջ հարվածներ ստացած իշխանուհու հոգում բանաստեղծի հետ կապված տխուր միջադեպի հետևանքով առաջացած վերքն այդպես էլ երբեք չսպիացավ:

Ամիսներ հետո իշխանուհին հանդիպում է բանաստեղծին Թիֆլիսի փողոցներից մեկում: Թումանյանն ինքն է մոտենում Մարիամին և իր սովորական բաց ժպիտով մեկնում ձեռքը: «Ես սպասում էի, որ նա մի բան կասի այն դեպքի մասին, բացատրություն կտա, ներողություն կխնդրի» (ՄԹ, 149): Սակայն այդպես չի լինում, և զրույցը ծավալվում է բոլորովին այլ հարցերի

շուրջ: Այն, որ պոետը ներողություն չի խնդրում, նույնպես վկայում է նրա անմեղությունը: Սակայն իշխանուհու վիրավորված կանացի արժանապատվությունը դրդում է նրան դառնությամբ մտածելու, որ իրենց միջև անդունդ է բացվել, և իր սիրտն ավելի է հեռացել: «Փոխեցին իմ Թումանյանին,- տրտնջում և սրտի խոր կսկիծով գրում է իշխանուհին,- էլ նա իմ ամենամոտ բարեկամը չէր, ու մենք բառիս բուն նշանակությամբ օտարացել էինք միմյանցից» (ՄԹ, 149):

Գուցե ինչ-որ տեղ իշխանուհին իրավացի էր, և ժամանակն ու իրադարձությունները նրանց օտարացրել էին, սակայն Թումանյանը չէր փոխվել և չէր դավաճանել իր էությանը: Ավելին, նա դարձել էր հայ ժողովրդի մեծ ողբերգության, անհուն վշտի մեծ կրողը և իր փխրուն սրտում ներառել էր իր ազգին պատուհասած բոլոր արհավիրքներն ու ցավը: Նա սովորական մարդ չէր, այլ մարդ-պետություն, մարդ-ազգություն, մարդ-ժողովուրդ:

1922-ին, երբ Թումանյանը ծանր հիվանդ էր, իշխանուհին, այնուամենայնիվ, այցելում է նրան և ինքն իրեն դարձյալ չի խոստովանում, որ բանաստեղծն է եղել իր կյանքի ամենամեծ սերը, և դա, ըստ ամենայնի, այլևս դժվար չէր, քանի որ հիասթափությունը միանգամայն իրական էր. «Այն մի ժամը, որ ես անցկացրի Թումանյանի անկողնու մոտ, ինձ սոսկալի տանջանքներ պատճառեց... Շատ թանկ կտայի՝ վերադարձնելու համար իմ նախկին զգացմունքները, բայց ոչինչ չէի կարող անել ու ծանր սրտով հեռացա նրանից» (ՄԹ, 150):

Իշխանուհու կարծիքով Թումանյանի կողմից մերժված լինելն ավելի էր խորացրել իր կարոտախտն անցած երջանիկ ու երիտասարդ օրերի նկատմամբ. «Երբ Թումանյանի մահվան բոթը ինձ հասավ, ես մեծ կսկիծ զգացի և շատ արտասուք թափեցի: Ես ողբում էի այն առաջվա իմ մտերիմ բարեկամի մահը, հիշում էի այն քաղցր ժամերը, որ մենք անց էինք կացնում գրականության մասին խոսելով» (ՄԹ, 150):

1923 թ. ապրիլի 10-ին՝ բանաստեղծի հասարակական հոգեհանգստից հետո, իշխանուհին հրաժեշտ է տալիս Թումանյանին «Հայարտանը» (Հայ արվեստի տուն)՝ սակայն միայնակ, սպասելով բոլորի դուրս գալուն: Սիրտն ալեկոծվում էր, և արտասուքը՝ խեղդում: Նա անգիր հիշում էր բանաստեղծի նամակի այն տողերը, թե «մահն էլ կարող է սիրուն լինել», ինչպես աշունն Աբասթումանի հովտում, և ուզում էր աղաղակել. «Մահը սիրուն լինել չի՛ կարող» (ՄԹ, 151): Սերն իշխանուհու սրտում ամենևին էլ չէր մարել, հիասթափությունը չէր հաղթել նրան, անդառնալի մեծ կորստի վիշտը նորովի բորբոքեց, թվում է, արդեն մարած սերը. «...Այդ րոպեին ես ավելի խորը զգացի, թե ինչ եմ կորցրել» (ՄԹ, 151):

Ամբողջ կյանքում մշակութային ցանկացած արարողության ժամանակ իշխանուհին եղել էր կամ կազմակերպիչ, կամ տիրուհի, գլխավոր դեմք, համատարած ուշադրության կենտրոնում՝ միշտ առաջինը. ինքն էր որոշել ու կարգադրել ով, երբ և ինչ պիտի անի, իսկ այս անգամ ղեկը բոլշևիկների ձեռքում էր, նրանք էին դրության տերը, և այստեղ իշխանուհուն տեղ չկար: Եվ հիրավի ազնվական այդ կինը որոշում է չգնալ իր սիրելի բանաստեղծի թաղմանը՝ «իբրև լոկ հանդիսատես»: Բայց նախախնամությունն այլ որոշում էր կայացրել: Ապրիլի 15-ին թաղման թափորը չպետք է անցներ իշխանուհու տան կողքով: Սակայն հորդառատ անձրևի պատճառով ճանապարհը փոխվում է: Հանկարծ իշխանուհին ինչ-որ ձայներ է լսում փողոցից. «Միամտաբար մոտեցա պատուհանին,- պատմում է Մարիամ Թումանյանը:- Ես չէի ենթադրում, որ թափորը կանցներ մեր փողոցով. դա ծրագրված չէր և անսպասելի էր ինձ համար: Այնպիսի մի խայթոց զգացի ես սրտիս մեջ այդ րոպեին: Ինձ թվաց, որ Թումանյանը հանդիմանում է ինձ, թե ինչու չեկա նրա թաղմանը, նրան վերջին հրաժեշտը տալու: Այնքան ճնշեց ինձ այդ միտքը, որ երկար ժամանակ ես չէի կարողանում ազատվել այդ ծանր զգացմունքից» (ՄԹ, 151):

Պոետի Մարմարը քսանչորս տարի ապրեց նրանից հետո և մինչև իր կյանքի վերջին օրերը դառնությամբ ու ափսոսանքով մտածում էր, թե «ինչու և ինչու այդպես վերջացավ» իրենց մեծ բարեկամությունը:

Այո, նրանց մեծ սիրո պատմությունն ունեցավ դրամատիկ վախճան, որովհետև բանաստեղծի անձնական հույզերի մեջ կնոջ նկատմամբ սերը պարտվում, նահանջում էր մարդու և աշխարհի հանդեպ ծանր, ողբերգական խոհերի առջև: Բանաստեղծի ձգտումներն ու կարոտներն անհարիր էին աշխարհում տիրող սկզբունքներին:

Իշխանուհի Մարիամի և Թումանյանի մեծ բարեկամությունն ու սերը մշտապես ուղեկցվեցին բնության ձայնի և պարտքի, առաքինի վարքի պայքարով: Քիչ են այն ընտրյալները, որոնք պատրաստ են օրինակելի տանջանքը կրելու և կարոտի անհագուրդ ծարավի ըմպելիքն ընտրելու՝ կամովին ստանձնելով սեփական զգացմունքների սահմանափակումը՝ հոգում անթեղած անմահության խաբկանքը: Չի բացառվում, որ Թումանյանի զգացմունքները Մարիամի նկատմամբ ոչ այնքան սեր էին՝ հավետ անբնորոշելի, անորոշ ու տարտամ, որքան սիրելու ցանկություն, իդեալի մղում, պարզապես պոետական խենթություն, անիմանալի գեղեցիկը ճաշակելու անհուն տենչանք:

ՎԵՐՋԵՐԳ

Հովհաննես Թումանյանին շրջապատող կանայք իրենց վարքագծով, ապրումներով, մերթ հասարակական, մշակութային ակտիվ գործունեությամբ և միաժամանակ ընտանիքին նվիրվածությամբ, ինչպես հարազատ, այնպես էլ յուրաքանչյուր հայ երեխայի նկատմամբ մայրական գորովանքով ու անձնազոհությամբ, մերթ պարզապես երազներով ու տենչերով, կանացի համեստությամբ ու նաև համարձակությամբ, սիրելու անսահման կարողությամբ ներկայացնում են 20-րդ դարասկզբի հայ մտավորական կնոջ նկարագիրը:

Այդ կանանց համար Թումանյանին սիրելը ապրելու ցանկություն էր, իսկ բանաստեղծի ներկայությունը վայելելը՝ պարզապես երջանկություն: Որքան էլ ազնվական ծագում ունեցող հայ կանանց հպարտ սրտերը հնազանդվում էին սիրո առջև, այնուամենայնիվ, Թումանյանին սիրահարված կանայք տիրապետում էին իրենց, հրաժարվում այդ սիրուց՝ դրսևորելով առաքինի կնոջ վարք, ցուցաբերելով ընկերուհու ինքնազոհություն, մոր սխրագործություն, ամուսնու հավատարմություն: Նրանցից ոմանք դեռ չէին ավարտել բարձրագույն ուսումնական հաստատություններ, բայց բարձրագույն բարոյական կրթվածություն ունեին գրեթե բոլորը:

Թումանյանի ասպետական կեցվածքը նրանով հմայված կանանց դարձնում էր ուրիշ, ավելի լավը, ավելի գեղեցիկ, ավելի անկեղծ, ավելի պաշտպանված:

Բանաստեղծի՝ կնոջ պատիվն.ու արժանապատվությունը, նրա մարդկային հպարտությունը պաշտպանելու, արվեստագետ ու մտավորական կնոջն իր բոլոր օգտաշահ ձեռնարկներում աջակցելու վարքագիծը, նույնիսկ միայն նրա ժպիտն ու հոգեշահ զրույցը բավական էին, որ նրա միջավայրի կանայք ներշնչման պահեր ունենային, քանզի պոետը նրանց սովորեցնում էր անկախ ամեն ինչից, անկախ անհասանելի սիրուց և չիրագործված նպատակներից՝ երջանիկ լինել:

20-րդ դարի հայ կինը բարձր էր գնահատում տղամարդու կնամեծար վերաբերմունքի ցանկացած արտահայտություն, երջանկանում էր, երբ իր մեջ մարդ էին տեսնում և սիրում էին այդ մարդուն, երբ հարգում էին իրեն, երբ սիրում էին կրքերի ազդեցությունից զերծ, մաքուր ու ազատ սիրով: Յուրաքանչյուր սիրո վայելք մտավորական կնոջ համար ուղեկցվում էր բարոյազուրկ չլինելու նրբագեղությամբ, հաճախ բանականության ու ողջամտության, շրջահայացության տիրակալությամբ:

Թումանյանը սիրել է միշտ, սիրել է տարբեր կանանց: Այդ սիրո մեջ եղել է և՛ հրճվանք և տրտմություն ու նաև՝ տառապանք: Նրա սերը բարիք էր,

անկեղծ զգացմունք, քաղց-անհագություն, հոգեկան մտերմություն, ինքնազոհաբերում, հրաժարում և բաժանում: Նրա սերը չէր սխալվում և կույր չէր: Նրա սերը կնոջ մեջ տեսնում էր այն, ինչ կար, և չէր երկրպագում այն, ինչ չկար: Սակայն պոետի սերը չէր կարող խաբել իր սիրելիին, որովհետև նրա էությունը հավատարմությունն էր: Իսկ արվեստագետի հավատարմության ամենանվիրական վայրը նրա ստեղծագործությունն է:

Թումանյանի սերը կանանց նկատմամբ շատ է նման Փարվանա դստեր և թիթեռներ դարձող կտրիճների սիրուն: Բանաստեղծի համար կյանքն ու պոեզիան, անձնականն ու գեղարվեստականը միասնական են, և երկուսն էլ անարատ մարդու բարձր իդեալի ձգտման արտահայտությունն են:

ՀԱՎԵԼՎԱԾ

ՆԱՄԱԿՆԵՐ

ՄԱՐԻԱՄ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՑ

1898 մարտի 18
Թիֆլիս-Թիֆլիս[146]

Հարգելի պ. Թումանյան,

Շատ շնորհակալ եմ Ձեր համակրության համար, ես, իհարկե, հասկանում եմ Ձեր բացակայության պատճառը և չեմ պահանջում Ձեզանից, որ այցելեք ինձ: Բայց որքան Դուք հասկանալի եք ինձ, այնքան պ. Ֆիլիպի վարմունքը ինձ համար անհասկանալի է: Այս շաբաթ, երկու անգամ խնդրեցի նամակով, որ խոսի ինձ հետ հեռախոսով, բայց և իզուր սպասում եմ մի ամբողջ շաբաթ. երրորդ անգամ դիմել նրան չեմ կարող, գուցե չի ուզում ինձ հետ խոսել: Ես չեմ կարող երևակայել, որ նա վախենում է հեռախոսով վարակել իր քրոջ աղջկան, որի պատճառով չի գալիս ինձ մոտ: Երևակայեցեք դրությունս, ես կտրված եմ բոլոր աշխարհից, ոչինչ չգիտեմ մեր ընկերությունից և սաստիկ տանջվում եմ անգործությունից: Առաջին օրերը, երբ երեխան վտանգի մեջ էր, ես, իհարկե, ոչինչ բանով զբաղվել չէի կարողանում, ոչ գրել, ոչ կարդալ, բայց հիմա վտանգը անցել է, իսկ

Մարիամ Թումանյան

146 Նամակը պահվում է ԳԱԹ, ԹՖ, 1241 (656): Տպագրվում է առաջին անգամ: Թումանյանի նամակը, որին պատասխանել է իշխանուհին, անհայտ է:

ես դեռ բանտի մեջ եմ: Ամենասարսափելին այն է, որ մյուս երեխաներիս հեռացրեցին, և ես մնացի բոլորովին մենակ և շատ տխուր եմ: Եթե երեխայի դրությունը չվատանա, ուրբաթ կերթամ մեր նիստին. անգործությունը սպանում է ինձ. սորանից ավելի մեծ պատիժ չեմ կարող երևակայել ինձ: Խնդրեմ այս երկու գրվածքս **ուղղեցեք** և տվեցեք «Տարազին», եթե հարմար գտնեք տպագրության համար: Սրբագրությունն էլ Ձեզ եմ հանձնում, ես չեմ կարող ոչ ոքի հետ հարաբերության մեջ մտնել: «Տարազում» կարող եք ասել, որ ես եմ գրել, բայց հատուկ խնդրում եմ ոչ ոքին չցույց տալ գրությունս, ոչ էլ պ. Ֆիլիպին: Այս երկու բանը սկսված ունեի և չէի ուզում կիսատ թողնել, հիմա, որ վերջացրի, կաշխատեմ շարունակել Ձեզ համար գրելը:

Կրկին անգամ շնորհակալություն եմ հայտնում Ձեզ, երբ կազատվեմ այս բանտից կպատմեմ Ձեզ, թե ինչեր չեմ մտածել այս միայնակությանս մեջ:

Ձեզ հարգող Մ.Թումանյան

Հ. Գ. Հարցնում եք «Մշակի» հոդվածի մասին, շատ բան ունեմ ասելու, հետո կխոսենք. ես սպասում էի այդպիսի բանին: «Մշակը» չպետք է տպեր, բայց... այստեղ խառն է:

18 մարտի 1898թ.

1899 օգոստոս
Բորժոմ-Դսեղ[147]

Հարգելի պ. Թումանյան,

Վերջապես ստացա Ձեր նամակը: Ես շատ էի զարմանում, որ Դուք նամակ չեք գրում և շարունակ հարցնում էի Ռոստեմից, թե Ֆիլիպից, բայց նրանք էլ չէին ստանում Ձեզանից, այնպես որ, ես զանազան ենթադրություններ էի անում, իսկ վերջը պարզվեց, որ լռության պատճառը մարկայի բացակայությունն էր: Ես ծիծաղեցի՝ կարդալով Ձեր այդ բացատրությունը, միթե Դուք չէիք կարող ուղարկել առանց մարկի, ես կվճարեի այստեղ 14 կ. տուգանք, բայց միթե իմ անհանգստությունը 14 կ. չարժեին: Մի ուրիշ կետ էլ ինձ ծիծաղեցրեց: Դուք գրում եք, որ «այս նամակը գրելիս սաստիկ կարկուտ է գալիս», երևակայեցեք, երբ ես կարդում էի Ձեր նամակը, սարսափելի անձրև էր գա-

147 Նամակը պահվում է ԳԱԹ, ԹՖ, 1242 (658): Այն տպագրվել է ՈւՀ 4, էջ 308-310: Սակայն թվագրված է սխալ: Ճիշտ չի նշված նաև գրելու վայրը՝ Թիֆլիս: Այս նամակը պատասխանն է Թումանյանի՝ իշխանուհուն հասցեագրված 1899թ. օգոստոսի 12-ի նամակի: Տես Թումանյան, ԵԼԺ 9, էջ 213-215:



Իշխանուհի Մարիամ Թումանյանի նամակը

լիս: Ինչ կնշանակի այդ, ուրեմն, մեր նամակագրությունը առաջացնում է բնության մեջ մի կատարյալ ապստամբություն: Դուք իբրև տղամարդ գոռոցով և կարկուտով եք գալիս, իսկ ես իբրև կին արտասուքով: Ծիծաղեցեք այս համեմատության վրա և մոռացեք, որովհետև հանաքի համար եմ գրում, որ Ձեր մոայլ տրամադրությունը ցրվի: Իրավ, ես շատ ցավում եմ, որ այդպիսի վատ հանգամանքների մեջ եք, մեծ հույս ունեի, որ շատ կգրեք գյուղում և պատրաստ նյութերով կներկայանաք մեր երեկոյթներին, անհամբեր սպասում եմ, թե երբ կվերջանա ամառը, երբ նորից բոլորս միասին կժողովվենք, որ կարդանք, վիճենք, դատենք: Ա՛խ, որպիսի զվարճություն ինձ համար այդպես ժամանակ անցկացնել, կյանք է, և եթե ինձանից խլեն այդ զվարճությունը, ես, ո՛վ գիտե, չդիմանամ: Բայց ո՛վ կարող է խլել, ես կմրցեմ մինչև վերջին շունչս և չեմ զիջիլ ոչ մեկի առաջ: Ինձ թվում է, որ ես չեմ ապրում, ուզում եմ ջնջել այս ամիսները, թեև երբ ժամանակ եմ ձեռք գցում, իսկույն սկսում եմ երազել իմ սիրած նյութերի վրա և երբեմն այնպես հեռու եմ գնում, որ արթնանալը դժվար է լինում: Իմ հանգամանքները Ձերոնցից լավը չեն, երեխայոց դայակը անպիտան դուրս եկավ, և ես ստիպված եղա փոխել նրան, մի ուրիշին հանդիպեցի, որ նրանից 10 անգամ վատ էր, և հիմա երրորդին վարձեցի, բայց ո՛վ գիտե սա որպիսին լինե: Ահա ամբողջ ամառը զբաղված եմ ընտանեկան մանր հոգսերով, որոնք ինձ չեն կարող ոգևորել և բացի տանջանքից ոչինչ չեն տալիս հոգուս: Ձեր ցանկությունը, որ ես գրեմ, մնում է անկատար, բայց մտքովս շատ պլաններ են անցնում, շատ նյութ եմ հավաքել վիճելու համար և նախօրոք զվարճանում եմ՝ հիշելով, որ անվերջ կխոսանք: Երեք օրով ես գնացի Կոջոր, իմ մոր մոտ իջեցի, թեև ամեն օր տեսնում էի մեր երկու բարեկամներին, բայց համարյա թե ոչ մի տպավորություն չստացա, որովհետև միշտ շրջապատված ենք եղել ուրիշ անձնավորություններով, այնպես որ, մեզ հետաքրքրող նյութերի վրա խոսել անկարելի էր: Խոսակցությունը ընդհանուր էր և պտտվում էր առօրյա մանր երևույթների շուրջը, այնպես որ, ինձ համար ձանձրալի էր լսել: Ես շտապեցի շուտով գալ

տուն: Ռոստեմը իմ վրա վատ տպավորություն թողեց, և ես շատ վշտացա, երևակայեցեք՝ ամբողջ օրը անցկացնում է առանց մի բան շինելու, մի քանի հիվանդներ ունի, այցելում է նրանց, ժամերով նստում, խոսում, հետո թուղթ է խաղում, և այդպիսով մթնում է օրը: Ես նրան այնքան խնդրեցի, որ մի լուրջ բանով զբաղվի, շատ կարդա, գրի, բայց չի լինում: Այն կինը այնպես բռնում է նրան իր ազդեցության տակ, որ այդ խեղճ մարդը կկորչի բոլորովին, ափսոս... Նրան հարկավոր էր մի այնպիսի ձեռք, որ ուղիղ ճանապարհով տաներ մինչև լույսը, որ խրախուսեր նրան, գործելու եռանդ ներշնչեր, ապա թե ոչ ինքը շատ թույլ կամք ունի և իրա վրա եթե թողնել, ոչինչ չի անիլ և օրեցօր ներքև կիջնի: Լրագրներում կարդացի, որ նրան մերժել են հիվանդանոց բաց անել, շատ անհագստացա, իսկույն նամակ գրեցի, հարցնելով պատճառները, բայց դեռ պատասխան չեմ ստացել: Շատ լավ կլիներ, եթե իրավունք տային նրան հիվանդանոց բանալ, գոնե կաշխատեր և առաջ կգնար: Դուք ասում եք, որ ես անալիզները սիրում եմ, ահա Ձեզ իմ անալիզներից մեկը. ինչ նպատակով Ռոստեմի կինը ուզում է ոչնչացնել նրա կամքը, նրա ինքնուրույնությունը: Ես շարունակ մտածում եմ այդ հարցի վրա ու չեմ կարող ինձ պարզել, որովհետև ես այն կարծիքի եմ, որ ինչքան շատ ես սիրում մի մարդու, այնքան աշխատում ես բարձրացնել նրան, ցանկանում ես, որ նա ունենա բոլոր առավելությունները և քեզանից բարձր լինի: Այնպես չէ՞: Ինձ թվում է, որ ես չէի կարող սիրել մի մարդու, ով ինձանից բարոյապես ցած լիներ, իսկ Դուք ինչպե՞ս եք կարծում: Իսկ այդ կինը շարունակ ստորացնում է նրան ուրիշների առաջ և, որքան նկատել եմ՝ դիտմամբ: Միգուցե նա ուզում է ցույց տալ մեզ, որ ինքը անկասկած բարձր է, և երջանկություն է Ռոստեմի համար, որ նրան ուզել է: Ո՞վ գիտե: Վերջապես գուցե Ձեզ չի հետաքրքրում այս հարցը, որին ես այդքան մեծ տեղ եմ տալիս նամակիս մեջ:

Շահազիզի նամակը ինձ շատ ուրախացրեց, եթե Ձեզ գրե, կնշանակի ի նկատի ունի Ձեր դրությունը, և կարելի է, որ Ձեզ օգնության հասնի: Համենայն դեպս Դուք միք հուսահատվի, Ձեզ ուրախ պահեցեք, ես ամեն ջանք գործ կդնեմ Ձեզ այդ նեղ դրությունից հանելու համար: Աստված ողորմած է, կարելի է Ձեր հանգամանքները փոխվեն դեպի լավը: Բարևեցեք Ձեր ընտանիքին:

Ձեզ հարգող Մ. Թումանյան

Հ. Գ. Այստեղ էլ այնպիսի շոգեր էին կանգնած, որ չեմ հիշում այսպիսի ամառ, շատ տանջվեցինք շոգերից:

1899 նոյեմբերի 18
Թիֆլիս-Թիֆլիս[148]

Հարգելի պ. Թումանյան,

Գեորգի Միխայլովիչը ու ես շատ շնորհակալ ենք Ձեր նամակի[149] համար. այդպիսի սարսափելի հարված էր մեզ համար այդ բանը, մանավանդ որ անսպասելի էր, և մինչև այսօր էլ չէինք կարող հաշտվել այն մտքի հետ, որ մի ցենզուրայի միջով անցած լրագիրը կարող է ենթարկվել այդպիսի խիստ պատժին: Իհարկե, այստեղ գործել են անձնավորություններ: Դուք չեք կարող երևակայել, թե ինչ ինտրիգներ են եղել, և հիմա քիչ-քիչ պարզվում է բանը: Առանց արտասուքի չեմ կարող հիշել մեր խեղճ լրագրին, օրեցօր ավելի զգալի է, երբ մտաբերում եմ, որ էլ լույս չպիտի տեսնի՝ ինձ թվում է, որ զավակներից մեկը կորցրել եմ ....

Մենք աշխատում ենք, դեռ հույսս չեմ կորցրել, որ կհաջողվի ազատել կատարյալ կորստից, որովհետև գիտեք, հարց են բարձրացրել բոլորովին դադարեցնելու: Ցանկացեք մեզ հաջողություն, ես գիտեմ, որ Դուք անկեղծ բարեկամներից եք:

Ողջույն նաև Ֆիլիպին

Ձեզ հարգող՝ Մ.Թումանյան

Հ.Գ.Ռուստեմը խնդրում է, եթե կարելի է, ուղարկեցեք:

1901 հունիսի 24
Վիծիսի-Ուրավել[150]

Հարգելի պ. Թումանյան,

Երեկ ստացա Ձեր բաց նամակը և դեռ երկար քննեցի, արդյո՞ք, իրավ, Ախալցխայիցն է, թե՞ ոչ: Ես չէի հավատում, որ Դուք վերջապես գնացիք և միայն հիմա հանգստացա: Այդ լավ է, որ ամեն օր մարդիկ գնում գալիս են Ախալցխա, ուրեմն շուտ-շուտ կարող եք գրել: Այստեղից էլ համարյա ամեն օր մարդ գնում է Տփղիս, և մենք ստանում ենք քաղաքից համարներ և լրագրներ: Մեր գյուղը հիանալի տեղ է, լավ տեսք ունի, և օդը շատ մաքուր է: Տունն էլ շատ լավ է շինված, ընդարձակ է, և ամեն հարմարություն ունի:

148 Նամակի ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԹՖ, թիվ 1243 (657): Տպագրվում է առաջին անգամ:

149 Թումանյանի այդ նամակը մեզ չի հասել:

150 Նամակի ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԹՖ, թիվ 1244 (659): Տպագրվում է առաջին անգամ:

Մի բան միայն լավ չէ այստեղ - շատ мошка կա, կծում են սաստիկ և անհանգստացնում են մեզ: Դեռ մենք բոլորովին չենք սարգվել, մի-մի բան պակասում է, որ բերում ենք Տփղիսից: Երբ բոլորը կարգի կգա, կսկսեմ գրել: Շուտով գրեցեք Ձեր մասին, ինչպես եք հավանում Ուրավելը և հարմար սենյակ ճարեցիք թե ոչ: Ձեզ շատ լավ պահեցեք, չմրսեք և չհոգնեք և շատ միք պարապիլ:

Ձեզ հարգող Մ.Թումանյան

24 հունիս 901թ.

1901 հուլիսի 8
Վիձիսի-Ուրավել[151]

Հարգելի պ. Թումանյան,

Ստացա Ձեր փակ նամակը և ուրախացա, որ վերջապես Դուք սկսում եք առողջանալ: Մի բան միայն ինձ դուր չեկավ, որ Դուք լողանում եք սառ ջրի մեջ. Ձեզ իսկի լավ չի սառը ջուրը մտնել, և ես կխնդրեի, որ զգուշանայիք: Աշխատեցեք շատ ուտել անարատ բաներ՝ ձու, կարագ, մածուն և այլն: Իմ մեծ եղբայրը այժմ արտասահմանի սանատորիայում է և գրում է, որ նրան ոչ մի դեղ չեն տալիս, այլ ստիպում են ամեն մի ժամ ուտել մինչև անգամ զոռով:

Ինչպես երևում է, Ուրավելը լավ աչքով չեք տեսել. երևի առաջին տպավորությունը լավ չի եղել, որովհետև Դուք անհարմարությունների եք հանդիպել և ծանոթներ էլ չունեիք, բայց հետզհետե կը սովորեք և կը հավանեք:

Դուք գրում եք, որ Ուրավելում հորիզոն չկա, բայց այստեղ, ընդհակառակը, շատ գեղեցիկ հորիզոն է, և առհասարակ բնությունը գեղեցիկ է. ես շատ կուզենայի այստեղ մի գրական երեկույթ սարքել և հույս ունեմ, որ կիրագործեմ մի օր: Մեր տունը ընդարձակ է, մեծ հարմարություններ ունի, լավ տեսարաններ են բացվում այստեղից, օդը լավ է, թեև կեսօրին շատ շոգ է, բայց ամեն տեղ էլ այդպես է: Մի խոսքով, ես շատ գոհ կլինեի, եթե մոծակները չլինեին. մենք չէինք սպասում, որ այստեղ այդքան մոծակ կլինի, և շատ տանջվում ենք նոցանից, օրինակ, իրիկունները մթանն ենք նստած, բայց այդ էլ քիչ է օգնում, մոծակները դարձյալ գտնում են մեզ ու կծում են: Եվ տեսեք, այդպիսի մանր արարածները թունավորում են մեր կյանքը, և ոչ բնության գեղեցկությունը և ոչ էլ բնակարանի հարմարավետությունները

151 Նամակի ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԹՖ, թիվ 1245 (660): Տպագրվում է առաջին անգամ:

կարողանում են մոռացնել տալ այդ ցավը: Լավ է միայն, որ երբ քամի է լինում, նոքա չեն երևում, և ես աղոթում եմ, որ ամեն օր քամի լինի, թեև ջղերս չեն տանում քամուն: Տեսնենք մինչև ամառվա վերջը ինչ կլինի, մարդ էլ չկա այստեղ, որ հարցնենք: Դուք չեք կարող երևակայել, որքան մեծ ուրախություն եմ զգում, որ մենակ ենք. ես հոգնեցի մարդկանցից, այսինքն, ավելի լավ է ասել **ոչ մարդկանցից**, որովհետև այն արարածները, որոնց հետ ես եմ շփվում, միայն մարդու կերպարանք են կրում, իսկ... Դուք գիտեք էլի: Այստեղ ես ոչ ոքին չեմ տեսնում և որևէ առիթ չունեմ հուզվելու և վրդովվելու: Ես միանգամայն զարմանում եմ, թե ինչպես մեծամասնությունը պահանջ է զգում խոսելու առանց խտրության, միայն թե խոսի: Հազար անգամ լավ է լսել, քան թե խոսել առաջին պատահածի հետ, իսկ երբ մարդ, ինչպես ես, ստիպված է լինում ամբողջ օրերով խոսել ուրիշների հետ, և այդ խոսակցությունը նրան ոչ մի զվարթություն չի տալիս – ուղղակի երջանկություն պիտի զգա՝ մնալով բնության հետ միայնակ: Գոնե ես հրճվում եմ՝ նայելով երկնքին, սարերին, և ժամերով լուռ նստում եմ իմ բազկաթոռի մեջ և մտածում եմ կյանքի ունայնության վրա, փիլիսոփայական հարցերի, ԱԾ (Աստծո) և այլն... ենթադրություններ եմ անում ապագայի համար, ծրագիրներ եմ կազմում զանազան նոր ընկերությունների և մտածում եմ իմ գրական աշխատության վրա: Ես դեռ չեմ սկսել գրել, բայց նյութ գտել եմ և եթե հաջող գրեմ, ես գիտեմ, որ մեծ վիճաբանությունների առարկա պիտի դառնամ: Ինձ թվում է, որ գրելը այնքան էլ դժվար չէ, երբ աչքի առաջ ունես որևէ նպատակ և կանգ ես առել որոշ նյութի վրա: Ես շատ էի տատանվում, թե որ հարցը ընտրեմ, որովհետև գլխումս մի քանի հարցեր կան, և բոլորն էլ, իմ կարծիքով, հարկավոր հարցեր են, բայց մի քանի օր է, ինչ վճռել եմ և հիմա հոգով հանգիստ եմ: Ես սկսել էի գրել մի բելետրիստական բան, բայց տեսա, որ չի դուրս գալիս և թողեցի: Իմ ընտրած նյութը հասարակական մի հարց է, բայց Ձեզ ոչինչ չեմ գրելու, մինչև չվերջացնեմ: Երեկ նամակ ստացա այդ երկու ուսանողից, և նոքա գրում են, որ մի քանիսը արդեն ուղարկել են իրանց հոդվածները, և երբ բավականաչափ կհավաքվեն - կսկսեն տպագրությունը: «Մենք դրել ենք ոչ միայն բարեգործական նպատակ, այլև ցույց տալու համար հայ կնոջ զարգացման աստիճանը, հաստատ իմանալով, որ հայ կինը եվրոպական կուլտուրան կարողանում է մարսել ոչ պակաս եվրոպացի կնոջից»: Ինչպես տեսնում եք՝ նպատակը բարի է և հետաքրքիր: Նոքա մի քանի անուններ են տալիս, որոնց դիմել են, կան և ծանոթ անուններ: Երևակայեցեք, տիկ. Դանիելբեկյան, որի վրա ես մեծ հույս ունեի, մերժել է այդ երիտասարդներին և մինչև անգամ վիրավորել: Տեսեք, թե նրանք ինչ են գրում՝ «Տիկ.Դանիելբեկյանից մերժում ստացանք և միևնույն ժամանակ զարմանք, թե ինչու մենք ենք ձեռնարկել այդ գործը և ոչ

հայ կանայք, և որ ինքը անպատրաստ է «լուրջ ժողովածվում որևէ գրուածք զետեղելու», մինչդեռ, **վստահորեն,** վերին աստիճանի վիճելի հարցերի առթիվ հոդվածներ է տպում «Մշակում»»:

Ինչպես երևում է՝ խեղճերը վիրավորվել են և իրավունք ունեին. Իհարկե, շատ լավ կլիներ, եթե հայ կանայք ձեռնարկեին այդ գործը, և հիշում եք, որ մենք մինչև անգամ խոսացինք այդ մասին. բայց որ այդպես չեղավ, պետք է շնորհակալ լինել և այդ երիտասարդներից և խրախուսել նրանց, այլ ոչ թե անտեղի նկատողություններով նրանց սիրտը կոտրել: Մի խոսքով, արի ու մարդկանց հոգեբանությունը ճանաչիր, ես համոզված էի, որ տիկ. Դանիել-բեկյանը առաջինը կլինի, որը հոդված կուղարկի, իսկ բանից դուրս եկավ, որ իսկի էլ չի ուզում գրել: Մախլաս... «Մշակի» անունը տալով ես հիշեցի, որ կարդացի մի ինչ-որ Ղրկիսալովի մասին, որ իբր թե նա շատ է ճնշում գյուղացիներին և ծծում նրանց արյունը, կարծեմ Վարդան գյուղի մասին էր խոսքը: Կլինի թե Ձեր Ղրկիսալովն է, խոսակցության մեջ ակնարկեցիք, թե արդյոք որևէ կապ ունի գյուղերի հետ, և եթե համոզվեք, որ նա է, մի քիչ հեռու պահեցեք Ձեզ: Այդ լավ է, որ լեգենդաներ եք հավաքում, երբ առողջանաք, շրջեցեք մի քանի մոտակա գյուղերը և հավաքեցեք, բայց միք հոգնիլ և շատ միք պարապիլ: Հիշեցեք, որ ամեն տարի չեք կարող գտնուի այդպիսի նպաստավոր հանգամանքների մեջ և աշխատեցեք կազդուրվել և ույժ հավաքեցեք ապագալի համար:

Շատ կուզենայի տեղեկություններ իմանալ Ձեր ընտանիքի մասին, բայց հասցեն չգիտեմ, որ գրեմ: Եթե նամակներ ունեք, ինձ էլ իմաց տուեք, թե նրանք ինչպես են ամառն անցկացնում: Ես Ձեզ խորհուրդ կտայի մնալ Ուրավել մինչև օգոստոսի 20-ը. անձրևներ որ ասում եք, Աբասթումանից էլ եղբայրս գրում է, որ շարունակ անձրևներ են գալիս. իրոք, այդ կողմերի սովորությունն է, բայց լավ է, որ խոնաություն կլինի, այն ժամանակ անձրևը վնասակար չի, իսկ եթե խոնավ է- երկար չմնաք Ուրավել: Մի խոսքով՝ գլխավորը լաւ կերակրվեցեք և միք մրսիլ: Ֆիլիպին հանձնեցի, որ Ձեզ ժամանակին ուղարկի, Դուք այդտեղից շուտ-շուտ հարցրեք, որ չուշացնեն Ձեզ ուղարկելու: Շանթից եթե որևէ տեղեկություն ունեք, ասացեք ինձ, ես զարմանում եմ, որ նա ոչ ինձ է գրում և ոչ Ֆիլիպին:

Ընդունեցեք բարևներս

Ձեզ հարգող Մ.Թումանյան

Հ.Գ. Տեղ չմնաց, որ Ձեր տիկնոջ մասին բան գրեմ... ծաղիկներ հավաքեցեք, լավ է Ձեզ համար... Մնացածը հետո....

1901 օգոստոսի 3
Վիծիսի-Ուրավել[152]

Այսօր ստացա Ձեր վերջին նամակը (ճիշտ եք գուշակել, հենց իմ գրածի մյուս օրը ստացա Ձեր երկրորդ նամակը, որը ինձ բոլորովին հանգստացրեց Ձեր մասին) և շտապում եմ պատասխանել, որ ժամանակին հասնի Ձեզ: Ես որախ կլինեմ, եթե Դուք մի քիչ ճանապարհորդեք, բայց որ գրել եք, թե երբեմն տաքություն ունեք, այդ իսկի լավ չի, և ես վախենում եմ, որ ճանապարհորդության ժամանակ չմրսեք: Խնդրեմ լավ մտածեցեք գնալուց առաջ: Ինձանից, որ նամակ չեք ստանում, միք զարմանալ, իմ երկրորդ աղջիկը համարյա մի ամիս էր, հիվանդ էր, դողացնում է և այն հայ օրիորդն էլ հիվանդ է շարունակ, այնպես որ ես շատ եմ զբաղված, թե՛ հիվանդներ պահելով և թե՛ երեխաների վրա հսկելով: Այնպես հոգնում եմ, որ տրամադրություն չունեմ նամակներ գրելու: Չգիտեմ, ստացա՞ք Ֆ (Ֆիլիպի) ուղարկածը թե ոչ: Նա էլ գրում է, որ ինքն էլ տեղեկություն չունի, մինչդեռ ուղարկել է Մովսիսյանի անունով, ինչպես Դուք խնդրել էիք: Մի՞թե կորած է, շատ անախորժելի բան կլիներ:

Առողջացեք և շուտով վերադարձեք: Նյութի մասին մի հարցնեք և շատ բան չսպասեք, վախենում եմ, որ կհիասթափվեք:

Ձեզ հարգող Մ.Թումանյան

3 օգոստ.901թ.

1901 օգոստոսի 3
Վիծիսի-Աբասթուման[153]

Հիանալի գիշեր է, լուսնյակը փայլում է երկնքում, իսկ այստեղ, նեքևում լռություն է տիրում... այսօր ուղարկեցի մորս և 2 երեխայիս Տփխիս, ես էլ վաղն եմ գնում, իսկ հիմա մնացած երեխաները քնած են, հայրս զբոսնում է այգում, իսկ ես մենակ նստած եմ պատշգամբում և երազում եմ: Որքան ծրագիրներ, որքան ցանկություններ... կարող եմ արդյոք այդ բոլորը գլուխ բերել և կբավականանամ դրանով, թե հետզհետե նոր մտքեր կհղանան գխիս մեջ, նոր ցանկություններ կմտնեն սիրտս... գիտեք, բարեկամս, որ ինձ մեծ ուրա-

152 Նամակի ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԹՖ, թիվ 1246 (661): Տպագրվում է առաջին անգամ:

153 Նամակի ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԹՖ, թիվ 1247 (662): Տպագրվում է առաջին անգամ:

խություն է պատճառում, երբ ես մրցում եմ խոչընդոտների հետ, որ կտրում են ճանապարհս: Շատ անգամ ես իմ առաջ տեսնում եմ դժվար խնդիր և ամբողջ էությամբս ձգտում եմ լուծել այդ խնդիրը:

Օ՜, ես ոչինչ չեմ կարող անել կիսաչափ, եթե մի բան սկսում եմ, էլ ոչ հանգիստ ունիմ, ոչ քուն: Հենց այդ է պատճառը, որ ես այնքան ույժ եմ կորցնում ամեն մի բանի համար, և, միևնույն ժամանակ, հենց այդ է պատճառը, որ ինձ համարյա թե ամեն բան հաջողվում է: Ես ուրիշներին էլ ասում եմ. «Դուք պիտի ուզեք, և կկատարվի Ձեր ուզածը, բայց ուզեք ամբողջ էությամբ, ամբողջ հոգով»: Որքան շատ դժվարությունների եմ պատահում, այնքան ավելի եմ ցանկանում մրցել և հաղթել: Ինձ համար այդ առանձին հաճույք է զգալ, թե ես հաղթեցի, որքան կամքի ույժ ունիմ, որքան տեր եմ իմ ցանկություններին: Ես չեմ հարգում այն մարդուն, որ հենց առաջին անհաջողությունից հուսահատվում է և իր ձեռքերը ծալում. չէ՞ որ մեր կյանքը անընդհատ մրցում է, և ուրեմն ինչին են պետք այդպիսի մարդիկ: Եթե ինձանից կախված լիներ, ես կոչնչացնեի նրանց, ինչպես և պարտանցիք ոչնչացնում են իրենց թույլ երեխաներին: Ես հասկանում եմ հիմա այդ գազանային սովորության միտքը: Նրանք սպանում են ֆիզիկապես թույլ մարդկանց, իսկ ես կուզենայի սպանել բարոյապես թույլերին: Բայց ինչ եմ ասում, գուցե ոչ ոք էլ չէր մնա այս աշխարհում, հիմա ավելի շատ կան թույլեր, քան ուժեղներ: Տեսնում եք իմ փիլիսոփայությունը ուր տարավ ինձ, չէ, իմ բանը չէ, ինչպես տեսնում եմ, դառնամ առօրյա հարցերին:

Ստացա Ձեր նամակը Աբասթումնից, չափազանց ուրախացա, որ այնքան փոխվել եք, որ Ձեզ չեն ճանաչում: Բայց Դուք չեք գրում, թե ինչումն է կայանում Ձեր փոփոխությունը (լղարվել եք, գեղեցկացել եք, ծերացել եք, սպիտակել եք, սևացել եք... խելոքացել եք, թե ինչ եք եղել... փոփոխվել կարելի է հազար տեսակետից, բայց որովհետև ինձ ցանկալի է առայժմ միմիայն Ձեր առողջությունը, ուստի ես ուզում եմ մտածել, որ Դուք այնպես չաղացել եք, որ էլ իմ դռնովը չեք անցնիլ: Եթե այդպես է, գնացեք ճանապարհորդեցեք և ԱԾ Ձեզ հետ: Որքան նյութ կունենաք խոսելու...հենց այսօրվանից ես զվարճանում եմ՝ երևակայելով ինձ այս ձմեռվա երեկույթները:

Սեղմում եմ Ձեր ձեռքը:

Մ.Թումանյան

Հ.Գ. Կարդալով նամակս, տեսնում եմ, որ շատ հիմարն է դուրս եկել, բայց Դուք կներեք, իմանալով, որ վաղը գալու եմ և ժամանակ չունեմ նորը գրելու: Դուք իմ տեղը պատռեցեք այս նամակը:

1902 հունվարի 22[154]
Թիֆլիս- Թիֆլիս

Հարգելի պ. Թումանյան,

Ձեր բացակայությունը իմ պարահանդեսին, առանց որևէ լուրջ պատճառների, ինձ այնքան վշտացրեց, որ ես չեմ կարող չհանդիմանել Ձեր անտարբերությունը դեպի ինձ: Ձեզ հայտնի է, թե որքան եմ տանջվում թե՛ ֆիզիկապես, թե՛ բարոյապես մինչև կազմակերպում եմ մի պարահանդես, իսկ ինքս ի՞նչ եմ ստանում դրա փոխարեն...Դուք չգիտեք, թե մի երեկույթիս հետ ինչքան հիասթափություններ են կապված, որքան շատ ընդհարումներ եմ ունենում մարդկանց հետ, այնքան ավելի ծակում է աչքս նրանց մտահոգությունը, նրանց կեղծավորությունը և չարակամությունը:

Իմ պարահանդեսներին Դուք ինձ տեսնում եք զվարթ տեսքով, բայց այդ միայն արտահայտում է իմ հաճույքը իբրև ստեղծողի, երբ տեսնում եմ, որ մի բան գլուխ եմ բերել, մանավանդ որ կառավարել մի խառնիճաղանջ հասարակություն, զբաղեցնել նրան, այնքան էլ հեշտ բան չէ, ինչպես երևում է Ձեզ: Ձեզ հասկանալի պետք է լինի իմ ցանկությունը, որ իմ մոտիկ բարեկամները, հոգով բարեկամները բաժանեն ինձ հետ իմ հաճույքը այդ մտքով և խրախուսեն ինձ:

Հասկացեք, որ չկար ինձ հաճույք այս անգամ, որովհետև ո՛չ Դուք, ո՛չ Ռոստեմը ներկա չէիք: Էհ, ինչ ասեմ Ձեզ, եթե չեք հասկանում ինքներդ, ասելը ավելորդ է:

Ձեզ հարգող Մ.Թումանյան

22 հունվ. 1902թ.

1902թ. սեպտեմբերի 25
Թիֆլիս-Աբասթուման

Սիրելի Թումանյանց, Ձեր նամակից[155] եզրակացրի, որ լավ եք տրա-

154 Նամակի ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԹՖ, թիվ 1248 (663): Տպագրվում է առաջին անգամ: Այս նամակի պատասխանը տես Թումանյան, ԵԼԺ 10, էջ 114: Թումանյանի անթվակիր այս նամակի տարեթիվը նրա երկերի գիտական երկու հրատարակություններում սխալ է որոշվել՝ 1911թ. փետրվար: Կազմողները հիմք են ընդունել այն, որ 1911թ. փետրվարին նույնպես պարահանդես է եղել: Սակայն իշխանուհին 1902թ. թվագրված նամակով է հայտնում իր հանդիմանությունը բանաստեղծին պարահանդեսից բացակայելու համար, հետևաբար, Թումանյանն էլ պետք է պատասխաներ 1902թ. հունվարին կամ փետրվարի առաջին օրերին:

155 Խոսքը վերաբերում է Թումանյանի 1902թ. սեպտեմբերի 18-ի նամակին, որի պատաս-

մադրված, ուրեմն լավ եք զգում Ձեզ, և անչափ ուրախ եմ: Այստեղ այնպիսի «հիանալի» օրեր է անում, որ ես էլ կուզենայի քաղաքից դուրս լինել, մաքուր օդում և հեռու այստեղի մարդկանցից: Չգիտեմ՝ մեր ճանապարհորդությունը գլուխ կգա թե ոչ, դեռ ոչինչ հաստատ բան չկա, բայց ես մտադիր եմ հոկտեմբերի 1-ին դուրս գալ ուղղակի Էջմիածին, իսկ այնտեղից՝ Անի: Առաջ Էջմիածին եմ գնում նրա համար, որ Էրիվանու գնացքը ամեն օր չի գնում, և ես վախենում եմ ավելորդ օրեր կորցնել, իսկ ինձ անհրաժեշտ է 7-ին այստեղ լինել, որովհետև 8-ին իմ առաջին ներկայացումն է[156], և իմ ներկայությունը հարկավոր է այստեղ: Դերասանական խմբի ներկայ<ացումներն> արդեն սկսվել են, խաղի կողմից շատ հաջող է, իսկ նյութականը թույլ է: Եթե այսպես գնա՝ մեծ վնասներ կկրենք: Ես ավելի և ավելի եմ համոզվում, որ թատրոնը պետք է պահել ժողովրդի համար և միջին դասակարգի, իսկ մեր բուրժուազիան միշտ հեռու կպահի իրան: Եթե ինձ հաջողվի լավ խումբ կազմել սիրողներից, ես ինձ երջանիկ կհամարեմ, որովհետև կարող կլինեմ թատրոնի միջոցով զարգացնել ժողովրդի թե՛ միտքը և թե՛ ճաշակը: Ինչպե՞ս է Ձեր կարծիքը այդ մասին: Երևակայեցեք, որ Ֆիլ<իպը> վոդևիլ է գրել և բավական հաջող, գոնե մեզ մեծ զվարճություն պատճառեց, և մենք մտադիր ենք ներկայացնելու, բայց նա չի տալիս սիրողներին, այլ ուզում է, որ դերասանները ներկայացնեն, ապա թե ոչ՝ կփչացնեն, ասում է: Տեսնում եք, որ Ֆիլիպն էլ գրողի փառասիրություն ունի, ծիծաղելի է, չէ՞: Կուզենայի, որ Դուք ներկա լինեիք մեր հինգշաբթիներին, բայց ավելի շատ եմ ուզում Ձեզ շուտով կատարյալ առողջ տեսնել, ուստի Դուք լավ պահեցեք Ձեզ, մի հոգնեք և զգույշ եղեք մրսելուց: Մրսելը շատ վտանգավոր է Ձեզ համար: Ձերոնք արդեն տեղափոխվեցին: Ռուստեմը հիացած է սենյակներից, ասում է մեծ փոփոխություններ են արված, և շատ հարմար է: Ինձ դժվար է բարձրանալ, ապա թե ոչ՝ կգնայի տեսնելու: Ֆիլիպը, կարծեմ, գրած է Ձեզ, որ հայտնեք, թե ինչքան բան եք տալիս տպագրելու համար: Մենք կուզենայինք շուտով բացել բաժանորդագրությունը, իսկ դրանից առաջ հարկավոր է իմանալ գրքի մեծությունը, որպեսզի գինը որոշենք: Մենք կանենք շքեղ հրատարակություն: Մի խոսքով՝ շուտով պատասխանեցեք, գիտեք, որ այդպիսի հարցերը շատ են ձգձգվում, իսկ ես համբերություն չունեմ և ուզում եմ շուտով իրագործել իմ միտքը: Սեղմում եմ Ձեր ձեռքերը:

Ձեզ հարգող՝ Մ. Թումանյան

խանն է իշխանուհու սույն նամակը. Տե՛ս Թումանյան, ԵԼԺ 9, էջ 309-311:

156 Իշխանուհի Մ.Թումանյանը կազմակերպել էր թատերասերների սիրողական խումբ՝ դերասան Պողոս Արաքսյանի ղեկավարությամբ: Խումբը ներկայացումներ էր տալիս ժողովարանի դահլիճում: Իշխանուհու խոսքը վերաբերում է այդ ներկայացումներին:

<1902> հոկ<տեմբերի> 31
Թիֆլիս- Աբասթուման

Սիրելի՛ Թումանյան,

Ձեր պատասխանը Շանթին մեզ շատ վշտացրեց, մանավանդ ինձ, որ շատ լավ հասկանում է Ձեր զգացմունքները և մտածում է միայն Ձեր հանգստության մասին:

Սիրելիս, միթե Դուք կասկածում եք, որ Ձեզ հետ միասին տանջվում է և իմ սիրտը, միթե Դուք կարծում եք, որ ցավալի չէ ինձ դիմել սրան-նրան Ձեզ օգնելու համար: Դուք չկարծեք, որ ինձ ուզում եմ հեռու պահել այն նեղություններից, որ կապված է մի այդ տեսակ գործի հետ, կամ զլանում եմ Ձեզ համար գործելու: Ո՛չ և հազար անգամ ո՛չ: Ինձ մեծ կսկիծ է պատճառում, որ ես չեմ կարող ապահովել Ձեզ այնքան, որ ստիպված չլինեմ ամեն անգամ դիմումներ անելու, շոշափելով Ձեր զգայուն ինքնասիրությունը: Ես Ձեզանից ավելի կուզենայի, որ մարդիկ ուրիշ կերպ նայեին հարցին, ուրիշ զգացմունքներ ունենային, պարտաճանաչություն հասկանային, բայց, ինչ արած, շատ քիչերն են, որ արժանի են **մարդ** կոչվելու: **Իմ փափագս է, որ Ձեզ այնպես պաշտպանեմ, որ ոչ մի մարդ չդիպչի Ձեր զգայուն սրտին**, որ Ձեր հոգին հանգիստ լինի, որ Ձեր առողջությունը վերականգնվի: Հավատում եք, որ այս տողերը գրելիս ես լալիս եմ, որ իմ բոլոր ճիգերը իզուր են, և ես չեմ կարող տալ Ձեզ հանգստություն, որ չեմ կարող պաշտպանել Ձեր սիրտը կոպիտ ձեռքերից: **Ես կուզենայի Ձեզ խնամել ինչպես մի քնքուշ ծաղիկ, պահպանել թե՛ արեգակի այրող ճառագայթներից, թե՛ ձմեռվա ցրտից: Ձեր ամեն մի վիշտը արձագանք է գտնում սրտիս մեջ:** Շատ անգամ խուսափել եմ խոսելու մի քանի հարցերի մասին, որովհետև չեմ ուզեցել Ձեր վերքերը նորոգել, բայց Դուք կարծում եք, որ ես չեմ զգացել Ձեզ պես, չեմ համակրել Ձեր զգացմունքներին իմ սրտի խորքումը: Ինչ արած, կյանքը անողոք է, և հարվածները իրար հետևից ընկնում են մեզ վրա, վայ նրան, որ զգայուն է և սրտին մոտիկ է առնում ամեն բան:

Սիրելի՛ Թումանյան, ես այնքան հուզված եմ, որ չեմ կարող շարունակել նամակս, կարծեմ, այսքանը բավական էր Ձեզ համոզելու համար, որ նախ Դուք մենակ չեք տանջվում, որ Ձեզ հասկացողներ և համակրողներ կան, և երկրորդ, որ ես ամեն միջոց գործ կդնեմ, որ Ձեզանից հեռու պահեմ մուննաթները և խայթոցները, ինչպես Դուք ասում եք: Մի քիչ էլ փիլիսոփա պետք է լինել, այստեղ Դուք պետք է զոհեք Ձեր զգացմունքները ավելի բարձր գաղափարի համար: Դուք պետք է մտածեք մեր խեղճ գրականության մասին, պետք է Ձեզ վրա նայեք իբրև գործիչի, իսկ հասարակ<ական>

գործը մեծ զոհեր է պահանջում, այնպես չէ՞: Հույս ունեմ, որ կստանամ Ձեզանից մի այնպիսի նամակ, որ փոքր-ինչ կփարատի այն ծանր զգացմունքը, որ այժմ սրտիս մեջն է: Հավատացեք, որ Ձեզանից ոչ պակաս եմ տանջվում, բայց որ իմ ձեռքին չէ հանգամանքները փոխել...

Ձեր բարեկամ Մ. Թումանյան:

1909թ. հունիսի 20
Աբասթուման-Թիֆլիս

Վերջապես ստացա Ձեր նամակը, սիրելի՛ Հովհաննես, այժմ էլ կասկած չկա, որ ազատ եք: Դուք չեք կարող երևակայել, թե ինչպիսի տանջանք էր ինձ համար մտածել, որ բոլորովին անմեղ, մի թյուրիմացության պատճառով, Դուք տառապում էիք բանտում: Մերթ հույսով, մերթ հուսահատությամբ էի անցկացնում օրերը: Եթե ես ենթադրեի մի փոքր հանցանք Ձեր կողմից, ինձ համար այնքան ծանր չէր թվա Ձեր բանտարկությունը: Բայց գիտենալ, որ անմեղ եք և չկարողանալ ոչ ոքին հասկացնել Ձեր անմեղությունը, դա էր սարսափելի: Ինչևիցե, անչափ ուրախ եմ Ձեզ համար: Խնդրում եմ՝ չզլանաք գրելու Ձեր առողջության մասին, որի համար շատ անհանգիստ եմ: Արդյոք ինչ հետևանքներ ունեցավ բանտարկությունը Ձեր թոքերի վրա: Ֆիլիպն ու ես շարունակ դորա մասին էինք մտածում: Ի՞նչ պլաններ ունեք ամառվա համար և արդյոք ազատ եք բոլորովին անելու, ինչ որ ուզում եք, թե՞ որոշ պայմանների մեջ եք: Առհասարակ, սպասում եմ Ձեր երկար նամակին և հետաքրքրվում եմ իմանալ բոլոր մանրամասնությունները գործի վերաբերյալ:

Ձեր նամակները բացի ինձանից ոչ ոք չի կարդալ, այնպես որ կարող եք շատ անկեղծ գրել ինձ:

Իմ Միքայելի[157] հիվանդության պատճառով ստիպված եղա շուտ մեկնել ամառանոց և այժմս էլ ամբողջ օրը նրա հետ եմ զբաղված: Ուտացնում-խմացնում և խիստ հետևում եմ, որ չմրսի: Բժիշկը հույս է տալիս, որ շուտով կամրանա, և վտանգը կանցնի, բայց ես շատ եմ վախենում, որովհետև այնպիսի հասակ ունի, որ դժվար է նրան միշտ զսպել չափազանցություններից:

Լրագիրներ ստանում ենք, կարդում ենք կաթողիկոսի ընդունելության մասին: Մեզ մեծ զվարճություն պատճառեց Տ. Նազարյանի ներկայանալը Վեհափառին: Մի՞թե մարդիկ կան, որոնք լուրջ են ընդունում Տ. Նազարյանի գործունեությունը: Ես չեմ կարող առաց ժպիտի խոսել նրա մասին, իսկ նրա բոլոր շարժումները միայն ծիծաղելի են ինձ: Զարմանում եմ, որ Քալանթարը

157 Միքայելը իշխանուհու որդին էր:

ամբողջ սյունակներ է նվիրում այդ ողորմելի մարդուն: Ով որ չի ճանաչում Նազարյանին, դեռ կարող է հավատալ նրա լրջությանը, բայց մեզ համար մինչև անգամ վիրավորական է տեսնել նրան իբրև ղեկավար գեղարվեստի և գրականության: Մախլա՛ս...

Տ<իկին> Օլյան ինչպես ուրախ է հիմա, երևակայում եմ: Խեղճը շատ է չարչարվել և տանջվել թե՛ Ձեզ, թե՛ Մուշեղի[158] համար:

Ընդունեցեք անվերջ բարևներս:

20|VI,1909 թ.

Ձեր Մ. Թումանյան

Հ. Գ. Ձեր նամակը միայն երեկ ստացա, ինչո՛ւ այդպես ուշ:

1910 սեպտեմբերի 6
Լեյզեն-Թիֆլիս 6|IX, 1910թ.

Վերջապես ստացա, սիրելի՛ Հովհաննես, Ձեր խոստացած փակ նամակը, բայց էլի դժգոհ մնացի: Ինչո՛ւ այդքան քիչ եք գրում Ձեր մասին և մինչև անգամ չեք գրում, թե ինչո՛վ էիք հիվանդ: Նմանապես շատ հաճելի չէր լսել Ձեզանից, որ ինձ հիշում եք միայն, երբ Արազինդո եք բարձրանում, այն էլ սանատորիայի պատճառով: Լավ է, որ գոնե այդքանն էլ հիշում եք: Ես կարծում էի, որ Դուք ինձ հաճախ նամակներ կգրեք և սիրտ կտաք ինձ այս հեռու երկրում: Չէ՞ որ ես բոլորովին մենակ եմ, կտրված ամենքից և ամեն բանից, երկու հիվանդ զավակներով: Դուք ցանկանում եք անպատճառ լավ բաներ լսել ինձանից, բայց, ցավոք սրտի, պետք է ասեմ, որ ոչինչ լավ բան չունեմ Ձեզ գրելու: Միքայելը, կարծես, դեպի լավն է գնում, բայց շատ դանդաղ քայլերով. մինչև հիմա պառկած է, և ոչ մի վերքն էլ չի փակվել: Մինչև դրանք չփակվեն, ես չեմ կարող վստահ լինել, որ հիվանդությունը հաղթված է, և կարո՞ղ եք երևակայել, թե որքան հուզվում եմ ամեն անգամ նրա վերքերը կապելիս: Խեղճ տղան էլ բոլորովին ձանձրացել է շարունակ պառկելուց և ոչ ոքին չտեսնելուց: Հեղինեն էլ նույն դրության մեջն է, միշտ գունատ և սաստիկ արյունապակաս: Ինչ, ինչ բաներ եմ արել նրա համար, և բոլորը իզուր, իմ աշխատանքները կորչում են, բայց թողնենք այս տխուր նյութերը և դառնանք գործին: Ռուստեմը[159] ինձ գրել է, որ դեռևս ոչ մի կոպեկ չի հավաքել հրատարակության համար և, կարծեմ, ոչինչ էլ չի անի: Հույսս միայն Ֆիլիպի վրա է: Ի՞նչ պետք է հրատարակեք, նո՞ր բան ունե՞ք, թե՞ հիներիցն է:

158 Մուշեղը Թումանյանի անդրանիկ որդին է:

159 Խոսքը Արիստակես Զարգարյանի մասին է:

Խնդրեմ, մանրամասն ինձ միշտ գրեցեք Ձեր ժողովների մասին, իսկ «Հորիզոնի» հոդվածները, ի սեր Աստծո, թողեք, Ձեզ իսկի չի սազում: Գրեցեք նաև «Հասկերի» մասին, մասնակցում եք, թե ոչ: Ես ոչ մի համար չեմ տեսել, բայց կարդացի հայտարարության մեջ Մարիամ տատիկի մասին: Հետաքրքիր է, թե ով է ինձ փոխարինել և ինչպես: Ա՜խ, ափսոս, ինչպես լավ բաներ կարելի էր անել Մարիամ տատիկի և Օհան պապիկի հետ միասին: Չէ, Լիսիցյանը շնորհք չունի գրավելու մարդկանց, նույնիսկ քշում է նրանց: Անկեղծ ասած, վերջին ժամանակները ես իսկի սիրտ չունեի գրելու «Հասկերում», մի ինչ-որ բան սառցնում էր ինձ դեպի Լիսիցյանը: Ես ինքս չեմ կարող բացատրել, թե ինչ էր, բայց զգում էի, որ ետ է մղում: Այստեղ ես նոր-նոր ծրագիրներ եմ կազմում և անհամբեր սպասում եմ վերադարձիս, որ շուտով իրագործեմ: Որքան էլ աշխատեմ, մայիսից շուտ չեմ կարող գալ, լավ է, եթե այդ էլ հաջողվի: Հիվանդության ընթացքին նայելով՝ դեռ երկար կտևի: Տիկինների մասին ինչ որ նկատել եք, ճիշտ է, և դա ինձ մեծ ցավ է պատճառում: Երբեմն ուղղակի ամաչում եմ տղամարդկանց առաջ՝ լսելով թե ինչ կարծիք ունեն մեր մասին:

Ձերմ Բարևներ՝ Մ. Թումանյան

1911 հունիսի 28
Թիֆլիս-Մանգլիս

Հովհաննես,

Հուլիսի 4 կամ 5-ին գնում եմ Աբասթուման 2 շաբաթով և ուզում եմ, որ Դուք ուղեկցեք ինձ: Խնդրում եմ, առանց առարկության և անպատճառ պատրաստ եղեք, որ գնանք միասին: Ձեր առողջության համար անհրաժեշտ է այդ փոքրիկ ճանապարհորդությունը, մանավանդ վերջին հուզմունքներից հետո: Դուք կիջնեք Ֆիլիպի մոտ, իսկ ես՝ հյուրանոցում: Եթե չեք կարող 2 շաբաթով բացակայել, գոնե մի շաբաթով եկեք, բայց անպատճառ պիտի գաք: Անմիջապես պատասխանեցեք՝ պատրաստ կլինե՞ք, թե՞ ոչ, որովհետև կմնամ Թիֆլիսում միայն մի օր, գուցե և կես օր:

Ձեր Մ. Թումանյան

28|VI, 1911թ.

1916 հունվարի 27
Թիֆլիսից -Թիֆլիս[160]

Մեծարգո պարոն Հովհաննես Թումանյան,

«Համբավաբեր» շաբաթաթերթի խմբագրությունը խնդրում է Ձեզ շնորհ բերել խմբագրությանս գրասենյակը շաբաթ ամսույս 30-ին, ցերեկվա ժամի 12-ը ստանալու համար (հոնորար):

Իշխ. Մ.Թումանյան:

Արմենուհի Տիգրանյանից

1909, փ<ետրվարի> 19
Թիֆլիս -Թիֆլիս[161]

Սիրելի՛ պոետ, պարոն Թումանյան,

Սիրելի եմ ասում, որովհետև Դուք մարմնացումն եք այն վեհ զգացմունքի, որին սիրեցի գիտակցությանս առաջի թափից: Այն զգացմունքները, այն շողուն ցոլքերը, որ այնպես հմայիչ, շարան-շարան անցնում էին վաղ մանկությանս անամպ երկնքով, մեկիկ-մեկիկ թողին իրանց կայծերը և լուռ հեռացան:

Այդ ցոլքերը, այդ շողերը իմ սիրած բանաստեղծների՝ Պատկանյանի, Հովհաննիսյանի, Ձեր և շատ ուրիշների անտակ սրտերի, վեհ հոգիների շլացնող փայլն էր, որ լուսավորեց սիրտս մանկությանս օրերում, դրեց այնտեղ Պրոմեթեի կրակը, հնչեց ականջիս Ապոլոնի քնարը, և հիմա այնտեղ հրդեհ է անշեջ: Շատ է հավանական, որ այդ անշեջ հրդեհը մի անգամից աճյուն դարձնե իմ թեթև հոգին, և կատաղի հողմը ցրիվ տա նրան զանազան կողմեր, բայց մխիթարական կլիներ տակավին, որ Ձեր վեհ հոգին հետաքրքրվեր ստուգել, թե՞ արդյոք դրանք Ձեր ցոլքերից մնացած կայծերն են, թե խաբուսիկ լույսեր, որոնք դեռ փայլում են

160 Գրված է «Համբավաբեր» շաբաթաթերթի խմբագրության բլանկի վրա. որտեղ նշված է (հրատարակություն Կ.Հ.Բ. Ընկ. 27 հունվարի, 1916, Թիֆլիս, հեռախոս 29): Տես ԳԱԹ, ԹՖ, թիվ 1264 (678):

161 Այս և Արմենուհի Տիգրանյանի հաջորդ նամակները առաջին անգամ հրապարակվել են Թումանյան, Ուսումնասիրություններ և հրապարակումներ մատենաշարի 5-րդ գրքում, Եր., 1998, էջ 330, 339-345: Ինքնագրերը պահվում են ԳԱԹ, ԹՖ, թիվ 2282-2287:

երկնակամարում, երբ աստղերը հանգել են արդեն...

Մոտ երկու տարի էր, որ ես լռել էի՝ չկամենալով «ծաղրել» իմ անկումը, բայց և երաշտը այրում էր հոգիս... և նա դարձյալ բռնկվեց... Ահա մի անվստահ թափով մերկացնում եմ Ձեր տեսության առջև իմ փոքրիկ կյանքի և բուռն հույզերի «դալուկ» պատկերը: Դուք, միայն Դուք կարող եք ասել, թե չեն դավաճանում ինձ անշունչ բառերի այդ սև շարքերը: Ես հաճախ զգում եմ մի ճնշող «ոչնչության» մեջ մի «հսկա սիրտ», որի կորուստը մեծ է իրապես... Ես անկարող եմ գրականությանը հպատակող ձևերով արտահայտել սրտինս, ուստի խնդրում եմ Ձեզանից մի անմեղ խնդիր՝ արժանացնել ինձ երբեմն Ձեր տեսության ազատ ժամերում, եթե միայն այդ Ձեզ ձանձրույթ չի պատճառում: «Սիրտ» է որոնում սիրտս՝ «բանաստեղծի սիրտ», հստակ կարկաչող վտակ, որ ծփալով սահում է կանաչ վերմակի տակից...

Ներողություն, որ հայերեն գրել չգիտեմ, և դա ունի իրա պատճառը:

Ուղարկում եմ իմ բանաստեղծություններիցս նրանք, որոնք ես գտնում եմ «բանի նման», և հավաքածուս, անշուշտ, միակողմանի կլինի:

Մնամ լի հարգանոք՝ Ա. Տիգրանյան

19 փ<ետրվարի>, 1909, Տփխիս

1910 հունիսի 9

Թիֆլիս-Թիֆլիս

Տփխիս, 1910 թ. 9 հունիս

Սիրելի՛ բանաստեղծ,

Շտապում եմ խոսել Ձեզ հետ, որովհետև իմ փոքրիկ եսը, թեև շատ անիրավացի, բողոքում է: Նա մի կյանք է և շատ տարբեր, և Ձեզ անպատճառ հարկավոր է ճանաչել նրան: Դուք, իհարկե, պետք է այդպես վարվեիք, որովհետև չէիք ճանաչում ինձ, բայց ես էլ պետք է այնպես վարվեի, որովհետև ճանաչում էի ինձ և, բացի դրանից, և Ձեզ: Ես չշտապելով վիրավորվել՝ ավելի շուտ կխոսեմ թե՛ իմ և թե՛ Ձեր կողմից: Ամենից առաջ ես «պարզ» եմ, մանավանդ, պահանջված տեղում, և երկրորդ՝ ես «ես» եմ. այս երկու բաները շատ փոթորիկներ կստեղծեն, եթե «եսս» հպարտ «ես» չլինի, չէ՞ որ պարզությունը և «եսը» շատ դեպքերում հակառակ ուժեր են: Հենց այս դեպքում: Եվ որովհետև «ես» եղել եմ շատ հպարտ «ես» շատ եսերի դեմ, վիրավորվեցի, որ «եսս» չճանաչվեց: Բայց, հետո մտածեցի, որ նա չէր կարող ճանաչվել, որովհետև նրան ճանաչում եմ միայն ես և ես կարող եմ ճանաչել տալ: Դուք, սիրելի բանաստեղծ, շատ պարզ խոսեցիք և, ինչպես շատ դեպքերում, այնպես էլ հիմա, չէր կարելի Ձեր խոսքերից վիրավորվել: Դուք

ասացիք, որ մենք դեռ իրար չենք ճանաչում: Դուք ինձ՝ այո, բայց ես Ձեզ միթե չեմ ճանաչում... Ես դեռ ջահել եմ, և Դուք շատ աննախանձելի կարծիք կարող եք ունենալ իմ վերաբերմամբ, մանավանդ, իբրև կնոջ: Դուք կարող էիք մտածել, թե ես որոպեի ազդեցության տակ, դրդված զգացմունքից և մի գուցե փոփոխակի զգացմունքից, ձգտում եմ այդպիսի մի քայլ անել, և հետո՝ «ետի» պահանջները շատ են, ընդունում եմ, այո՛, այդպես էլ կարելի է մտածել, բայց միք մոռանա, որ պահանջները լինում են ազնվացրած, և այդ դեպքում արթուն գործում է դատողությունը և անաչառ կամքը. ես նույնիսկ ենթադրում էի, որ Դուք եթե իմանայիք, որ ուզում եմ այդպիսի մի բան անել և չարի, մեղադրեիք ինձ և թույլ անվանեիք, բայց չեմ հակառակվում, որ մի գուցե ես իմ ազնիվ ձգտումներով շատ եմ շտապել: Հավատացեք ինձ, որ այդ ցանկությունս որոպեի արդյունք չէր և ոչ տպավորվող բնավորության, այլ առողջ դատողության և ուժեղ կամքի, որ մտածված էր մեր խոսակցությունից դեռ տարիներ առաջ, ես երբ դեռ փոքր էի և մտածում էի Ձեզ հետ տեսնվել, մտածում էի՝ ով ինձ կմեղադրի, գեղարվեստի սիրահարիս, եթե ես այդպիսի ձևով ցույց տամ իմ հարգանքը, իսկ հիմա, երբ ճանաչեցի բավականաչափ Ձեզ, նույնիսկ հանցանք եմ համարում այլ կերպ վարվել: Եվ միթե Դուք կարող եք ասել, որ Ձեզ չեմ ճանաչում, ուրեմն Ձեր բառերը բոլորը կեղծ էին, բայց չէ՞ որ ինձանից ավելի ես հավատում եմ այդ բառերին, որովհետև նրանք բանաստեղծի բերանից են հնչված, և բանաստեղծի, որը բոլորից բարձր է դասում պարզությունը, իսկ եթե դրան էլ չհավատամ, ասելով՝ ջանմ, ինչ բանաստեղծ, ինչ բան և այլն... այն ժամանակ էլ ապրել էլ չի լինի, երբ ոտնատակ է դրված սրբությունդ, և վերջապես՝ ես այնքան էլ հափշտակված չեմ այդպիսի սրբություններով, որը միայն արտաքինից է փայլում, և լավ ծանոթ եմ շատ բանաստեղծների կենսագրությանը, բավական է միայն Բայրոնը: Ես կարծում եմ՝ գեղեցիկը ավելի ևս գրավիչ և վսեմ է լինում, երբ նա կատարյալ ոգևորություն է, գոնե, որոշ չափով: Ես Ձեզ եմ ընտրել, որին հավատս եմ ընծայում, և դեպի որը ապահովված եմ զգում ընծայել, տանել առանց զղջալու խորին հարգանքս: Որպես օրինակ կասեմ, որ մեկը ևս մեր բանաստեղծներից, որին ես իբրև բանաստեղծ հարգում և սիրում եմ, չէր խնայում ինձանից իր ընկերությունը և, ըստ երևույթին, նույնիսկ պարզությունը:

Բայց ես, աչքի առաջ ունենալով նրան իբրև մարդ, չէի հավատում նույնիսկ հայտնած կարծիքին, որովհետև քիչ թե շատ ճանաչում էի բնավորությունը, իսկ այդ բանում օգնության է գալիս իմ դիտող բնավորությունը և դատողությունը: Ես նրան չէի հավատում, չէի պարզություն անում, որովհետև նրա պայմաններն էլ ուրիշ էին, թեև ավելացնում եմ, որ այդպիսի բաները նախապաշարմունք են, և գին չեմ տալիս դրանց, եթե ոչ հարաբերական նշա-

նակություն, թե մի գուցե հակառակ կողմի համար գին ունի:

Վերջապես, իսկ ինչ վերաբերում է մյուս մարդկանց, էլ նրանք ուր են մնում «բացարձակ» վայելելու իմ տրամադրությունը և հարգանքը, երբ ես բանաստեղծների մեջ տարբերություն եմ դնում, չնայած որ ամեն մի գեղարվեստին ծառայողի բնազդորեն տածում եմ որոշ հարգանք: Ուրեմն, ճանաչեցեք ինձ, ես ուժեղ բնավորություն եմ եղել և կարողացել եմ պարզաբանել ազնիվն ու գեղեցիկը, իսկ հիմա, նույնիսկ, վստահանում եմ գործել այդ ուղղությամբ, իհարկե, շատ զգույշ: Հիասթափող դեպքեր շատ են եղել, բայց, հավատացեք ինձ, Դուք ինձ չեք ճանաչում: Եվ, գուցե, ենթադրեք, թե ես մի շատ զգայուն, սենտիմենտալ, անտեղի ոգևորվող և փոփոխակի տրամադրվող անձն եմ և շատ անփորձ և շուտ մոլորվող այդպիսի հարցերում, բայց ես այնքան եմ ապրել դրանց, որ միակ մասնագիտությունս է դարձել, ես միշտ կարողացել եմ դատողությունս առաջ տանել և ամրապնդել, ամեն տեղ նա գլուխ է բարձրացրել:

Ես չեմ քարոզում, իհարկե, իդեալական, անարատ և ջինջ հարաբերություն երկու սեռերի մեջ, չեմ ընկնում ծայրահեղությունների հետևից, թեև ինձ համար շատ էլ տարօրինակ գաղափար չէ այդ, բայց շատ մեղադրելի կլիներ չընդունել այդպես մի պարզություն մեկի և «վստահելի» մեկի վերաբերմամբ, չեմ կասկածում, որ Դուք ինձ հետ համաձայն կլինեք: Վերջապես, Ձեր ձեռքում փաստ կարող է լինել իմ բանաստեղծությունների ուղղությունը: Ես ընդունում եմ՝ գեղեցիկը սիրելի է և գովելու արժանի, գեղարվեստը գեղեցիկի գեղարվեստն է, և ես սիրում եմ նրան և գիտեմ հարգել, և ավելի գին եմ տալիս հարգանքին. որտեղ կա հարգանք, կա, անշուշտ, դատողություն, և որովհետև դատողությունն է կշռում արժանիքը, իսկ որտեղ կա դատողություն, այնտեղ չի կարող լինել «էքստազ», «լոկ էքստազ»:

Ես Ձեզ հարգում եմ «ամենավսեմ և հանդարտ կերպով»: Եվ ես Ձեզ հարգում եմ՝ աչքի առաջ ունենալով Ձեր անձնավորությունը ոչ թե միայն իբրև բանաստեղծ, այլև իբրև «մարդ», իբրև համակրելի կարծիքների տեր և, վերջապես, խաթաբալայի մեջ չգցող մեկը, իսկ դրա վրա ավելացրած մի հոգի, բանաստեղծի հոգի, մեղադրելի կլիներ կեղծել: Իզուր տեղը այսքան խոսեցի և ձանձրացրի Ձեզ: Այդ զգացմունքը, անշուշտ, Ձեզ էլ ծանոթ կլիներ իբրև բանաստեղծի: Հուսով եմ, որ որոշ չափով կհավատաք խոսքերիս (և չեք անվանի կին), էհ, ինչ արած, որ հավատ չեն թողել: Մենք էլ պետք է տուժենք, բայց ոչ, գոնե, ձեզպեսների ձեռքից: Չեմ տատանվում, որ գործով կամրապնդեմ խոսքերս ու չեմ թույլ տա, որ Դուք ինձանից էլ հիասթափվեք, որովհետև ես ոչ միայն թիֆլիսեցի չեմ, այլ նույնիսկ Ալեքսանդրապոլում էլ անհատ եմ եղել համոզմունքների և որոշ չափով գործերի ասպարեզում:

Շտապեցի պատասխանել, որովհետև «եսս» պահանջում էր, որ ինձ ճա-

նաչեք: Ներողություն, եթե ձանձրացրի, բայց վստահություն ունեմ պատասխանի սպասելու:

Անչափ խորին հարգանքներս, ցտեսություն:

Արմ. Տիգրանյան

Գուցե արտահայտություններիս մեջ կոպիտ ձևեր լինեն, բայց չվիրավորվեք, այլ կերպ չեմ կարողացել:

Նույնը

Հասցես՝
Александрополь,
в магазин часов,
Арменуи Тигранян

Շատ եմ շտապել, և հարցը այնքան էլ չէ պարզաբանվել, մութ տեղերը կհարցնեք, եթե չձանձրացնի:

Այսօր Տփխիսը թողնում եմ:

1910 <հունիսի 14>
Ալեքսանդրապոլ - Թիֆլիս

Հարգելի և սիրելի բանաստեղծ,

Ահա գրում եմ երկրորդ նամակս և հույս ունեմ պատասխան ստանալու: Առաջինին այդքան շուտ չէի սպասում, որովհետև գիտեմ, որ Դուք զբաղված եք և խոստովանել եք ինձ, որ մի քիչ էլ ծուլանում եք, բայց միևնույն ժամանակ ասել եք, որ ում համակրեք, կգրեք, այնպես որ այդ աչքի առաջ ունենալով՝ ավելի զգալի կլինի Ձեր լռությունը: Ես, իհարկե, շտապեցի, բայց չէ՞ որ պարզություն արի, ինչի՞ կեղծեի և ուշ գրեի, քանի որ այն ժամանակ էի ուզում, իհարկե, այս ուղղությունը ամեն տեղ գործադրել չի կարելի, բայց նայած թե ում հետ: Հաճախում եմ միշտ գրադարան և կարդում «Հորիզոնը», թեև, իհարկե, ախորժալի չէ տեսնել Ձեզ «անհավասար» կռվում, այսինքն, երբ թշնամին շատ է թույլ և նսեմ բարոյապես, բայց, միևնույն ժամանակ, ախորժալի է լսել Ձեր վեհ պատասխանը, Ձեր մրցումի այն համակրելի ձևը, որն ազնվացնում է չարին:

Բայց, այնուամենայնիվ, ես կցանկանայի, որ այլևս Ձեր ստորագրությա-

նը չպատահեի, չնայելով, որ կափսոսեմ զրկվել Ձեզ լսելուց, ո՛չ, չեմ ուզում, թող չհասնեն Ձեզ: Հայկական առածն ասում է. «Պտղատու ծառին քարեր շատ են խփում». թող խելքով տիրեն Ձեզ, այդպես է իմ փոքրիկ խելքի հասկացողությունը, գոնե ես վշտանում եմ, երբ Ձեզ կանչում են բամբասանքի հրապարակ: Ներողություն վստահությանս, բայց չեմ կարող Ձեզ հետ պարզ չլինել, այդ Դուք եք ներշնչել Ձեր վարմունքով, իսկ մեծ մասամբ պարտական եմ բնազդին: Ձեր անձնավորությունը բարեհաջող տպավորություն է թողել ինձ վրա, և ես զգում եմ, որ Ձեզ հետ խոսելիս գոնե ես լինում եմ սեփական գույնիս տակ, չեմ կեղծում և որքան լավ եմ զգում ինձ: Ախր, ամենապարզ մարդը բոլորի հետ պարզ չի լինում, որովհետև անկարելի է, և ուրեմն՝ զարմանալի ոչինչ չկա, երբ գտնում ես մեկին ավելի ենթակա ճշմարտության և, ուրեմն, ավելի մոտ հոգուդ: Գրեցեք ինձ, խնդրում եմ, ինչ տպավորություն թողեց Ձեր վերա իմ «վարմունքը» և «անհամբերությունը»:

Ես չեմ կեղծում, որ Ձեր կարծիքին ես մեծ գին եմ տալիս. կարծիքը գին ունի, երբ անձնավորությունը հարգված է: Ես շտապեցի, որովհետև չէի ուզում տեղ տալ զանազան կարծիքների: Բայց դրանով, գուցե, ավելի վատ արի, եթե չկարողացա նամակովս բացատրել շտապելուս պատճառը: Վերջապես, ես մնացել եմ ենթադրությունների աշխարհում, որովհետև Ձեզանից պատասխան չունեմ և, նույնիսկ, մտածում եմ, որ կձանձրանաք պատասխանելու այսպես մի թեթև հարցի, թեև հարցի մանրությունը իմանալու համար հարկավոր է դնել իմ հոգեբանության կշեռքին Ձեր ձեռքով, այդ, հույսով եմ, որ կհաջողվի Ձեզ, որովհետև շատ դեպքերում մենք նկատել ենք հոգիների բարեկամություն: Ես չեմ պահանջում Ձեզանից շուտ պատասխանի, որովհետև չեմ ուզում ոչ մի դեպքում ձանձրույթ պատճառել, բայց այս մեկ հարցիս կցանկանայի շուտ պատասխան ստանալ:

Ես կգրեմ Ձեզ, որովհետև ուզում եմ խոսել Ձեզ հետ, բայց Դուք ինձ միք գրե, եթե ձանձրանում եք, իսկ թե ստանալուց էլ եք ձանձրանում, այդ դեպքում չեմ կարծում, որ այնքան պարզություն չունենաք, որ պարզորեն հայտնեք:

Նոր բաներ երկու հատ ունեմ, բայց թույլ եմ գտնում, գուցե և ուղարկեմ: Պարապում եմ առայժմս ընթերցանությամբ: Տերյանը եկել էր այստեղ: Բախտ ունեցա ծանոթանալու:

Մնամ հարգանոք՝ Արմենուհի Տիգրանյան

1910, հունիսի 23,
Ալեքսանդրապոլից

Հոգեկից բարեկամ,
Սիրելի բանաստեղծ,

Գրել, խոսել Ձեզ հետ, միշտ էլ հաճելի է, մանավանդ, ինձպեսների համար, որ կյանքիս 2/3-ը անց եմ կացնում լռելով: Բայց և խոսել դատարկ, աննպատակ, անհամ, դա էլ չարժե. ուրեմն, որքան էլ որ հաճախ ցանկություն ունենամ Ձեզ հետ խոսելու, պետք է դարձյալ նյութ որոնեմ: Թե՛ Ձեր նամակը, թե՛ «Գարունի» բաց նամակը, երկուսն էլ ստացա: Ինչ վերաբերում էր Ձեր նամակին, կարդացի և լռեցի, որովհետև լռությունը համաձայնության նշան է, այս դեպքում խո Դուք իրավացի էիք, և ես զգացի իմ երկար գրությանս ավելորդությունը: Բայց չէ՞ որ ես ջահել եմ և, ինչպես ասում են, «անփորձ», ախր այդ փորձը մարդուն հանում է իրա սեփական, բնական կաշուց և հարմարեցնում կյանքին: Ես «դյուզ» եմ դեռ բառի նշանակությամբ և հաշիվ չեմ տալիս ասածիս և խոսածիս: Թողնենք այս հարցը, բավական է շատախոսեմ:

Ուզում եք իմանալ, թե ինչ եմ անում ես: Հիմա այստեղ կատարյալ գարուն է: Մեր վարդերը նոր են բացվում, հով է, նույնիսկ ցուրտ: Մեր տունը կատարյալ պանսիոն է: 15 հոգի ենք 4 սենյակի մեջ, և բոլորս ջահելներ, քույրս իրա ընտանիքով, հետո մեր նորահարսը, այնպես որ ամեն օր աղմուկ, ուրախություն, իսկ ինձ համար բոլորովին ոչ ձեռնտու: Ես թափառական հրեայի պես մի սենյակից անցնում եմ մյուս սենյակը, առանձնանում և կարդում, բոլորովին անտարբեր եմ դեպի նրանց խաղերը և աղմուկը: Ինչ արած, չի գրավում, և ես հազարներ կտայի, եթե մի փոքրիկ ազատ անկյուն ունենայի, ինչպես այդտեղ Տփխիսում, ուրիշ տարիներ ազատ էի լինում, բայց այս տարի ամեն կողմից անհարմարություն, բայց ես չեմ կասկածում, որ կանեմ ավելի շատ, քան մի ուրիշ ժամանակ:

Շնորհակալ եմ Ձեր բարի խորհրդից, որ քիչ պարապեմ, բայց ինչ անեմ, այստեղաց կյանքը շատ է դատարկ. ներկայացումներ չկան, կան բալեր, զբոսանքներ, երեկույթներ և այլ ցիրկեր, սկետենգինգ պրոժեկտոր, որոնցից որը արժե գնալ և որտեղ կարող եմ ես բավականություն ստանալ. միակ բավականության տեղը, որտեղ հավաքվում են, խոսակցում, այդ քաղաքային այգին է, այնտեղ էլ լիքն է լինում տեղիս ուսանողությունով և դատարկ, անմիտ խոսակցությունից ավելի ոչինչ չես ստանալ: Մեկը չկա, որից կարելի լինի բավականություն ստանալ, զուր տեղը պետք է գնաս-գաս, հոգնես և ժամանակդ վատնած տուն դառնաս: Ավելի լավ չէ՞ մտավոր պաշարդ հարստացնես, որ կարողություն ունենաս գոնե ապագայում ստեղծել քեզ

համար բավարարություն տվող մի համեստ և բովանդակիչ կյանք, իսկ հակառակ դեպքում ներկայիս աշխատանքը ինձ ավելի հետաքրքիր է, քանց այդ աղմուկը:

Ես միշտ եղել եմ մենակ, նույնիսկ տանը, ես հարազատներիս շրջանից խուսափում եմ և առանձնանում, հակումներս և ծրագրերս շատ են անհամապատասխան հանգամանքներին, մանավանդ, այն պայմաններին, որի մեջ ապրում է կինը, և վերջապես, իմ պայմաններին, որ ամեն ինչ մոռացնել է տալիս. «ազատություն», «ինքնուրույնություն» կոչելով պետք է վատնեմ ես իմ ուժերը: Ծանր է և փշոտ կնոջ ուղին, շատ բաներ կան հեղափոխության կարոտ, մանավանդ անհատի համար, բայց դեռ «փոսը» չէ լցված, դեռ շատերը պետք է ընկնեն այդ ճանապարհին, մինչև երանելի ժամը հասնի, և «խորասուզված զանգը» ղողանջե: Գրելու տրամադրություն չունեմ, դեռ, ավելի շուտ, մի աստիճան էլ անց է, իսկ կարդալու տրամադրություն՝ լավ: Կարդում եմ գրքեր պատմությունից և փիլիսոփայությունից և դրանց միջև, իբրև դեսերտ, Пшибышевск-ու և Кнут Гамсун-ի փոքրիկ հրատարակություններից: Շատ հետաքրքիր մի քննադատական հոդված կա Պշիբիշևսկու ,,De profandis" գրքույկի սկիզբը, որտեղ խոսում է գեղարվեստի նշանակության մասին, թե անհատական է արդյոք նա:

Թեև թույլ եմ գտնում, բայց ուղարկում եմ ոտանավորներիցս 3-ը ևս, 4-րդը կորցրել եմ, եթե գտա, կուղարկեմ:

ԻՄ ԵՐԳԸ

Ես վարդ հույզերիս բույրով արբեցած՝
Հոգուս հարսանյաց հիմն եմ երգում,
Մանուկ գարունի ճիչով արթնացած՝
Գալիք ծաղկունքի օրորն եմ երգում:

Ես երազում եմ լոկ երազ կյանքի
Վառ ցնորքները անուրջներով լի,
Արտացոլում եմ վճիտ արցունքի
Ջինջ կաթիլները սգով վշտալի:
(Եվ մոռացութան խավարի գրկից
Հանդուգն ծաղրում են ստվերներդ ինձ,
Ապերախտ զավակ, դու լույսը մեգից
Գրկեցիր, հիշիր ծագումդ մեզնից):

Գրեցեք, մութ չէ՞ ընթերցողի համար այս վեջին տունը:

ԳԱՐՈՒՆ

Գարունն է եկել և հոգիս գրկել,
Գարունն է եկել, հանգիստս խլել.
Կենսուրախ ժպտով, սիրալի երգով
Գարունն է սրտիս սառույցը հալել:

Փայլուն հեքիաթներ, փայլուն օրերի
Նոր կյանք են առել և սիրտս լցրել
Երազ անուրջներ երազ օրերի,
Նոր հոգի առել, հանգիստս խլել:

(Գարունն է եկել և էլի կգա,
Կենսատու շունչը կփռե չորսդին,
Անկենդան հոգիս, հոգիս անզգա
Էլ չի մասնակցի կենսուրախ երգին):
Էլի մի կարոտ, սիրո մի թախիծ,
Ծանոթ մեղեդին անցյալ օրերի
Տրորեց հոգիս
(Գուրգուրեց),
Էլի մի համբույր վաղանցուկ գարնան՝
Վարդի բուրմունքով
(Օրորեց) կախարդեց հոգիս,
(Էլի հեռացա, էլի վերացա,
Էլի մոռացա աշխարհ ու մարդիկ
Եվ կարոտ սրտով գրկեցի երկինք):

Գրեցեք, սրանցից որը հաջող գտաք: Ընդունեցեք բարևներս և սրտագին հարգանքներս:

Հարգանոք՝ Արմ. Տիգրանյան

1911 հունիսի 20-ից հետո,
Ալեքսանդրապոլ-Թիֆլիս

<1911, հունիսի 20-ից հետո>

Սիրելի բանաստեղծ,

Ես որ լռում եմ մի նամակից հետո, ոչ նրա համար, որ Դուք չեք գրում, իհարկե, հաճելի էր լսել Ձեզ, բայց քանի որ Ձեր տրամադրությունը ինձ համար շատ պարզ է և ծանոթ, ուստի և զարմանալի չէ լռությունը: Ես գիտեմ, որ անհամեմատ խորը ազդակ կլիներ Ձեր հոգու վրա Ձեր հոգեկից ընկերի[162] և մեր բոլորիս սիրելի «պապի» և մեծ մանկավարժի անսպասելի վախճանը: Դուք թեև մռայլահայացք չեք, բայց և այնպես պետք է, որ խորը զգացած լինեք մի բան, որ այլևս չեք պատահելու նրան երկրային կյանքում (երկնայինը չգիտենք), այսինքն, մի անչափ ցավալի բան՝ զրկված եք ունենալ Ձեր կշտին մի «հոգեկից ընկեր», լավ ընկեր: Մենք բոլորս ցավում ենք իբրև մարդու, իբրև գրականագետի, իբրև մի դառը կորուստ իրա մերձավորների և ազգի համար: Դուք այս բոլորի հետ կորցրել եք և մի «հոգի», որը Ձեզ որքան հասկանալի էր և թանկ: Միանգամայն հասկանում եմ Ձեզ: Մխիթարվենք այն գիտակցությամբ, որ «անունը» մնում է, բարի գործը հիշվելու է դարեդար, որ նա մեռավ մի մահով, որը նսեմացնում է հազարավոր մահեր, այսինքն, որ նա չմեռավ, այլ անմահացավ:

Այսքան երկարացնելս էլ ավելորդ էր մի հարցի վերաբերմամբ, որը այնքան պարզ է մեզ համար: Մենք դեռ ապրում ենք, ուրեմն և մնալու ենք բարեկամներ՝ աշխատելով միշտ պիտանի լինել, երբ կարիք ենք զգում մեր տրամադրությունները թարմացնելու:

Ուղիղ երկու շաբաթ է, որ չեմ պատահում Ձեզ «Հորիզոնի» թերթերում: Ինչո՞վ բացատրել այդ: Իբրև հարգանք հանգուցյալին, իբրև տրամադրության բացակայություն, թե (որ ամենից անախորժելին է) Դուք Ձեզ ֆիզիկապես թույլ եք զգում և ստիպված թողել եք խմբագրատունը:

Որքան էլ որ վիշտը մեզ հարազատ լինի, այնուամենայնիվ, էլի ձգտում ենք դեպի երջանկությունը, լինի դա գիտակցորեն, թե անգիտակ:

Ես ուզում եմ Ձեզ տեսնել ուրախ, «խորունկ» անհոգության ժպիտով սքողված, միայն թե ոչ հոգնած ու թուլացած անքնությունից, այլ արբած Ձեր ներքին աշխարհի «վեհ խնջույքից»: Դուք էլ չէ՞ որ թանկ եք մեզ համար և անփոխարինելի: Լավն է Ձեր հայեցակետը կյանքի և իրերի վերաբերմամբ, օգտվեցեք Ձեր սկզբունքով ճշտորեն, և Դուք էլ կլինեք Ձեզ համար լավ և սիրելի,

162 Խոսքը վերաբերվում է Ղ. Աղայանին, որը հանկարծամահ եղավ 1911 թ. հունիսի 20-ին:

ինչպես մեզ համար եք: Շատ ճիշտ են հարգելի Շիրվանզադեի խոսքերը՝ թե մարդիկ շատ բան կարող են անել, եթե չդավաճանեն իրանց սկզբունքներին:

Այս բոլորը Դուք ինձանից շատ լավ գիտեք, ես կրկնում եմ միայն հիշեցնելու համար այն, ինչ հանգամանքները մոռացնել են տալիս և երբեմն նույնիսկ արհամարհել:

Հուսամ, կներեք հանդուգն շատախոսիս:

Ցանկանում եմ Ձեզ կատարյալ առողջություն և թարմ տրամադրություն:

Ջերմագին բարևներով՝ Արմենուհի

Ազնիվ Հրաչյայից

1909 նոյեմբերի 17[163]
Բաքու-Թիֆլիս

Ազնիվ Հրաչյա

Իմ ազնիվ և ընտիր բարեկամ,
պարոն Հովհաննես Թումանյան,

Ստացել եմ 26 հոկտ<եմբերի> թվագրված նամակնիդ, որուն վերնագիրը ինձ չափազանց ուրախացրեց, որովհետև քաջ գիտեմ, թե ձևականության համար չէ, որ կոչում եք ինձ Ձեր բարեկամուհին, ո՛չ, վստահ եմ, որ Դուք գիտակցաբար բարեկամ անունը տվել եք ինձ, թեև չեմ տեսել Ձեզ երկու տարիներից ի վեր, բայց, մանավանդ այս վերջին տարին, հոգով ապրել եմ այնտեղ, ուր որ Դուք եք ապրել. կարող է վկայել պ. Չոպանյանը, իմ ազնիվ և ընտիր բարեկամս:

Այո՛, ազնիվ, ես վստահ եմ, որ Դուք անազնիվ գործ անելու անընդունակ եք, իսկ արդարությունը միշտ կհաղթանակե, իսկ գալով ընտիր բառին՝ Դուք ո՛չ միայն իմ ընտրելին եք, ո՛չ, այլ ժողովուրդն է Ձեզ ընտրյալների կարգն դասել: Ժողովրդից ընտրվելը շատ ավելի արժե, քան ինձ նման մասնավորից:

Ինձ շնորհակալություն եք հայտնում «Անահիտի» մեջ լույս տեսած ինքնակենսագրությանս համար, ապա ես քանի <1 անընթ.> պետք է շնորհակալ լինեմ Ձեզ, այո՛, Ձեզ միայն, իմ թանկագին բարեկամ: Դուք էիք, որ ստիպեցիք գրի առնել իմ հիշողությունները, թեև ընդհանուրի համար հետաքրքիր չէ, բայց կարող է մի օր մասնավոր անձանց պետք գալ: Այդ առթիվ միմիայն

163 Նամակը տպագրվել է ՈւՀ 5, էջ 333: Տես նաև ԳԱԹ, ԹՖ, N 806:

14 նոյեմբերի «Մշակի» համարում մի հոդված կար դրված պ. Ա. Մ. Եզեկյան ստորագրությամբ: Շատ զգացված եմ պարոնի ուշադրությանը արժանանալուս: Թեև միշտ ուրախությամբ եմ կարդացել պարոնի հոդվածները և դատել, որ ինձ նման հասարակ մահկանացու չէ, բայց անձամբ ճանաչելու պատիվը չեմ վայելած: Սիրելի բարեկամս, եթե Ձեզի նեղություն չէ, իմ կողմից հայտնեցեք խորին շնորհակալություններս պարոնին:

Իմ առողջության մասին տեղեկություն եք կամեցել, ինչ ասել, ինչ գրել: Պոլսեցիքս մի առակ ունինք, պետք է կրկնել (թունդ քացախը իրա ամանին կվնասե). այո՛, չգիտեմ ինչ անուն տալ. հոգի՞, արյո՞ւն, թե՞ ույժ, ինչ որ է, այդ այնքան ուժեղ է իմ մեջ, որ քսան տարի առաջ կարելի է այսքան ուժեղ չլիներ, ահա այդ ույժն է առիթ տվողը մարմնույս հաճախ տկարանալուն: Այնքան թանկ գնով ձեռք բերված մեր մայրենի բեմը, այնքան թանկ գնով իր բարձրավանդակի վրա բարձրացրած հայ բեմերնիս, ես պարծենալով կասեմ, որ մենք աշխատեցանք և մասամբ հաջողեցանք՝ տալով իրան իր արժանավոր տեղը, իսկ այժմ ինչ եմ տեսնում, բարձիթողի արած, մոռացված, լճացած: Հիսունամյակը կատարեցինք, բայց դա ոչ թե հիսունամյակ էր, այլ թաղման հանդես: Երանի Ադամյանին, որ չարժանացավ ներկա լինելու այդ սգահանդեսին:

Ազնիվ բարեկամս, սարսափելի է ապրել այնքան և տեսնել բոլոր հույսերի խորտակումը... Բայց, ներեցեք ինձ, ինչեր եմ գրում և Ձեր սիրտն էլ ցավացնում: Այժմ տեսնում եմ, որ իմ հոգիս էլ է հիվանդ: Ներեցեք ինձ, խնդրեմ, ա՜հ, ինչքան ցանկալի էր տեսնել Ձեզ:

Կսեղմեմ Ձեր ձեռքը՝

Բաքու, 17 նոյեմբեր, 1909:

Անայիսից

1921թ. նոյեմբերի 26-ի

Կ.Պոլսից[164]

Մեծ բանաստեղծներուն տավիղին ոսկեալար մակդիրը կու տան, բայց ես չեմ ուզեր, ով մեր անըսգյուտ քերթող, տալ այդ մակդիրը քու տավիղիդ. անոր լարերը, լուսասպիտակ մուսաները հյուսած են ոչ թե սոսկ թելերով, այլ մարդկային սրտին ամենեն խորունկ և ամենեն քնքույշ զգացումներովը, մարդկային հոգիին ամենեն վսեմ թռիչքներովը և ամենեն անպատում տառապանքներովը:

Դուն երգիչն ես, որուն տաղերը՝ մերթ հրճվանքի և մերթ ամենաբուռն ցա-

164 Նամակը պահվում է ԳԱԹ, ԹՖ N 885, (244լր): Այս տեքստը Անայիսի ողջույնի խոսքն է՝ արտասանված 1921թ. նոյեմբերի 14-ին Դպրոցասեր տիկնանց Գատը գյուղի վարժարանում: Այն տպագրվել է «Հայ կին» երկշաբաթաթերթում, Կ.Պոլիս, 1921, թիվ 2, էջ 811:

Անայիս

վի շեշտերով, կանցնին լեռներեն, անապատներեն, ձորերեն, կը թռին հողմավար թռչուններու պես սարերեն վար, ծովերեն վեր և կը հուզին, կը ցնցին ամեն անոնց ալ, որ սիրած են, տառապած են, լացած են: Հուսավրեպներուն խրախույս կու տան, դառնացածներուն՝ կորով, անժպիտներուն ժպիտ, չսիրվածներուն՝ գգվանք:

Քու երգերդ, քու անմոռանալի տաղերդ, կը մրմնջին իր շրթունքները ինչպես աղոթք մը սրբանվեր, և մեր հոգիներուն հիացումը. հեռավոր բլրի մը կողքեն՝ բանաստեղծության նվիրված մեհյանի մը քանի մը շողակնազարդ խնկամաններուն մեջ ծխված կնդրուկին մը մուխին պես. կուգա քեզի. անոսրացած հեռավորության մեջ. տարտամ, բայց միշտ հեշտաբույր:

Ես կը ողջունիմ քեզ հոս մեր մեջը, կը ողջունեմ ոչ թե քաղաքացի մեծ մարդը, այլ հոգիներու սարսուռ տվող՝ սրտերը քնքշորեն սփոփող և զրկանքի արցունքներ սրբող բանաստեղծը:

Կը ողջունեմ հայ քերթողը, որ երգած է հայ սրտերուն հույսերը, հայ սրտերուն խռովքը, հայ սրտերուն թրթռումները:

Կը ողջունեմ քեզ, որ ինձ երանությունը տված ես. քու բանաստեղծություններդ կարդացած միջոցիս. անսահման երանությունը տված ես զքեզ եվրոպացի քերթողներու բաղդատելու և քու երգերդ ավելի սրտիս մոտիկ, ավելի շքեղորեն զգայուն գտնելու: Ինձ տված ես երանությունը հպարտ ըլլալու հայ բանաստեղծությունով: Ընդունե զմայլումս այնպես, ինչպես իշխան մը կը ընդունի համեստ ու պարզուկ կնոջ մը ձեռքեն լեռան ծաղիկներու փնջիկ մը:

Միայն թե իմ փնջիկս կապված է իտեալի ծաղիկներով, որոնք քաղած եմ այն վերացումի պահերուս. այդ քու մեծ հոգիիդ հետ, քու հեշտալար տաղերուդ մեջեն սավառնած եմ դեպի բանաստեղծություն, դեպի արվեստի գեղեցկության անրջային աշխարհները:

Բայց իմ ողջույնիս պետք է կցիմ իմ քույրերուս, դպրոցասեր տիկիններուն և սանուհիներուս ողջույնները. դպրոցասեր տիկինները և մատաղատի սանուհիները, որոնց ճակատին վրա հրճվանքի ճառագայթը սփռեցիք, իրենց սրտերուն խորը, առհավետ պիտի պահեն հիշատակը այս օրվան, պիտի պահեն հիշատակը Ձեր իրենց մոտ գտնված պահերուն, ինչպես կպահվին մեծ ժամերուն, ինչպես կը պահվին մեծ երջանկության օրերու հիշատակները հույզի և լույսի մեջ:

Ոսկի շունչ մեր քերթողին

պ. Հով. Թումանյանին՝ հիացումով. Անայիս:

ԿԱՆԱՅՔ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Թումանյանը անմարելի ժպիտ ուներ...Մենք մեր ուրախությունը և տխրությունը նրա հետ էինք կիսում, մեր սրտերը նրա հետ էինք բացում: Մեծի հետ մեծ էր, փոքրի հետ՝ փոքր:

Վարսենիկ Աղասյան

Ես խորին պաշտամունք էի տածում դեպի երազի պես հեռու Հովհաննես Թումանյանը... Քաշվում էի նրա ներկայությամբ նույնիսկ բառ արտասանել ու հափշտակված դիտում էի նրա պարթև հասակը, լուսագեղ գլուխը, գեղեցիկ ու պայծառ դեմքը, խոհուն ու բարի աչքերը...

Արուս Ոսկանյան

Սիրտս սկսում էր արագ բաբախել, ես ուզում էի ներս թափանցել այդ խորհրդավոր սենյակը, որ մի անգամ ևս տեսնեմ պոետի թեթև կկոցած աչքերը, նրա ժպիտը... Թումանյանը մեծ սրտի տեր էր... և երբեք չէր սպառվում նրա հարուստ էությունը:

Հռիփսիմե Պողոսյան

Ինտերնացիոնալ սեղանի թամադան էր... չգերազանցված, անզուգական թամադան... Երջանիկ է նա, ով տեսել է Թումանյանին այդ դերում... Ամեն կենացից հետո մի էքսպրոմտ, մի քառյակ, այնքան հաջող այնքան գեղեցիկ:

Հռիփսիմե Պողոսյան

Ամեն անգամ Թումանյանի մոտ մտնելիս ես ինձ զգում էի մի հեքիաթային, կախարդական կղզու վրա....գրական մատաղ ծիլերի և կոկոնների հոգատար պարտիզպան... **Սիրելի, անկրկնելի հայացք, որի նմանը ես չեմ զգացել իմ ամբողջ կյանքում....**

Ֆլորա Դաստակյան

Իմ ազնիվ ու ընտիր բարեկամ... Թեև չեմ տեսել Ձեզ ...բայց հոգով ապրել եմ այնտեղ, ուր որ Դուք եք ապրել... Դուք ոչ միայն իմ ընտրելին եք, ոչ...

Ա՜հ, ինչքան ցանկալի էր տեսնել Ձեզ մի անգամ...

Ազնիվ Հրաչյա

Բոլոր դեմքերը մթագնել են անմոռաց բանաստեղծի անջնջելի կերպարի առաջ... ամենասիրալիր և ամենասրտակից մարդ ...

Իոաննա Բրյուսովա

Ասես արև ճառագայթելով իր շուրջը... նա կյանք ու բերկրանք է տալիս ողջ շրջապատին... բարի ոգի, հայ ժողովրդի ազնվության լավագույն արտահայտիչ:

Նինո Տաբիձե

Ինչպիսի՜ հոգատարություն դեպի բոլորս՝ մեծերն ու փոքրերը, հիվանդներն ու առողջները... Ես երջանիկ եմ զգում ինձ, որ առիթ եմ ունեցել աշխատելու նրա ձեռքի տակ:

Նվարդ Եգիբյան-Բաղդասարյան

Ես Ձեզ եմ ընտրել, որին հավատս եմ ընծայում մի հոգի, բանաստեղծի հոգի... ես զգում եմ, որ Ձեզ հետ խոսելիս գոնե ես լինում եմ սեփական գույնիս տակ, չեմ կեղծում...

Արմենուհի Տիգրանյան

Ինչ ձոնեմ քեզ, որ չունենաս,
Սեր թե կարոտ, կապույտ երազ,
Անխրատ սիրտ, գարնան համբույր
Սիրող աչեր, գինի՞ թե բույր:

Մենության ցավ, երգ թե ժպիտ,
Մտքե գրիչ, խոսքե մատիտ,
Հուզումներե կերտած տաճա՞ր,
Սիրո կնճի՞ռ, փա՞ռք թե հանճար:

Գուցե մի սիրտ, խորունկ ու հեզ,
Մեծի, փոքրի հանդեպ բեհեզ,
Սիրող ու վեհ, հպարտ, անպարտ,
Ա՜հ, թե լիներ նաև անդարդ:

Եվ կուզեի ձոնել ես քեզ
Մոռացության թևերն անտես,
Որ հասնեին վշտիդ ժամին
Օրորեին, հաշիշ տային:

Արմենուհի Տիգրանյան

Հովհաննես Թումանյանը ճառագայթող մարդ էր: Բանաստեղծ՝ ոչ միայն գրչով, այլև իր անձով, իր կյանքով և կենցաղով: Անսպառ վեհանձնության տպավորություն մը կգործեր, որովհետև անիկա ինքզինքը կշռայլեր անհաշիվ: Կյանքի դժվարին ճամբաներու վրա կքալեր ձեռքերը բեռնավոր գանձերով և շնորհներով: Հարուստ էր և զեղուն բարոյական ուժերով, գերակշիռ ուժերով, որովհետև իր մղիչ ուժը սերն էր:

Զապել Եսայան

Բայց ոչ արդի սերունդը, ոչ գալիք սերունդները չեն մոռնար զինքը: Վերագնահատման ամենախիստ բովերեն Հովհաննես Թումանյանի անձը և երկը դուրս կու գան անեղծ ու պայծառ: Անիկա իր էության ամենաբարձր արտահայտություններով միշտ պիտի մնա ներկա և թերևս պիտի ըլլա միակ հաստատ օղակը, որ ապագան պիտի կապե անցյալին:

Զապել Եսայան

Անոր կյանքը ողողված էր ուրիշներով...Անիկա անզուգական էր... խորապես հպարտ մարդ էր. ...Անոր սիրտը հարուստ էր... լավատես և շեն սրտով մարդ... մեծ մարդ...

Զապել Եսայան

Անիկա իր նյութական միջոցները և ժամանակը կը շռայլեր ուրիշներուն հաճույք պատճառելու և այդ հաճույքով երջանկանալու համար: **Անիկա կը ճառագայթեր իր շուրջ բոլորը իր անձին արտակարգ հմայքով** և իր տրամադրած բոլոր միջոցներու շռայլ շնորհումով՝ երբեք չմտածելով իր մասին...

Զապել Եսայան

...Անիկա կածես կը գրկեր բոլոր տառապող ժողովուրդները իր բաբախուն և տաք սրտին վրա...Անիկա իմաստուն մարդ էր և խորը կը թափանցեր մարդոց հոգեբանության մեջ:

Զապել Եսայան

Դուք՝ իբրև տղամարդ, գոռոցով ու կարկուտով եք գալիս, իսկ ես՝ իբրև կին՝ արտասուքով... սկսում եմ երազել... և երբեմն այնպես հեռու եմ գնում, որ արթնանալս դժվար է լինում ...

Մարիամ Թումանյան

Թումանյանը կգերազանցի Պուշկինին:

Մարիամ Թումանյան

Ձեզ հետ միասին տանջվում է և իմ սիրտը ... Իմ փափագս է Ձեզ այնպես պաշտպանեմ, որ ոչ մի մարդ չդիպչի Ձեր զգայուն սրտին, որ Ձեր հոգին հանգիստ լինի... Ես կուզենայի Ձեզ խնամել ինչպես մի քնքուշ ծաղիկ. պահպանել թե՛ արեգակի այրող ճառագայթներից, թե՛ ձմեռվա ցրտից:

Մարիամ Թումանյան

Ձեր ամեն մի վիշտը արծագանք է գտնում սրտիս մեջ... որքան ցավ կարող են զգալ Ձեր վշտից այն սրտերը, որ այնքան մոտիկ են Ձեզ և այնքան լիքը ... մաքուր զգացմունքներով:

Մարիամ Թումանյան

Մի մտերիմ ու քնքույշ բարեկամ ունեմ, որի երջանկության համար պատրաստ էի ամեն տեսակ զոհաբերություն անել...

Մարիամ Թումանյան

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Ա

Աբովյան Անուշավան - 22, 23, 40, 43, 80
Աբովյան Խաչատուր Ավետիքի - 14
Աբովյան Սարգիս Իսայու (Եսայու) - 21
Աբուլաձե - 10
Ադամյան Պ. - 194
Ազնիվ Հրաչյա - 27, 31, 161, 193-194, 197
Ազով - 133
Աթանասյան Աշոտ Նահապետի - 87
Ախիկյան Վրթանես - 121
Ախվերդյան Գևորգ Ախվերդիի - 10
Ահարոնյան Ավետիս Առաքելի - 57, 121
Ահարոնյան Վարդգես - 46, 57, 58
Աղաբաբ (Աղաբաբյան) Հակոբ - 121
Աղայան Ղազարոս Ստեփանի - 46, 99, 120, 121, 149
Աղասյան Վարսենիկ - 27, 28, 29, 197
Աղբալյան Նիկոլ Պողոսի - 56, 159
Ամիրղանյան Պողոս - 133
Անագչյան Հակոբ Կ. - 119, 125,
Ասիլյան Միսակ Սարգսի - 30
Արղության Ս.Երկայնաբազուկ - 105
Անայիս - 27, 46, 65, 70, 71, 194-195
Անուշկի - 42
Առաքելյան Արամ - 79
Ասատուր Գևորգ - 37
Ասպազիա - 16
Արշակյան Հրանուշ- 20
Արասխանյան Ավետիք - 36, 149
Արաքսյան Պողոս - 105, 133, 178
Արծրունի Գրիգոր Երեմիայի - 98
Արղության Ս.Վ. - 105

Բ

Բայրոն Ջորջ Նոել Գորդոն - 5, 90, 185
Բաշինջաղյան Գևորգ Զաքարի - 121
Բեգզադյան Տիգրան - 35, 36, 37
Բինե Ալֆրեդ - 76,77
Բրյուսովա Իոաննա - 27, 31, 198
Բուդաղյան Արտաշես - 115

Գ

Գալստյան Գալուստ - 124
Գալֆայան Կարապետ Սարգսի - 46
Գևորգյան Ա. - 121
Գևորգյան Վարսենիկ - 13, 21, 22, 27
Գիրգիդյան Օսան - 39
Գյոթե - 104
Գյուզալյան Տիգրան - 47
Գյուզալյան Նազիկ - 48
Գյուլնազարյան Խաժակ - 121
Գոգոլ Նիկոլայ Վասիլևիչ - 73
Գոլոշյան Ալեքսանդր Գրիգորի - 23
Գոլոշյան Գրիգոր - 23
Գոլոշյան Դարյա (Քալինկա) - 23, 26, 42
Գորկի (Մաքսիմ Գորկի) - 98
Գորոդեցկի Նիմֆա - 26, 49
Գորոդեցկի Սերգեյ - 26, 32, 49
Գուդիաշվիլի - 32

Դ

Դալլաքյան Արամ - 87
Դանիել - Բեկ Սոֆյա - 16, 173, 174
Դանչենկո Վլադիմիր Նեմիրովիչ - 73
Դաստակյան Ֆլորա - 27, 30, 31, 197
Դավթյան Սերիկ (Սիրուհի) - 27
Դեմիրճյան Դերենիկ - 46, 99
Դոլուխանյան Եղիսաբեթ - 137
Դոլուխանյան Գ. - 105
Դոլոխանյան Պ. - 105
Դոլուխանյան Մարկոս - 95, 128

Ե

Եգիբյան-Բաղդասարյան Նվարդ - 27, 29, 198
Եզեկյան Ա.Մ. - 194
Եզյան Կարապետ (Գերասիմ) - 111

Եսայան Զապել Մկրտչի - 17, 27, 33, 46, 59-64, 199
Երզնկացի Կոստանդին - 10
Երզնկյան Արամայիս - 37
Երիցյան Գարեգին - 121, 124, 127

Զ

Զանդեր Ս.Խ. - 77
Զարգարյան Արիստակես - 72, 95, 98, 102, 105, 108, 149, 158, 168, 170, 171, 178, 181
Զարիֆյան Մատթեոս Տաճատի - 91
Զդանևիչ Իլյա - 32
Զոհրապ Գրիգոր - 77, 149
Զուդերման Հերման - 73

Է

Էյնտշեյն Ե. - 77
Էփրիկյան Գրիգոր - 122
Էքերման Ի. Պ. - 104

Թ

Թադևոսյան Արշակ - 26
Թադևոսյան Գևորգ - 104
Թադևոսյան Եղիշե - 121
Թաիրյան Նունե - 87
Թելեմեզյան Փանոս - 121
Թլկուրանցի Հովհաննես - 10
Թոփչյան Ալ. - 145
Թումանյան Աշխեն - 49, 159
Թումանյանի Անուշ - 27, 31
Թումանյան Արտավազդ - 49
Թումանյան Բագրատ - 42
Թումանյան Համլիկ - 159
Թումանյան Մարիամ - 5, 17, 33, 45, 46, 55, 95-165, 167-183, 199, 200
Թումանյան Մուշեղ - 49, 149, 181
Թումանյան Նվարդ - 9, 18, 19, 20, 23, 49, 67, 100, 143
Թումանյանն Օլգա - 25, 35, 42-47, 81, 83, 85, 88, 156, 157, 181
Թումանով Գեորգի - 97, 98, 131, 171
Թումանով Հեղինե - 181
Թումանով Նատալյա - 98
Թումանով Միքայել - 122, 153, 180, 181

Ժ

Ժորժ Սանդ - 16, 19

Ի

Իբսեն Հենրիկ - 73
Իզմիրլյան Մատթեոս - 13, 34
Ինճիկյան Արամ Մկրտչի - 23, 42, 100
Իսահակյան Ավետիք Սահակի - 18, 46, 58, 80, 99, 121

Լ

Լազարյան Մինաս Բոգդանի - 109
Լայխտեմբերգսկայա Զամթարի - 32
Լաչինով Եվդոկիմ Եմելյանովիչ - 14, 127
Լենկթեմուր - 134
Լեո - 77, 149
Լևոնյան Գարեգին Ջիվանիի - 51
Լերմոնտով Միխայիլ Յուրևիչ - 9, 73
Լիսիցյան Եկատերինա - 120, 121
Լիսիցյան Ստեփան Դանիելի - 120, 121, 122, 123, 124, 127, 182

Խ

Խայամ Օմար - 10
Խանդամիրյան Մկրտիչ - 73
Խանդամիրյան (Մանանդյան) Վարյա (Վարդուհի) - 72-94, 132, 139
Խանզադյան Ցոլակ Խորենի - 70
Խատիսյան Ա. - 105, 150
Խատիսյան Մարիամ - 17
Խնկոյան Աթաբեկ - 121, 127
Խոնկո Ալ. - 10, 11
Խրիմյան Հայրիկ - 26, 46, 132

Ծ

Ծատուրյան Ալեքսանդր - 149

Ծերեթելի Ակակի Ռոստոմի - 98

Կ

Կալֆ - 28
Կարա - Մուրզա Պողոս - 105
Կարա - Մուրզա Քրիստափոր - 105
Կարիճաշվիլի - 10
Կիրակոսյան Ջոն Սահակի - 64
Կոմիսարժևսկի - 97
Կոմիտաս - 149
Կոստանյանց Կարապետ - 10
Կորոլենկո Վլադիմիր - 97
Կրասիլնիկյան Կոստանդին - 101

Հ

Հազիրի (Աբրահամ Աբրահամյան) - 43
Համսուն Կնուտ - 52, 190
Հայնե Հայնրիխ - 10
Հայրապետյան Հայրապետ - 121
Հարությունյան Սամսոն - 161
Հեղինե - 22
Հմայակ - 22
Հյուգո - 73
Հովհաննիսյան Աբգար - 98
Հովհաննիսյան Հովհաննես - 121, 183
Հովհաննիսյան Տիգրան Ներսեսի - 61
Հովվյան Սիմոն - 115
Հովվյան Պողոս Գաբրիելի - 100
Հրաչյա Ազնիվ - տես Ազնիվ Հրաչյա

Ղ

Ղազբեկի Ալեքսանդր - 98
Ղամբարյան Պետրոս Պողոսի - 87
Ղլտճյան Արսեն (Սիմեոն) արքպ. - 49, 79, 99, 100, 104, 112
Ղրկիսալով - 174

Ճ

Ճավճավաձե Իլյա Գրիգորի - 98

Մ

Մամիկոնյան Երվանդ - 43
Մայսուրյան Օլգա - 19
Մանանդյան Հակոբ - 87, 84, 88
Մանդինյան Ամիրան - 133
Մանթաշյան Ալ. (Մանթաշով) - 102, 113
Մանուկյան Ազատ Մինասի - 29
Մառ Նիկողայոս Յակովլևիչ - 10, 11
Մառք (Թոփուզյան) Հայկանուշ - 66
Մատթեոս Բ Կոստանդնուպոլսեցի - 13
Մարիա (Սոֆյա Ֆրեդերիկա) Ֆեոդորովնա - 128
Մարկոսյան Հ. - 26
Մարտիրոսյան Մնացական - 116
Մարտիրոսյան Հովհաննես քահանա - 42, 79, 100
Մելիք-Բեգլարյան Ա. - 105
Մելիք-Լազարյան Աբա - 111
Մելիք-Հայկազյան Ալ. - 33, 36, 69
Մելիք-Հայկազյան Ժոզեֆ - 35
Մելիք-Հայկազյան Հեղինե - 33-36, 153
Մելիք-Հայկազյան Վարվառա - 33, 35-36
Մելիքովներ - 32
Մեյերխոլդ Վսևոլդ Էմիլի - 97
Մեսյան Գևորգ Մնացականի - 121
Մեսրոպ վարդապետ - 87
Միխայլովսկի Ն.Կ. - 98
Միծիշվիլի Նիկոլայ - 32
Մինասյան - 105
Սըղդսի Ավագ - 24
Միքայել - 22
Մոլիեր - 73
Մուրացան - 87

Յ

Յաշվիլի Պաոլո - 32
Յավորսկայա - դերասանուհի - 97

Ն

Նազարյան Տիգրան - 180
Նալբանդյան Վ. - 105
Նանսեն Ֆ. - 161
Նար - Դոս - 28

Նայդյոնով - 73
Նարեկացի - 10
Ներսես 5-րդ - 28
Ներսիսյան Ջավահիր (Ջավո) - 34
Նիկոլայ Երկրորդ - 129
Նիցշե - 73
Նունե - 39

Շ

Շահազիզ Սմբատ Սիմոնի - 109
Շահինյան Մարիետա Սերգեյի - 62
Շահլամանյան Դավիթ (Դաթիկո) - 79
Շահվերդյան Քալի - 23
Շանթ Լևոն Սեղբոսի (Նահաշպետյան, Սեղբոսյան) - 33, 34, 46, 80, 86, 98, 99, 108, 110, 112, 114, 154, 159, 174, 179
Շիլլեր Յոհան Քրիստոֆ Ֆրիդրիխ - 73
Շիրվանզադե Ալ. - 73, 99, 121, 192
Շխյաններ - 110
Շմերլինգ - 121
Շուշանիկ (Օլգայի մայրը) - 40, 43

Ո

Ոսկանյան Արուս - 27, 29, 30, 197

Չ

Չարենց - 58, 161
Չեխով Անտոն Պավլովիչ - 73
Չոպանյան Արշակ - 149, 193
Չոփուռանց Ռամազ - 115

Պ

Պալեյերոն - 105
Պապաջանյան Միքայել - 60
Պատկանյան Ռափայել - 25, 43, 183
Պարոնյան Հակոբ - 73
Պետրարկա Ֆրանչեսկո - 5
Պերպերյան Մանիկ - 20
Պշիբիշևսկի - 52, 190
Պողոսյան Հովհաննես Գևորգի - 30
Պողոսյան Հռիփսիմե - 7, 30, 197
Պռոշյան Պերճանուշ Պերճի - 39
Պուշկին Ալ. - 9, 73, 97, 103

Ջ

Ջալալյան - 28
Ջավախով Ի.Ա. - 10
Ջիակոմետտի Պ. - 73
Ջինոյանց Ասատուր - 23
Ջիվանի - 133
Ջրբաշյան Էդ. Մ. - 56, 89
Ջրբաշյան Սողոմե - 27

Ռ

Ռաֆալովիչ - 32
Ռըմկևիչ - 149-151
Ռոտտեր - 121, 124
Ռուժմոն Դենի դը - 145
Ռուսթավելի Շոթա - 10

Ս

Սախվարելիձե - 79
Սայաթ - Նովա - 57
Սառաջաշվիլի - 10
Սաֆո - 15, 16
Սաֆրազբեկյան Իրմա Ռուբենի - 42, 43, 50, 156
Սերվանտես - 73
Սևակ Ռուբեն - 91
Սիամանթո - 20
Սիմոնյան Քալի - 23
Սիպիլ (Զաբել Խանջյան) - 46, 49
Սիրանույշ - 20, 161
Սորին - 32
Ստալ Անն Լուիզ Ժերմեն դը - 16
Սրվանձտյանց Գարեգին եպ. - 10
Սուդեյկին - 30
Սունդուկյան Գաբրիել - 130, 133
Սուրաբյան Մաշա - 27, 67, 70
Սուրենյանց Գևորգ (Տփղիսեցի) - 13
Սուրենյանց Վարդգես Հակոբի - 121
Սուդեյկին - 32

Վ

Վանցյան Գրիգոր - 5, 79

Վարդազարյան Լիզա - 39
Վարդազարյան Մարուսյա (Մարիամ, Մարիա) Հակոբի - 39, 40, 84
Վարդազարյան Շուշան Հակոբի - 39
Վարդազարյան Փիլիպոս (Ֆիլիպ) Հակոբի - 33, 34, 39, 74, 76, 80, 84, 89, 90, 98, 102, 103, 104, 108, 110, 112, 113, 119, 121, 124, 126, 134, 137, 143, 149, 152, 157, 158, 167, 168, 171, 174, 175, 178, 181, 182
Վարդանյան Երանյակ - 47-48
Վարդանյան Խաչատուր - 47
Վարդանյան Ստեփան - 47
Վերմիշյան Վ.Ա. - 20
Վորոնցով-Դաշկով - 34, 149, 150, 155
Վրացյան Սիմոն - 159, 160

Տ

Տաբիձե Նինո - 27, 32, 198
Տաբիձե Տիցիան - 32
Տեր-Աստվածատրյան Օլգա - 37
Տեր-Գրիգորյան Արամ - 111
Տեր-Գրիգորյան Ջալալ - 47
Տեր-Դավթյան Վերգինե - 21, 22, 25, 42
Տեր-Դավթյան Տիգրան - 21, 22,
Տեր Հովհաննես - տես Մարտիրոսյան Հովհաննես քահանա
Տեր Թադևոս - 43, 45
Տեր-Միրաքյան Հովհաննես - 126, 127
Տերյան Վահան - 56, 58, 111, 188
Տերտերյան Արսեն - 56
Տիգրանյան Արամ - 56
Տիգրանյան Արմեն - 20, 51
Տիգրանյան Արմենուհի (Մենուհի) - 7, 46, 51-59, 183-193, 198
Տիգրանյան Էդ. - 51, 52, 56, 58
Տիգրանյան Հայկ - 56
Տիֆֆերտին - 117
Տյաչկին Իվան - 106, 107

Ր

Ռաֆֆի - 33, 36

Ց

Ցրտատարյան Գարեգին - 86

Ու

Ուսպենսկի Գլեբ Իվանովիչ - 98

Փ

Փափազյան Վրթանես Մեսրոպի - 121
Փիրումյան Տիգրան - 41

Ք

Քալանթար Ալեքսանդր - 180
Քաջազնունի Հովհաննես - 98, 99, 118
Քափանակով Ստեփան - 124
Քիշմիշյան Ալեքսանդր - 101
Քուչակ - 10

Օ

Օբեդնիկով - 149
Օստրովսկի Ալեքսանդր - 73, 133
Օտյան Երվանդ Խաչիկի - 61
Օրջոնիկիձե Սերգո - 169

Ֆ

Ֆիրդուսի - 9

Ֆ

Ֆիլիպ - տես Վարդազարյան Փիլիպոս

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՈՒՂԵՑՈՒՅՑԱՅԻՆ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԳԱԹ- Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան

գ- գործ

ԵԺ- Երկերի ժողովածու

ԹԵԺ-Հովի. Թումանյան, Երկերի ժողովածու 6 հատորով, Եր., Հայպետհրատ, 1940-1959

ԵԼԺ- Հովի. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու 10 հատորով, Եր, ՀՀ ԳԱԱ, «Գիտություն» հրատ, 1988-1999:

թ- թղթապանակ

ԹՁԱ-Թումանյանի զավակները Աշխեն, Հուշեր և ընտանեկան պատմություններ, Եր,, «Մուղնի» հրատ, Հովհաննես Թումանյանի թանգարան, 20011-408 էջ (Արևելք-Արևմուտք մատենաշար):

ԹԹ- Թումանյանի թանգարան:

ԹԺՀ- Թումանյանը ժամանակակիցների հուշերում (տեքստը պատրաստեց և ծանոթագրեց Լ.Մ.Կարապետյանը), Եր., 1969, 1004 էջ:

ԹՖ- Թումանյանի ֆոնդ

Կ.Հ.Բ. ԸՆԿ- Կովկասի Հայոց բարեգործական ընկերություն

ՀԱԱ- Հայաստանի Հանրապետության ազգային արխիվ

ՀԶ- Նվարդ Թումանյան, Հուշեր և զրույցներ, Եր., 1987, 336 էջ

ՄԳ- «Մանկական գրադարան» մատենաշար

ՄԹ- Մարիամ Թումանյան, Իմ համառոտ կենսագրությունը և իմ հիշողությունները, Եր.,ԳԱԹ հրատ., 2003,416 էջ:

Շ - Շանթ Լևոն, Երկերի ժողովածու 9 հատորով, հտ. 9, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2017, 712 էջ:

ՈւՀ - Թումանյան, Ուսումնասիրություններ և հրապարակումներ, Եր., հտ 4, 5, ՀՀԳԱԱ «Գիտություն» հրատ., 1985, 391 էջ, 1998, 414 էջ:

Ց- Ցուցակ

ՓԲ- Փաստաթղթերի բաժին

Ֆ- ֆոնդ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան 4

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Հովհաննես Թումանյանը կանանց շրջանում 8
Կինը Հովհաննես Թումանյանի ընկալումներում 8
Առաջին սերը. «Հոգուս հատոր» 21
Դարյա Գոլոշյան 23
Ասես արև էր ճառագայթում... 27
Մելիք-Հայկազյաններ 33
Դու մի հավատա ժպտուն աչքերին 39
Կյանքի ընկերուհին - Օլգա Թումանյան 42
Երանյակ Վարդանյան 47
«Անմաքուր» զգացմունքի մերժում 49
Մոռացած ժամացույցը 50
Արմենուհի Տիգրանյան 51
Զապել Եսայան 59
Պոլսահայ կանանց միջավայրում 65
Անայիս (Եվփիմե Ավետիսյան) 65

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Հովհաննես Թումանյանի երկրային «մուսան»՝
Վարյա Խանդամիրյան 72

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Իշխանուհի Մարիամ Թումանյան 95
Ծանոթություն 95
«Հինգշաբթիներ» 98
Իշխանուհին և Հովհաննես Թումանյանի «քահանայության»
պատմությունը 99
Իշխանուհու մեկենասության պատմությունից. 103
Թումանյանի՝ 1903թ. «Բանաստեղծություններ»
ժողովածուի նախապատրաստական շրջանում 108
Իշխանուհու զավակների տնային ուսուցիչը 119

Մարիամ տատիկը և Օհան պապիկը 120
«Մանկական գրադարան» 123
Նամակագրությունը 128
Բնության ձայնի և պարտքի առաքինի վարքի պայքար 139
Մետեխի բանտում 148
Մեր ամբողջ կյանքն անվերջ ափսոսանք է 152
Տխուր վերջաբան 159
Վերջերգ 165

ՀԱՎԵԼՎԱԾ. ՆԱՄԱԿՆԵՐ

Մարիամ Թումանյանից 167
Արմենուհի Տիգրանյանից 183
Ազնիվ Հրաչյայից 193
Անայիսից 194
Կանայք Թումանյանի մասին 196
Անվանացանկ 200
Համառոտագրություններ և ուղեցույցային հապավումներ 205

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍՈՒՍԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԿԱՆԱՅՔ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԿՅԱՆՔՈՒՄ

Կազմի ձևավորումը՝ Ալվարդ Օհանջանյանի
Համակարգչային ձևավորումը՝ Լիանա Մինասյանի

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
Երևան, Թումանյան 12
հեռ.՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am

EDIT PRINT
12 Toumanyan str., Yerevan
Tel.: (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am

[2000 դ.]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ
FL0641331

106780

Սուսաննա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, բանասիրական գիտությունների դոկտոր, Գրականության և գեղարվեստի միջազգային ակադեմիայի անդամ (2015-ից): Ծնվել է Երևանում: Գիտահետազոտական աշխատանքները նվիրված են հայ մշակույթի և գրականության պատմությանը: Նրա ուսումնասիրություններում առանձնահատուկ տեղ են գրավում Հովհ. Թումանյանի կյանքն ու ստեղծագործությունը: Ս. Հովհաննիսյանը Հովհ. Թումանյանի մասին ՀՀ և նրա սահմաններից դուրս աշխարհի մոտ չորս տասնյակ անուն պարբերականներում և նույնքան կոլեկտիվ գիտահետազոտական աշխատանքների ժողովածուներում ավելի քան 200 տպագիր հոդվածների, ուսումնասիրությունների և հրապարակումների հեղինակ է: Հայտնաբերել և գիտական շրջանառության մեջ է դրել Թումանյանի մի շարք ստորագրված և անստորագիր հոդվածներ, կազմել և ծանոթագրել է Թումանյանի գիտական հրատարակության ԵԼԺ 8-րդ հատորը:

Հեղինակ է գրողի կյանքի 7 տարվա տարեգրության, բանաստեղծի գիտական առաջին կենսագրության՝ «Հովհաննես Թումանյանի կյանքի և ստեղծագործության պատմությունը. 1900-1912թթ.» (2012) և ստվարածավալ մի շարք այլ մենագրությունների՝ «Հովհաննես Թումանյանը և Հայ գրողների կովկասյան ընկերությունը» (2007), «Պատմություններ Հովհ. Թումանյանի կյանքից» (2010), «Հովհաննես Թումանյանը մանկագրության խաչմերուկներում» (2018), «Որբերի ամենայն հայոց հայրիկը» (2019), ինչպես նաև՝ «Հայոց լեզու և խոսքի մշակույթ» առարկայի ծրագրային ուսումնամեթոդական դրույթներ» գիտամեթոդական ձեռնարկի (2006): Ս.Հովհաննիսյանի «Ованес Туманян в годы Первой мировой войны» (2018) մենագրությունը ռուսալեզու ընթերցողին է ներկայացնում Հայոց ցեղասպանությունը և բանաստեղծի կյանքն ու գործը Եղեռնի տարիներին.

Ս.Հովհաննիսյանը մասնակցել է բազմաթիվ հանրապետական և միջազգային գիտաժողովների ինչպես Երևանում, այնպես էլ երկրի սահմաններից դուրս: Նրա ելույթներն ու հոդվածները հայերեն և օտար լեզուներով տպագրվել են նաև արտերկրում՝ Ռուսաստանում, Ուկրաինայում, Կանադայում, Իտալիայում, Ավստրիայում, Չեխիայում, Բուլղարիայում, Լատվիայում և այլուր:

Ամուսնացած է, ունի մեկ որդի և երկու դուստր:



Բանաստեղծի դստեր՝ Թամար Թումանյանի ընծայականը հեղինակին:

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
հրատարակչություն